

Շ. Ա. ՄԿՐՏՁՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱԴԻ
ՊԵՏԱ-ՃԱՐՏԱՐԱԳԵՏԱԿԱՆ
ՀՈՒՆԱՐՁԱՆՆԵՐԸ

АРМЯНСКОЕ ОБЩЕСТВО ПО ОХРАНЕ
ИСТОРИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ

Յ.Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

ИСТОРИКО-АРХИТЕКТУРНЫЕ
ПАМЯТНИКИ
НАГОРНОГО
КАРАБАХА



ИЗДАТЕЛЬСТВО «АЙАСТАН», ЕРЕВАН 1980

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Շ. Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ
ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 1980

Ձեռագիրը գրախոսել են՝

<ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը և <ԳԱ թղթակից անդամ Մ. Հատրաթյանը։

Մկրտչյան Շ. Մ.

Մ 306 Լեռնային Ղարաբաղի սլավոնաճարտարապետական հուշարձանները— Եր.: Հայաստան, 1980, 216 էջ, նկ. 64

Գրքում ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում գտնվող նստափոսական, որսանական և ճարտարապետական հուշարձանները, որոնց մեծ մասը դեռևս մասնագիտորեն ուսումնասիրված չէ:

Տեղում հավաքած աղբյուրագիտական, վիճագրական և այլ կարգի նյութերի ընտրությամբ ցույց են տրված այդ հուշարձանների արժանիքները, յուրաքանչյուրի հետ կապված այն կարևորն ու մնայունը, որ միաժամանակ արտացոլում է երկրամասի պատմության հերոսական դրվագները:

Համառոտակի խոսվում է նաև տասնյակ նորահայտ այն հուշարձանների մասին, որոնք մինչև այժմ չեն նշված գրականության մեջ: Գիրքը նախատեսված է հետազոտողների և մասնագիտական ընթերցողների համար:

< $\frac{050\ 1000000}{701\ (01)-80}$ Պատվերային

72 Ար 1
ԳՄԴ 85.11 (2<) 1

© Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերություն, 1980

«ԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մեր երկրում կուլտուրայի հուշարձանների պահպանության և դրանց գիտական ուսումնասիրության ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկվեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից անմիջապես հետո: 1918 թ. ապրիլի 14-ին Վ. Ի. Լենինը ստորագրեց «Հանրապետության հուշարձանների մասին» դեկրետը: Դրանով իսկ կուլտուրայի հուշարձանները հայտարարվեցին ժողովրդի սեփականությունը, և հրոշակվեց դրանց պահպանությունը պետության կողմից: Հուշարձանների նկատմամբ այդպիսի հոգատարությունը, որը բխում է անցյալի ժառանգությունը խնամքով պահելու լենինյան ծրագրից, այժմ էլ որոշում է մեր կուլտակցության զիծը: Անցյալի արժեքների պահպանության համար մեծ նշանակություն ունի ՍՍՀՄ Գերագույն ավետի ընտրված օրենքը՝ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը շատ հարուստ է հուշարձաններով, որոնցից շատերը երկար դարերի պատմություն ունեն: Դիմանալով մի կողմից ժամանակի ազդեցությանը, մյուս կողմից, բարմաթիվ նվաճողների ավերածություններին, դրանք հասել են մեզ: Այդ հուշարձանները մեր նախնիների կերտած պատմության քարակերտ արժեքներն են, քարե մատյանները, որոնցում արտացոլված են իր արատությունն ու անկախությունը պաշտպանած ժողովրդի հայրենասիրական ոգին, հարատևելու անսասան կամքը:

1965—1972 թթ. աշխատելով Լեռնային Ղարաբաղի մարզային պատմակրթագիտական թանգարանում, հնարավորություն եմ ունեցել ուսումնասիրելու երկրամասի պատմական հուշարձանները: Այդ ժամանակաշրջանում հավաքած նյութերի հիման վրա գրած սույն աշխատությունը մի համետ փորձ է մեր հետազոտողների և բնթերցողների ուշադրությանը ներկայացնելու Լեռնային Ղարաբաղի բարմաթիվ հուշարձանները, որոնք արժանի են առավել խոր մասնագիտական ուսումնասիրության:

Մեր կողմից կատարված հաշվառմամբ, մարզում արձանագրվել է 1160 պատմաճարտարապետական հուշարձան: Առաջ քրջանների հուշարձանները բաշխվում են հետևյալ կերպ. Մարտակերտի շրջանում՝ 420,

Հադրութի՝ 230, Մարտունու՝ 215, Ստեփանակերտի (այժմ Ասկերանի)՝ 240, Շուշիի շրջանում (քաղաքի հետ միասին) 55:

Այս թվերը վերջնական համարելու հավակնություն չունենք: Մեզ դեռ չի հաջողվել հաշվառմամբ ընդգրկել մարզի բոլոր հուշարձանները: Դրանք դեռ սպասում են կոմպլեքսային գիտարշավախմբերի միջոցով առավել համակողմանի հաշվառման և հետապոտման:

Աշխատությունում հուշարձանները ներկայացված են ըստ շրջանների՝ ճանապարհների, երթուղիների:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Մարտակերտի շրջանը հայտնի է իր խտաշունչ բնության գեղեցկությամբ, բարձր լեռներով ու անտառապատ ձորերով, Թարթառով ու Խաչենագետով, հայ շինականի շինարար ոգին ու նրա անցած ճանապարհի դժվարությունները խորհրդանշող հարյուրավոր կանգուն ու կիսավեր պատմա-ճարտարապետական կոթողներով:

Պատմական վավերագիրները և սերնդե սերունդ փոխանցվող ավանդությունները հիացմունքով են խոսում Մարտակերտի ապատատենչ կտրիճների անօրինակ քաջագործությունների մասին: Սելջուկ-թուրքերի տիրապետության վերացումից՝ անմիջապես հետո (1204 թ.) կառուցվեց լեռնաստանի ճարտարապետական հրաշագեղ կոթողներից մեկը՝ Խաթրավանքը, ապա Խութավանքի կամ Դադի վանքի կաթողիկեն (1214): Թաթար-մոնղոլների առաջին արշավանքներն ու նրանց մռայլ տիրակալության հաստատումը համընկան արցախական աշխարհի ամենափառահեղ հուշարձանի՝ Գանձասարի շինարարության ավարտման (1238) հետ, որի հետևանքով եկեղեցու բացումը ձգձգվեց ուղիղ երկու տարի:

Հետագա դարերը ևս անպտուղ չեն եղել: Նրանց թողած աննման հիշատակներն են Երից-մանկունքը և՛ մեծ ու փոքր տասնյակ հուշարձաններ, խաչքարեր ու տապանական կոթողներ, որոնք այսօր էլ դիտողին հիացմունք են պատճառում:

ա) ԽԱՉԵՆԻ ՀՈՎՏԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի անկրկնելի գետահովիտների մեջ առանձնանում է Խաչենի չքնաղ ձորակը: Նրա ամբողջ երկայնքով հոսում է Խաչենագետը՝ արցախական լեռնաշխարհի ամենաջրառատ գետերից մեկը: Իսկ անմիջապես գետի ափերից վեր են խոյանում բարձրաբերձ լեռները, որոնք հովտի ամբողջ երկարությամբ անտառապատ են, տեղ-տեղ պսակված ալպյան սարգագետիններով և երկնքի մեջ մխրձված ցցուն ժայռերով:

Բնության վարմանահրաշ գույների այս հովտում այնքան շատ են

եկեղեցիները, վանքերը, ավերակ բնակավայրերը, կամուրջները, բերդե-
րը, աղբյուրները, ջրաղացները, խաչքարերը, գերեզմանատները և հին
դամբանաբլուրները, որ կարևոր է կապել պատմական հուշարձանների
մի երկար ցուցակ: Եթե դրան էլ ավելացնենք այստեղի վիմական արձա-
նագրությունների այն հարուստ նյութերը, որ սհա երեք հարյուրամյակ
է, որ գրավում է հետապատողների ուշադրությունը, ապա ամենայն վըս-
տահույությամբ կարելի է ասել, որ Խաչենի ձորակը հնագիտական, պատ-
մական ու ճարտարապետական մի թանգարան է: Երոք, դժվար է պատ-
կերացնել Խաչենի հույժան առանց այս անհամար հուշարձանների,
որոնք լրացնում ու առավել հարստացնում են նրա անկրկնելի ու դյու-
թական բնությունը:

Խաչենի վիմական արձանագրությունների առաջին հավաքողը եղել
է Աղվանից կաթողիկոս Ե.այի Հասան-Ջալալյանը, որի վիմագրական
տետրակը կապվել է 1718 թ. և ընդգրկում է Խաչենի հովտի շուրջ
հարյուր վիմագրեր: Խաչենի արձանագրությունների հավաքման ու մա-
սամբ ուսումնասիրման և հրատարակման հաջորդ ջրջանը կապված է
Սարգիս եպիսկոպոս Ջալալյանցի անվան հետ: Նրա կողմից հրատա-
րակված վիմագրերը, հնագիտական և այլ բնույթի հսկայական
նյութը միշտ ծառայել է որպես կարևոր աղբյուր հայագիտության տար-
բեր հարցերի ուսումնասիրման համար:

Խաչենի արձանագրությունները, ինչպես և այլ հուշարձանները
գրավել են Մակար Բարխուտարյանցի ուշադրությունը: Նրա հեղինակու-
թյամբ հրատարակված «Արցախ» գիրքը պարունակում է վիմագրական,
հնագիտական ու ազգագրական հսկայական նյութ, որը հեղինակի
կողմից հավաքվել էր պատմական Արցախից և Ուտիքից: Տարբեր ժա-
մանակներում Խաչիկ վերըապետ Դադյանը հրատարակել է մի շարք
արձանագրություններ, հնագիտական նյութեր և միջնադարյան ձեռագիր
մատյանների հիշատակագրություններ: Եթե չհաշվենք Շուշիի ռեալական ուսում-
նարանի ուսուցիչ Էմիլ Ռոյալերի սիրողական փորձերը, ապա Խաչիկ
Դադյանը հանդիսանում է Խաչենի հնագիտական նյութերի առաջին
ուսումնասիրողը, որը պեղումներ կատարեց՝ հայտնաբերելով արժեքա-
վոր նյութեր: Խաչիկ Դադյանի կողմից հրատարակված ս. Հակոբա վանքի
արձանագրությունները մինչև այդ նույն վանքից հավաքված ամենահա-
րուստ փունջն է¹:

Խոշորագույն արևելագետ Հովսեփ Աբգարի Օրբելին դեռևս 1909
թվականի օգոստոսին, ակադեմիկոս Ն. Յա. Մառի հանձնարարությամբ,
գործուղվում է Խաչեն: Տասնյոթ օրվա ընթացքում երիտասարդ գիտնա-

կանը գրի է առնում շուրջ 270 արձանագրություն. 84-ը՝ Գանձասարի
վանքից, 21-ը՝ Վաճառից, Խաչխուրթից ու Ծմակահող գյուղից, 13-ը՝
Հավապուտից, 26-ը՝ Կոշիկ անապատից, 37-ը՝ Մեծառանի ս. Հակոբա
վանքից, 11-ը՝ Չուխտ խաչ ու Խանչուխաչ սրբավայրերից, 35-ը՝ Խաթ-
րավանքից և 33-ը՝ Դադի վանքից²:

Արձանագրությունների այս հարուստ հավաքածուից Հ. Օրբելին
Գանձասարի և Հավապուտի արձանագրությունները առանձնացրել ու
հանձնել է տպագրության: ՍՍՀՄ ԳԱ-ի Արևելագիտական ինստիտուտի
լենինգրադյան բաժանմունքի արխիվում է գտնվում 42 էջից բաղկա-
ցած այդ գրքուկը՝ տպարանային սրբագրական տպվածքի (оттиск)
ձևով:

Նույն արխիվում են պահվում նաև մյուս արձանագրությունները:
Դրանք խնամքով, տառաձևելով, կցագրերի և վիմագրական այլ ա-
ռանձնահատկությունների պահպանմամբ արտագրված են փոքր չափի
սի ընդհանուր տետրում՝ «Армянские надписи Хачена» վերնագրով:

Հ. Օրբելու ներդրումը Խաչենի պատմության ուսումնասիրության
գործում անվիճելի է: Նրա հրատարակած երեք ծավալուն հոդվածները³
հանդիսանում են Խաչենի հերոսական պատմության ու միջնադարի
մշակույթի հետապոստության հետաքրքիր փորձեր:

Հետագայում Խաչենի, նաև ինքնավար մարզի տարածքում գտնվող
մյուս վիմագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են Ս. Բարխուդարյանը՝
60-ական թվականներին և Բ. Ուլուբաբյանը՝ 70-ական թվականներին:
Ս. Բարխուդարյանի հավաքած արձանագրությունները հրատարակության
է նախապատրաստած, իսկ Բ. Ուլուբաբյանն իր կողմից գրի առած հար-
յուրավոր արձանագրությունների մի մասը օգտագործել է թեկնածուական
և դոկտորական դիսերտացիաներում՝ Արցախի, հատկապես Խաչենի
պատմության վերաբերյալ հարցերը լուսաբանելու համար:

ԳԱՆՁԱՍԱՐ

Խաչենագետի աջ ափին, բարձրաբերձ մի տեղում բազմել է հինա-
վուրց Գանձասարը՝ Արցախ—Ղարաբաղ աշխարհի հրաշալիքներից մեկը:

² Բ. Ուլուբաբյան, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և Խաչենը (փաստաթղթեր և
տեղեկություններ), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972 թ., № 1, էջ 198—199:

³ И. А. Орбели, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью,
«Известия императорской академии наук», П-гр., 1909 г., VI серия, т. III, № 5,
стр. 377—389, его же: Хасан Джалал, князь Хаченский, «Известия ИАН», П-гр.
1909 г., VI серия, т. III, № 6, стр. 405—436, его же: Бытовые рельефы на
Хаченских крестных камнях XII—XIII вв., Избранные труды, Ереван, 1963,
стр. 198—199.

¹ «Բանասեր», Փարիզ, 1901, հ. 3-րդ, էջ 135—147:

Այս վանքի եկեղեցու շինությունը սկսվել է 1216 թվականին և ավարտվել է 1238 թվականին: Նրա արևմտյան կողմից կառուցված գավթի հիմնադրման տարեթիվն անհայտ է, սակայն այստեղ գտնվող արձանագրության համաձայն շինությունն ավարտվել է 1266 թվականին:

Ժամանակակից պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակեցին հիացմունքով են պատմում վանքի շինարարության և նրա օժան հարարողության հանգամանքները:

«Կ. Գանձակեցին գրում է, թե Հասան-Չալայանը «Շինեաց եկեղեցի մի գեղեցկապարդ յօրինուածով գմբեթարդ երկնանման տաճար ի փառացն Աստոյ... Որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանաբերդոյ ի տեղի շիրմի իւրեանց և յոյով ամս աշխատ եղեն ի նման»⁴: Պատմիչի վկայությամբ օժան հանդիսություններին ներկա գտնվողների մեջ կային միայն յոթ հարյուր քահանաներ:

Վանքի նավակառուցումը ու օժանը տեղի են ունեցել 1240 թվականին, Վարդավառի մեծ տոնի օրը (հուլիսի 22-ին. կիրակի):

Գանձասարի կառուցման ականատես պատմիչի այն վկայությունը, որ վանքը կառուցվել է «... Ի տեղի շիրմի իւրեանց» հաստատվում է նաև արձանագրական և մատենագրական ավելի հին տեղեկություններով: 9—10-րդ դարերին վերաբերող պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գանձասարի հինավուրց եկեղեցին քաղաքական ու կրոնական հավաքատեղի էր Արցախի և շրջակա հայկական գավառների համար:

Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսի (946—968) «Յաղագս ապրստամբութեան տանն Աղուանից» գրության համաձայն 949 թվականին լուսավորչական-քաղկեդոնական վեճեր հարթելու համար Անանիա կաթողիկոսը Խաչեն գավառում ժողով է գումարում՝ նշանավոր իշխանների և հոգևորականների մասնակցությամբ: Պատգամավորների ցուցակի մեջ հիշատակված է նաև «Հայր Սարգիս Գանձասարոյ վանականը»⁵:

Պատմագիր Ստ. Օրբելյանն արդեն դեպքի նկարագրության մեջ հիշում է Սարգիս վանականին⁷:

Բացի դրանից, վանքի շրջապատում ամբողջական մնացած մի քանի խաչքարեր՝ 1174, 1182, 1202 թվագրերով, նույնպես իրական ապացույցներ են համարվում այստեղ ավելի վաղ գոյություն ունեցած վանական կյանքի և հուշարձանների:

Այս և այլ աղբյուրագիտական տեղեկությունները, կասկածի նշույլ


⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 269—270:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս «Տեսնոն Անանիայի հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», «Արարատ», Էջմիածին, 1896, էջ 42:

⁷ Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, էջ 278—279:

ինկ չթողնելով, միահամուռ հաստատում են, որ ներկայիս վանքը կառուցվել է նախկինում եղած շինությունների տեղում: Հավանաբար նախկին եկեղեցին չի ունեցել ճարտարապետական այնպիսի արժանիք, որն արտահայտեր Խաչենի իշխանության փառքը, հզորությունը: Այդ բացը լրացնելու համար Հասան-Չալայը և նրա մերձավորները, Խաչենի քարգործ վարպետների ձեռքով, կառուցեցին մի այնպիսի տաճար, որը հետագա բոլոր դարերում մնաց որպես ճարտարապետական և քանդակագործական անգերապանցելի ստեղծագործություն: Իսկուր չէ, որ 20-րդ դարի խստապահանջ հետազոտողները միահամուռ այն համարում են հայ ճարտարապետության (13-րդ դարի) «Հանրագիտարան», «Մարգարիտ»:



Նկ. 1. Գանձասար վանքի պլանը: Չափագրություն՝ Ա. Լ. Յակոբսոնի:

Հրաշակերտ Գանձասարը կարճ ժամանակամիջոցում դառնում է երկրամասի մշակութային կյանքի կարևոր ու խոշոր օջախ, ամբողջ Հայոց արևելից կողմանց կաթողիկոսանիստը և ազգային պատագրական շարժումների կազմակերպիչը:

17-րդ դարի վերջերից Գանձասարը դարձավ երկրամասի ազգային պատագրական շարժման կարևոր կենտրոններից մեկը: Գանձասարի կաթողիկոս Եսային՝ ռուսասեր ու ազգային պատագրական պայքարին նվիրված մարտիկ, դարձավ այդ շարժման ղեկավարը: Նրա համագործակցությամբ Իսրայել Օրին առաջին քաղերն արեց Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու ուղղությամբ:

Տարբեր առիթներով և տարբեր ժամանակներում այստեղ՝ Գանձասարում հաճախակի էին անցկացվում հավաքույթներ, ժողովներ, հան-

դիպումներ՝ ազատագրական շարժումը բորբոքելու, ռուսական հյոր կայսրության հետ դիվանագիտական կապեր հաստատելու ուղղությամբ, Ռուսաստանին միանալու հարցի կապակցությամբ: 1701 թվականին այստեղ գրվել է Ռուսաստանի կայսր Պետրոս Առաջինին ուղղված առաջին նամակը, որով դարաբաղցիները Ռուսաստանի օգնությունն են հայցել արևելքի բարբարոսներից ազատագրվելու համար⁸:

* *

Գանձասարի ճարտարապետական համալիրը, շրջապատի չքնադրնության հետ, հայ ժողովրդի հազարամյա բազմահարուստ ճարտարապետական ժառանգության ամենահոյակապ գանձերից մեկն է: Հայ ճարտարապետության պատմության երախտալիք Ա. Լ. Յակոբսոնն այն համարել է «հայ ճարտարապետության մարգարիտը»: Նրա կարծիքով Գանձասարի վանքը ոչ միայն «ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է. մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»⁹:

Փառեակ Սորբոսը համարաբար թյուրկանդական ճարտարապետության խոշոր մասնագետ պրոֆ. Շառլ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից երրորդը համարել է Գանձասարը¹⁰:

Գանձասարի վանքը հիմնականում բաղկացած է եկեղեցուց և զավթից, որոնք այնպիսի մի ամբողջականություն են կազմում, որ ասես դրանք առանձին շինություններ չեն և կառուցվել են միաժամանակ:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ եկեղեցին ունի ներքուստ խաչաձև, արտաքինից ուղղանկյուն գմբեթակիր հորինվածք (սրահի չափերը՝ 12,3×17,75), որի չորս անկյունները պրոնոտներ են կրկնահարկ ավանդատները: Դեպի վերին ավանդատները տանում են կոնսոլ աստիճանները, որոնց ներքին մասում քանդակված են խոշոր ստալակտիտներ:

⁸ Эзов, Сношения Петра Великого с армянским народом. СПб, 1898, стр. 154.

⁹ А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.) «Исследования по истории культуры народа Востока» (Сборник в честь И. А. Орбели), М.-Л., 1960 г., стр. 151.

Յակոբսոնը իր այս հոդվածում բարեխղճորեն վերլուծել է Գանձասարի վանքի ճարտարապետությունը, ցույց տվել նրա տեղն ու դերը հայ ճարտարապետության պատմության մեջ, նշելով, որ երկրամասի մյուս տասնյակ ճարտարապետական հուշարձաններն սպասում են հետազոտողներին:

¹⁰ Տե՛ս Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետության փոխադրվածության շուրջը. «Սյուրբեր հայկական ճարտարապետության պատմության», Բ, Երևան, 1948, էջ 25:

Եկեղեցու արտաքին և ներքին ճարտարապետական ու դեկորատիվ հարուստ հարդարանքները միասնություն են կազմում, տաճարը դարձնելով հայկական արվեստի կատարյալ ստեղծագործություններից մեկը:

Կառույցի մեջտեղում վեր սլացող գմբեթի տակի տարածության անկյունները ընդգծված են ուղղահայաց խուրձերով, որոնք շրջանակում են տաճարի կենտրոնական մասը: Թմբուկի նեղ լուսամուտների վերևի մասերը (մեկական՝ հյուսիսային, հարավային և արևմտյան կողմերում) մշակված են խոշոր մատներով:

Խաչի թևերի կամարները սրահի կողմերից ունեն եռաստիճան կողպատկեր և սլաքաձև կոնսոլ: Այդ կողպատկերներից վերևինը շրջանակում է կիսագլանաձև սոնուսենտալ դեկորատիվ քիվը:

Գմբեթատակ առագաստների մեջ տեղադրված են նույն փորագրված խոնջաներ (տախտակներ)՝ աստղ, շրջանակ, քառանկյունի և այլ վարդարանքներով, լրացված վերին աստիճանի նուրբ ու վարպետորեն փորագրված պարուրաձև ու արմավապարզ հյուսված քանդակներով: Նրանք ոչ միայն չեն կրկնվում, այլև ավելի են ընդգծում գեղանախշ սյուները, առագաստները: Յուրաքանչյուր առագաստի վերին մասում, անմիջապես գուռու տակ, տեղադրված են բարձրադիր պատկերաքանդակներ: Հարավ-արևմտյան առագաստի վրա գտնվող քանդակը խոյի գլուխ է, հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան առագաստների վրա՝ եզերի գլուխներ, հյուսիս-արևմտյան առագաստի քանդակը մարդկային դեմքի է նման: «Այս տիպի քանդակները. — գրել է Ա. Լ. Յակոբսոնը, — ըստ երևույթին տարածված են եղել 10-րդ դարում, Բագրատունիների ժամանակ: Եվ նրանք հանդես են գալիս որպես սուրբ կենդանիներ, ծառայելով ինչպես շենքի հենարաններ և իմաստավորում են որպես կառույցի պահպաններ»¹¹:

Գանձասարի եկեղեցու գմբեթի թմբուկը ներսից կլոր է, մշակված ութ կույզ բարակ կիսասյուներով:

Արտակարգ հարուստ են բեմի ճակատային բարձրության վարդանախշերը: Այն բոլոր կողմերից երիզված է լայն ու խորը ելուստված գոտիով: Շրջանակի ներսում կա ութ շեղանկյունի, որոնք, կենտրոնում լուսաստվեր ստեղծելու համար, թեթևակի խորացված են եռանկյունիներով: Այդ բոլոր շեղանկյունները և եռանկյունները լրացված են բարդ և խիտ հյուսածո վարդաքանդակներով:

Եկեղեցու արտաքին ծավալները պարզ ու հստակ կրկնում են շենքի ներքին հորինվածքը: Խաչթևերը առանձնանում են բարձր ճակտոններով, իսկ անկյունային մասերը ավելի ցածրադիր են: Ճակատները մշակված են ոչ խոր եռանկյունի որմնախորշերով: Դրանք թեթևացնում

¹¹ Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 146:

են շենքի վանգվածը, միաժամանակ լույս ու ստվերով առանձնանում են ճակատի հիմնական մասերը:

Շենքը բարձրանում է հնգաստիճան պատվանդանի վրա:

Եկեղեցու ամեն մի պատ յուրովի է լուծված: Տաճարի հյուսիսային և հարավային ճակատները բաժանված են հնգական տափակ կամարներով, որոնց մանրամասները, հատկապես գեղապարզերը խստորեն համապատասխանում են ճարտարապետական կառուցվածքին: Հարավային և հյուսիսային կամարները գեղանախշ կիսասյուներով շրջանակում են որմնախորշերը: Կենտրոնական մեծ կամարի վրա խոյանում է մեծադիր խաչը: Հարավային պատի այս նույն կամարի տակ նեղ ու երկար լուսամուտ կա, եզերված նրբահյուս նախշերով, լուսամուտից վերև՝ արևի քանդակապարզ ժամացույցը: Հյուսիսային պատը եզերված է այլ քանդակներով, արևի ժամացույցի տեղը, խաչից վերև հավերժության խորհրդանշանն է:

Արևելյան ճակատը նույնպես բաժանված է նույնատիպ կամարներով, սակայն դրանք կիսաշրջանաձև են: Կենտրոնական կամարը քիչ բարձրադիր է և ունի նեղ լուսամուտ:


Արևմտյան կողմում կառուցված գավիթը ծածկել է խաչելության քանդակի կոմպոզիցիան: Այն բաղկացած է լայնաթև խաչից և Քրիստոսի խաչված պատկերից: Նրա երկու կողերում ծնկաչոք պատկերներ են:

Եկեղեցու հմայքն է կապմուն գմբեթի բազմանիստ թմբուկը, որի վրայի չկրկնվող բարձրաքանդակներն ու վարդյականախշերը, կիսասյուների փնջերն ու հովհարաձև ծածկը գմբեթին տալիս են արտակարգ գրավիչ տեսք:

Տաճարի անհայտ ճարտարապետը հրաշք թմբուկ է կերտել: Այն բաժանված է 16 նիստի, որոնց բարձրությունը ընդգծված է նաև պարզաքանդակների միջոցով: Նիստերից յուրաքանչյուրը քանդակագործության առանձին գլուխգործոց է: Նրանք շքեղ են, մեկը մյուսին գերազանցող նախշերով և քանդակներով:

Յուրաքանչյուր նիստի կողերը շեշտված են բարձրադիր կիսասյուներով, որոնք ավարտվում են քանդակապարզ խոյակներով: Նիստերից ութի վրա (մեկընդմեջ) կա եռանկյունի որմնախորշ, որի խորքում՝ պսակված քանդակով կիսասյուն:

Մյուս նիստերը հարթ են, նրանցից չորսը պաղեցնում են նեղ լուսամուտները, լայն շրջանակակալներով, ծածկված բարդ ու շատ նուրբ փորագրությամբ, իսկ շրջակալի վերևում կա վարդյակ: Մյուս չորս նիստերը ունեն փոքր, կլոր լուսամուտներ, նույնպես լայն և խորը պրոֆիլի շրջանակով: Դրանք բոլորն էլ պատած են ժանյականման փորագրություններով: Նիստերից մեկը փոքր է լուսամուտից, որին փոխարինում է ժանյակահյուս վարդյակի պարզաքանդակը:



Նկ. 2. Եկեղեցու թմբուկի հատակագիծը:
Չափագրություն՝ Ա. Լ. Յակոբսոնի:

Թմբուկի արևմտյան նիստերում տիրական են երկու կտիտորների քանդակները: Դիմապատկերով երկուսն էլ նման են իրար: Նրանք վեր բարձրացրած ձեռքերով բռնել են եկեղեցու մանրապատկերը (մակետը) տախտակի վրա: Հետապոտողների կարծիքով դրանք տաճարի կառուցման պատվիրատուներ Հասան-Չալայ Դոլայի և նրա որդի Աթաբեկի արձաններն են¹²: Մեկ այլ նիստի ճակտոնապատի տակ փորագրված ֆոնի վրա Քրիստոսի բարձրաքանդակն է, իսկ լուսամուտի շրջակալի վրա՝ Ադամի և Եվայի պատկերաքանդակները՝ համապատասխան գրություններով վկայված:

Հարավային երեք նիստերի որմնախորշերում քանդակված են ծընկաչոք հանդիպակաց ֆիգուրներ՝ գլուխներին լուսապսակներ: Մի այլ տեղ ցուլի գլուխ է, երրորդում՝ Աստվածամայրը մանկան հետ, չորրորդում պատկերված է արծվի գլուխ և այլն: Այստեղ հանճարեղ ճարտարապետը աստղերից, ծաղիկներից և ժանյակապարզ շղթաներից հյուսել է նրբակերտ նախշեր:

Եկեղեցու գավիթն իր ճարտարապետական հորինվածքով ավելի

¹² Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 151:

է ամբողջացնում եկեղեցու մոնումենտալությունը: Հաղորատի սուրբ Նշան եկեղեցու գավթի նման այն ներսից դահլիճ է (ներքին չափերն են 11,62×11,80, 3,15×3,25 մետր), երկու կույզ խաչվող կամարներով և ստարակոտային երդիկով: Գանձասարի վանքի գավիթը Ա. Լ. Յավրթունի կարծիքով՝ «...Հորինվածքով խիպախ, կառուցվածքով խնամառու և Հայաստանից դուրս ոչ մի տեղ չի կիրառված»¹³: Գավթի արևմտյան պատից քիչ հեռու երկու անկյուններում պատին կից կանգնած են բազմանիստ երկու որմնասյուրներ, որոնց վրա հենվում են բարձրաթիչք կամարները:

Գավիթից դեպի եկեղեցի տանող մուտքը երիված է կիսակլոր կամար ունեցող ճակատասուտքով, որի երեսակալը մշակված է մանր հյուսվածքով, իսկ քանդակավարդ կամարը՝ աստղերով և շեղանկյուններով:

Արևմտյան կամարաշիղերի ծայրերի միջև տեղադրված է լայն քանդակավարդ խաչը: Մուտքի վերևի մասով ձգվող կամարաշիղի տակ գտնվող հարթությունը պարզարված է շախմատաձև վարդյակներով և շղթայանման հյուսվածքով:

Գավիթը Հասան-Ջալալյան տոհմի դամբանատունն է եղել: Այդ պատճառով էլ այնուհետև պատերի տակ սղեղ եղել է կենսական պահանջ, որից և ծնվել է, կամ որին համապատասխանել է ճարտարապետական նոր լուծումը: Այժմ այնտեղ՝ գավթի արևելյան մասում, հանգչում են Հասան-Ջալալյան տոհմի նշանավոր մեծերը՝ Հասան-Ջալալ Բարեպաշտից ու հոգևոր հայրապետներից մինչև Բաղդասար միտրոպոլիտը: Նրանց միակտոր ու հարթ շիրմաքարերը ևս արցախական աշխարհի քարգործ վարպետների արարիչ ձեռքերով դարձել են արվեստի հոյակապ նմուշներ:

Գավթի ծավալը արտաքինից պարզ է, այն ավարտվում է բարձր երդիկով, որը կենտրոնում պսակված է ութանիստ թեթև ռոտունդով:

Հյուսիսային ճակատի մուտքի վերին անկյուններում տեղադրված են երկու բարձրաքանդակ հովապներ: Հարավային ճակատի հարավարևմտյան կողմում կա կլոր լուսամուտ, շրջանակված քառաթև վարդաքանդակով:

Գավթի հարդարանքի ամենակարևոր տարրը հանդիսանում է արևմտյան շքանուտքի երեսակալը: Այն որոշ չափով դուրս է եկած պատի հարթությունից և անմիջապես աչքի է ընկնում: Պատի եռաստիճան պատվանդանից բարձրացող վանգվածային կիսազվանր շրջանցում է դուռը, կապնելով նրա բարձրաքանդակ երեսակալը: Վերջինիս կենտրոնական մակերեսը ընդհատվում է կլոր և իրար հաջորդող քառանկյունի

նիստով, հարդարված հյուսածո վարդաքանդակով: Վերին աստիճանի սուրբ, բայց երբեք չկրկնվող այս համարյա ոսկերչական աշխատանքը ավելի կատարյալ են դարձնում դռան մյուս երեսակալի (որը խոր մխրձված է պատի մեջ) փորագրությունները:

Վանքապատկան բնակելի, տնտեսական շենքերի, դարպասներով պարիսպների հետ միասին Գանձասարը հայ ճարտարապետության լավագույն համալիրներից մեկն է:

Գանձասարի քարաշեն պարիսպների ներսում՝ եկեղեցու հյուսիսային թևում կա ութ փոքր և երկու մեծ սենյակ: Մեկ ուրիշ, ավելի մեծ երկհարկանի շենք էլ տեղադրված է արևելյան մասում: Անցյալում այն ծառայել է որպես դպրոց, ապա վանատուն: Վանքի պարիսպների հասակարգում հետաքրքիր հուշարձան է գլխավոր մուտքը՝ դարպասը, որը կերտված է սրբատաշ քարով, ճարտարապետական ինքնատիպ լուծումներով:

Վանքի արձանագրությունների մեծ մասը գրված է վարպետ գրիչների ձեռքով, գրերի միատեսակ ոճով: Վանքի պատերին կա շուրջ երկու հարյուր արձանագրություն¹⁴:

Իր անկրկնելի գեղեցկությամբ է հառնում Գանձասարը, որն իրավամբ Ղարաբաղում հայտնի է որպես ազգային ճարտարապետության գլուխգործոց, որի նշանակությունն ավելի է ընդգծվում շրջապատի հարյուրավոր այլ հուշարձանների շնորհիվ, որոնք ասես ժամապահների պես օղակել և պահում-պահպանում են խաչերի «մարգարիտը»:

ԽԱՉՔԱՐԵՐ՝ ԿԵՆՑԱՆԱՅԻՆ ԲԱՐՉՔԱՔԱՆԳԱԿՆԵՐՈՎ

Արցախական խաչքարերը՝ հիշատակարան-հուշարձանները, սխիված են ամենուրեք, եկեղեցիների բակերում, ճանապարհների հատման վայրերում, եին բնակավայրերում, գերեզմանատներում... Դրանց ճնշող մեծամասնությունը կանգնեցված է հատուկ նպատակով, երկրամասի նշանավոր մարդկանց հիշատակին, եկեղեցիների կառուցման և վերանորոգման առնչությամբ, վանքերին, եկեղեցիներին գյուղեր, կավվածներ նվի-

¹⁴ Այվանից Սարգիս կարողիտսի անվան հետ է կապված Գանձասարի վանքի առաջին վերանորոգումը: Այդ առթիվ անթվագիր մի փոքրիկ արձանագրություն կա եկեղեցու պատին: Սակայն Գանձասարում գրված մի ավետարանի հիշատակարանում (որը գտնվում է Մառենուդարանում) նորգման տարեթիվը նշված է 1551:

Հաջորդ խոշոր վերանորոգումը կատարվել է 1781 թվականին, Թայիշի Մելիշ Հովսեփի որդի Արով հարյուրապետի կողմից, իսկ մեծերն՝ 1907 թվականին՝ Արախամ Բեկ Հասան-Ջալալյանի կողմից:

¹³ Ա. Լ. Յավրթուն, նշվ. աշխ., էջ 154.

րելու կապակցությամբ: Բազմաթիվ խաչքարեր են ագուցված եկեղեցիների, մատուռների և այլ շենքերի պատերի մեջ: Այդ տեսակետից հիշատակության արժանի են **Խաթրավանքի, Դադի վանքի, Կոշիկ անապատի** և այլ հուշարձանները, որոնց պատերի մեջ տեղադրված են տասնյակ խաչքարեր:

10—13-րդ դարերում, խաչքարերի արվեստի ծաղկման փայլուն շրջանում, կերտած այս փոքրիկ հուշարձանները ժողովրդական վարդաքանդակների հիանալի նմուշներ են համարվում: Հատկապես նրանք, որոնց վրա քանդակված են հեծյալներ, երկրագործական ու որսորդական գործիքներ, կենցաղային իրեր և հագուստի տեսակներ: Դրանց արժեքը ավելի է մեծանում առանձնապես նրանով, որ այդ բարձրաքանդակները սովորաբար ուղեկցվում են ոչ պակաս հետաքրքիր արձանագրություններով: Հ. Օրբելին, նկարագրելով Խաչենի տասներեք խաչքարերի աշխարհիկ մոտիվները, գալիս է այն եզրակացության, թե «Մարդկանց պատկերներով խաչքարեր առաջին անգամ հայտնաբերվել են Հայաստանի այս մասում, այն է՝ Խաչենում, ուր առհասարակ սիրված վբաղմունք է բարձրաքանդակներով նախշել-դրվագել, ուր տաճարների պատերին Հայաստանի մյուս վայրերում սովորական կտիտորական խմբերից վատ, պատահում են բարձրաքանդակման բավականին մեծ տեսարաններ»¹⁵:

Խաչենի տաղանդավոր վարպետների անսպառ եռանդի ու ջանքերի շնորհիվ, արդեն շատ սովորական դարձած բուսական ու երկրաչափական մոտիվները զուգորդվել են կոնկրետ կյանքից վերցված բարձրաքանդակների հետ և ավելի հետաքրքիր են դարձել այդ մոտիվների բազմապատկությունը, նրանց կատարման տեխնիկայի նրբությունը, դասավորման մեծ ճաշակը և, իհարկե, իմաստավորված բովանդակությունը:

Այստեղի խաչքարերի վրա պարզ երևում են միջնադարում ապրած հայ գեղջուկը իր հագուստ-կապուստով, հոգևորականներն իրենց տարագով, հատկապես պինվորները՝ պինավառության բոլոր մանրամասներով: Դարերի պատմությունն ուսած և մեզ հասած այս հուշարձանները բացառիկ են թե իրենց բովանդակությամբ և թե ճանաչողական նշանակությամբ:

Այս առումով **Կոշիկ անապատը** հանդիսանում է իբրև մի յուրատեսակ պահոց, որտեղ ամփոփված են մեկուկես տասնյակից ավելի ռազմիկների պատկերներով խաչքարեր: Թերևս դրանց առկայությամբ կարելի է բացատրել, որ չնայած Կոշիկ անապատը ճարտարապետական տեսակետից մի առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, բայց, այնուամենայնիվ, դասվում է Արցախի հանրահայտ հուշարձանների շարքը:

Խաչենի միջնադարյան պինվորների բարձրաքանդակներն առաջին անգամ գրավել են Մակար Բարխուտարյանցի ուշադրությունը: Նա իր նշանավոր «Արցախ» գրքում այստեղի գերեզմանաքարի քանդակներն այսպես է նկարագրում. «Տաճառիս արևմտեան որմին մոտի մի տապանաքարի վերայ քանդակուած է մի քաջ ձիաուոր, որ հանած է իւր թուրը, և բարձրացրած մի այլ ձիաուորի վերայ, որ իջած է իւր ձիուց, բռնած նորա կապը, հանած իւր թուրը, կարծես յանձնուած է վայն յաղթողին: Յաղթուածն ֆէս ունի իւր գլխին վերայ և կանգնած է խղճալի դիրքով»¹⁶:

Այնուհետև, ինչպես նշեցինք, Խաչենի բարձրաքանդակների ուսումնասիրությամբ զբաղվել է Հ. Օրբելին: Անվանի գիտնականի կողմից նկարագրված յոթ խաչքարերից բացի, այստեղ՝ Կոշիկ անապատում գտնվել են ևս չորս խաչքարեր, որոնք ունեն հեծյալներ: Դրանցից մեկը վետեղված է եկեղեցու հարավային հիմնապատի անկյունի մոտ: Այս փառաշուք խաչքարի ստորին, հողի մեջ խրված մասում պատկերված հեծյալը թեքված է դեպի ձախ, աջ ձեռքում պահում է երկարավուն նիպակը, ձախում՝ ձիու սանձը: Չիավորը հանդերձավորված է ռազմի հագուստով. գլխին դրած սաղավարտի ականջակալները իջնում են ուսերին, չուխա հիշեցնող վերնապզեստի փեշերը հասնում են մինչև ոտքերը, իսկ գոտուց կախված է մի գուրպ:

Հենց այս նույն եկեղեցու գավթի ավերակների մեջ ընկած խաչքարի բեկորի վրա պատկերված է մի այլ հեծյալ: Չինվորի կիսադեմ հայացքն ուղղված է դեպի ձախ: Գլխին դրած սրածայր գլխարկը վերևում ավարտված է գնդիկով, իսկ ներքևում՝ երկար ականջակալներով: Նժույզի գավակի վրա նշմարվում են գործվածքի եզրագծեր:

Հաջորդ խաչքարը, որի վարդաքանդակների ամբողջությունը լրացվում է հեծյալի դիմաքանդակով, պատկերված է նույն ձևով, ինչպես նախորդ օրինակում, սակայն այստեղ առավել հստակ է ցույց տրված պինվորի հանդերձավորումը: Ռավմիկի գլխին դրած սաղավարտի ականջակալների ծայրերը ազատ արձակված իջնում են ուսերին, իսկ վերնապզեստի փեշերը հասնում է մինչև ոտքերը: Ընդ որում վերնապզեստը գոտկատեղից վերև նեղ է, իսկ ցածի մասում լայն (մոտավորապես այժմյան պինվորական շինելի նման): Լայն գոտուց կախված է երկարավուն սուրը՝ պատյանի մեջ, աջ ձեռքում նիպակն է, ձախում՝ սանձը: Հեծյալի շուրջն անկանոն ձևով փորագրված է վեցտողանոց կցագիր:

Վերջին՝ չորրորդ խաչքարի բեկորը, գտնված եկեղեցու մոտերքից, մի կոմպոզիցիոն հարթաքանդակ է: Չախից շարժվող հեծյալի առաջ ծալապատիկ նստած է երեխան գրկին մի կին: Ուշագրավն այստեղ

¹⁵ И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 196.

¹⁶ Մակար եպիս. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 213 (այսուհետև «Արցախ»):

այն է, որ հեծյալի դեմքը հանդիպահայաց է: Դրա համար էլ լավ երևում են նրա երկար մորուքը և բարակ ընչացքը: Գլխին կոշում է սրածայր զրխարկ, երկու կողմերից կախ ընկած ականջակալներով: Ընդհանրապես այս խաչքարի հեծյալի դիմանկարը կատարված է ռեալիստական ոճով¹⁷:

Նշված խաչքարերի հեծյալներն այնպես են պատկերված, որ դիտողին թվում է, թե նրանք գնում են դեպի ձախ: Չիերը շարժվում են դանդաղ և համաչափ ընթացքով: Նրանց գլուխները պարզարված են հատուկ կախիչներով, իսկ պոչերը սովորաբար հանգուցված և կապված են: Խաչքարերի վրա պահպանված կցագրերը բաշխված են միշտ նույն տեղերում, նկատի են առնված տեղի սուղ հնարավորությունները:

Խաչենի խաչքարերը հետաքրքրական են և մի այլ տեսակետից: Հանդիպում են խաչքարեր և սովորական գերեզմանաքարեր, որոնք իրենց վրա պատկերված պահում են նաև միջնադարյան շրջանի երաժրշտական գործիքների և երաժիշտ կատարողների մասին արժեքավոր վկայություններ:

Գանձասարի մոտ գտնվող Վանք գյուղի Պատավաձոր և Դարբասներ հնավայրերում մենք տեսել ենք այդպիսի երկու խաչքարեր: Դրանցից մեկի վրա քանդակված է մի երաժիշտ այր՝ երաժշտական գործիքը ձեռքին: Պատկերաքանդակի ֆոնի վրա լավ երևում են երաժշտի մատները, որոնք կարծես թե դրված են գործիքի լարերի վրա: Ոչ պակաս ուշագրավ է նաև նվագածուկի կեցվածքը: Գլխին դրած է երկարավուն գլխարկ, որի ականջակալները հասնում են մինչև ուսերը: Վերնազգեստի ծալքերը իջնում են ծնկներից ցած, իսկ ոտքերին՝ գուլպաների վրա բարակ տրիսատաններ են անցկացված: Հետաքրքիր ձևով են ներկայացված երաժշտական գործիքի առանձին մասերը: Նվագարանի գուշը երկար է, գրեթե այժմյան թառի չափ, իսկ գրիֆը համեմատաբար կարճ է, բայց լայն: Երաժշտի վզից կախված նվագառանն ուսերու պարանի ծայրերը ամրացված են գուշի և գրիֆի ներքին մասերին: Խաչքարերի վրա բարեբախտաբար պահպանվել են թվակիր տառեր և վեց կիսատ տողով արձանագրություն: Պարզվում է, որ այս խաչքարը 13-րդ դարի առաջին քառորդում է կանգնեցվել:

Դարպասների խաչքարը, որն ունի նուրբ հյուսվածքով պարզաքանդակներ, նույնպես կանգնեցվել է կատարող երաժշտի՝ այս անգամ կին գու-

սանի պատվին: Հարթաքանդակների մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ռազմի դաշտից հաղթանակով վերադարձած հեծյալի և երգող կնոջ կուսակցիցին դիմապատկերները: Հեծյալ պինդորի սաղավարտի ականջակալները ծալված են ծոծրակի վրա, սուրը կախված է գոտուց, ձեռքին բռնած նիզակը ցած է իջեցված: Ինչ վերաբերում է կնոջը, ապա նա պատկերված է դիմացից և նկատելի են գլխաշորի ծալքերը, որոնց ծայրերը հասնում են մինչև կուրծքը: Աջ ձեռքում նա բռնել է երաժշտական գործիքը, մյուս ձեռքը թեթևակի թեքված է դեպի ձախ: Այս խաչքարը վերաբերում է 12-րդ դարի վերջին և համարվում է հազվագյուտ կոթող, կին երաժշտի բարձրաքանդակով հանդերձ: Ի դեպ, ուշ միջնադարյան ժամանակաշրջանի երաժիշտ կատարողների դիմապատկերներ են քանդակված Հաղրութի և Տողի հին գերեզմանատների տապանաքարերի վրա:

Անհրաժեշտ է նշել, որ «Այդ մեծարվեստ քանդակները իրենց էությունը ոչ մի կապ չունեն կրոնական հասկացությունների հետ, դրանք դուռ աշխարհիկ ու ժողովրդական արվեստի արտահայտություններ են: Նույնիսկ կենտրոնում անպայմանորեն բազմած խաչը ենթարկվում է պարզաքանդակի և կորցնում խաչելության հետ կապված իր մտայն բովանդակությունը»¹⁸:

ԽՈՒՄԱՆԱԲԵՐԴ ամրոցը եղել է «Հասան-Ջալալեան մեծահամբավ իշխանական տոհմի...»¹⁹ վարչական կենտրոնը: Գտնվում է Գանձասարից հարավ, Խաչենագետի աջ ափին, մի բարձր անտառապատ բլրի գագաթին: Արցախի պատմության մեջ այն հայտնի է «Խախանաբերդ»²⁰, «Նոյախան բերդ»²¹ անուններով, հետագայում կոչվել է նաև «Դարպասներ»²²:

Կեչառիսի վանքի վերակառուցման առթիվ Հասան-Ջալալն իր քանդակած արձանագրության մեջ իրեն կոչել է «տեղ Խոյախանաբերդոյ»: Ճիշտ է, Խոյախանաբերդի տերերն ունեն նաև ուրիշ հուշակավոր բերդամրոցներ, ինչպես բարձր ու անմատչելի Կաչաղակաբերդը՝ Քոլատակ և Պատարա գյուղերի միջև, մի բարձր ու անմատչելի ժայռի վրա, Ջրաբերդը Թարթառի ափին, Դեռ, Ծիրանաբար օժանդակ բերդերը՝ դարձյալ Խաչենագետի աջ ափին: Սակայն, ինչպես նշվեց, Խոյախանաբերդն էր իշխանանիստը և Խաչենի պայապատներն իրենց տիրապետությունը

18 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 136:

19 Արցախ, էջ 181:

20 Կ. Գանձակեցի, էջ 269:

21 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, 1969, էջ 317:

22 Ե. Մկրտչյան, Մարտակերտի շրջանի պատմական հուշարձանները, «Էջմիածին», 1976, Գ, էջ 49:

17 Այս բարձրաքանդակները կատարման ոճի տեսակետից հար և նման են Հայաստանի մյուս մարզերի, հատկապես միջնադարյան քաղաքամայր Անիի նույն կարգի ստեղծագործություններին: Իրավացի է Բ. Ուլուբաբյանը. «Խաչենի մշակույթը չի կարելի պատկերացնել հայկական ընդհանուր կյանքից մեկուսի: Այն հանուր հայության մշակույթի մի օղակն էր, հետևապես սնունդ էր առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստն էր բերում համապատասխան մշակույթի գանձարանին» (Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 244):

շեշտում էին այս բերդի անունով. «տէր Խոխանաբերդոյ», նշանակում էր «Խաչենի իշխան»²³:

Գանձասարի շրջակայքում գտնվող այս բերդերը վտանգի դեպքում հյոր վահան էին դառնում հռչակավոր վանքի և երկրամասի պաշտպանությունը կապակերպելու համար:

Երբեմնի բարեշեն ամրոցից մնացել է «Մի ընդարձակ շինութիւն...— անցյալ դարի վերջին գրել է Մ. Բարխուդարյանը,— որ իւր մեջ ունի շատ սենեակներ մի քարուկիր պարսպի մէջ: Ջալալ Դօլայի ապարանիս մէջ աւելի ուշագրաւ է ընդունարանն և մի այլ սենեակ, որք ներկայացնում են ժամանակին ճարտարապետութեան և ճաշակին ոճը: Բարձրաշէն, ամրապատ, թաղակապ և գեղեցկատես են սենեակներս: Թաղերի տակ շարուած են վայելուչ և բարակ խոյակներ, որոնց վերայ դարձրած ապա թաղերի կամարների վերայ, որք չէջ քարի պակի տեսակիցն են, համակ սրբատաշ: Առհասարակ սակաւ են լուսամուտներն և փոքր: Չկարողացանք իմանալ սենեկաց թիւը, քանզի ծածկուած են խտացեալ մացառով, ծառերով և մորենիներով: Անհնար է հետապօտել առանց մացառուտը հարթելու»²⁴: Արդպէս էր 19-րդ դարի վերջին: Իսկ այժմ հասկիւ են երևում (ծառերի ու թփերի արանքում սեղմված) միջնադարում կառուցված գեղեցիկ պալատների հիմնապատերը: Նույնիսկ այս վիճակում էլ այն ազդեցիկ և ուշագրավ է:

Բերդի ներսում, ավերակ պալատից մի քանի մետր հեռու, կողք-կողքի կառուցված են երկու եկեղեցիներ: Սրանք միջին մեծության բազիլիկներ են, որոնցից հարավայինին կից է փոքրիկ գավիթ-սրահը, իսկ մյուսը արևմտյան կողմից ունի փոքրիկ շինություն՝ լրիվ փլված վիճակում:

Նույն ոճի և մեծությամբ, նույնիսկ նույն դիրքում գտնվող երկու եկեղեցիներ կան այստեղից ոչ այնքան հեռու, Խաչենագետի ձախ ափին, «Քերխանի հարթ» հնավայրում: Միջնադարյան գյուղատեղին, որ կոչվում է նաև Պառավաձոր անունով, բռնում է ահագին տարածություն: Հիմնովին ավերակ գյուղատեղիի շրջակայքում ընդարձակ գերեզմանատուն է՝ խաչքարերով և 12—13 դարերի տապանաքարերով:

1180, 1183 և 1228 թվագրություններ ունեցող խաչքարերի վրա պատկերված են հեծյալ և հետիոտն ռազմիկներ, ձեռքներին՝ նետ ու աղեղ և նիզակներ, գլխներին՝ սաղավարտ և երկար չուխաներ: Խաչքարերից մեկի վրա կնոջ քանդակ կա իր դարաշրջանի տարապով: Գիտության համար հույժ ուշագրավ այդ բարձրաքանդակները կարևոր աղբյուր-

ներ են հանդիսանում Արցախի միջնադարյան պատմության համակողմանի ուսումնասիրման համար:

ՀԱՎԱՊՏՈՒԿ ՎԱՆՔԸ կոչվում է նաև Հավոցպտուկ և գտնվում է Գանձասարից մոտ 5 կիլոմետր դեպի հարավ, մի բարձր լեռան գագաթի վրա: Վանքի համալիրը հիմնականում բաղկացած է ոչ մեծ եկեղեցուց, գավթից և մեկ ուրիշ փոքր եկեղեցուց: Շրջակայքում նկատվում են շինությունների հետքեր: Եկեղեցու արևելյան մասում բլրալանջին տարածվում է գերեզմանոցը, զանազան ձևերով մշակված կենցաղային ու երկրաչափական քանդակներ ունեցող տապանաքարերով: Մեկ ուրիշ գերեզմանոց էլ գտնվում է քիչ հեռու՝ Գանձասարի ճանապարհին: Գետնասփյուռ տապանաքարերի մեջ կանգնած բազմաթիվ խաչքարերը, որոնք դեռ իրենց վրա խնամքով պահում են շատ գաղտնիքներ, Հասան-Ջալալյանների շինարար ու ապատատենչ տոհմի պատմությունը լուսաբանող արձանագրություններ ունեն:

Հարավային եկեղեցու խորանի ձակատակալ քարերի վրա պահպանվել է 9 տողով շինարարական արձանագրություն. «Թիվն ՈԶԲ էր: Յիշխանութեան Հասանայ որդոյ Վախտանգայ եւ ամուսնոյ նորա Մամբանայ եւ տէր Յոհան քվերորդի տէր Գրիգորոյ եւ Գևորգ եղբարորդի եւ այլ միաբանքս շինեցաք եկեղեցիքս ի փրկութիւն հոգոց մերոց և յիշատակ ծնողաց մերոց...»²⁵:

Ըստ արձանագրության եկեղեցին կառուցվել է 1233 թվականին, Հասան-Ջալալ Դոլայի իշխանության օրոք:

Եկեղեցին փոքր է, ուղղանկյուն հատակագծով, ծածկը թաղակապ է, պատերը շինված են անմշակ կրաքարերով:

Այստեղի հուշարձանների մեջ հատկապես ուշագրավ են այն բազմաթիվ խաչքարերը, որոնք ցիրուցան գտնվում են գերեզմանոցում և ժամանակին կանգնեցվել են իբրև մահարձան-տապանաքարեր: Ճարտարապետական որոշակի ձևավորում ստացած այս խաչքարերը կերտված են բարե մեծ սալերից: Ունեն մեկ մետր և նույնիսկ ավելի բարձրություն: Դեպի արևմուտք ուղղված ձակատային կողմը լրիվ քանդակավարդ է, իսկ հակառակ երեսը՝ հարթ: Խաչքարերի հարդարանքի մեջ պատկերավոր արտահայտված է խաչը, որի շուրջն ամբողջովին պատած են բուսական և երկրաչափական բարդ ու վերին աստիճանի նուրբ վարդաքանդակներով:

Այս խաչքարերի բարձրաքանդակներն ավելի հետաքրքիր են դառնում նաև նրանով, որ սովորաբար սրանք ուղեկցվում են վիմական արձանագրություններով: Այդ կարևոր վավերագրերի հաղորդած տվյալները

²³ Նույն տեղում:

²⁴ Արցախ, էջ 181:

²⁵ Արցախ, էջ 182:

միանգամայն ակներև են դարձնում հուշարձանի թվականը, կանգնեցնելու առիթը, պատվիրատուի, երբեմն նաև քարգործ վարպետի անունը:

ՎԱՃԱՌ.— Այս անունով ավերակ գյուղաքաղաքը գտնվում է Գանձասարից արևելք, Ծմակահող գյուղի արևելյան մասում, համանուն գետակի ձախ ափին: Ավերակները, միջնադարյան քաղաքատիպ ավանին հատուկ տնատեղերի, խանութների, արհեստանոցների և եկեղեցիների մնացորդներ են:

Թեև գյուղաքաղաքի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ այն բարգավաճումն է հասել 12—13-րդ դարերում, հատկապես Խաչենի տեր Հասան-Չալալի օրոք:

Առաջին արձանագրությունը, որ պատկանում է Հասան-Չալալի կառուցողական գործունեությանը, պահպանվել է այստեղ, նրա տոհմին պատկանող այս ավերակներում: «Ես Հասան՝ որդի Վախտանգայ եւ Խորիշահի, տեր Խաչենոյ, շինեցի զսուրբ եկեղեցիս... ՌՃԸ (1229)»²⁶:

Ապա գալիս են նրա կանգնեցրած գեղեցկաքանդակ խաչքարերը նույն Վաճառում, որոնք թվագրվում են մոտավորապես նույն ժամանակաշրջանով և բացառիկ նշանակություն ունեն այն տեսակետից, որ իրենց վրա կրում են ժամանակի աշխարհիկ դրոշմը: Իշխանի կատարած գործի համարյա յուրաքանչյուր մանրամասն արձանագրված է Խաչենի տարածքի ու հարևան գավառներում պահպանված խոսուն քարերի վրա, Գանձասարի վանքին նվիրված նրա ձեռագիր Աստվածաշնչի հայտնի հիշատակարանում և այլուր: Նրա մասին է խոսում նաև իր իսկ գործածած թրի այն նեֆրիտի երախակալը, որի վրա նախշանկար քանդակված է «Հասան Չալալ իշխան Խաչենոյ»²⁷:

Ոչ պակաս ընդարձակ տարածություն է բռնում **Վաճառի գերեզմանատունը**, որի մեջ սրբատաշ որձաքարով կառուցված է մի **եկեղեցի**: Եկեղեցու հարավային կողմում գրեթե պատկից շինված է մի երկհարկանի փոքր մատուռ, նույնպես մշակված, հղկված քարից:

Եկեղեցին թաղածածկ դահլիճի հորինվածքով բազիլիկ է, ունի երկու շինարարական արձանագրություն՝ մուտքի տիմպանի վրա և արևմտահայաց ճակատին: Այդ արձանագրություններից պարզվում է հուշարձանի կառուցման ճշգրիտ ժամանակը, կառուցող մեկենասը և քարգործ վարպետը:

Բավիլիկը կառուցել է Սարգիս քարգործ վարպետը: Ահա նրա թողած արձանագրությունը. «Կաման այ ես Սարգիս Կարնոյ քաղաքացի սպեցի զեկեղեցիս և կանգնեցի վիսաչերս ինձ և աշակերտի իմոյ Յովհաննեսի, յաղալթս»²⁸:

²⁶ Արցալի, էջ 182:

²⁷ Ст'а И. А. Орбели, Нефритовая ...рукоять, стр. 135—145

²⁸ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 146:

Թեև արձանագրության մեջ թվականը չկա, բայց այլ արձանագրություններից հայտնի է, որ այդ եկեղեցին 1229 թ. շինություն է: «Կարծում ենք,— գրել է Ս. Բարխուդարյանը,— որ Սարգիս և իր աշակերտ Հովհաննեսի աշխատանքները այդ թվականից շատ շուտ լինել չէին կարող, մանավանդ, որ կան նաև այլ հուշարձաններ նույն վայրում, բոլորն էլ իրարից մոտիկ թվականներով շինված, համարվում է 13-րդ դարի կեսերի գործ»²⁹:

ՔՈՒՍՏԱԿ

Խաչեն գավառի գյուղերից է Քուլատակը: Նրա հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Սակայն գյուղի տարածքում գտնվող բավմաթիվ պատմական հուշարձաններ վերաբերում են 9—17-րդ դարերին:

Շատ հետաքրքիր կառույց է գյուղից 10 կմ հեռավորության վրա գտնվող **Անապատ** պատմական հուշարձանը: Մի գեղեցիկ բլրի կառույցին, պաշարված դարավոր անտառներով, Անապատը արտաքուստ բավականին գեղեցիկ, նրբակերտ քանդակներով ու տասնյակ արձանագրություններով հուշարձան է՝ կից այլ շինություններով:

Երևում են բաղնիքի կիսավեր պատերը, որոնցով անց են կացված տասնյակ կավե խողովակներ (թունգեր): Ամենից ուշագրավն այն է, որ Անապատի մեջ տեղադրված են խաչքարեր՝ ողկույզների պատկերներով, և սալաքարեր: Պարզորոշ երևում է, որ Անապատը 14-րդ դարից առաջ է կառուցված եղել:

Անապատից քիչ ցած, բավականին ընդարձակ տարածություն է կազմում **գերեզմանոցը**: Ինչպես գերեզմանաքարերը, այնպես էլ Անապատի շարվածքի քարերը մեծ են:

Խաչեն գետի ձախ ափին գտնվող հին, կործանված ջրաղացներն ու նրանց ջրաղացքարերը, որոնք դեռ լավ պահպանվում են, խոսում են այն մասին, որ ոչ հեռու ժամանակներում Անապատը իր անտառային հարստություններից բացի ունեցել է նաև մի քանի ջրաղացներ, որտեղ վարձով աղացվել է շրջակա գյուղացիների հացահատիկը:

Գյուղի տարածքում գտնվում են մի շարք **եկեղեցիներ**: Դրանք բոլորն էլ թաղված են անտառների մեջ:

Դրանցից **Եխծուն խուր**, **Հնձանի եկեղեցին**, **Մատուռի եկեղեցին**, **Չառունց տափեն եկեղեցին** գտնվում են բարվոք վիճակում և ճարտարապետական հիանալի մտահղացումների արդյունք են: Մյուսները կի-

²⁹ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 146:

սավեր վիճակում են: Եկեղեցիները հիմնականում 16—18-րդ դարերի բազիլիկներ են:

Քոլատակի շրջակայքում շատ են նաև հին գյուղատեղերը: Դրանցից մի քանիսին տեղացիներն անվանում են՝ Հնձան, Այանվերան, Կչորան, Բեշտան, Մոշի հող, Հունտոսի, ճրտապաս, Մղոնդաց Թալա, Շահեն սեռ, Եկեղեցու խութ և այլն: Նշված գյուղատեղերում մնացել են փլատակներն ու գերեզմանոցները:

Այդ բնակավայրերն ավերվել են 18-րդ դարի վերջերին թուրք բռնակալների կողմից:

Ս. ՀԱԿՈՒՄ ԿԱՆՔԸ համարվում է Քոլատակի ամենանշանավոր հուշարձանը: Այն գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հյուսիս ընկած մի լեռնաբազուկի վրա: Պատմական գրականության մեջ հայտնի է նաև Մեծառանից վանք: Ինչպես հայտնի է, Մեծառանքն Արցախի հին գավառներից մեկի անունն է: Հետագայում կոչվել է նաև Ներքին Խաչեն:

Բուն վանքի հիմնադրման վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չկան: Արձանագրություններից ամենահինը փորագրված է մի խաչքարի պատվանդանի վրա, որը հետագայում տեղադրվել է եկեղեցու պատի մեջ, որպես շինաքար, և վերաբերում է 851 թվականին: Մյուս գրավոր տեղեկությունը գտնվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի մի հիշատակարանում: Այստեղ մագաղաթը խոսում է այն մասին, որ ս. Հակոբա վանքի կառուցողներն են եղել Հասան Ջալալի ծնողները՝ Վախտանգն ու Խորիշահը:

Խորիշահն իր մի արձանագրությամբ պատմում է. «...վերստին շինեցի Կեկեղեցին Մեծառանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս յիշեցէք»³⁰:

Խոսքը ս. Հակոբա վանքի մասին է, որը և Խոխանաբերդի ճյուղի հոգևոր կենտրոններից է եղել: Սակայն այստեղ «վերստին շինեցի» արտահայտությունը պետք է հասկանալ վերակառուցման, նորոգման իմաստով: Այժմ էլ դժվար չէ համոզվել դրանում: Նախկին շինությունների քարերը նորոգիչները հենց այնպես, ցաք ու ցրիվ տեղադրել են պատերի մեջ, այնպես որ գերեզմանաքարերը պատի մեջ են դրել, խաչքարերը՝ առաստաղին: Արձանագրություն պարունակող, հղկված քարերը՝ անկյուններում: Մի խոսքով՝ շինությունները կարկատանի տպավորություն են թողնում: Ամենայն հավանականությամբ ս. Հակոբա վանքը, բացի 1212 թվականի վերակառուցումից, հետագայում, մոտավորապես 15—16-րդ դարերում, ենթարկվել է նորոգման: Այդ է հաստատում այստեղի մի անթվակիր փոքրիկ արձանագրություն:

Վանքի համալիրի բոլոր շենքերի ճարտարապետական ձևերը ցցուս կերպով ժամանակագրություն չեն մատնանշում, որովհետև բոլորն էլ Վուրկ են քանդակներից: «Բոլոր դեպքերում,— գրել է Ս. Բարխուդարյանը,— նրա հիմնադրումը 9-րդ դարից շատ ավելի առաջ է»³¹:

Ս. Հակոբա վանքի համալիրի առաջին եկեղեցին երկարավուն բազիլիկ ձևի շինություն է: Իր տեսքով այն շատ մոտ է Անոնդաց անապատին: Տարբերությունն այն է, որ այս եկեղեցում բեմը սովորականից շատ բարձր է և այնտեղ կարելի է բարձրանալ միայն հարավային կողմի աստիճաններով:

Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավային և արևմտյան կողմերում: Արևմտյան պատի երկայնքով կառուցված է գավիթ-սրահը, դարձյալ անտաշ քարով շարված: Գավթից եկեղեցի տանող մուտքի երկու կողմերում դրված են խաչքարեր՝ 1223, 1225 թվագրություններով ու բարձրաքանդակներով:

Այս եկեղեցու արևմտյան պատին կից կառուցված է մեկ ուրիշ եկեղեցի: Թե դիրքով, թե ոճով իրար նման այս եկեղեցիների հարավային ճակատի ամբողջ երկարությամբ ձգվում է եռակամար մի բաց սրահ, որի միջին բացվածքը ավելի մեծ է: Այստեղ, ի տարբերություն մյուս հուշարձանների, գավիթը ընդհանուր է երկու եկեղեցիների համար և իր բարձրությամբ հավասար է նրանց բարձրությանը: Այնպես որ գավիթ-սրահը դառնում է եկեղեցիների ծավալային հորինվածքի օրգանական մասը, իսկ գավթի եռակամար ճակատը՝ եկեղեցիների գլխավոր ճակատը: Այդ տեսակետից ս. Հակոբա վանքը ճարտարապետական որոշակի հետաքրքրություն ներկայացնող հուշարձան է:

Վանքն ունի շրջապարիսպ, որի կենտրոնում են գտնվում եկեղեցիները, իսկ շուրջը տարածվում են միաբանների ավերակ խուցերը, տնտեսական շենքերը: Վանքի շինությունների վրա մնացած 41 արձանագրությունները խոսում են այն մասին, որ այն եղել է Արցախի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը:

ԿԱԶԱՂԱԿԱԲԵՐԴ

Շատ հեռվից երևում է Կաչաղակաբերդը՝ Արցախ աշխարհի ամենաբարձրադիր բերդերից մեկը: Կաչաղակաբերդը, բնական այդ ահռելի ամրոցը, Մեծառանից վանքի ժամանակակիցն է: Այն ամրացվել և բոլորովին անմատչելի է դարձել Մեծառանից գավառի տերերի կողմից, արաբական արշավանքներից պաշտպանվելու նպատակով:

³⁰ Արցախ, էջ 171, «Բանասեր», 1901, էջ 142:

³¹ ԼՂԻՄ պատմաերկրագիտական թանգարան, ֆ. 1, (Պատմական հուշարձաններ). էջ 170:

Բավականին տարածություն է կբաղեցնում բերողը: Կան բազմաթիվ բնակարաններ, ժայռափոր անցքեր, քարեր գործելու նպատակով կառուցված «կրակակետեր»: Անաղիկ բերդի պաշտպանները կենտրոնական մասում կառուցել են մի վիմափոր քառանկյունի ջրհոր: Պատերապանների ժամանակ այն լցնում էին ջրով:

Կաշաղակաբերդից հեռու, կապույտ մշուշի մեջ, ուրվագծվում է հիասքանչ մի այլ տեսարան՝ բարձրանիստ լեռների համայնապատկերում նշմարվում է իր հազարամյա հնությանը հռչակված Թարթառի հովիտը:

*
*

Նշվածներից բացի Գանձասարի շրջապատում կան նաև բազմաթիվ այլ հուշարձաններ, որոնց մասին տալիս ենք համառոտ տեղեկություններ:

1. **Համամի եկեղեցին՝** քարաշեն, քանդակազարդ, գտնվում է Գանձասարից դեպի հարավ, Համամի Իջիանի անունով կոչվող ձորում՝ ներկայիս Գանձաքար գյուղի մոտ: Կառուցվել է միջնադարում:

2. **Մուղդիսին եկեղեցին,** Մոշահավի աղբյուրի մոտ:

3. **Հանգած եկեղեցին (13-րդ դար),** Հունտոի Թալա կոչվող վայրում:

4. **Մատուռի գյուղատեղին՝** հանգստարանով հանդերձ:

5. **Փանջաքար գյուղատեղին:**

6. **Ջրհորի (Ջրհորների) քարը:** Այստեղ իրար կողքի գտնվում են մի քանի ժայռափոր ջրամբարներ:

7. Գանձասարի հյուսիս-արևելյան մասում է գտնվում **Վանքի աղբյուրը՝** կառուցված 13-րդ դարում, սրբատաշ քարից:

8. Աղբյուրից քիչ վերև՝ Հարթավայր տեղամասում կան երկու խաչքարեր՝ «Սանա խաչ» անունով:

9. Վանք գյուղից հարավ-արևմուտք գտնվում է **Ռուպանի** (Հասան-Չարալի աղջկա անունով) բերդը, եկեղեցին, բնակատեղեր, գերեզմանոցը:

10. Ռուպանի բերդից ոչ այնքան հեռու գտնվում է **Գարպասների աղբյուրը**, որի մոտ կան երկու մեծ եկեղեցիներ: Տեղանքը հիշվում է նաև եկեղեցիների յալ անունով: Այստեղ է գտնվում ձարտարապետական մի որաշալի կոթող՝ **Փամասունք:**

11. Եկեղեցիներից դեպի արևելք գտնվում է երկրորդ աղբյուրը, որին տեղացիները անվանում են **Արան կամ Արաղբյուր:** Այստեղից քիչ դեպի արևմուտք՝ **Գերեզմանի յալ** տեղամասում նշմարվում է **Թարխանի բերդը** իր սառնորակ աղբյուրով: Բերդի ներսում պահպանվում են երկու

հնաշեն ջրհորներ՝ 6 մետր խորությամբ, 3 մետր լայնությամբ: Բերդի կատարին նշմարվում է գյուղապետի **հետքեր**, որտեղից իջնող ժայռափոր սանդուղքները պահպանվում են:

12. **Պեխե աղբյուրի գյուղատեղին** տարածվում է Գանձակ գետակի ձախ մասում:

13. **Գարբասու բնակավայրի** ավերակները գտնվում են Թարխանաբերդի մոտ:

14. **Իրիցին գուներ** գյուղատեղին գտնվում է Գանձակի աջ ափին:

15. **Թախտեն կամուրջը՝** Խաչենագետի վրա:

16. **Խոխին, Կյիրատան և Սղնախ** հնավայրերում պահպանվել են արտադրական բնույթի կառույցների մնացորդներ:

ՉԼԻՐԱՆ

Մարզային թանգարանի «Պատմական հուշարձաններ» ֆոնդում, ըստ գյուղերի, հաշվառման են վերցված գրեթե բոլոր բնական և պատմական հուշարձանները: Ահա թե ինչ հուշարձաններ են նշված Չլիրան, Առաջաձոր, Մարտակերտ և Կուսապատ բնակավայրերի դիմաց:

1. **Ամենափրկիչ վանք:** Այն գտնվում է Պողոսագուներ, Կճողոտ և Չլիրան գյուղերի միջև:

Բոլորաձև, բարձր ու գեղեցիկ եկեղեցին ունի տաճար, գավիթ ու բնդարձակ գերեզմանոց: Վանքը հիմնադրվել է 1669 թվականին Հովհաննես Կրոնավորի կողմից:

2. **Նահապետի եկեղեցի,** սրբավայր, գտնվում է Ախպերջան տեղամասում, մասամբ քայքայված է, շուրջը կան հին ու նոր գերեզմաններ:

3. **Կարմիր եկեղեցի:**

4. **Հնձախութ հին գյուղատեղի:** Մինչև օրս մնում են կործանված շենքերի ավերակները: Այստեղ բավական տարածություն են բռնում կործանված գյուղի տանձենու այգիները: Նույն վայրում է գտնվում Չլիրանի լավագույն աղբյուրներից մեկը՝ «Չըջըջ»-ը:

5. Չլիրան գյուղի հարավ-արևմտյան մասում է գտնվում **Սառնատուն կոչվող քարայրը**, որտեղ տարին բոլոր սառույցը չի հալչում: Քարայրից սկիզբ է առնում «Ղրմա» սառնորակ աղբյուրը:

6—10. Գյուղի շրջակայքում անտառի մեջ թաղված են «Հացուտ», «Էվեր հողեր», «Կենեն պատ» հին գերեզմանոցները: Բոլոր այդ հնությունների փլատակներում առանձին քարերի վրա մնացել են արձանագրությունների պատառիկներ:

ԱՌԱՋԱՉՈՐ

1. Հարվա կամ, ինչպես աղբյուրներում է հիշվում, Անապատ եկեղեցին գտնվում է գյուղի հարավային մասում եղած քերծի տակ: Այն բաղկացած է իրար կից երկու այրերից: Շինարարներն այնպիսի հստակությամբ են շարել այրերի բացվածքը, որ արտաքինից դրանք երևում են որպես երկու առանձին մատուռներ, իսկ ներսից նման են կիսաժայռափոր սրահների: Այստեղ ընկած է մի հսկայական ժայռաբեկոր, բնականից բավական ողորկ մակերեսով: Նրա վրայի 1249 թվագրություն ունեցող արձանագրությունը փորագրված է յոթ տողով: Առաջին մատուռի դռան ճակատակալ քարի վրա երևում են որմնանկարների պատառիկներ: Դժբախտաբար կորստի են մատնվել պատկերները, այդ պատճառով էլ դժվար է որևէ կոնկրետ բան ասել որմնանկարների մասին:

2. Մյուսը ս. Աստվածածին անունով եկեղեցին է, որը գտնվում է գյուղամիջում: Կառուցվել է 1668 թվականին, եռանավ բազիլիկ տիպի հորինվածքով: Մինչև սույն դարի սկզբները այստեղ պահվում էին երկու նշանավոր ձեռագիր մատյաններ: Այժմ դրանք գտնվում են Երեվանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

ԳՅՈՒԼԱԹԱՂ

1. Մելիք-Ավերդյանների ամրոցը գտնվում է Գյուլաթաղ գյուղի մեջ: Ունի 35 մ երկարություն, 14 մ լայնություն: Երկու կողմերից բարձրանում են բրգաձև աշտարակները: Պատերի հաստությունը 1—2 մետր է. կոպտատաշ քարից: Ամրոցը միայն դրսից, այն էլ հարավային կողմից. պաշտպանական կառույցի տպավորություն է թողնում, իսկ ներսից, մանավանդ հյուսիսից, այն փոփոխվել և օգտագործվում է դպրոցի կողմից որպես օժանդակ շինություն:

2. Շրնատեղ— գտնվում է Գուլաթաղից հարավ-արևմտյան կողմում, մոտ 4 կմ հեռավորության վրա: Այն իրենից ներկայացնում է հին ավերված գյուղատեղի, որտեղ պահպանվում են տնատեղեր, փլված եկեղեցու սրբատաշ քարեր: Դեռ երևում են հնագույն գերեզմանատան տապանաքարերը, արձանագրություններ պարունակող խաչքարերի բեկորները: Այս հնավայրը միաժամանակ կոչվում է Սամբաղ կամ Սամերուկ-բաղ (այգի):

3. Հին գերեզմանատուն— գտնվում է Շինատեղի հարավային թևում՝ ձորի գլխին: Գերեզմանոցում պահպանվում են վիմագրեր ունեցող բազմաթիվ տապանաքարեր: Այս գերեզմանոցում են թաղված Ջրաբերդ գավառի նշանավոր Մելիք-Ռուստամը, հայ ազգային-ազա-

տագրական շարժման ակտիվ մասնակիցները, արցախյան բանակի բաջ փնվորները:

4. Կոտրած եկեղեցի— գտնվում է Գյուլաթաղի հարավ-արևմտյան մասում, գետակից 10 կմ հարավ՝ Չոքման կոչվող տեղամասում: Եկեղեցին մինչև վերջերս կանգուն է եղել:

ՄԱՐՏԱԿԵՐՏ

1. Մարտակերտի եկեղեցին (անհամեմատ նոր է՝ 1883 թվականից) փոքր է, ուղղանկյուն հատակագծով, ծածկը թաղակապ է, պատերը շարված են կոպտատաշ կրաքարի մանր բեկորներով, կրաշաղախով: Եկեղեցուն կից՝ բլրալանջին տարածվում է գերեզմանոցը, զանազան ձևերով մշակված կենցաղային և երկրաչափական քանդակներ ունեցող տապանաքարերով:

2. Շրջկենտրոնից ոչ այնքան հեռու, «Թապա խաչ» սարի արևելյան լանջին, «Դեմի կապ» տեղամասից մինչև «Երեք բլուր» վայրը փռված է մի ընդարձակ գյուղատեղիի ավերակներ: Այստեղ դեռ տեսանելի են տնատեղերը, երկու ավերակ եկեղեցիների հիմնապատերը և հանգրստարանը:

ԿՈՒՍԱՊԱՏ

Գյուղը ձգված է խոր ու վառիթափ ձորի աջ հեղեղատի եկերքով, Մարտակերտից դեպի լեռնային Հաթերք բարձրացող ճանապարհի ուղղությամբ:

Այստեղի վաղեմի կյանքի մասին անգնահատելի իրեղեն վկայություններ են համարվում հուշարձանները: Ահա դրանցից մի քանիսը.

1. Գյուղի Աստվածածին եկեղեցին, որն ունի եռանավ բազիլիկ ձև, կառուցվել է 1269 թվականին: Արձանագրության համաձայն այս եկեղեցին վերջին անգամ վերանորոգվել է 19-րդ դարի կեսերին:

2. Նահատակ ուխտատեղին գտնվում է Կուսապատից դեպի հարավ, Հոռաթաղ գյուղի դիմաց՝ լեռան կատարին: Հենց այս նույն լեռան դիմաց ցցված է մի ուրիշ լեռ, որի գագաթին նշմարվում են վերը նշված «Կոտրած եղցի» հուշարձանի ավերակները: Այստեղից Մարտակերտ են տեղափոխվել մի քանի վարդաքանդակներ:

3. Ինն-մասի կամ Անապատ կոչվող եկեղեցին կառուցված է սրբատաշ քարով: Այն ունի թաղածածկ դահլիճի հորինվածք: Պահպանվել է շինարարական արձանագրությունը. «Ի 1881 ամի շինեցաւ սուրբ ռիստս Ինն մասոնց տրօք ժողովորոց ի ժամանակս Հովսեփ Վարդապետի Փնաջեաց»:

Անապատի արևելյան մասում են գտնվում մի այլ եկեղեցու ավերակները: Այս հուշարձանի շրջապատում պահպանվել են Հին Մոխրաթաղ գյուղի տնատեղերը:

Ինչն մասի արևելյան թևում, բերդապարիսպների ներսում, տեղադրված է **Մելիք Բարսեղյանների ապարանքը**: Անցյալ դարի վերջերին այստեղ եղել է Մ. Բարխուտարյանը: Ամբողջական տեսքով մնացած շինությունների մասին նա գրել է. «Ամբողջ ապարանն բաղկացած է տասներկու սենեկից, որք ունին զանազան ձև և տարբեր մեծություն: Սենեակներն եղած են ընտանեկան սենեակ, ննջարան, ընդունարան, դատարան, թոնրատուն, խոհանոց, սպասաւորանոց, գոմանոց: Այս ամենի յուսամուտներն բացուած են բերդի ներսի կողմից: Արևելյան կողմից հաշուելով չորրորդ սենեակն ունի քառակուսի ձև և երդիկ, ամբողջապես քարուկիր շինուած...»:

4. **Խաչ-Խոռհատ** գյուղատեղում պահպանվում է փոքր չափերի եկեղեցին, սրանոցի ավերակները և ընդարձակ գերեզմանոցը:

բ) ԹԱՐԹԱՌԻ ՀՈՎՏԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Մարտակերտի, ինչպես նաև հարևան աղբբեջանական մի շարք շրջանների կյանքում դարեր շարունակ հսկայական դեր է խաղացել և այժմ էլ խաղում է Թարթառը՝ Ղարաբաղի լեռնային գետերից ամենամեծը:

Թարթառն ունի 3350 քառակուսի կիլոմետր ջրահավաք ավազան, 213 կմ երկարություն: Նրա վտակների ընդհանուր երկարությունը հասնում է մոտավորապես 1000 կմ-ի: Թարթառն սկզբնավորվում և որպես մի փոքրիկ գետակ հոսում է դեպի հյուսիս, այնուհետև իր մեջ ընդունելով Ջերմուկ առողջարանի բազմաթիվ աղբյուրների ջրերը, թեքվում է դեպի արևելք, ապա անցնելով Ղարաբաղի և Մոավի լեռնաշղթաները, դուրս է գալիս նախալեռնային հարթությունը: Այստեղ է, որ գետի ջրերը ոռոգում են Մարտակերտի, Միրբաջիրի, Բարդայի, Կասում-Իսամայի, Աղդամի շրջանների դաշտերն ու այգիները:

Թարթառի հովտի պատմական և ճարտարապետական հուշարձանները դարձյալ բազմազան են:

Գետի վերին հոսանքի ձախ կողմում է գտնվում պատմական Արցախի ճարտարապետական կոթողներից մեկը՝ Դաղի կամ Խուլթա վանքի համալիրը:

Խուլթավանքից բավական ցած, գետի աջ ափին, մի գեղեցիկ ու ծանապատ հրվանդանի վրա տարածված են Խաթրավանքի կիսավեր շենքերը:

Սարսանգի պատմական կամուրջի մոտ կառուցված խոշոր ամբար-

տակից 2—3 կմ ներքև, այնտեղ, որտեղ Թրդին խառնվում է Թարթառին, աննատելի ժայռածերպի վրա կառուցված է Ջրաբերդը: Իսկ անմիջապես Թարթառի ափերին են գտնվում Երիցմանկանց, Եղիշե առաքյալի, Կաթողիկոսա սարի վանքերն ու տասնյակ եկեղեցիներ, կամուրջներ, գյուղատեղեր, մահարձաններ, մատուռներ, ջրանցքներ, բերդեր և այլ հնություններ:

ԴԱՂԻ ԿԱՄ ԽՈՒԹԱ ՎԱՆՔ


Այնտեղ, որտեղ Ղարաբաղի ու Մոավի լեռնաշղթաները մերձենում են թեք բլրակով, ոչ ընդարձակ մի լեռնահովիտ կա: Հենց այդ փոքրիկ, բայց չափազանց գեղեցիկ իջվածքի կենտրոնական բլրակի (խուլթի) վրա էլ կառուցված է հայ ճարտարապետության հիասքանչ կոթողներից մեկը՝ Դաղի կամ Խուլթա վանքը:

Իրոք, բնությունն այստեղ արտակարգ է ու շոյլ: Նկատելի է, որ Դաղի վանքի կառուցողները մեծ հոգատարությամբ են վերաբերվել բնության հանդեպ³⁶: Մեկուկես տասնյակից ավելի շենքերն այնպես են տեղադրված բլրի լանջին, որ նրանք դարձել են ամբողջ տեղանքի մի մասը, իսկ բնակարը իջվածքն օղակող բլուրներն են և նրանց վրա կախված երկինքը: Թերևս այս հանգամանքի՝ ճարտարապետական ոչ պակաս կարևոր գործոնի փայլուն օգտագործման հետևանքով է, որ Դաղի վանքի հուշարձանախումբն ամբողջապես ձուլվել է բնության հետ և դարձել նրա անբաժան մասը: Վանական համակառույցը շատ տպավորիչ է և մի տեսակ շունչ ու կենդանություն է տալիս լեռների արանքում սեղմված ձորակին ու դրանով իսկ ավելի գունագեղ դարձնում շրջապատի թեքադիր անտառների անկրկնելի համայնապատկերը: Այստեղ միանգամայն տեղին է հիշել Սյունյաց Սովի իշխանուհու խոսքերը, թե Վայոց Չորը մատանի էր առանց ակի, ես այդ ակը դրի վրան (նկատի ուներ Գնդեվանքի կառուցումը)³⁷:

³⁶ Անգամ անվանի երկրաբան Հ. Աբիխն է խոստովանել, որ ինքն անկոր է նկարագրելու ինչպես Դաղի վանքի հուշարձանները, նույնպես էլ նրա շրջապատի բնությունը: Տե՛ս Геологические наблюдения в нагорной стране между Курой и Араксом. Записки Кавказского отдела Императорского географического общества, кн. 8, 1873, стр. 63. Հայտնի է, որ անվանի գիտնականը 19-րդ դարի երկրորդ կեսին ուղքի տակ առավ ամբողջ Հայկական բարձրավանդակը, մտքիկից ուսումնասիրեց Հայաստան երկրի երկրաբանությունը և իր տեսածն ու գրի առածն ամփոփեց «Геология Армянского нагорья» երկու սովարածավալ հատորների մեջ:

³⁷ Պրոֆ. Վ. Հարությունյան, Պատմական հուշարձանների պահպանումը Սովետական Հայաստանում, «Հայրենագիտական ժողովածու», Երևան 1975 թ., էջ 53:

«Դադի» և «Խուրթա» անունների ստուգաբանությունը մեր մատենագրության մեջ տրվում է երկու կերպ, մեկը՝ կապված հայոց ավանդության հետ, մյուսը՝ տեղանքի:



Նկ. 3. Դադի վանքի պարսպից ներս գտնվող շենքերի մի մասի հատակագիծը: Չափագրություն՝ Մ. Մ. Հասարայանի:

Առաջինը կապված է ս. Թադևոս առաքյալի յոթանասուն աշակերտներից մեկի՝ Դադիի կամ Դադոյի անվան հետ, որն Արցախում քրիստոնեություն է քարոզել և այստեղ էլ նահատակվել. «Դադին» մի եւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէի ի Մեծն Հայք կողմանս հիւսիսոյ, և լուծալ վնահն Արգարու դարձաւ և եմուտ ի Փոքր Սիւնիք, և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ Դադիոս»³⁸:

³⁸ Միխայել Ստորի, ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1871, հավելված, էջ 33:

Հայտնի է, որ Հայաստանում քրիստոնեություն քարոզող առաջին առաքյալները հանդես են եկել մ. թ. առաջին դարում: Հետևապես, վանական այս համալիրի առաջին կառույցը հավանաբար հիմնադրվել է նույն դարի երկրորդ կեսին, եթե ոչ դրանից առաջ: Բայց այդ ժամանակից շատ քիչ բան է մնացել, քանի որ օտար հրոսակների ասպատակությունների ժամանակ վանքը գրեթե լրիվ ավերվել է: Պահպանված հուշարձանները վերաբերում են առավելապես 10—13-րդ դարերին:

Իսկ ինչ վերաբերում է «Խուրթա» անվանը, ապա «խուրթ» նույնն է, ինչ գրական հայերենով «բլուրը»: Ուրեմն, Խուրթավանք բառացի նշանակում է բլրի վրա գտնվող վանք:

Հայաստանի միջնադարյան պատմա-ճարտարապետական խոշոր ու ընդարձակ այս հուշարձանախումբը ազգային պատմության ու մշակույթի նշանակալից օջախներից մեկն էր: Այնօր էլ դժվար չէ տեսնել վանքի շինությունները, որոնք հիմնականում պահպանվել են և լիովին հիմք են տալիս որոշակիորեն նշելու, որ այստեղ դարեր շարունակ մեծաթիվ միաբանության ուխտ է եղել և ոչ թե սովորական եպիսկոպոսանիստ³⁹: Անցյալ դարի վերջին «Արարատ» հանդեսը գրել է. «Թադէի վանքը շրջակա շինություններով նմանվում է մարդաշատ քաղաքի մի հարուստ թաղի, որտեղ միայն մարդկանց ներկայությունն է շուռչ և կենդանություն տալիս»⁴⁰: Ուրիշ աղբյուրների հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ Դադի վանքի սպասարկող աշխարհիկ բնակչությունը կազմում էր Խոթ անունով մի մեծ գյուղ: Եվ որ այդ գյուղից միայն 300 ընտանիքներ 18-րդ դարի վերջերին տեղափոխվել են Երևանի նահանգը, հիմնել Ենգիշա գյուղը, իսկ հետագայում սրանց մի պզուկ մասն էլ գաղթել է Շուշավերի կողմերը⁴¹:

Ժամանակին վանքը կողոպտեցին պարսիկները, ապա արաբները, սելջուկները, իսկ հետագայում՝ Օսմանյան թուրքերը և կրկին պարսիկները: Դեռ ավելին, դարերի փորձությունների միջով անցած վանքը 17-րդ դարից սկսած աստիճանաբար ւրվվում է իր հարստություններից և որ ամենից ողբերգականն է, շրջակա տասնյակ հայկական գյուղերից (բռնագաղթեցվում են Պարսկաստանի խորքերը), նույնիսկ սպասարկող բնակչությունից: Այդ է պատճառը, որ Սարգիս արքեպ. Ջալալյանցը 19-րդ դարի մոտավորապես կեսին անբնակ ու խարխուլ տեսավ Դադի վանքը: «Այնօրիկ տեղիք դարան են ավազակաց և ասպատակաց Արցախ նա-

³⁹ Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խուրթա վանք, «Էջմիածին», 1971, Զ—Ե, էջ 63:

⁴⁰ «Արարատ», 1896, էջ 42:

⁴¹ Հ. Էփրիկեան, Պատկերապարզ բնաշխարհիկ բառարան, հ. առաջին, Վենետիկ, 1903—1905, էջ 573:

հանգի» և նրանք հնավանդ սրբարաններում պահում էին «պիտուս խաշանց իւրոց և պշուկս անասնոց»⁴², ապա «Ձառաջեալ մառանաց և սենեկաց են լայնատարած այգիք արդեն աւերակք, միայն մրգաբեր ծառք վայրենացեալք դեռևս աճեն և բազմանան»⁴³:

Դադի վանքը իր շենքերի և նրանց վրա օգտագործված շինանյութերի բազմապատկանությամբ, եկեղեցական և աշխարհիկ մոտիվներով արված անչափ նուրբ խորաքանդակների, բարձրաքանդակների ու վիմագրությունների առատությամբ (ինչպես նաև նրա հրաշալի որմնանկարների առկայությամբ) բացառիկ ուշագրավ է:

Վանական համալիրը գրեթե բաժանված է երկու մասի՝ պարսպից ներս գտնվող հիմնական և պարսպից դուրս գտնվող հարավային՝ լրացուցիչ շինությունների:

Հնագույն եկեղեցին կամ միանավ բազիլիկը գտնվում է համալիրի հյուսիսային պառիվայրի վրա: Հյուսիսային պատն ամբողջովին, արևելյանը՝ մասամբ, թաղված են հողի մեջ: Բավական ընդարձակ շինության թաղակապ տանիքը հենված էր եղել պատերին կից երեքական կիսասյուների վրա: Հատակագիծն իրենից ներկայացնում է մի երկարավուն ուղղանկյունի, առանց որևէ բաժանման: Հյուսիսային և հարավային պատերն ունեն որմնախորշեր, որոնք երիվված են սրբատաշ քարերով: Եկեղեցու երկու դռներից մեկը գտնվում է արևմտյան պատի մեջտեղում, իսկ մյուսը՝ հարավային և արևելյան պատերի անկյուններում: Դռները, հատկապես արևմտյանը, արտաքինից նույնպես քանդակազարդ են և ավելի են ընդգծում բազիլիկի զուսպ հարդարանքը:

Երկրորդ եկեղեցին, որ դարձյալ հնագույններից մեկն է համարվում, կից է առաջինին՝ հարավից: Այս եկեղեցին համեմատաբար ավելի նեղ է և կարճ, պատերին կից երկշարք, երեքական որմնասյուները առաջինի պես կրկնված են: Պատերը նույնպես շարված են անտաշ քարով և ունեն սրբատաշ քարերով երիվված որմնադարաններ: Բազիլիկի առանձին մասերի վրա նկատվող նման տարբերիչ շարվածքը ցույց է տալիս, որ եկեղեցին ենթարկվել է նորոգման: Ըստ որում վերանորոգումը կատարվել է այնպիսի խնամքով, որ ամբողջովին պահպանվել է հին շենքի նախնական տեսքը:

Եկեղեցու դահլիճը միջնորմով բաժանված է երկու հավասար մասերի: Արևմտյան սրահը, հավանաբար, հնում ժամատան դեր է կատարել:

«Ահավասիկ այս երկու շենքերը, — գրել է Մեսրոպ Մագիստրոս արքեպ. Տեր-Մովսիսյանը, — նշանավոր վանքի համար շինության տեղ

ընտրելը հիմք է տալիս կարծելու, թե այդ տեղը շատ ավելի խոր հնություններ էր սրբագործված, որ Արցախի մեծ իշխանները ընտրեցին իբրև իրենց ընտանեկան գերեզման և ամեն տեսակի կալվածներով հարուստացնելով խոշորագույն վանքերից մեկը դարձրին»⁴⁴:

Դադի վանքի ստեղծման առավել կարևոր ժամանակաշրջանը 13-րդ դարի առաջին կեսն է, երբ սկսվում է նորանոր կառույցների շինարարությունը: Այդ ընթացքում կառուցված առաջին շենքերից մեկն էլ համարվում է Գրիգոր եպիսկոպոսի գավիթ-ժամատունը: Այն արևմտաքից կից է բազիլիկներին և վանքի ընդհանուր անստաբլի մեջ, անտարակույս, իր ուրույն ճարտարապետական նկարագիրն ունի:

Գավիթ-ժամատունը յուրահատուկ կառույց է: Իր բովանդակությամբ սա կիսաշխարհիկ, կիսակրոնական նշանակություն ունի, իսկ ճարտարապետական մտահղացմամբ ու կառուցվածքային սկզբունքով առնչվում է հայկական ժողովրդական տների (գլխատների) հետ:

Գավիթ-ժամատուն կառուցողները, միասնական ճարտարապետական համալիր ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով, նախ անհրաժեշտ վերակառուցումների են ենթարկել հին բազիլիկները, հետո միայն կառուցել գավիթ-ժամատունը: Թերևս դրանով կարելի է բացատրել գավթի արտաքին համեստ ու զուսպ հարդարանքի և ներսի կողմի ճոխության խիստ հակադրությունը, որը, մեր կարծիքով, ճարտարապետի նուրբ և սրամիտ մտահղացման արդյունքն է: Եթե գավթի ներսում ճարտարապետը հնարավորություն ուներ ազատ կերպով լուծելու ամեն մի մտահղացում, ապա դրսից այդ հնարավորությունները այնքան սուղ էին, որ ճոխություն ստեղծելու դեպքում ստվերի տակ կմնային հնագույն կրոնական առաջնակարգ եկեղեցիները և մեծապես կնվազեր նրանց արտահայտչականությունը: Մինչդեռ, ինչպես նշվեց վերևում, եկեղեցիների վրա կատարված բարեփոխությունները՝ դռների քանդակազարդերը, դռլաբների կամ որմնախորշերի սրբատաշ շրջանակները ավելի են ընդգծել այդ յուրանշանակ շենքերի առանձնահատկությունները:

Գավթի ներսի չորս միակտոր քարե սյուների և դրանց համապատասխան կիսասյուները միացնող կամարները կրում են շենքի երդիկավոր ծածկը: Ներկայացվող հուշարձանը եկեղեցիների նման դրսից անտաշ, ներսից սրբատաշ քարով կառուցված բարձր շենք է: Միակ դուռը հարավային կողմից է՝ երիվված քանդակազարդերով: Դռան աջ կողմում գտնվող արձանագրությունից երևում է, որ այն կառուցվել է 1224 թ. (Թ. Ո՛Գ)՝ Գրիգոր եպիսկոպոսի կողմից:

⁴² Սարգիս արքեպ. Չալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1858, էջ 222—224:

⁴³ Նշվ. աշխ., էջ 225:

⁴⁴ Մեսրոպ Մագիստրոս (արքեպ. Տեր-Մովսիսյան), Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 86:

Գավթի ներսի պատերի մեջ ագուցված են բազմաթիվ խաչքարեր: Այդ տեսակետից հատկանշական է արևելյան պատը, որի մեջտեղում, մի շարքի վրա, կողք-կողքի շարված են ինը խաչքարեր: Փոքրածավալ այս կոթողները պատած են նուրբ, գեղեցիկ ժանյակապարդ քանդակներով ու նվիրատվությունների արձանագրություններով:

Գրիգոր եպիս. գավիթ-ժամատունը դարեր շարունակ եղել է Վերին Խաչենի իշխանական տոհմի տապանատունը: Ներսից հատակը ծածկված է գերեզմանաքարերով, որոնց գրերի մի մասը արդեն ջնջված է:

ԱՐՁՈՒ-ԽԱԹՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻ-ԿԱԹՈՂԻԿԵՆ Դադի վանքի համակառույցի մեջ առանձնանում է որպես մի հոյակապ հուշարձան: 13-րդ դարի հայկական ճարտարապետության նշանավոր ու հայտնի այս կոթողը գտնվում է վանական տարածության արևելյան մասում, դեպի խոր ձորը իջնող դարավանդի եզրին: Մյուս բոլոր շինությունները տեղադրված են նրանից դեպի հյուսիս և հարավ-արևմուտք: Վանական և աշխարհիկ այս երկշարք շենքերի միջով, պարսպի գլխավոր դարպասից մինչև կաթողիկեն ձգվում է մի լայն և երկար միջանցք, որը գրականության մեջ ընդունված է անվանել «պողոտա»⁴⁵:

Տաճարը հիմնադրվել է 1214 թվականին Հաթերքի մեծ իշխան Վախթանգի բարեպաշտ տիկնոջ՝ Արվու-Խաթունի ջանքերով: Կաթողիկեի կառուցման վերաբերյալ ընդարձակ արձանագրությունը (19 երկար տողով) պահպանվել է նրա հարավային պատի վրա և ամենայն մանրամասնությամբ պատմում է Արվու-Խաթունի և նրա ձեռնարկած կառույցի մասին: Ահա այդ արձանագրության առաջին մասը.

«Շնորհիւ ամենակարողին Այ և Միածնի որդոյ նորա Յի Բի և պաւգևօք ամենասուրբ հոգւոյն ես՝ Արվու Խաթուն, նուաստ աղախին Բի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին և ամուսին Վախտանկայ Խաչենոյ, յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթողիկէս ի տեղուջ հանգստարանի առն իմոյ և վաւակաց իմոց Հասանայ անդրանիկին իմոյ և Գրիգոր, որ Տէրն կեսաւրեայ վախճանելով, զի վասն մեղաց իմոց խրատեաց զիս Ած»⁴⁶:

Արվու-Խաթունի եկեղեցի-կաթողիկեն⁴⁷ գմբեթավոր սրահների տի-

⁴⁵ Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 89:

⁴⁶ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 66:

⁴⁷ Թե էլ ինչ անուններ ունի Արվու-Խաթունի եկեղեցին, այնտեղի արձանագրությունները տեղեկացնում են հետևյալը. երկուսի մեջ հիշված է «Կաթողիկե», մի անգամ՝ «Սուրբ Խաչ» և երեք անգամ՝ «Սուրբ Նշան»: Մեսրոպ Մագիստրոսի շատ հավանական ենթադրությամբ Հովհաննես եպ. Խաչենացին է եղել Արվու-Խաթունի «...գլխավոր խորհրդատուն եկեղեցու շինութեան գործում եւ նրա առաջարկով է Դադի վանքի կաթողիկեն կոչվել Սուրբ Խաչ կամ Սուրբ Նշան»: (Տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 88): Հովհաննես Խաչենացին Հաղբատի առաջնորդն էր և նա է կառուցել տվել Հաղբատի մեծ ժամատունը:

պին պատկանող ընդարձակ մի կառուցվածք է, պատկված լայն ու բազմանիստ բարձր թմբուկով և սրածայր վեղարով: Ունի ներքուստ խաչաձև, արտաքինից քառանկյունի հորինվածք: Ներսի չորս անկյունների որմնասույթերը միևնույն ժամանակ ծառայում են որպես սլացիկ գմբեթի հենարաններ: Դեպի երկրորդ հարկի ավանդատները կարելի է բարձրանալ պատերի երեսին ագուցած կոնսոլ աստիճաններով: Կաթողիկեի ներսի կիսաայունները և դրանք կապող կամարները սպիտակ գորշ քարից են՝ պարզարված շատ նուրբ քանդակներով: Ներսի պատերի ծեփը, որը տեղտեղ ավերված է, ճաքճաք, ծածկված է վատ պահպանված որմնանկարներով: Առաջօր մնացած նկարներից երևում են հայկական որմնանկարչության ավանդական գծերը՝ գույների առատությունը, նկարելու պարզ եղանակը, նախշավարդման սերը, վառ արտահայտված արևելյան տիպի դեմքի պատկերումը: Դրանց կատարելությունը վկայում է, որ միջնադարյան Արցախում ստեղծագործել են հրաշալի վարպետներ: Եվ որ նրանք ոչ միայն գերպանց տիրապետել են պատերը նկարապարդելու տեխնիկային, այլև գունավոր նկարներով ձեռագրեր պատկերապարդելու արվեստին: Այդ են վկայում այստեղի գրչատանը ստեղծած ձեռագրերի մանրանկարները:

Եկեղեցին ավելի հետաքրքիր ու նշանակալից է դրսից: Քարերի բազմագույն և արժեքավոր տեսակները, դրանց խիստ ողորկ մշակումն ու միակցումը, ճարտարապետական ձևերի մտածված և խելացի լուծումը, կառուցողական բարձր տեխնիկան, դեկորատիվ պատկերաքանդակները կաթողիկեն դարձրել են համալիրի վարդը: Այս տեսակետից Արվու-Խաթունի կաթողիկեն որոշ նմանություն ունի Հաղբատի Սուրբ Նշան եկեղեցուն: Ի դեպ, վաղուց արդեն նկատվել է, որ այս տաճարի մեջ հմտորեն իրականացված է Հաղբատի ս. Նշան եկեղեցու կառուցողական փորձը:

Եկեղեցու արևելյան խաչաթևի ձակատային պատը մշակված է հինգ տափակ կամարներով: Կենտրոնական հատվածը շեջոված է լայն, բարձրադիր կամարով, մյուսները համեմատաբար նեղ են ու ցածրադիր: Մեծ կամարի ներսում նեղ լուսամուտն է՝ երիզված որմնասյուների մոտիվով: Լուսամուտից ցած, ընդարձակ տարածության վրա, փորագրված են արձանագրություններ, իսկ վերևում, անմիջապես կամարի տակ, տեղադրված են կտիտորական դիմաքանդակներ: Կենտրոնական կամարից դեպի աջ և ձախ գտնվող կամարներն ունեն ոչ խոր եռանկյունի որմնախորշեր, որոնց վերևի կիսաշրջանաձև մասերը պատած են փորագրություններով:

Համանման ճարտարապետական և դեկորատիվ հարդարանքներով է

լուծված նաև հարավային ճակատը: Այստեղ կոտորակա քանդակները արևելյան պատի կրկնությունը չեն, այլ ամբողջ հասակով մեկ պատկերված քանդակներ են, որոնք իրենց ձեռքերի վրա (լուսամուտից բարձր) պահում են տաճարի մակետը (մանրապատկերը): Կամարատակի շինարարական արձանագրության հետ պահպանվել են նվիրատվությունների հիշատակություններ, որոնք ունեն կոնկրետ թվագրություններ, մի քանիսն էլ առանց տարեթվերի:

Արևմտյան ճակատում գտնվում է դռան վարդանախշ շքամուտքը, իսկ հյուսիսային պատում⁴⁸ կա հայկական հուշարձանների համար արտասովոր խուլ, դեկորատիվ շքամուտք: Դրա ելրանախշերը, առանձնապես շքամուտքի կամարի վարդաքանդակներն այնպիսի նրբությամբ են արված, որ թվում է, թե դրանք ոսկերչական ժանյակավարդեր են:

Սակայն շենքը կառուցողների ուշադրության կենտրոնում ոչ թե ճակատային մասերն էին, այլ եկեղեցու թմբուկի սյունավարդունը: **ԳՐՄ-ԲԵՐԸ** կիսաայունքով և դրանք իրար հետ կապող կամարներով բաժանված է 16 լայն ու բարձր նիստերի: Դրանք էլ իրենց հերթին ունեն մեկընդմեջ կրկնվող եռանկյունի կամարակապ որմնախորշեր և երկայնակի ձգվող լուսամուտներ: Թմբուկի այսպիսի բաժանվածությունը համապատասխանում է գմբեթի հովհարաձև ծածկին, և ստեղծված լուսաստվերի շնորհիվ թմբուկի բաժանվածությունը աչքի է ընկնում դեռ հեռվից: ԳՐՄ-ԲԵՐԸ ընդհանուր ծավալի մեջ ճարտարապետը դրել է ինքնատիպ ձևեր, «... որոնցով և այս գմբեթը շահեկանորեն տարբերվում է համանման սովորական կառուցվածքներից: Նշենք, օրինակ, գույների վարթ խաղը, գմբեթի ծածկի մաքուր հղկած, իրար ազուցված սալերը գորշի մուգ երանգն ունեն, ամբողջ թմբուկի ֆոնը բաց վարդագույն է, կամարներն ու սրանց հիմքերը սև և գոտևոտող քիվը նորից գորշ: Լուսանցքներից ամեն մեկի պսակը մի ինքնատիպ լուծում ունի և առանձին դիտվում է որպես յուրօրինակ քանդականախշ»⁴⁹:

Ահա այսպիսին է Արվու-Խաթունի եկեղեցին՝ իր պարզ ճարտարապետական ձևերով: Այստեղ մոնումենտալ քանդակագործությունը, որմնանկարչությունը ձուլվել են ճարտարապետության հետ, իրենց մեջ ներառնելով ժամանակի կառուցողական ավանդույթները:

Արվու-Խաթունի եկեղեցու արևմտյան կողմում, անմիջապես ճակատապատին կից, կա լայնակի ձգված մի մեծ սրահ, որը կառուցված է

⁴⁸ Թեև ճակատը լրիվ բաց է, բայց, այնուամենայնիվ, նրա պատի տակից սկզբից թույլ վառիվայրը դժվարացնում է դրան մտնելու:

⁴⁹ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 66:

այնպիսի հաշվով, որ եկեղեցու շքամուտքը իր քանդակավարդ գոտիով հանդերձ դարձել է սրահի ներսի հարդարանքի կենտրոնը, իսկ սրահը եկեղեցու համար ծառայում է որպես գուլիթ:

Միջնադարյան նույնատիպ գավիթ-սրահների նման սա էլ իր առջևի պատի փոխարեն ունի հավասար հեռավորության վրա դասավորված սյուներ, որոնք վերևում աղեղնաձև միացած են և իրենց վրա պահում են կամարածածկ, երկթեք տանիքի մի մասը: Տանիքի սյուս ծայրերը ուղղակի հենված են երկրորդ բազիլիկի հարավային պատի վրա: Լավ պահպանված այս հուշարձանն իր տեղադրությամբ և կառուցամասերով Տաթևի վանքի մեծ սրահի կրկնությունն է, միայն թե սրա սյուները շարված են անտաշ քարերով:

Պահպանվել են շինության երեք արձանագրությունները, որոնցից երկուսը խիստ վնասված են, իսկ երրորդը շինարարական արձանագրությունն է, որի տարեթիվը քերված է: Բարեբախտաբար, ժամանակին այն գրի է առնվել, որի համաձայն այս սրահը կառուցվել է 1241 թվականին՝ Սմբատի կողմից⁵⁰:

ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ: Գտնվում է համալիրի արևմտյան մասում, դարպասի դիմաց: Երկհարկանի շինությունը կառուցվել է 13-րդ դարի կեսին Դոփեանց Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիս. կողմից: Առաջին հարկը խուլ է բոլոր կողմերից, արևմտյան մասում սանդուղքը բարձրանում է մինչև երկրորդ հարկը, որտեղ որմնափակ խորշի մեջ, քանդակավարդ երեսով դեպի արևմուտք, սնադարտ պահպանվել են Դադի վանքի անպուգակյան երկու հսկա խաչքարեր:

Ձանգակատան երկրորդ հարկը քառաայուն մի գմբեթ է, ուր հնում հավանաբար կախված են եղել վանքի վանգերը: Գմբեթի ծածկը, կամարները, չորս կողմ սյուները և սրանց խոյակներն ու հիմքերը սրբատաշ են, գեղեցկաշեն և ամբողջության մեջ թողնում են հաճելի տպավորություն: Ըստ երևույթին, սկզբնապես շինության առաջին և երկրորդ հարկերի բացվածք են ունեցել և հետագայում է, որ խաչքարերը կանգնեցրել են երկրորդ հարկի ներսում ու ետևից փակել, որպեսզի ամբողջ շինությունը դառնա մի տեսակ պահարան այդ բարձրարվեստ խաչարձանների համար:

Խաչքարերից ամեն մեկը բաղկացած է երկու կտոր գորշ-սպիտակավուն կրաքարից, որոնցից ներքևինը չորս անգամ մեծ է և համարվում է հիմնական մասը: Երկու մասերն այնպես են միմյանց կցված, որ առաջին հայացքից միակտոր քարի տպավորություն են թողնում:

Թեև խաչքարերն իրենց ծավալով, նախշերի առատությամբ իրար

⁵⁰ Շ. Մկրտչյան, Թարթառի հովտի պատմական հուշարձանները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3, էջ 136:

ջատ են նման, բայց վարդամտովների հյուսվածքով, առանձնահատուկ հատկանիշներով պարզորեն տարբերվում են միմյանցից: Այս հանգամանքը ոչ միայն հակասություն չի ստեղծում, այլև արտակարգ ու անկըրկնելի տպավորություն է թողնում դիտողի վրա և դրանց իրար կողք դրված լինելը դառնում է միանգամայն օրինաչափ: Երկու խաչքարերն էլ աչքի են ընկնում վարդանախշերի շքեղությամբ, կատարողական բարձր վարպետությամբ: Դրանց հարդարանքի մեջ պատկերավոր են արտահայտված երկրաչափական գծային ու բուսական բարդ հյուսվածքավոր վարդանախշերը: Ընդ որում՝ հյուսվածքը մանրացվելով և նրբացվելով հասցվել է այն աստիճանին, որ քարի վրա քանդակված վարդը իր նրբագեղությամբ նմանվում է ոսկերչական կամ ասեղնագործական մի կատարյալ աշխատանքի: Այս կախարդիչ կոթողների վարդապատկերների ընդհանուր ձևավորման մեջ արձանագրությունները մտնում են իբրև լրացուցիչ տարրեր: Եվ որ առավել կարևոր է, արձանագրությունները հավաստի տեղեկություններ են տալիս խաչքարերից յուրաքանչյուրի կանգնեցման շարժառիթի, ժամանակի, շինության մեկենասների մասին: Ահա թե ինչու բոլոր հետազոտողները (և ինչու միայն հետազոտողները) միահամուռ գտնում են, որ այս խաչքարերը «...ոչ մի տեղ, ոչ մի վանքի մեջ իրենց հավասարը չունեն»⁵¹, կամ «իրենց տեսակի մեջ թե նրանք ամենալավագույնն էլ չհամարվեն, ապա անհնար է ցույց տալ նրանցից առավել կատարյալ որևէ մեկը»⁵²:

Ենթադրվում է, որ այս խաչքարերի վարդաքանդակները քանդակագործը վերցրել է Արվու-Խաթունի ձեռքով գործած ձեռագործներից: Հայտնի է, որ Խաչենի բարեպաշտ տիկինը վարագույրներ է հյուսել Գոշավանքի, Հաղբատի, Մակարավանքի, Դադի և այլ վանքերի սեղանների համար: Մեծ պատմիչի հիշատակած «ճշգրտագոյն հանուածովք...»⁵³, այսինքն՝ բնական ճշտությունը, այսօր էլ կարելի է տեսնել մեզ հետաքրքրող խաչքարերի վրա:

13-րդ դարում կերտված այս կոթողները հայկական բազմահավար խաչքարերի ամենափայլուն հուշարձաններից են:

Նշված բոլոր հուշարձանները գտնվում են պողոտաձև միջանցքից վերև՝ նրա ձախ թևում: Այժմ տեսնենք ինչ շենքեր կան հակառակ կողմում՝ բլրի հարավային թեքադիր լանջին:

Սրահ-գավթի սյունաշարի դիմաց, պողոտայի մակարդակի վրա Հասան մեծի եկեղեցին է՝ աղյուսաշեն գմբեթով, որի վեղարը քանդված է:

51 Ն. Մ. Թանգ., Գանձասար և Խուրթ վանքերը, «Սոր-Դար», 1891, № 123:

52 Բ. Ուլուբաբյան, Խաչենի հին մշակույթի պատմության մի էջ, «Սովետական արվեստ», 1971, № 8, էջ 49:

53 Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 201:

Լեռնային Ղարաբաղի տարածքում երկրորդ եկեղեցին է, որի շինության վրա օգտագործված է աղյուս:

Եկեղեցին, որն իր փոքրության պատճառով հաճախ մատուռ է կոչվում, ունի քառանկյուն հատակագիծ: Ծածկը, պատերը շարված են կիսամշակ կրաքարերով: Որմերի մեջ ագուցված են սովորականից ավելի փոքր բազմաթիվ խաչքարեր, որոնց վրա փորագրված են նվիրատու մեկենասների հիշատակություններ: Ներսի ձախակողմյան խորանի պատին ամրացված խաչքարը թվագրված է՝ «Թ. Ռ<Ա» (1182 թ.): Եթե այս արձանագրությունը եկեղեցու կառուցման ժամանակ արված էլ չլիներ, համենայն դեպս, պետք է ընդունել, որ այդ թվականին եկեղեցին կառուցված է եղել, որպեսզի նշված խաչքարը ագուցվեր պատի մեջ:

Հասան Մեծի եկեղեցուց ավելի հարավ, գառիվայրի վրա է գտնվում երկրորդ ժամատունը, որն իր ճարտարապետությամբ համակառույցի ներսում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Կառուցողը դարձյալ Գրիգոր անունով եպիսկոպոսն է, որի թողած արձանագրությունը հարավային պատի վրա է. «Թ ՌԿ» (1211):

Ժամատունը իրար կից երեք դահլիճից է բաղկացած: Առաջին՝ մեծ դահլիճը շինված է միանգամայն ժամատներին հատուկ ոճով և նմանությամբ: Դրսից պատերը իրականացված են կոպտատաշ, իսկ ներսից՝ սրբատաշ քարով: Կամարակապ երդիկավոր ծածկը պահում են չորս միաքար սյուները: Իրենց ձևերի հարստությամբ աչքի են ընկնում հատկապես սյուների քառանկյունի խոյակներն ու խարխիսները, կենտրոնական մասի ծածկը, հյուսիսային պատի երկարությամբ շարված քարե նստարանները:

Հաջորդ դահլիճն ավելի փոքր է և այդ պատճառով էլ չորսի փոխարեն ունի երկու սյուներ: Իսկ վերջին՝ երրորդ սրահը իր նմխորդներից տարբերվում է փոքր չափերով և լուսավորությունը ստանում է պատերի մեջ բացված սովորական լուսամուտներից: Սա էլ, ինչպես նախորդները, ունի միայն մի դուռ:

Նույն թեքության վրա, դեպի արևմուտք, առկա են նույնատիպ երկու այլ շենքեր: Սրանք դարձյալ բաժանված են երեքական սրահների: Եթե այս սրահներն իրար հետ հաղորդակցվող դռներ ունենային, կարելի կլիներ մի ընդհանուր բնակարան համարել: Այս շենքերն ավելի հասարակ են: Հետագայում դրանց վրա կառուցվել են լայն բացվածք ունեցող սրահատիպ բնակարաններ:

Դադի վանքի հյուրանոցը, գործատունը, գրատունը, հնձանը, ձիթահանը, սրբատունը, միաբանական խցերը և մի շարք այլ շենքեր տեղադրված են հարավային «թաղամասի» վանապան կետերում, որոնց

շրջակայքում նկատելի են դամբարանաբլուրներ, հին, ավերված շենքերի հետքեր: Բացի դրանից, երեջ փոքր մատուռներ (խարխուլ վիճակում) գտնվում են վանքի պարիսպներից դուրս, մերձակա բլուրների վրա:

Վանական համակառուցի հարավային ամբողջ տարածությունը, մինչև Թարթառ գետի սփը, երբեմնի վանքապատկան այգիներն են, որոնց մեծ մասը այժմ ձուլվել է դարավոր անտառի հետ:

Այսպիսով, Դադի վանքի⁵⁴ խոշոր համակառուցը ամենայն վստահությամբ կարելի է համարել ճարտարապետական մի ինքնատիպ դպրոց, որտեղ ընդհանրացված են հայ բազիլիկայի ճարտարապետության լավագույն ավանդույթները:

ԽԱԹՐԱՎԱՆՔ

Վերոհիշյալ հուշարձաններից դեպի հարավ-արևելք, Թարթառի ափին, գետից ուղիղ գծով երկու կիլոմետր հեռու, մի թրածն լեռնաբալուկի վերջավորության վրա է փռված Խաթրավանքի համալիրը՝ ժամանակից սևացած ու մառնակալած, կիսավեր պարիսպներով, հին և նոր եկեղեցիներով:

Խաթրավանքը, որն, անշուշտ, եղել է ճարտարապետական մի նշանավոր համալիր, իր մեջ պահում է խաչքարերի մի շատ արժեքավոր հավաքածու: Միջնադարյան Հայաստանում մի գեղեցիկ սովորություն է եղել. վանական շենքեր կառուցելիս նրա պատերի մեջ դրել են հին խաչքարեր ու արձանագրություններ, պատմական հիշատակների հետ կապված իրեր ու առարկաներ: Եվ, այսպիսով, կառուցված շենքը դարձել է յուրահատուկ թանգարան: Դրա լավագույն օրինակ է Խաթրավանքը, որի պատերի մեջ երևացող տասնյակ խաչքարերով ու վիմագրություններով կարելի է բացել գավառի նախընթաց պատմության ու մշակույթի շատ ծալքեր, որոնց մասին ուրիշ աղբյուրներ գոյություն չունեն:

Վանքը բաղկացած է երեք եկեղեցիներից, գավթից և բնակելի ու կոմունալ շինություններից: Խաթրավանքի կաթողիկեի շինարարական

⁵⁴ Վանքի հարավային թևում, Թարթառի ձախ ափին գտնվող հսկա քարայրը, որի մուտքը երդիկի նման ուղղահայաց է, կարևոր դեր է խաղացել վանքի համար, հատկապես պատերազմական տարիներին: Վերջին անգամ, պատահականորեն, այս քարայրի գաղտնիքը բացվել է 19-րդ դարում: Ռոտորդի կրակոցից հետո որսը թավալվելով անհետանում է: Վրա հասնող որսորդը նկատում է, որ ջարդվել են քարայրի անցքի փտած գերանները: Մտնելով քարայրը, նա տեսնում է տասնյակ գրքեր: Վերցնելով դրանք, նա անհապաղ բերում է Շուշի և հանձնում Բաղդասար միտրոպոլիտին և ստանում մեծ պագներ:

արձանագրությունը 1204 թվականից է և հայտնում է, որ եկեղեցին կառուցել է Հովհաննես Խաչենեցին: Նա հավաքել է խաչեր ու խաչարձաններ, ձեռագիր մատյաններ ու այլ սրբություններ, տնկել մի մատող այգի (մատողիս) և մի այլ այգու հետ միասին նվիրել վանքին⁵⁵:

Եկեղեցին ներքուստ խաչաձև, արտաքինից ուղղանկյուն, չորս անկյուններում ավանդատներով հորինվածք ունի: Հատակագծում անհամաչափ է: Աղոթասրահի մեջ ներառված են ուղղանկյուն բեմ ունեցող համաչափ է: Աղոթասրահի մեջ ներառված են ուղղանկյուն բեմ ունեցող միանավ թաղածածկ երկու մատուռները: Այս տեսակետից այն բացառիկ է հայ ճարտարապետության մեջ: Եկեղեցու ներսի սյուները սրբատաշ գորշ քարից են, պարզարված քանդակներով: Չորս սյուներից առաջին երկուսը ամբողջական, իսկ մյուսները երկուական կտոր քարից են բաղկացած: Նրանց խարխիսներին քանդակված են ավետարանիչների խորհրդանիշներ: Բեմը ավագ սեղանով տեղավորված է արևելյան պատի կիսաշրջանի մեջ: Կան նաև երկու մեծ և երկու փոքր խորաններ: Ներսի պատերը ծեփված են կրաշաղախով: Եկեղեցուն կից է փլված վանգակատունը: Նրա կիսավեր պատերից երևում է, որ վանգակատունը եղել է կրկնահարկ՝ տորոնագույն քարով երեսապատված:

Զանգակատան արևմտյան մասում է գտնվում թաղածածկ դահլիճի տիպի սեղանատունը: Արևելքից արևմուտք ձգվող այս շինությունն իր դիրքով բավականին կարևոր դեր է խաղում համալիրի ճարտարապետության ընդհանուր լուծման մեջ: Սեղանատունը համեմատաբար լավ է պահպանված: Պատերը և թաղը կառուցված են տեղական կոպտատաշ քարերից, կրաշաղախով, միայն թաղակիր կամարները և որմնասյուներն են շարված սրբատաշ քարով:

Սեղանատունը լուսավորվում է հարավային և արևելյան պատերում բացված դեպի ներս լայնացող չորս պատուհանների միջոցով: Լրացուցիչ լուսավորության և օդափոխության համար թաղածածկում բացված են երդիկները:

Ինչպես նշեցինք, վանքի բոլոր շենքերն ամբողջովին ծածկված են ծառերով և թփերով, որոնք լրիվ քողարկում են նրանց և միայն մոտիկից է հնարավոր նկատել խիտ անտառի թավուտում ճարտարապետական կառուցվածքի առկայությունը: Իսկ պարսպապատերը, խցերը ու այլ շինությունները և կառուցվածքները փոխ են գնացել բուսականությանը և այժմ անհնար է տալ համալիրի գլխավոր հատակագծի ամբողջական պատկերը: Նույնիսկ շինությունների տանիքները ծածկված են ծառերով ու թփուտներով: Մեծ եկեղեցու երկթեք ծածկը լիովին ծածկված է ծառերով:

⁵⁵ Արցախ, էջ 194:

Խաթրավանքի արևմտյան կողմում խոր ձորի լանջի ժայռի մեջ է գտնվում **Խաթրա անունով բերդը**:

ՀԱԹԵՐՔ

Հաթերքը Լեռնային Ղարաբաղի հնագույն բնակավայրերից է, միջնադարում խաղացել է քաղաքական խոշոր դեր՝ վկայված պատմական աղբյուրների կողմից: Նրա մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Մ. Կաղանկատվացու, Կ. Գանձակեցու երկերում և Մ. Բարխուտարյանցի, Հ. Մանանդյանի, Բ. Ուլուբաբյանի աշխատություններում:

Միջնադարում այս գյուղում գործում էր դպրոց, Խուրթա վանքին կից: Գյուղը, ուր այժմ ապրում է երեք հազարից ավելի բնակիչ, տարածվում է գեղեցիկ ու անտառապատ սարահարթի վրա: Քանի որ Հաթերքը եղել է իշխանանիստ, վարչական կենտրոն, ապա արշավող նվաճողներին ավելի է գրգռել, որոնք էլ մոխրի կույտերի են վերածել այն: Այդ ակնառու է տասնյակ բնակավայրերի ավերակներից, տապանաքարերից ու բազմաթիվ մենավոր խաչքարերից, որոնք ցրված են գյուղի շրջակայքի անտառներով մեկ:

Ահա դրանցից մի քանիսը.

Մուղղուսին գերեզմանոցը: Հին գերեզմանատուն, գտնվում է գյուղի արևելյան մասում, ձորակի աջ լանջին: Մացառուտների մեջ մի շարք խաչքարեր են ընկած: Դրանց վրա կան 13—17-րդ դարերի թվագրությամբ արձանագրություններ: Այստեղից դեպի արևելք՝ Թարթառի ձախ ափին, բլրի վրա է գտնվում մի ավերված, քարերի կույտերի վերածված մատուռ:

Քարահունջ: Միջնադարյան փոքրիկ եկեղեցի, գյուղատեղի և գերեզմանատուն: Այս հուշարձանները տարածվում են Հաթերքի հարավ-արևմտյան կողմում: Դեռ կանգուն են այս ավերակ գյուղի ընկույզենու հսկայական ծառերը:

Մասիս կամ Մսիս: Ավերակ եկեղեցի, գտնվում է Հաթերքից հյուսիս, Մռավա սարի անտառապատ բազուկներից մեկի վրա: Ավերակներից երևում է, որ այն բաղկացած է եղել եկեղեցուց և գավթից: Եկեղեցին հին բազիլիկ է, ունի 36 քառակուսի մետր մակերես, իսկ գավիթը քառակուսի հատակագիծ ունեցող փոքր շենք է: Արձանագրություններն ու խաչքարերը կտորատված են, ուստի հնարավոր չէ իմանալ եկեղեցու կառուցման տարեթիվը: Եկեղեցին շրջափակված է եղել պարիսպներով ու պաշտպանական այլ կառույցներով:

Շուքավանք: Ավերված եկեղեցի, գերեզմանատուն, գյուղատեղի, կալեր, մարագատեղեր, աղբյուր և այլ հնություններ:

Սոին շինատեղ: Գյուղատեղի, գերեզմանատուն, որի երկու կողմերով հոսում են Թրղիի վտակները:

Ծոս: Գյուղատեղի, ընկույզենու ծառեր, կալատեղեր, գերեզմանատեղ, ձիթհանի հիմնապատեր, 13-րդ դարին բնորոշ խաչքարեր:

Խոտորաշեն: Տնատեղեր, ջրաղացներ, փոքրիկ գերեզմանատուն և պտղատու այգիների պուրակներ: Այս գյուղը վերջին անգամ ավերվել է 18-րդ դարի վերջին: Գյուղացիները տեղափոխվել են Գանձակի կողմերը և հիմնադրել Գետաշեն գյուղը:

Ալանա ավերակ: Մեծ գյուղատեղի, համանուն գետակի աջ կողմում: Դեռ կանգուն մնում է եռանավ եկեղեցին: Ընդարձակ, սյունապարզ դահլիճը սալահատակ է: Բավական տարածություն է բռնում գերեզմանատունը: Ընկույզենու, թթենու այգիների մնացորդները ձուլվել են անտառի հետ:

Հարավ-արևելյան և հարավ-արևմտյան մասերում գյուղատեղին շքր-շապատված է պարիսպների մնացորդներով:

Հաթերքի շրջակայքում կան նաև մի շարք բերդամրոցներ, որոնք պաշտպանական ամրոցներ են համարվում և կարևոր դեր են խաղացել երկրամասի ինքնապաշտպանությունը կապմակերպելու գործում:

Հավթախաղաց (Լաչինաբերդ): Թարթառի աջ ափին, թանձրախիտ անտառի մեջ խրոխտորեն բարձրանում է Լաչինաբերդ կոչված վիթխարի ժայռը, որն իր գրանիտե բարձր կողմերի վրա պահում է ընդարձակ մի հարթություն, բոլոր կողմերից անմատչելի և հին դարերում պաշտպանական, անառիկ մի կետ է եղել Խաչենի տերերի համար:

Բերդաքար: Հաթերք գյուղի արևմտյան մասում է գտնվում այս ոչ պակաս անառիկ բերդը: Նրա երեք կողմերում վիմահերձ ժայռերն են, իսկ հյուսիսային մասում հաստ կրկնապարիսպներ են եղել ձգված:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵԿԵՂԵՑԻՆ

Հաթերքի դիմաց, Թարթառի աջ ափին, Վաղուհաս գյուղամիջի կիսավեր եկեղեցին հնում եղել է նշանավոր, երբեմն եպիսկոպոսանիստ և կոչվել է մայրաքաղաք: Եկեղեցուն կից շինված է եղել հատուկ գրադարան-մատենադարան: Համաձայն մի թերի արձանագրության՝ եկեղեցին կառուցվել է 1283 թվականին:

Գյուղից մոտավորապես մեկ կիլոմետր դեպի հարավ-արևելք, գետակների միախառնման տեղում դեռ մնում են հնաշեն եկեղեցու և գյուղատեղի ավերակները, որոնք տեղացիներն անվանում են Հին Վաղու-

հաս: Այդ ավերակներից էլ վեր, մոտ 2—3 կմ հեռու, բարձր սարալանջի վրա է գտնվում **Կարմիր Վանք** անունով եկեղեցին⁵⁶:

Եկեղեցին մի փոքր թաղածածկ շենք է, որին արևմուտքից կցված է գավիթ, իսկ հարավ-արևելքից՝ մի փոքր մատուռ: Այս շենքերը կառուցված են տեղական սպիտակավուն կրաքարերի ճեղքած բեկորներով: Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից:

Հուշարձանի հարավային և հյուսիսային պատերը չափազանց հաստ են: Դրանց մեջ, գավթում շինված են մեծ խորշեր, որոնցից և մուտքեր են բացվում դեպի եկեղեցու պատերում տեղավորված ավանդատները: Հուշարձանի պատերի մեջ ագուցված են նույն կրաքարից հղկած տափակ սալիկներ, որոնց վրա փորագրված են արձանագրություններ:

Շինարարական արձանագրությունը գտնվում է հյուսիսային պատի արևելյան մասում, մի նեղ ու երկարավուն սալաքարի վրա՝ 16 տողով: Ըստ արձանագրության եկեղեցին կառուցել է Հաթերքի մեծ իշխան Վախթանգի որդի Սակառը («թիւն Ռ-ՀԳ») 1224 թվականին:

Գավթի ներսում է գտնվում նրա գերեզմանաքարը՝ 9 տող արձանագրությամբ: Մեկ ուրիշ արձանագրության վկայությամբ այս եկեղեցին 1259 թվականին, հավանական է թշնամիների ձեռքով, խիստ վնասվել է, ապա հետագայում ենթարկվել վերանորոգման:

Վերանորոգող ճարտարապետը շատ նշանավոր անձնավորություն է եղել և դա է պատճառը, որ **Վարդապետ** կոչումը փոխարինել է նույնիսկ նրա անձնանվանը: Այս եկեղեցու որմերի վրա գտնվող արձանագրությունները հետաքրքիր տեղեկություններ են պահում շինարար վարդապետների որոշակի վարձատրության չափի մասին:

Ս. Բարխուդարյանի հաշվումներով, Կարմիր եկեղեցու անհայտ վարպետ-ճարտարապետի կողմից հիմնովին վերանորոգած փոքր շենքերի համար ստացել է 80 դահեկան վարձ: Սա «...զգալի գումար է 13-րդ դարի համար, մանավանդ այսպիսի մի ծայրամասային վայրի պայմաններում»⁵⁷:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Կճողոտ գյուղի արևելյան կողմում, մի գեղատեսիլ ձորակում է գտնվում այս հուշարձանը: Այն ունի քառասույթ գմբեթակիր բազիլիկի հորինվածք, որի միակ մուտքը բացվում է արևմտյան ճակատում: Վանքի եկեղեցու աղոթասրահի ուղիղ կենտրոնում, խաչաձև կտրվածք ունեցող մույթերի վրա է բարձրանում գմբեթը, որի ծածկը դրսից իրականաց-

⁵⁶ Արցախ, էջ 193:

⁵⁷ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 69:

ված է եղել տաշած քարով: Եկեղեցու արտաքին և ներքին ճարտարապետական լուծումներն արտահայտիչ ու գրավիչ են: Ամենայն իրավամբ կարելի է ասել, որ Ամենափրկիչ վանքի կաթողիկեն իր հորինվածքով, բնության՝ տեղանքին մերվելու տեսակետից դասվում է երկրամասի լավագույն հուշարձանների շարքը:

Ինչպես եկեղեցու գմբեթի, այնպես էլ դռան ու լուսամուտների երեսակալների քանդակավարդերը, բարձրաքանդակները, սրբատաշ քարերը թափված են: Վանքի շրջակայքում դեռ երևում են օժանդակ շինությունների ավերակները, հին, արդեն հողի տակ մնացած գերեզմանատան առանձին տապանաքարերը:

Ամենափրկիչ վանքից ոչ այնքան հեռու, Դրմբոն գյուղից դեպի հյուսիս, Մանդուռի (մատուռի) անտառապատ ձորում կան մի շարք հուշարձաններ, որոնք դեռ չեն արձանագրված գրականության մեջ: Այս նորահայտ հուշարձաններից առավելապես ուշադրության արժանի ճարտարապետական կոթող է **Մանդուռ կոչվող մատուռը**: Այն տեղադրված է համանուն սառնորակ աղբյուրի աջ թևում, դարավոր անտաղըրված է համանուն պտղատու այգու մեջ: Ինչպես վկայում են տեղացիները, մատուռը փուլ է եկել վերջին ժամանակներս: Սակայն փլված վիճակում էլ այն ուշագրավ է:

Մուտքի բարավորի վրա եղած արձանագրությամբ (որը բարեբախտաբար անխաթար պահպանվում է փլատակների մեջ) մատուռը կառուցվել է 1187 թվականին, Խաչենի պայազատների հովանավորությամբ:

Մանդուռի հարևանությամբ գտնվում են երկու հին, ընդարձակ գերեզմանատուն, **Անապատ կոչվող եկեղեցին**, բավաթիվ **խաչքարեր**, մի շարք **գյուղատեղիներ** և այլ պաշտամունքային հուշարձաններ, ջրաղացներ, բերդեր:

Բնակատեղիներից հայտնի են **Մաչախ**, **Պմենշեն**, **Թխախոռ**, **Շահբապ**, **Խորաստան** անուններով հնավայրերը, իսկ խաչքարերից նշանավոր են այն **զույգ մահարձանները**, որոնք կանգուն վիճակում դեռ մնում են Մուշահավի աղբյուրից մոտ կես կմ դեպի հյուսիս-արևմուտք, բլրի լանջին: Դարերի ընթացքում ջուրը, հողմը քայքայել են նրանց վարդանախշերը, վիմագրերը: Սակայն եղածն էլ քիչ չէ, որպեսզի պատկերացում կազմել խաչքարերի բարձր արվեստի մասին:

ՔԱՂԱՔԱՏԵՂԻ

Մեծ Շեն... Այդ հինավուրց գյուղը նույնպես հարուստ է պատմական հուշարձաններով:

Գյուղի դիմաց բարձր լեռ է կանգնած: Այդ լեռը կոչվում է **ՀԵՐԹԸ**-

պըտոկ: Լեռան կատարին քարե շինությունների մնացորդներ կան: Ըստ Մակար Եպիսկոպոս Բարխուտարյանցի դա եղել է Բերդասաբ, այսինքն՝ դիտարան: Իսկ լեռան ստորոտի ավերակը կոչվում է «Ձորատափ»: Պետք է ենթադրել, որ այդ «Ձորատափը» եղել է Կորանոց, իսկ նրա պահակային դիտարանը՝ Հըրթըպտոկի գագաթը, որտեղից լավ երեվում են շրջակա տարածությունները, նույնիսկ Քուռ գետը: Այսպիսի սահմանապահ Կորանասերը կոչվել են **սղնախներ** և վերջին անգամ գոյություն են ունեցել Ավան Յուզբաշու ժամանակներում:

Մաղավույ և Մեծ Շեն գյուղերի Խանագյաի կոչվող տեղամասում է գտնվում «Քաղաքատեղի» ավերակները: Ավերակների մեջ ուշադրություն են գրավում մելիքների քարաշեն ամարաթների մնացորդները: Լեռն դրանց մասին գրել է. «Հյուսիսային Ղարաբաղի ամենանշանավոր մելիքներից մեկը՝ Մելիք Հաթանը շինել էր Ջրաբերդի գավառում երկու ապարանք, որոնցից մեկը՝ Մոխրաթաղ գյուղում, սրբատաշ քարերից, գեղեցկաշեն, այսօր էլ մնում է կիսավեր դրության մեջ և ունի 12 սենյակ, իսկ մյուսը՝ Մայրաքաղաք անվանված տեղում, երկհարկանի, վերին հարկը բաղկացած 15 սենյակից: Առանձնապես խնամքով է շինված Մելիքի ընդունարանը, որն ունի և այլուսկարդ գավիթ: Սենյակներն առանց պատուհանի էին, լույս ստանում էին առաստաղի մեջ բացված կլոր ծակերից, որոնք համապատասխանում էին ավանդական երդիկների: Երդիկների տակ շինված էին նույնպես ավանդական օջախները: Բայց թվում է, թե այդ օջախներում փայտի խարույկներ չէին վառում տունը տաքացնելու համար, հակառակ դեպքում պատերն ու առաստաղները պիտի սևացած լինեին ծխից, մի բան, որ այժմ չէր նկատվում»⁵⁸:

Մելիքական ամարաթները պատկանելով ուշ միջնադարին, իրենց մեջ պարունակում են ավելի վաղ ժամանակների պալատական ճարտարապետական շատ տարրեր: Տարբեր ժամանակներում այստեղ են ապրել նաև Ջրաբերդի մելիքներ Հաթանը, Աբրահամը, Մեծյունը: Դեռ պահպանվում են նրանց **ապարանները, պինապահեստները, վառողարանը**, որոնք ստորգետնյա գաղտնուղիներով կապված են իրար հետ: Քաղաքատեղիում արժեքավոր հուշարձան է համարվում բաղնիքը, որը Շըրջըռան աղբյուրից գետնուղով ջուր էր ստանում: **Բաղնիքը** գտնվում է «Դիմաց թաղում»: Բաղնիքի միայն առաջին պատն է փլված: Քաղաքատեղի երկու պահակակետերը՝ աշտարակները կանգուն են: Ունեն 6-ական մետր բարձրություն: Քաղաքատեղին ունեցել է գաղտնագողի, ջրագողի,

թունել, որը ժայռի միջով իջել է դեպի Թարթառ գետը: Պահպանվում են նաև ձիերի համար հատուկ կառուցված 16 առանձին-առանձին **ախոռները**:

ՋՐԱԲԵՐԴ

Թարթառ գետի ձախ ափին, Մեծ Շեն գյուղի «Խանագյաի» կոչվող տեղամասից դեպի գետը իջնող շավղի աջ կողմում, այնտեղ, ուր Թարթառի հետ խառնվում է Թրդին, ցցված է գրանիտե մի ժայռածերպ: Սրանից ավելի անմատչելի ամրություն բնությունը շատ քիչ է ստեղծել Արցախ-Ղարաբաղ աշխարհում: Երկու կողմից՝ արևելքից և արևմուտքից ժայռե բնական պատերը կախված են Թարթառի և Թրդիի վրա, իսկ հարավային մասում քարե բարձրությունը ուղղահայաց իջնում է Թարթառի վրա:

Բնության այս անառիկ ամրությունը արհեստական կառուցվածքների միջոցով ամրացնելով, դարձրել են իրենց համար բերդ:

Միայն ժայռերն ու մարդաշեն պարիսպները չեն ամրացնում այս բերդը, միայն խոր խրամատների պես ձորերը չեն, որ փակում են նրա չորս կողմը: Երեք կողմից նրան շրջապատել են անհանգիստ ջրերը, մի կողմից Թրդին, երկու կողմից՝ Թարթառը: Այս ջրերից է առաջացել բերդի և գավառի «Ջրաբերդ» անունը:

Աղբյուրներում բերդը կոչվել է նաև Չարաբերդ, իսկ Մխիթար Գոշի մոտ՝ «Իշխան ճառաբերդին և նորին դղեակին...»⁵⁹: Այս բերդն առաջին անգամ հիշված է խապարների 620-ական թվականների արշավանքների կապակցությամբ:

Աղվանքի կաթողիկոս Վիրոն «...իր մոտ հավաքեց այն բոլոր մեծամեծներին, գավառապետներին, քահանաներին, սարկավագներին, դպիրներին, որոնք այդ ժամանակ գտնվում էին այնտեղ Ջրաբերդ ամրոցում...»⁶⁰:

Ղարաբաղի ամենից ապահով ու Կորեղ բերդը խաղաղ ժամանակներում անբնակ է մնացել, իսկ պատերապմական օրերին կանայք, երեխաները հավաքվել են այստեղ: Վերջին անգամ՝ 1789 թվականին, այս բերդում, պատսպարվել են Ջրաբերդի մելիք Մեծյունի հարապատներն ու մերձավորները:

Ինչպես նշվեց, անմատչելի բարձր ժայռեր են ամրոցի երեք կողմերում, իսկ լեռանկողմը ամբողջովին պարսպված է ամուր պատերով: Բերդի միակ մուտքը բարձրանում է պարսպի պատով:

⁵⁹ Տե՛ս Ղ. Ալիջան, Հայապատում, էջ 347:

⁶⁰ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 121:

⁵⁸ Լեռ, Հայոց պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1964 թ., էջ 510:

Բավական մեծ տարածություն է բռնում ամրոցի ներսը: Այստեղ դեռ երևում են տասնյակ շինությունների ավերակներ: Բերդի միջից ժայռերի միջով փորված գաղտնուղով սանդղաձև աստիճանները իջնում են դեպի Թարթառ գետը: Այս վիմափոր հորանը խիստ նեղ է և անվանվել է «Ջրագողի ճանապարհ»:

Մարզի ոչ մի շրջանում չկա ամրոցչական մնացած այնպիսի հին ամրություն, ինչպիսին Ջրաբերդն է:

Սակայն Ջրաբերդը նշանավոր է ոչ միայն իր ժայռեղեն պարիսպներով, այլև իր պաշտպանական, ազդանշանային համակարգով: Հզոր բերդի համար կարևոր նշանակություն ունեցած այդ համակարգը գրեթե վրիպել է ուսումնասիրողների տեսադաշտից և անգամ աննկատ մնացել մեր միջնադարյան պատմիչների կողմից:

Ազդանշանային համակարգի առաջին կետը, ավելի ճիշտ՝ կառույցը, գտնվում է Թարթառ գետի ձախ ափին, Վերին Չայլու գյուղից 1,5—2 կմ դեպի հյուսիս: Երկրորդ նույնանման հուշարձանը գտնվում է Մադաղիս գյուղի «Կապին ձոր» տեղամասում, հին գերեզմանատան մեջ:

Երրորդ կառույցը ամրոցչական տեսքով պահպանվում է «Ճղպորտ» կոչվող պուրակում, իսկ չորրորդը տեղադրված է Թարթառի վրա գցված հնագույն կամրջից ոչ այնքան հեռու, Տոնաշեն գյուղի Գետին-Գուներ թաղամասում:

Ենթադրվում է, որ ժամանակին կառուցված է եղել նաև հինգերորդ դիտակայանը, որի հետքերը պետք է որոնել չորրորդից դեպի արևմուտք, Ջրաբերդի մոտերքում: Երկար ժամանակ չէր ընկալվում այդ շինությունների նշանակությունը: Միայն տարիներ հետո, համեմատելով դրանց տեղադրությունը՝ գետի ձախ ափի երկայնքով դեպի Ջրաբերդ (տեղացի անվանի գիտնական Ահարոն Մովսիսյանի օգնությամբ), առաջացավ այն համոզմունքը, որ այդ շինություններն ունեցել են պահակային կամ ազդանշանային նշանակություն: Ազդանշանային կետերի ընտրությունը կատարված է շատ հաջող, դրանք գտնվում են մի գծի վրա և լավ են դիտվում ինչպես դեպի արևելք, որտեղ առաջին շինությունն է, այնպես էլ դեպի արևմուտք, որտեղ Ջրաբերդն է գտնվում:

Վերոհիշյալ շինությունները տեղացիների կողմից ընկալվում են որպես «մանդուռ»՝ մատուռի աղավաղված ձևով: Դրանք սնհամեմատ փոքր են, պաշտամունքային կառույցներին հատուկ ատրիբուտներից բուրրովին պուրկ: Պատերը հարթ են, չունեն որմնախորշեր, խորաններ, մի խոսքով չկա որևէ նշան, որպեսզի դրանք համեմատվեն մատուռի կամ թեկուզ սովորական սրբավայրի հետ: Մադաղիսեցի Լևոն Մովսիսյանի վկայությամբ Գետին Գուների դիտակայանի արևմտյան ճակատում, դռան բարավորի վրա եղել է արձանագրություն: Դժբախտաբար այդ վիմաքարը չի պահպանվել:

Երբ պատերազմով չեն կարողացել գրավել բերդը, պաշարողները հույսը դրել են դավաճանության կամ վերահաս սովի վրա, որ այն գրավեն: Ավանդությունը պատմում է, որ այդպիսի սով սկսվում է բերդում, բայց գտնվում են հնարամիտ քաջեր, որոնք չեն թողնում, որ սովը մարդկանց գերության դուռը տանի: Նրանք դուրս են թափում բերդում ամբարած կիրը, փռում են ու սկսում մաղել: Պաշարող թշնամին հեռվից տեսնելով այդ, կարծում է, թե կիրը այլուր է, որ դեռ երկար պիտի պահի պաշարվածներին, հուսահատված հեռանում է:

Բայց ամեն անգամ չեն կարողացել կրով խաբել թշնամուն: Պատմում են, թե եղել են մարդիկ, որոնք գիշերները դուրս են եկել բերդից ու դժվար ճանապարհով գնացել են և գյուղից այլուր բերել պաշարվածների համար:

Ժողովրդի մեջ մնացել է այդ հերոսներից երկուսի անունը՝ Թիվլունց Կարմրափաթավը (նրա տրեխների փաթալանները կարմիր են եղել), մյուսը՝ Ավրաքոլին: Նման պայմաններում դուրս գալը և այլուր բերելը հերոսություն է եղել:

ԵՐԻՅՄԱՆԿԱՆՅ ՎԱՆՔ

Մռավ լեռան փեշերին, անդնդախոր մի ձորում գտնվում են Խոտորաշեն ավերակ գյուղատեղին և նրա մոտ Երիցմանկանց վանքը: Համաձայն պահպանված արձանագրությունների, եկեղեցին շինել են Ադվանից կաթողիկոս Սիմեոնը և իր եղբայր Իգնատիոս վարդապետը 1664 թվականին նվիրատվությունների օժանդակությամբ: Խաչաձև գմբեթակիր հորինվածք ունեցող եկեղեցին շինված է անտաշ քարերով, սպիտակավուն, ներքուստ չորս քառակուսի սյուներով, բակում կան բնակելի սենյակներ:

Եկեղեցին շինող ճարտարապետը Սարգիսն է, որի առանձին արձանագրությունը գտնվում է ներսում, բեմի հյուսիսային կողմի պատին՝ «Շինաւղ և վարպետ եկեղեցոյս ուստա Սարգիսն յիջեցեք ի Քրիստոս»⁶¹: Եկեղեցու գմբեթն ամրոջողովին կառուցված է սրբատաշ կաթնագույն քարից: Բազմաթիվ և գեղեցիկ քանդակների մեջ հատկապես արժե հիշատակել արևի ժամացույցը՝ քարի վրա կերտված:

Երիցմանկանց վանքի բնակելի սենյակներից շատերը փլված են, իսկ մնացածները, որոնք ոչ հեռու անցյալում օգտագործվում էին, դեռ կանգուն են: Բնակելի սենյակների տակ կան նկուղներ, որոնք եղել են պահեստներ, գուցե և թաքստոցներ:

⁶¹ Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 171—179:

ԵՂԻՉԵ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԸ

Մռավասարը իր սովերի տակ է առել Եղիշե Առաքյալի կամ Ջրվշտիկ վանքը: Այն այցելելու համար անհրաժեշտ է մեծ դժվարություններ հաղթահարել: Արահետն անցնում է անտառների միջով, խոր ձորերի եզերքով ձգվող ժայռերի վրայով: Վանքաբլրի հարավային կողմը վիմահերձ է, իսկ մյուս երեք կողմերը ամրացված են եղել հաստ պարիսպներով:

Ավանդությունը այստեղի առաջին շինության հիմնադրումը կապում է Վաչագան բարեպաշտ թագավորի անվան հետ:

«Պատմություն Աղվանից աշխարհի» երկի մեջ այս վայրը հիշվում է որպես «...Ներսիհրի սուրբ միաբանություն, որ այժմ կոչվում է Ջրվշտիկ...»⁶²:

Ջրվշտիկ անունը հավանական է, որ վանքը ստացած լինի համալիրի հարավային խոր ձորի մեջ բարձրից վիժող ջրվեժից (վերջինս Ղարաբաղի ամենախոշոր ջրվեժն է, որի ձայնը լսվում է նույնիսկ յոթ կիլոմետր հեռավորության վրա): Իսկ հետագայում, երբ նահատակված Եղիշե առաքյալի (քրիստոնեություն տարածող երախտավորներից մեկը) մասունքները Հռոեկա վանքից տեղափոխում են այստեղ, վանքը վերանվանվում է Եղիշե առաքյալի անունով:


Համալիրը բաղկացած է եկեղեցուց, ութ մատուռներից, գերեզմանատնից և այլ ավերակ շինություններից:

Թաղածածկ դահլիճի հորինվածքով կառուցված եկեղեցին «...շատ հին է, ճարտարապետությունը հասարակ, բարձրությունը՝ չափազանց և ոճը՝ անճաշակ»⁶³:

Սակայն այն իր հնությանը ու մշակութային գործունեությանը լուրջ ուշադրության է արժանի: Դարերի ընթացքում եկեղեցին ենթարկվել է վերակառուցումների: Այսօր էլ դժվար չէ նկատել, որ եկեղեցու անմշակ քարերից շարված պատերի մեջ օգտագործված են տաշած, հղկված հին քարեր, որոնք իրենց վրա պահել են վաղեմի ճարտարապետության տարրեր: Եկեղեցին (10×5,8 մ) ունի երկու դուռ՝ հարավային և արևմտյան կողմերից: Պատերի մեջ տեղ-տեղ երևում են աղյուսներ: Երկթեք տանիքի կենտրոնական մասում եղած գմբեթը փլված է: Գավիթը կառուցված է եկեղեցու ճարտարապետության համապատասխան: Գրեթե քառակուսի դահլիճի չորս սյուներն իրենց վրա պահում են կամարակապ տանիքը: Գավթի դռան բարավորի վրա փորագրված արձանագրությունից պարզվում է, որ այն կառուցվել է 1284 թվականին: Ինչպես եկեղեցու շուրջը, նույնպես էլ ներսը կան տանիակ տապանաքարեր:

⁶² Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 8:

⁶³ Արցախ, էջ 203:



Նկ. 4. Եղիշե առաքյալի վանքի հատակագիծը:
Չափագրություն՝ Ա. Ղուկասի:

Եկեղեցու երկու կողմերում, հավասար հեռավորության վրա, տեղադրված են 4-ական մատուռներ: Բոլոր մատուռները կառուցված են անտաշ, տեղական քարերով: Չգացվում է, որ մատուռները տարբեր ժամանակներում ենթարկվել են վերանորոգման: Սրանք հիմնականում հանդիսացել են դամբարաններ: Մատուռներից մեկում գտնվում է

Վաչագան բարեպաշտի, մյուսում՝ Ջրաբերդի քաջ մելիք Ադամի, երրորդում՝ Մելիքսեթ եպիսկոպոսի տապանաքարերը:

Պատերին եղած վիճակի արձանագրությունները վերաբերում են 12—13-րդ դարերին:

ԿԱՂԱՆԿԱՏՈՒՅՔ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔԸ

Մարտակերտի շրջանի նախալեռնային Մատաղիս, Տոնաշեն, Դաստակերտ, Մաղավուզ գյուղերի հանդերը ծածկված են մշակույթի շատ հիշատակներով:

Ակադեմիկոս Մանանդյանն իր «Հին Հայաստանի առևտրական ճանապարհները» աշխատության մեջ գրել է, որ Կաղանկատվացու հայրենի մեծ գյուղի ավերակները պետք է փնտրել «Դիտական գիւղ»-ի Տրտու կամ այժմյան Թարթառ գետի մոտ Ուտի գավառում⁶⁴:

Անվանի գիտնականը իր կարծիքը հիմնավորելու համար բերում է Մովսես Կաղանկատվացու Աղվանից աշխարհի պատմության հետևյալ վկայությունները. «Իսկ երբ հռոմեական անթիվ բազմությամբ կորքը եկավ հասավ ու բանակեց Ուտի գավառում, Կաղանկատուք գյուղի սահմաններում գտնվող հեղեղատի մոտ, տրորեց, քանդեց այն այգիների ու գյուղերի բերքը, որտեղից անցավ: Այստեղից մեկնելով բանակեցին Տրտուի հեղեղատին մոտիկ, Դյութական գյուղի մոտ»⁶⁵: Այնուհետև՝ «Երբ թշնամիները վերահասու եղան տեղի ունեցածին, հետապնդեցին փախստականներին և մի մասին, հասան այն լեռան ստորոտի մոտերքը, որ գտնվում է Կաղանկատուք մեծ գյուղի հանդեպ, որը (Կաղանկատուքը) նույն Ուտի գավառումն է, ուսկից և ես եմ»⁶⁶:

Հինգերորդ դարի վերջում Աղվանի կանոնադիր ժողովին մասնակցել է, ինչպես հաղորդում է Կաղանկատվացին, «Կաղանկատուքի Բակուր նահապետը»⁶⁷, իսկ ութերորդ դարի սկզբներում, նույն հաղբյուրի վկայությամբ, բնակություն է հաստատել «Կաղանկատուք ավանում» «Ռոստոմ Վարազ-Աբրյանը, որի տոհմը Պարսկաստանի Ստահը գավառից է»⁶⁸:

Արաբ պատմաբան Ալ Իսթահիրին (10-րդ դար) իր «Թագավորությունների ճանապարհի մասին» գրքում նկարագրել է Պարտավից Դվին տանող ճանապարհը: Ըստ այդ աշխատության, Պարտավից հետո առա-

64 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 201:

65 Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 101:

66 Նույն տեղում, էջ 105:

67 Նույն տեղում, էջ 65:

68 Նույն տեղում, էջ 237:

ջին կայանը (կանգառը) եղել է Կալկուտուսը (Կաղանկատուքը)՝ 9 արաբական փարսախ կամ մոտ 52 կիլոմետր (5752,8×9) հեռավորությամբ⁶⁹:

Վերջին տարիներին հնագիտական ուսումնասիրությունների միջոցով պարզվեց, որ արաբական շրջանի այդ շեն ավանը, որն ընկած է եղել, ինչպես ասացինք, առևտրական բանուկ ճանապարհի⁷⁰ վրա, գտնվել է ներկայիս Մաղավուզ գյուղի մոտակայքում:

Այժմ ամեն մի մաղավուզցի առանց հապաղելու ցույց կտա մեծ պատմիչի ծննդավայրը՝ քաղաքատեղը: Իսկ թե ե՞րբ է կառուցվել, սկզբում ի՞նչ անուն է ունեցել այն, հայտնի չէ:

Հողաշինարարական աշխատանքների և պեղումների ժամանակ գյուղատեղում գտնվել են մեծ կարասներ, հին օջախի, հատկապես թոնիրների հետքեր, բազմաթիվ գերեզմանոցներ, պարիսպների հիմքեր, ջրաղացատեղեր, ավերված ջրանցքներ:

Այս հնավայրի շրջակայքում, անտառների մեջ կան մի շարք ավերակ բնակավայրեր: Հին, կործանված բնակավայրերի անունները, փոխանցվելով սերնդեսերունդ, պահպանվել են մինչև օրս: Այսպես, օրինակ, **Շինատեղ, Խավթաթաշեն, Ալահկուլի, Թորոս, Եղակեր, Թրոտ, Դաստագիր** և այլն:

1. **Շինատեղ** և **Խավթաթաշեն** բնակավայրերից մնացել են միայն տների և ջրատարների հետքերը:

2. **Դաստակերտը** («Դաստագյուլ, Դաստագիր») հիմնադրել է Վաչագան թագավորը: Հին բնակավայրերից մնացել են կիսավեր եկեղեցու բեկորները:

3. «**Թրոտ**» կործանված բնակավայրի ոտքերը գտնվում են **Թանձր** անտառի մեջ: Կիսավեր վիճակում է գտնվում նրա գոյության միակ ապացույց եկեղեցին: Պողատու այգիները ձուլվել են անտառի հետ: Շատ հավանական է, որ այստեղի բնակիչները հիմնականում զբաղվել են թթագործությամբ, շերամապահությամբ և անասնաբուծությամբ:

4. **Թորոս** բնակավայրի գոյության մասին են վկայում փոքրիկ եկեղեցին ու տապանագրեր պարունակող ընդարձակ գերեզմանատունը:

5. **Ալահկուլի** բնակավայրի մնացորդները գտնվում են Մատաղիսից 6 կիլոմետր հեռավորության վրա՝ հաճարենու անտառի մեջ: Գյուղն իր անունը ստացել է տիրոջ անունից: Ալահկուլին եղել է Ջրաբերդի մելիք Եսայու տղան, մելիք Հաթամի մեծ եղբայրը: Ալահկուլին իր քաջագոր-

69 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 202:

70 Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, см. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXIX, Тифлис, 1901, стр. 33.

ծությունների համար պարսկական Նադիր շահից ստացել է Սոլթան մականունը: Ալահուլի Սոլթանը 1756 թվականին Ամարաս վանքում դավաճանորեն սպանվել է Փանահ խանի կողմից: Նրա մարմինը տեղափոխվել և թաղվել է գյուղից ոչ հեռու գտնվող բլրակի վրա, որը տեղացիները կոչում են **Սոլթի խաչ**:

6. **Ծոս** եկեղեցին գտնվում է Երից-Մանկանց վանքից 20 կմ վերև, մի անմատչելի, անտառապատ վայրում:

7. **Զերմուկ** (ճրըմոկ) գյուղաքաղաքի ավերակներ՝ Տոնաշեն գյուղի հանդամասում:

8. **Տոնաշենի «Ուղտի գարուն»** տեղամասում է գտնվում մի հսկա քար, որի միջին մասը կտրված հանված է: Այդ կտրված տեղը հագցված է մի քառակուսի, սպիտակ, հղկված քար, որի վրա փորագրված է «Սյունաց սահման» բառերը:

9. **Կամուրջ** (Ջրաբերդից քիչ ներքև) Թարթառ գետի վրա: Պահպանվում են կամրջի խելերը: Ըստ ավանդության այն կառուցվել է Տիգրան Մեծի ժամանակաշրջանում:

10. **Անապատ գմբեթակիր վանքը** գտնվում է Թրղի գետի աջ ափին, Ջրաբերդից 2 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք:

11. **Թուխկասարի վանքից** պահպանվում են ավերակները: Ըստ տեղական ավանդության Լենկ Թեմուրը այս վանքի մեջ վառելիք է լցրել և պայթեցրել:

ԳԼՏՈ ԿԱՄ ՀՈՌԵԿԱ ՎԱՆՔ

Գլխո վանքի մասին Կաղանկատվացու տված շատ թե քիչ հավաստի տեղեկությունները հետևյալն են:

Մեսրոպ Մաշտոցն Աղվանքում լուսավորչական գործունեություն ծավալելու ժամանակ իր հետ սուրբ խաչ ուներ: Երբ տեսավ, որ իրեն հետապնդում են, այդ խաչը թաղեց Գիսում: Ուտի գավառում հայտնի այս ավանը եղել է Հայոց արևելից կողմանց քրիստոնեական առաջին քարոզավայրը: Իսկ այստեղի եկեղեցին պաշտամունքային առաջին կառույցն է համարվել ամբողջ արևելյան Անդրկովկասում, կառուցված Եղիշե առաքյալի կողմից մ. թ. 1-ին դարում:

Այս եկեղեցում թաղված սուրբ խաչի գյուտն ու նրա հետ կապված արարողությունները նկարագրելիս պատմիչը հաղորդում է կոնկրետ այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են Գիսի անմիջական

հարևան աշխարհագրական կետին՝ Գլխո վանքին՝ Մեծկողմանք գավառում: Եթե մատենագիրները Գիսը տեղադրում են Կուր և Թարթառ գետերի միջև, Պարտավից արևմուտք, ապա Գլխո կամ Հոռեկա վանքի տեղը որոշակի հայտնի է, այն գտնվում է Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի արևմտյան կողմում, թավուտ անտառի մեջ բարձրացող լեռան հյուսիսահայաց լանջի վրա: Վաղ միջնադարում կառուցված «Մենաստան»-ի փոխարեն այժմ եռանավ բազիլիկաձև եկեղեցի է, կիսավեր վիճակում: Պատերի մեջ ագուցված խաչքարերից երևում է, որ այն հնի հիմքերի վրա վերակառուցվել է 13-րդ դարում:

Գլխո վանքը հայտնի է նաև իր բերդապարիսպներով ու «Պատերին տակ» կոչվող իշխանատան բազմաթիվ ամբողջական մնացած ու կիսավեր շինություններով:

Տեղական կոպտատաշ քարերով կառուցված շինությունների պատերի վրա կան բազմաթիվ խաչքանդակներ, որոնք իրենց ինքնատիպությամբ ու արվեստով ուշագրավ են:

ՎԱՆՔԱՍԱՐԻ ՀՈՐԵԱՐՉԱՆՆԵՐԸ

Մարտակերտից Ստեփանակերտ գնացող ճանապարհի աջ կողմում կրաքարերից կալված մի սապատավոր լեռնաբազուկ իջնում է հյուսիսից հարավ: Տարին բոլոր նրա լանջերը պատած են լինում չոր անապատային, աղքատիկ բուսականությամբ: Պատճառն այն է, որ այս վայրերում մթնոլորտային տեղումներ քիչ են լինում, և եղած անձրևաջրերն էլ անմիջապես ծծվում են կրաքարային ապառների մեջ: Լեռնաշղթան անհիշելի ժամանակներից կոչվում է Վանքասար, իսկ աղբբեջաներեն՝ Բեշիկ դաղ: Այն մի տեսակ բնական պատնեջի դեր է խաղում տափաստանային և լեռնային Ղարաբաղի միջև: Վանքասարից հարավ-տափաստանային է Բուռ-Արաքսյան հարթավայրը, իսկ դեպի արևմուտք՝ Հայկական բարձրավանդակի լեռնաստանը:

Վանքասարի հարավային ստորոտում, այնտեղ, ուր լեռնաշղթան ձուլվում է հարթությանը, կրաքարային ժայռի տակից դուրս է ժայթքում մի վարար աղբյուր՝ Շահ-Բուլաղը: Դա ոչ թե սովորական աղբյուր է, այլ մի ահագին գետակ: Ամենայն հավանականությամբ Խաչենագետը վերին և միջին հոսանքներում ներծծվում է հրաբխային ծակոտկեն և մանր ճեղքեր ունեցող ապառների մեջ և լեռան տակ թաղված մինչհրաբլիսային ժամանակաշրջանի գետահովտով դուրս գալիս Շահ-Բուլաղ: Այս կենարար ջուրը առաջին և հիմնական պայմանն է հանդիսացել, որ այստեղ դարեր շարունակ եղել է բնակավայր:

Դրա անառարկելի ապացույցը հուշարձաններն են: Նախ նշենք, որ այստեղի հուշարձանները, ըստ ժամանակաշրջանի, հիմնականում բաժանված են **չորս մասի**, կամ երկրաբանական տերմինով ասած՝ բաղկացած են **չորս շերտից**: **Հուշարձանների առաջին շերտը**, այսինքն նրանք, որոնք կառուցվել են ուշ շրջանում, գտնվում են տեսանելի (կիսավեր) վիճակում: Մեր ծանոթությունն էլ սկսենք հենց դրանցից: Ահա աղբյուրի հարավային կողմում դեռ իր գոյությունը պահպանում է արևելյան ոճի մի ամրակուռ շինություն: Արտաքին շարվածքն ամբողջովին քանդված է, դրա համար էլ առանց չափագրությունների դժվար է որոշել մերկացած շինության ինչ լինելը: Աղբյուրից քիչ դեպի արևելք երևում են ավերված պարիսպների մասերը, աշտարակների հիմքերը: Գրավոր փաստերը վկայում են, որ 18-րդ դարի երկրորդ քառորդում Փանահ Ալի խանը Քաբիրլիի գավառամասի Բայաթ բերդից իր քոչվոր ցեղակիցների հետ տեղափոխվել է այստեղ, վերականգնել նախկինում գոյություն ունեցող ամրոցը և որոշ ժամանակ բնակություն հաստատել: Վերակառուցված բերդի մեջ նա շուկա ու սվկիթ է կառուցել: Հետագայում, երբ խանը տեղափոխվել է Շուշի, աստիճանաբար լքվել է Շահ-Բուլաղի ամրոցը և այն վերածվել ավերակների:

Երկրորդ շերտի հուշարձանները վերաբերում են միջնադարին՝ մոտավորապես Համամ Արևելցու ժամանակաշրջանին:

Մի քանի տարի առաջ պատմաբան Ս. Բարխուդարյանը հաղորդում տպագրեց Աղբեջանի պատմության թանգարանում պահվող հայկական հուշարձաններից մեկի մասին, որը գտնվում է այս կողմերում: Ինչպես հմտորեն պարզում է պատմաբանը, այս հուշարձանն այն տապանաքարն է, որ քաշված է եղել Համամի հարապատի վրա⁷¹ և, անառարկելիորեն խոսում է այն մասին, որ հիշյալ բնակավայրը մտնելիս է եղել Համամ իջխանի տիրույթների մեջ:

Բացի այդ, աղբյուրի հյուսիս-արևելյան կողմում, փոքր թեքության վրա, տարածվում է հին հայկական գերեզմանոցը: Հարյուրավոր տապանաքարեր դարերի ընթացքում քայքայվել, իրենց սկզբնական տեսքը կորցրել են: Դրանց մի կգալի մասը թաղվել է հողի մեջ, իսկ ավելի թեքադիր մասում գտնվողները կիսով չափ են ծածկված հողով:

Վանքասարի ամենաբարձր ժայռի վրա բազմած է քառանկյունի հատակագիծ ունեցող մի եկեղեցի: Սովորականից քիչ բարձր կառուցվածքը շինված է գորշագույն կրաքարի տաշած քարերից: Ծածկը, պատերի մի մասը փլված են: Դռան հյուսիսային կողմում, պատի մեջ, տե-

71 <ՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1964, № 1, էջ 61—64:

ղադրված խաչքարի վրա մնացած արձանագրությունը հետևյալն է. «Ես Շահան-շահ որդի Աշոտայ կանգնեցի վխաչս հոգոյ իմոյ»:

Վանքասարի հակառակ կողմում հանդիպող բավապան հուշարձանների մեջ առանձնակի տեղ են բռնում բարձրաքանդակներով, անխաթար գրերով պատած միջնադարյան տապանաքարերը և խաչարձանները: Ամեն ոք, ով թեկույ մեկ անգամ եղել է այս կողմերում, անշուշտ հիշում է սքանչելի հայ վարդարվեստի հարյուրից ավելի մահարձանները: Դրանք քարեղեն ժանյակներ են, ճարտար փորագրություններ՝ կարծր քարերի վրա, և հանդիսանում են Արցախի անանուն վարպետների գործերը:

Հնագույն հուշարձանները թաղված են հողի տակ և ընդարձակ տարածություն են բռնում: Այս հնավայրը Արցախյան **Տիգրանակերտ քաղաքն է**⁷²: Պատմությունից հայտնի է, որ Հայոց Տիգրան երկրորդ թագավորը (95—55 թթ. մ. թ. ա.) իր անունով կառուցել է տվել չորս Տիգրանակերտ: Դրանցից ամենախոշորը Աղձնիքում էր կառուցված, որը պետք է դառնար Հայաստանի մայրաքաղաքը, գերապանցելով Արտաշատին, բայց ունեցավ անհաջող վախճան: Նույնանուն մյուս քաղաքները կառուցվեցին Արցախում, Գողթան գավառում և Ուտիաց աշխարհում: Ուշագրավ է, որ այս չորս Տիգրանակերտներից առաջինը կառուցվել է Արցախում (90-ական թ. մ. թ. ա.): Անշուշտ, պետք է կարծել, որ Տիգրանակերտը Արցախ-Ղարաբաղի ամենահին քաղաքն է եղել: Դժբախտաբար բացի անունից մեր պատմիչները ոչինչ չեն հաղորդել Ղարաբաղի այդ առաջին քաղաքի մասին, որը գոյություն է ունեցել շուրջ 1000 տարի: 10-րդ դարում Արցախի Տիգրանակերտն արդեն ավերակ էր⁷³:

Ղարաբաղի մարզային պատմաերկրագիտական թանգարանում ցուցադրված Տիգրանի պատկերով արծաթե դրամը, երկաթե նետերն ու սրերը, կավե անոթներն ու կաղապարները գտնվել են այս կողմերից: Բացի դրանցից, մինչև օրս էլ խաչենցիների լեզվում մնացած «Տըկրակերտը» Տիգրանակերտ անվան աղավաղված ձևն է⁷⁴, որը տրվում է այն ավերակներին, որոնց մասին խոսք եղավ վերևում:

Պատմահնագիտական հուշարձանների հաջորդ խումբը ուշ, հատկապես վարգացած բրոնզեդարյան ժամանակաշրջանին վերաբերողներն են, որոնցով հարուստ են ինչպես այս հնավայրը, այնպես էլ

72 Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի հնագիտական հուշարձանները, «Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի», հատ. 6, Երևան, 1975, էջ 151:

73 Հ. Խաչատրյան, Ղարաբաղում գտնված հին դրամի մասին, «Սովետական Ղարաբաղ», 1965, մարտի 28, էջ 73:

74 Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաերկրագիտական թանգարանը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1972, № 4, էջ 36:

ամբողջ լեռնային երկրամասը: Նախնադարյան հասարակության, նրա սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների մասին անգնահատելի նյութեր պարունակող հնադարյան այդ հուշարձանները, 19-րդ դարի 90-ական թվականներից սկսած, դարձան երկարատև ուսումնասիրությունների առարկա Շուշվա ռեալական ուսումնարանի ուսուցիչ Էմիլ Ռյուպերի⁷⁵ և վարդապետ Խաչիկ Դադյանի համար⁷⁶: Երկրամասի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությամբ տարբեր ժամանակներ վբաղվել են նաև հնագետներ Ռ. Վիրխովը⁷⁷, Ա. Իվանովսկին⁷⁸, Ս. Տեր-Ավետիսյանը⁷⁹, Ի. Մեջանիսովը⁸⁰, Յա. Հունմելը⁸¹, Լ. Թաջյանը⁸², Կ. Քուշնարյովան⁸³, Ն. Մինկևիչ-Մուստաֆան⁸⁴ և ուրիշներ:

Սակայն հնախույվները պեղումներ են կատարել հիմնականում մարզի կենտրոնական մասում՝ Կարկառ և Խաչեն գետերի միջին հոսանքներում՝ Առաջաձոր, Խոջալու, Ստեփանակերտ բնակավայրերի շրջակայ-

⁷⁵ Отчеты Реслера о раскопках в Шушинском уезде, см. отчеты археологической комиссии за 1895 г., архив института истории материальной культуры АН СССР, ф. 1, стр. 49—51, 158—159.

⁷⁶ Խ. Դադյանի կատարած պեղումների մասին առանձին բրոշյուր կամ թեկուզ հոդված չի տպագրվել, սակայն իր ժամանակին «Բանասեր», «Արարատ» և այլ հանդեսները, ինչպես նաև հնագետ Ս. Տեր-Ավետիսյանը անդրադարձել են Դադյանի կատարած աշխատանքներին:

⁷⁷ Ռ. Վիրխով, Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ (թարգմ. Լ. Բարսյանի. «Ազգ. հանդես», 1895 թ.):

⁷⁸ А. А. Ивановский, По Закавказью, МАК вып. VI, Москва, 1911 г.

⁷⁹ С. Тер-Аветисян, Памятники древностей Карабаха и скифская проблема, Тифлис, 1934 г.

⁸⁰ И. Мещанинов, Краткие сведения о работах археологических экспедиций в Нагорный Карабах и Нахкрай в 1926 г. Сообщения Гос. Академии ист. мат. культуры, т. I 1927 г.

⁸¹ Я. Гуммель, Раскопки в Нагорно-Карабахской Автономной области в 1938 г. (Известия Азерб. ФАН СССР, 1939 г., № 4), его же, Отчет в НК обком КП Азербайджана в 1941 г., машинопись, фонд ГИКМ НКАО, гос. историко-краеведческий музей, дело № 5.

⁸² Л. Ташчян, Курган с массовым погребением в окрестностях Степанакерта (Известия Азерб. ФАН СССР, 1944 г., № 11).

⁸³ К. Кушнарера, Памятники медного века в Нагорном Карабахе (Советская археология, XX, 1954 г.) Культура Нагорного Карабаха по археологическим источникам (конец III-го—середина I-го тыс. до н. э.), Автореферат канд. дид. диссертации, л., 1951 г., см. Некоторые памятники эпохи поздней бронзы в НКАО. СА, 1937, XXVII.

⁸⁴ Н. Минкевич-Мустафаева, Об археологических находках из с. Доланлар, (сб. «Материальная культура Азербайджана», Баку, 1949 г.).

քում, իսկ մնացած տասնյակ ոչ պակաս արժեքավոր հնավայրերը⁸⁵ դեռևս կարոտ են ուսումնասիրության:

Բրոնզեդարյան հուշարձանները դամբանաբլուրների տեսքով ամբողջական խմբերով տեղավորված են կամ գետերի հոսանքով և կամ էլ հին ձանապարհների ելքերին: Դրանց տարածման գոտին սկսվում է Ղարաբաղի դաշտավայրից (նոտավորապես այժմյան Եվլախ, Բարդա, Աղդամ, Ֆիլուլի քաղաքների հյուսիս-արևմտյան մասերից) և ձգվում դեպի Լեռնային Ղարաբաղի խորքերը, իսկ տեղ-տեղ լեռնանցքներով, Թարթառ, Խաչեն և Իշխանիկ գետերի հովիտներով՝ մեկը դեպի Սևանի ավազանը, իսկ մյուսը՝ Սյունիք⁸⁶: Դամբանաբլուրների զգալի մասը գտնվում է երկրամասի նախալեռնային մասում: Այսպես, Մարտակերտի հատվածում կա 15 դամբանաբլուր, որոնցից 8-ը գտնվում են իրար կողքի մի գծի վրա: Այդ դամբանաբլուրներից ոչ հեռու, Շահ-Բուլաղ ամրոցի կամ հին արցախյան Տիգրանակերտի ավերակների մոտակայքում, ձանապարհի ուղղությամբ սկսվում են դամբանաբլուրների փոքր խմբեր, որոնք վերջանում են մի վիթխարի դամբանաբլուրով:

Դեռևս հնագիտական ուսումնասիրության չեն ենթարկվել Արցախի ինչպես հինավուրց այս հուշարձանները, այնպես էլ բնակավայրերը, ասենք թեկուզ Տիգրանակերտ բնակավայրի ավերակների մնացորդները, որպեսզի հնարավոր լիներ, դրանք եղած աղբյուրագիտական տեղեկությունների հետ համադրելու ձանապարհով որոշակի պատկերացում կապել Հայոց արևելից կողմանց մի կարևոր մարզի առաջին քաղաքի հեռավոր անցյալի մասին:

* * *

Դամբանաբլուրների նույնատիպ խմբեր հանդիպում են Խաչեն և Թարթառ գետերի հովիտներում: Այդտեղ դամբանաբլուրները ձգվում են գետերի և դրանց վտակների ուղղությամբ, հարթավայրային մասից դեպի լեռները, ըստ որում գետերի ներքին հոսանքներում կապվում են մեծ խմբեր, իսկ լեռնային մասերում ցրված են և հաճախ հանդես են գալիս խմբեր, իսկ լեռնային մասերում ցրված են և հաճախ հանդես են գալիս առանձին-առանձին: Դամբանաբլուրների մեծ կուտակումներ կան Առաջաձոր գյուղի հարավային մասում: ձանապարհի երկու կողմից բարձրանում են տարբեր մեծության 10 դամբանաբլուրներ, որոնցից երեքը պե-

⁸⁵ Վերջին տարիներին հողաշինարարական աշխատանքների ծավալման հետևանքով մարզի գրեթե բոլոր գյուղերում հաճախակի են գտնվում նյութական մշակույթի բեկորներ, գիտությանն անհայտ հնավայրեր, մեծ քանակությամբ հնագիտական պատկան իրեր, որոնց մի մասը խնամքով տեղափոխվել է մարզային թանգարան, իսկ մի զգալի մասը պահպանվում է գյուղական դպրոցներում:

⁸⁶ Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 9:

ղել են Ռոյալերն ու Խաչիկ Դադյանը, մնացած 7-ից մեկը (ուղիղ, կտր հողաթմբի ձև ունեցող) ունի մոտ 36 մ տրամագիծ և 6,5 մ բարձրություն: Խաչենագետի աջ ափի դամբանաբլուրների խմբերը գտնվում են ս. Հակոբավանքից ցած, որտեղ պեղումներ է կատարել Խ. Դադյանը:

Թարթառի հովիտը հարուստ է բոլոր ժամանակաշրջանների կուլտուրայի հուշարձաններով: Հնադարյան հուշարձանների շրջանակը սկսվում է Հաթերքից և շարունակվում մինչև Սարսանգ անունով հին կամուրջը (այժմ այն չկա, մնացել է Թարթառի վրա կառուցված մեծ ջրամբարի տակ):

Ճանապարհի աջ և ձախ կողմերում նկատելի են այդ դամբանաբլուրների մի քանի խմբեր (գետի աջ ափին), որոնք գրեթե իրար կից են, իսկ սյուս ափին ցրված են լեռան լանջերին: Ջրամբարի գլխամասում, գետի երկու ափերին, կան 4-ական դամբանաբլուրներ: Թարթառի կիրճից քիչ ներքև, Մեծ Շենի տեղամասում կան գերեզմանաբլուրների նոր շարքեր: Այստեղի հին ու նոր ճանապարհն անցնում է այդ դամբանաբլուրների մոտով, մի ավերակ բնակավայրի միջով: Ինչպես դամբանաբլուրները, նույնպես և ավերակները հիմք են տալիս ենթադրելու, որ ճանապարհը հնում անցել է այնտեղով, որտեղով ձգվում է ներկայիս խճուղին. այդ է հուշում նաև Մեծ Շենի դամբանաբլուրների խմբի առկայությունը:

Թարթառի ստորին հոսանքում, Մատաղիս բնակավայրի մոտ կա 12 դամբանաբլուր: Ներկայիս Մարտակերտի հյուսիս-արևմտյան մասում գտնվում է դամբանաբլուրների ևս մի մեծ խումբ, որը տեղական բնակչության մեջ տարածված է «Կռապաշտի թումբ» անունով: Բացի նշվածից, Մարտակերտի շրջանում դամբարաններ կան նաև հետևյալ վայրերում⁸⁷:

1. **Չղդրան** գյուղի արևմտյան մասում:
2. **Թմղու** գյուղի հարավային մասում, նույն գյուղի Ուլուպապի հին կամրջի շրջակայքում:
3. **Խաչենագետի** ձախ ափին գտնվող Ծաղկաձոր հանդամասում:
4. **Աղմաղու** գյուղից 300—400 մ դեպի «Հլաջեն» տափը:
5. **Վանք** գյուղից վերև, Թանա-Օխ կոչվող տեղամասում կա 4 մեծ և 18 փոքր դամբարան:
6. **Թարթառի** ափին, Դրմբոն գյուղի Ոլոքի-օխ տեղամասում կա 4 մեծ և նրանցից ոչ հեռու՝ ևս 3 դամբարան:
7. **Վանք** գյուղից հյուսիս, Մեծ լանջի հանդամասում կա 2 մեծ թումբ, որոնցից մեկի լանջին կիսով չափ հողի մեջ դրված է 2,88 մ

⁸⁷ Լեռնային Ղարաբաղի հնագիտական հուշարձանների քարտեզը Ստեփանակերտի մարզային թանգարանի համար կազմված է մեր կողմից:

բարձրություն ունեցող անմշակ քար՝ առանց արձանագրության (հավաքաբար մենաքար-մենհիր):

8. **Նարեշտար** գյուղի «Խարբան» տեղամասում կա մոտ 100 գերեզմանաբլուր:

9. **Հաթերքի** շրջակայքում ամենուրեք՝ անտառներում, դաշտերում ևս հանդիպում են բավաթիվ դամբարաններ:

10. **Մեհմանայում** կան 8 մեծ դամբանաբլուր, 12 մանր հողաթումբ:

11. **Մաղավուլի** հյուսիս-արևմտյան մասում է գտնվում 4 ոչ մեծ դամբարան:

Սակայն այսքանով չի ավարտվում Մարտակերտի շրջանի ամբողջ պատմական հուշարձանների սպառիչ նկարագրությունը: Շրջանում կան նաև բավաթիվ այլ հուշարձաններ, որոնք պատմական, ճարտարապետական և հնագիտական տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում:

ՀԱՌՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

Այժմյան Հաղորդի շրջանի մեծ մասը հնում հարևան Մարտունու շրջանի հետ միասին կոչվել է Մյուս Հաբանդ: Շրջանի լեռնային՝ Դիպափայտի արևմտյան փեջերին գտնվող գյուղերը մտնում էին Բերդաձոր, իսկ հարավայինը՝ Պարզկանք գավառի մեջ:

Հաղորդի շրջանը, որ պատմության մեջ հայտնի է նաև Տիպակ-Դիպակ անուններով, արդարև թանգարան է բաց երկնքի տակ: Հատկապես շատ են վանքերն ու եկեղեցիները, հին բնակավայրերը, ամրոցներն ու աշխարհիկ շինությունները: Այստեղ գտնվող բազմաթիվ հուշարձանների վրա փորագրված հարյուրավոր արձանագրությունները գավառի պատմության էջերն են, տեղաբնակ հայության անցյալի մահու և կենաց պայքարի լուռ վկաները:

ՏՈՂԱՉՈՐԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Տող գյուղը Լեռնային Ղարաբաղի հնագույն նշանավոր գյուղերից մեկն է: Այն հիշատակվում է արաբական բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի ժամանակներից: Պատահականորեն, հողային աշխատանքների ժամանակ գտնված կավե ամանները, կարասները, գինու հնձանները, ինչպես նաև Գտչավանքը, կանգուն և ավերակ եկեղեցիները, Դիպակի մելիքների տները, հնագույն պարիսպները, աղբյուր-հուշարձանները ցույց են տալիս Տող գյուղի պատմահնագիտական բավականին մեծ արժեքը:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱՀԱՏԱԿ: Այս եկեղեցին գտնվում է գյուղի հարավ-արևմտյան կողմում, հին, ընդարձակ գերեզմանոցի մեջ: Մակար եպիսկոպոսը Բարխուտարյանցը նրա դռան ճակատակալ քարի վրա կարդացել է. «Թվ. ՌՃՂԶ (1747): Յիշատակ է սուրբ ըՍտեփանոս եկեղեցուս գյուխն, որ նորոգեց մելիք Եգան և որդին մելիք Եսային: Յիշատակ է հոգևոյ»¹:

Պարզվում է, որ եկեղեցին գոյություն է ունեցել վաղուց, և մելիք Եգանն ու որդին միայն նորոգել են նրա ծածկը:

Թաղածածկ դահլիճի հորինվածքով կառուցված եկեղեցին ունի մաքուր տաշած և կոպտատաշ քարերի կուգակցված շարվածք, ընդ որում ճակատային պատերը իրականացված են կոպտատաշ, իսկ թաղի կամարները, մուտքը և լուսամուտները՝ սրբատաշ մեծ քարերից: Որմնամույթերը կառուցված են պատի շարվածքի սկզբունքով՝ արտաքին երեսները սրբատաշ քարերից, միջուկը՝ բուտոբետոնից, դրանք են հիմնականում կրում ծածկի ծանրությունը:

Ս. Ստեփանոս նահատակի եկեղեցին, ինչպես նշեցինք, կառուցված է կիսամշակ որձաքարից, միջնադարին բնորոշ շինարարական տեխնիկայով, իսկ շարվածքում օգտագործված բեկորները կաթնագույն կրաքարից են: Բեկորները հանդիսանում են ատամնավոր քիվի ու քանդակապարզ կարդագոտու հատվածներ: Ակնհայտ է, որ ներկայիս եկեղեցու տեղում եղել է մի ուրիշ, ավելի հին հուշարձան, որը լրիվ քանդվել և քարերը մասամբ օգտագործվել են նորը կառուցելու ժամանակ: Նման օրինակներ շատ կան Ղարաբաղի 16—18-րդ դարերի հուշարձաններում, որովհետև 14—15-րդ դարերի արհավիրքներից վնասված եկեղեցիների տեղերում շինում էին նորերը:

Գերեզմանոցի մյուս ծայրին գտնվում է մի այլ եկեղեցի, որը, ճիշտ է, ուշ շրջանին է վերաբերում, սակայն իր վրա պահպանում է հնի հետքերը: Դրա վկայություն կարելի է համարել եկեղեցու ճակատային մասում տեղադրված խաչքարը, որի վրա փորագրված է «Նաչա սբ. Վարդան»: Ըստ երևույթին դա առանձին խաչքար է եղել, որ եկեղեցու շինարարները դրել են պատի մեջ, ճակատի կողմում, այնպես որ թվում է, թե եկեղեցին սուրբ Վարդան անվամբ էլ կոչվել է:

Ինչպես հայտնի է, Ավարայրի ճակատամարտի մեծ նահատակ Վարդան կորավարի անունը ժողովրդի շուրթերին դարեդար մնաց, և նրա հիշատակին խաչքարեր ու մատուռներ կանգնեցրին Հայաստանի տարբեր շրջաններում:

Հաղորդի շրջանի Թեպխարաբի եկեղեցին ևս իր վրա կրում է Վարդանի հիշատակը: Այդ եկեղեցուն, իբրև սրբություն, պահվում է սևագույն մի լեռ քար, որն իբրև թե ներկված է սուրբ Վարդանի արյամբ²: Վարդան կորավարի անունով մեկ ուրիշ մատուռի ավերակները գտնվում են Մարտունու շրջանի Մեջքապատ-Մուշկապատ գյուղում: Այս մատուռը, ականատեսների վկայությամբ, ամբողջ Վարանդա գավառի ամենահայտնի ուխտավայրերից մեկն է եղել: Ս. Ջալալյանցն այդ մասին

¹ Արցախ, էջ 77:

² Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Խ. Ա. Երևան, 1931 թ., էջ 314:

գրել է. «Մեջքապանցիք ունեն վարաշէն եկեղեցի, առ որով է մատուռն սուրբ Վարդան նահատակի, ուր յաճախեն ուխտաւորք բազումք»³:

Սուրբ Հովհաննեսի եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում և այժմ էլ բարվոք վիճակում է:

Համաչափություններով ու ընդհանուր հատկանիշներով նման է ս. Ստեփանոս Նահատակի եկեղեցուն, բայց հատակագծային և ծավալային հորինվածքով ավելի հարում է վաղ շրջանի բազիլիկներին: Այդ տեսակետից էլ սուրբ Հովհաննեսի եկեղեցին պատմաճարտարապետական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Եկեղեցին կառուցված է խիստ թեք տեղանքի վրա: Նրա հյուսիսային պատն իր բարձրության կեսի չափով խրված է ժայռի մեջ, իսկ հարավային պատը լրիվ բաց է, նույնիսկ երևում են հիմքերը: Այս պատճառով հյուսիսային պատի բացվածը մեկն է, իսկ հարավայինն ունի երեք լուսամուտ: Եկեղեցու միակ մուտքը, որը արևմտյան կողմից է, բացվում է դեպի պարսպապատ, գեղեցիկ բակը: Բակի հարավարևմտյան անկյունում շրջանաձև աշտարակ է, որտեղից երևում են գյուղի համայնապատկերը, շրջակա լեռներն ու այգիները, գետերն ու դաշտերը:

Եկեղեցու (որի երկարությունը 21,7 մետր է, լայնությունը՝ 12,9) ծածկը հենվում է չորս մույթերի վրա: Կառուցված է տեղական և Կավաք կոչվող քարհանքերից բերած քարերով: Արևմտյան պատն արտաքինից սրբատաշ է, իսկ մյուս պատերը՝ կիսամշակ քարերից: Երկթեք տանիքը ծածկված է մաքուր տաշած քարե սալերով:

Եկեղեցին ունի քարե խաչկալ, որի վրա փորագրված է ընդարձակ արձանագրություն: Դրա վերձանումից պարզվում է, որ խաչկալը եկեղեցու պատի մեջ է տեղադրել մելիք Եգանը:

Դռնակալի (դռան բարավորի) մեծ քարի վրա գտնվող արձանագրությունը հաստատում է, որ 17-րդ դարում Դիվակի մելիք Եգանը հիմնովին վերանորոգում է եկեղեցու տանիքը: Իսկ բուն եկեղեցին, ինչպես գրում է Մակար Բարխուտարյանցը, «շատ հին է»⁴, մոտավորապես 13-րդ դարից:

Եկեղեցու բակում թաղված են Դիվակի մելիքներն ու նրանց տոհմակիցները:

Ինչպես վկայում են շիրմաքարերի վրա պահպանվող չափածո արձանագրությունները, պարսկական դաժան տիրակալներից մեկը՝ Նադիր Շահը, հաշվի է նստում մելիք Ավանի հետ՝ նրան կոչելով «Բաբալըղ»

³ Մարգիս Եպիսկ. Ջալալեանց, ճարտարապետութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 339:

⁴ Արցախ, էջ 75:

(հարացու): Մելիք Ավանի շիրմաքարին գրված է, որ մելիք Ավանը՝ Նադիր Շահի կողմից հարգված, խալաթներով (նվերներով) սիրաշահված այդ քաջ դիվակեցին, բացի իր երկրից իշխում էր նաև Աղվանից աշխարհին, իսկ մելիքի որդու՝ մելիք Արամի շիրմաքարին կարդում ենք հակառակը.

«Շահն ուլեց (ուլեց) Արամ տարաւ,
ՉՌ (6000) թուման ջարմայ առաւ»⁵:

Մելիք Արամին հաջորդեց նրա եղբայր մելիք Եսային, որ խամայի ամենահռչակավոր իշխաններց մեկն էր և այդ պատճառով էլ ժողովրդական կրույցների ու ավանդույթների սիրված հերոս էր հանդիսանում: «Այսօր էլ,— գրել է Լեոն,— Դիվակի ժողովուրդը դեռ պատմություններ է անում իր՝ մեծ մելիքի մասին, որ իր հոր՝ մելիք Եգանի (Ավանի) արժանավոր ժառանգ հանդիսացավ և նույնիսկ գերազանցեց նրան իր քաջություններով»⁶:

ԳՏՉԱՎԱՆՔ

Տողասարի կամ ճգնավորի լեռան հյուսիսային լանջի գոգավորությունում, թավուտ անտառների ֆոնի վրա, շատ հեռվից երևում է նշանավոր Գտչավանքի գմբեթը:


Իր դիրքով ու շրջապատի բնության հետ ունեցած սերտ կապով Գտչավանքը պգալորեն տարբերվում է Արցախի միջնադարյան հուշարձաններից: Բարձրադիր տեղանքը, երկինք մխրձված գրանիտյա ժայռերի վեհությունը, վայրի պողաբույսերով հարուստ անտառապատ ձորերի խորությունը, լեռնային մաքուր օդը, սառնորակ աղբյուրները մի առանձնակի շուք են տալիս վանքին: Իր ճարտարապետական հիանալի արժանիքներով Գտչավանքը, առանձնահատուկ տեղ ունենալով հանդերձ, հարստացնում է երկրամասի բազմադարյան ճարտարապետության գանձարանը՝ հաստատորեն կանգնելով այնպիսի կոթողների կողքին, ինչպիսիք են Գանձասարն ու Նութավանքը:

Մատենագիտական աղբյուրները հիշատակում են, որ հնագույն ժամանակներում ներկայիս վանքի տեղում կառուցված է եղել մի եկեղեցի, որը համարվել է հայտնի ուխտատեղի: Այդ եկեղեցին ավերվել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Հին եկեղեցու հիմքերի վրա, ինչպես մատնանշում են ներկայիս եկեղեցու հյուսիսային պա-

⁵ Նույնը, էջ 76:

⁶ Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 216:

տի վրա գտնվող ընդարձակ արձանագրությունները, Ամարասից այստեղ գաղթած երկու եպիսկոպոսներ՝ տեր Սարգիս և տեր Վրդանես եղբայրները, կառուցում են Գտջավանքի գլխավոր եկեղեցին: Շինությունը հիմնադրվել է 1241 թ., ավարտվել է 1246-ին⁷:



Նկ. 5. Գտջավանքի հատակագիծը: Չափագրություն՝ Մ. Մ. Հասարթյանի:

13—16-րդ դդ. պատկանող հարուստ վիմական արձանագրությունները արժեքավոր աղբյուր են հանդիսանում հայ ժողովրդի հյուսիս-արևելյան հատվածի պատմության համար:

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գտիչը, վաղնջական ժամանակներից սկսած, եղել է գավառի քաղաքական ու հոգևոր կենտրոնը: Այստեղ էին նստում թեմի եպիսկոպոսները: Այն իր նշանավոր ամրոցով Եսայի Աբու-Մուսեի նստավայրն էր 9-րդ դարում: Իսկ 10-րդ դարում թագավորանիստ էր, Դիպկում հիմնված թագավորության կենտրոնը:

Գտիչը 13-րդ դարի վերջերին ընդարձակվում է նորանոր շենքերով, իսկ Դիպկի մելիքների, հատկապես մելիք Եգանի իշխանության ժամանակ հասնում է իր պարզացման գագաթնակետին, դառնալով Հայաստանի կրոնական, քաղաքական ու մշակութային խոշոր կենտրոններից մեկը:

Գտջավանքի հուշարձանն իր արվեստով, բարձր ճարտարապետա-

կան առանձնահատկություններով հանդիսանում է հայ բավադարյան ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը:

«Առհասարակ,— գրել է Լեոն,— ներքին և արտաքին կողմերից Գտջավանքի ճարտարապետությունը կրում է Բագրատունյաց ոճի կնիքը»⁸:

Վանքի գլխավոր եկեղեցին միջին մեծության կենտրոնական զմբեթավոր կառուցվածք է: Գմբեթը նստած է չորս կամարների վրա:

Հիմնապատերը շարված են տաշած դեղնագույն քարերից: Որմնամույթերը միանում են աղեղնաձև կամարներով, որոնք իրենց վրա կրում են գմբեթը՝ բարձր, բայց ոչ այնքան սրածայր վեղարով:

Արևելյան կողմում եկեղեցին ունի արսիդ, բարձր բեմով և երկու կողմերում կրկնահարկ խորաններով: Վերին հարկի խորանների դռները բացվում են արսիդի մեջ, որտեղից բարձրանում են քարե սանդուղքով:

Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն է, իսկ ներսից՝ խաչաձև հատակագծով, ուղղանկյուն խաչքներով: Ներսը ամբողջովին սրբատաշ է. արևելյան կողմի վերին խորանից մի գաղտնի անցք պատերի միջով բարձրանում է դեպի տանիքի տակը: Պատերի մեջ դրված են քանդակազարդ և արձանագրված խաչքարեր, որոնցից մեկի վրա նշված է 1000 թվականը: Սա դարձյալ ապացույց է, որ այժմյան եկեղեցու տեղում հնում եղել է մի ուրիշ քարաշեն եկեղեցի: Դա երևում է նաև եկեղեցու հիմքերից, որոնք տեղ-տեղ բացվել են: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Գտջավանքի ճարտարապետական մանրապնին քննություն դեռ չի կատարվել և ոչ էլ պեղմամբ ուսումնասիրվել են վանքի ու նրա ավերակների երևացող հիմնապատերը, որպեսզի վերջնական խոսք ասվեր հնագույն շենքերի կազմի ու հիմնադրման ժամանակի մասին: Վանքն ունի գավիթ, որը «խիստ հին է քան եկեղեցին»⁹, գավթի միակ մուտքը պարզարված է նրբահյուս քանդակներով: Դռան երկու կողմերում, պատի մեջ, տեղավորված են քանդակազարդ խաչքարեր: Հարավային կողմի խաչքարի վրա գրված է «Թվին ՈՂԵ Ես տեր Վրդանես կանգնեցի վիսաչսի փրկութիւն հոգւոյ խոյ»: Իսկ հյուսիսային կողմի խաչքարի վրա՝ «Յիշատակ է Սուրբ տաճարիս կաթողիկէն Դողեցի Սարգսի որդի Սայուն և իւր կողակից Հերիքնային թվին ՌՃԿԶ»:

Շենքը սալահատակված է եղել, տանիքը ևս պատած է սրբատաշ սալերով: Արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ բացվում են զույգ կամարակապ պատուհաններ, որոնք բավականին բարձր են ու

⁸ Լեո, իմ հիշատակարանը, Շուշի, 1885, էջ 247:

⁹ Արցախ, էջ 81:

⁷ Արցախ, էջ 81.

արտաքուստ նեղ, իսկ ներսից՝ ընդարձակ բացվածքով և քառակուսի կողմերով: Պատերը հաստ են, շքեղ և նուրբ վարդաքանդակներով: Գավթի ներսի հատակը ծածկված է վանքի հողերականների և Դիվակի մեղիքների գերեզմաններով, որոնց քարերը մշակված են գեղեցիկ ու նուրբ ժանյակներով: Բացի հիշյալ գերեզմաններից, եկեղեցու ներսում, արևելյան պատին կից, կան մի քանի մահարձաններ՝ խաչքարերով:

Գերեզմանոցը տարածված է եկեղեցու շուրջը, որը մեծ մասամբ ավերված է. հատ ու կենտ գերեզմանաքարեր թաղված են գետնի մեջ, իսկ մեծ մասը ծածկված է հողով, խաչքարերն ընկած են գետնին:

Գտնված շրջապատի բնակելի ու տնտեսական (ավերված) շենքերի¹⁰ հետ միասին ժամանակին դիտվել է որպես ավարտուն ճարտարապետական անսամբլ:

Վանքի գլխավոր եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում՝ Կաթնաղբյուրի հարավային մասում է գտնվում մի անանուն եկեղեցի, որը ևս հնաշեն է:

Գտնվածքը հնուց ի վեր հայտնի է իբրև Արցախի խոշոր հողեր-մշակութային կենտրոններից մեկը: Այստեղ էին նստում գավառի եպիսկոպոսները: Վանքն ուներ իր դպրոցն ու գրատունը: Այստեղ էին հավաքված նշանավոր բազմաթիվ գրչագրեր, և հենց տեղի գրչատանն էլ ստեղծվում էին ձեռագիր նոր մատյաններ: 19-րդ դարում Գտնվածքի վարդապետ Առաքել Կոստանյանը գրել է պատմագիտական ու ազգագրական մի շարք ուսումնասիրություններ, որոնցից մի փոքրիկ հատոր՝ Դիվակի մելիքության մասին, լույս է տեսել 1913 թ.:

Դոդ կամ Քթիշ բերդը Դիվակի և ընդհանրապես Արցախի հին, անառիկ և խոշոր ամրոցներից է, հավանաբար գոյություն է ունեցել դեռ վաղ միջնադարում:

Առանշահիկ տոհմի Դիվակի ճյուղը, Տոզը դարձնելով իր վարչական կենտրոնը, ռազմական հենակետ է դարձրել ինչպես Գորոզ բերդը, այնպես էլ այս ամրոցը:

Դիվակի քաջ իշխան Աբու Մուսեն շատ լավ էր ամրացրել Քթիշը, որին նպաստել է և անառիկ դիրքը: Արտաքին աշխարհի հետ ինչպես Արցախի մյուս հայտնի բերդերը, այն կապված էր գաղտնուղով:

Այժմ երբեմնի հզոր բերդից շատ քիչ բան է պահպանվել, և Դիվակի իշխանության կենտրոնի բազմաթիվ կառուցվածքներից ավերակներ են մնացել: Կիսով չափ կամ արդեն լրիվ հողածածկ միջնաբերդի վիմահերձի գլխին դեռ կանգուն մնում է անտառ քարով շինված եկեղեցին, որին տեղացիները վանք են կոչում: Հուշարձանի ներսում կան սպիտակ

շերտաքարերից պատրաստված հինգ փոքր խաչքարեր, որոնց վրա քանդակված է. «Սաչա Նազադին», «Սաչա Մրհապետին», «Սաչա Շահումին», «Սաչա Ղապարոյ», «Սաչա Եղուայ»¹¹:

Տողեցիները պատմում են, որ վերջին տարիներին այս բարձունքներում գտել են զանազան տնային իրեր, եկեղեցական սպասքներ, տարբեր վենքերի տեսակներ, մետաղյա անոթներ, հին դրամներ: Այստեղ դեռ երևում են միջնաբերդի շրջապարսպի հետքերը: Այն շարված է անտառ որձաքարով, կրաշաղախով: Պարսպի պատերի մեջ երևում են հին եկեղեցու սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր, մեծ և գեղաքանդակ խաչքարերի բեկորներ: Բնակավայրի կիսավեր պատերը բոլորովին մամռապատ են, տների տեղը վեր է ածվել մեծ-մեծ փոսերի, որտեղ աճել են վիթխարի ծառեր, թփեր:

Մեռած «գյուղաքաղաքից» քիչ վերև՝ Տողասարի ամենաբարձր կետում է գտնվում, ինչպես տեղացիներն են անվանում, **Թեժ եկեղեցին**: Այն մի պարզ շինություն է, առանց գմբեթի: Թաղածածկ դահլիճի հորինվածքով կառուցված կիսավեր եկեղեցին ներսում ունի չորս մույթեր, արևելյան կողմից՝ կիսակլոր աբսիդ, որի երկու կողմերում կան խորաններ: Դուռը հարավային կողմից է: Շարված է անտառ որձաքարով և կրաշաղախով: Եկեղեցու արևելյան կողմում նկատվում են մի քանի գերեզմաններ, որոնց տապանաքարերը բավականին մեծ են և լավ մշակված, բոլորն էլ տեղական քարից: Գերեզմանաքարերից միայն մեկի վրա կա չորս տառ՝ «Պետի»: Ավերակները բավականին տարածություն են գրավում: Տեստեղերն ունեն կիսաբոլորաձև, իսկ մի քանիսը՝ ձվաձև հատակագիծ:

Պատմագիրների վկայություններն ու նյութական կուլտուրայի հուշարձանները հնարավորություն են տալիս ասելու, որ այստեղի ավերակները հիմնականում պաշտպանական կառույցներ են եղել: Պատերազմական տարիներին այստեղ է հավաքվել Դիվակի բնակչությունը և դիմադրություն ցույց տվել թշնամուն: Այդ տեսակետից խիստ բնորոշ է արաբական խալիֆության դեմ մղած պայքարում դիվակցիների վառ օրինակը: Պատմությունը պահել է Արցախ աշխարհի ամենախոշոր դեմքերից մեկի՝ Եսայի իշխանի սխրագործությունները:

Լեռյի կարծիքով Եսային կամ, ինչպես արաբական աղբյուրներն են նրան հիշում, «Իսա Իբն Յուսուֆ Աբու Մուսեն»¹², իր գլխավորած պայքարով «...ամենախոշոր մխիթարական երևույթն էր կազմում Հայոց աշխարհի այդ ժամանակվա (9-րդ դար—Շ. Մ.) արյունոտ նահատակում-

¹¹ Արցախ, էջ 84:

¹² Արաբները Եսային դարձրել են Իսա, դրան ավելացվել է Իբն Յուսուֆ, որ նշանակում է Հովսեփի որդի և Աբու Մուսեն, որ նշանակում է Մովսեսի հայր:

¹⁰ Այստեղ փարթավոր են աճած-անտառը իր տակ է առել ավերակները:

ների մեջ»¹³: 853 թ. ամրացված լինելով Տողասարի գագաթին, վերը նշված «գյուղաքաղաքի» պարիսպների ներսում, Աբու Մուսեն ավելի քան մեկ տարի համառ դիմադրություն է ցույց տվել արաբ զորավար Բուղայի բազմաքանակ զորքերին: Արաբ զորավարը 28 անգամ գրոհում է այդ անառիկ ամրոցի վրա, բայց գրոհները ապարդյուն են անցնում: Վերջ ի վերջո նա՝ Եսայի իշխանը, ընկավ թշնամու ձեռքն այն պատճառով, որ ապսվություն է ունեցել հավատարու թշնամու երդումներին՝ պատգամախոսության է գնացել Բուղայի մոտ և այնտեղ էլ ձերբակալվել:

Դիվակի քաջ իշխանի և նրա հետնորդների հիշատակին կառուցված մի շարք հուշարձաններ կան Տողասարից ոչ այնքան հեռու գտնվող Տուսի գյուղի շրջակայքում:

Այսպես. գյուղի արևմտյան մասում է գտնվում Դիվակի մյուս նշանավոր **Գորոպ** կամ **Գորոպու** անունով բերդը, «Ի Գոռոպո մերձ ի լեռնն Քթիչ»¹⁴: Մյուս նշանավոր հուշարձանը համարվում է **Կարմիր եկեղեցին**: 10-րդ դարի այս շինությունը լրիվ քանդված է: Պահպանվել է արևմտյան լուսամուտի վերնամասի արձանագրությունը (այն գտնվում է Լեռնային Ղարաբաղի մարզային թանգարանում): Ահա տեքստը.

«Ի նխթ. թվ. (1000) և ի թագաւորութեանս տեառն Գագիկայ որդու Մուսէի եւ Սոփի դուստր Մուսէի շինեցի սուն Աստուծոյ ի փրկութիւս հոգո իսն և ծնողաց ինոց»¹⁵:

Եկեղեցու փլատակները գտնվում են Տուսի գյուղի հարավային կողմում, ձորակի աջ լանջին, հին գերեզմանոցի մեջ: Կարմիր եկեղեցուց փոքր-ինչ վերև, մի առանձնացած բլրի վրա, կան քարակիր շինության բեկորներ: Բոլոր տվյալներից երևում է, որ շրջապարիսպով ամրացված է եղել բլուրը: Կավե խողովակների շարքերը այս ավերակներից ձգվում են դեպի մոտակա Թագավորի աղբյուրը: Տեղացիները ավանդաբար **Թագավորի պալատ** անունով են կոչում այս ավերակները:

Պալատտեղից դեպի հարավ գտնվող կոնաձև բլուրը պատած է հին գերեզմանաքարերով: Ուշագրավ է ավերակ դամբարանը, որի հարավային մասում կա մի տապանաքար: Դժբախտաբար այն չունի արձանագրություն: Այս ավերակ դամբարանն ու «անխոս» տապանաքարը սերնդն սերունդ մատնանշվել են որպես **թագավորի գերեզման**:

Պալատից դեպի հյուսիս, ձորակում, կա մի կովասուն, սառնորակ

¹³ Լեո, նշվ. աշխ., էջ 446:

¹⁴ Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 304:

¹⁵ Արցախ, էջ 79: Արձանագրությունը պահվում է մարզային պատմաերկրագիտական թանգարանում: «Արցախ»-ի հեղինակը նշված արձանագրության մեջ «Սոփի» առվան փոխարեն սխալմամբ կարդացել է «Ոսկի»:

աղբյուր, որի վրա իր ժամանակին սրբատաշ քարով կառուցվել է շենք: Աղբյուրն էլ կոչվում է **թագավորի աղբյուր**:

Այս բոլորը վկայում են, որ Դիվակի տերերի աթոռանիստը Տողից հետո եղել է Տուսին, իսկ նրանց գլխավոր բերդերը, ինչպես նշվեց, Գտիչն ու Գորոպն էին:

ԱԶՈՒՍԻ ՔԱՐԱՆԶԱՎԸ

Հին քարե դարին պատկանող քարայր բնակավայրերից ամենաուշագրավը Ալոխ և Դրախտիկ գյուղերի միջև գտնվող քարանձավն է, որտեղ 18 տարի շարունակ պեղումներ են կատարում Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հնագիտության բաժնի գիտաշխատողները: Այստեղ մասնակի պեղումներ են կատարել նաև Մոսկվայի և Լենինգրադի հնագիտական արշավախմբերը: Հարկ է նշել, որ ինչպես այս, այնպես էլ երկրամասի մյուս քարանձավներն¹⁶ անհայտ չեն եղել, այլ, սկսած 5-րդ դարից, պարբերաբար հիշվում են մեր պատմիչների կողմից:

Թաթար-մոնղոլական արշավանքի տարիներին Ամարասի տերերը Ալոխի քարանձավում են պահել Արցախ նահանգի նյութական մշակույթի թանկագին գանձերը:

Մի այլ առիթով քարանձավը հիշվում է նաև 18-րդ դարի սկզբին, ավգային ավատագրական շարժումներին նպաստելու հանգամանքով¹⁷:

19-րդ դարի վերջին Մակար եպիս. Բարխուտարյանցը (հիշատակած «Արցախ» գրքի հեղինակը) այս քարանձավում տեսել է. «...մի կնոջ արձան... Արձանս կոփուած է քարից, կնոջ զգեստի տարապն և գլխի շինութեան ձևն ներկայացնում են Արցախի կանանց հագուստների և փաթեթոցներով շինված գլուխների տիպին»¹⁸: Գրեթե նույն ժամանակաշրջանում, Բաֆֆին Ղարաբաղի մեղիքների պատմությանը նվիրված իր նշանավոր «Խամսայի մեղիքություններ» գրքում գրել է. «Այդ իշխանություն-

¹⁶ Եղիշե, Վասն Վարդանայ 4 հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 125—127:

¹⁷ В. Петров, Этноботаника Нагорного Карабаха, Баку, 1940, стр. 15.

¹⁸ Մակար եպիս. Բարխուտարեանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 88: Հարկ է նշել, որ ինչպես «Արցախ»-ում, այնպես էլ մյուս ուսումնասիրություններում Ալոխի քարանձավը հիշվում է Որվան անունով: Տեղական բարբառով Որվանը նշանակում է արնշատ, արևավառ, արևախանձ. այսինքն արտահայտում է տեղանքի բնույթը: Որվան անունը, հնագետների համար, ըստ երևույթին անհասկանալի է եղել և չի հարմարեցվել իրենց լեզվի արտասանության հետ: Ուստի քարայրը կոչել են դիմացի լանջում գտնվող հայկական Ալոխ (չհասած խաղող, դորա) գյուղի անունով, և գիտական գրականության միջոցով շրջանառության մեջ դրել Ալոխը—Ալքին դարձված: (Տե՛ս М. Гуссейнов, О результатах археологических раскопок в Азохской пещере, Археологические исследования в Азербайджане (сб. статей, изд. АН Азерб. ССР), Баку, 1965, стр. 11.

ների ժողովուրդը ապրում էր լեռների մեջ, քարանձավների խորքում, կերակրվում էր իր անտառների պտուղներով, իր անասունների բարիքներով և որպես դարանամուտ մի գավառ իր թաքստի միջից հարձակումներ էր գործում, երբ թշնամին հանդգնում էր վրդովել նրա խաղաղությունը»¹⁹: Սակայն բոլոր դեպքերում էլ խորհրդավոր քարանձավը մնացել էր որպես առեղծված: Եվ ահա, վաթսուևական թվականներից ըսկըսած հնագետ գիտնականները ձեռնամուխ եղան այս քարանձավի ուսումնասիրությանը²⁰:

Հնագույն ժամանակաշրջանի այս հուշարձանն ունի բազմաթիվ ելք ու մուտքեր, լաբիրինթոսի նման վեց դահլիճներ: Դրանցից ամենամեծը գրավում է երեք հավար քառակուսի մետր տարածություն: Հսկա շրջանաձև սրահի պատերը անհարթ են, ասես կծկված օձերով ծեփված: Էլեկտրական հզոր լամպերի լույսերի ծովում շողձողում են շքեղ սլալատի նույնքան շքեղ անձեռակերտ վարդարանքները: Ստալակտիտներն ու ստալագմիտները նման են սառցե վիթխարի լույաների:

«Այդ վիթխարի ստալակտիտներն ու ստալագմիտները, — գրել է հնագետ Մ. Հուսեյնովը, — մեկ պատմում են ոչ միայն բնության գործադրությունների, այլև բուն քարանձավի հնության մասին»²¹:

Այստեղ առաջին անգամ հնագիտական մշակույթի, այսպես կոչված, աշեյան շերտում հայտնաբերվել են երեք հարյուր հավար տարվա վաղեմություն ունեցող քարե գործիքներ, այդ ժամանակվա բուսական և կենդանական աշխարհի բրածո մնացորդներ, նախամարդու արվեստի հետքեր, ինչպես նաև արտադրական թափոններ:

Այս սրահի տարբեր մասերից սկիզբ են առնում մի շարք անցուղիներ: Դեպի արևելք գնացող անցուղին մեծ սրահը կապում է հաջորդ դահլիճի հետ:

Հաջորդ սրահ տանող անցուղին կարելի է ասել բարեկարգ է: Ըստ երևույթին, ճանապարհի այս հատվածում մարդու ձեռքը ժամանակին իր գործը կատարել է: Մի քանի մետր անցնելուց հետո երևում է մեկ ուրիշ սրահ: Եթաքարերով անկանոն վարդարված բարձր կամարների արանքներում գոյացած սենեկաշարը շատ տպավորիչ է: Այդ վիթխարի պալատի հատակը ևս հարուստ է վառիթափ վայրէջքներով, խճճված անցքերով, աստիճաններով, պատե կրակատեղերով և պատին կպած հողե նստատե-

¹⁹ Բաֆֆի, Երկեր, հատ. 10, Երևան, 1964, էջ 173:

²⁰ Ի դեպ, տողերիս հեղինակին նույնպես բախտ է վիճակվել նախամարդու հետքերով շրջագայելու քարայր-բնակավայրի այն անցուղիներով, որոնցով վերջին անգամ դուրս են եկել այդ ժայռափոր հեքիաթային պալատների վերջին ժամապահները:

²¹ Մ. Հուսեյնով, Հին քարեդարի առաջին բնակավայրը Լեռնային Ղարաբաղում, «Սովետական Ղարաբաղ», 1960, 11 հոկտեմբերի, № 238:

ղերով: Հատակը համեմատաբար թեք է, տեղ-տեղ կան փոքրիկ լճակներ, ուղղահայաց անցքեր, գետնից վեր բարձրացող սրածայր ստալագմիտներ: Այստեղ գտնվել են կավից պատրաստված տարբեր տեսակի իրեր, հղկված քարեր, կենդանիների հարյուրավոր ոսկորներ: Պարզվում է, որ քարայրի առաջին բնակիչները բավական բազմապան են եղել: Նրանց խոհանոցային մնացորդների մեջ գիտնականները հաշվել են ոսկորներ այնպիսի կենդանիների, որոնց ցեղատեսակներն այժմ գոյություն չունեն:

Ի տարբերություն մյուսների, հաջորդ՝ 4-րդ փոքրիկ սրահի հատակը հարթ է, չոր, կաթոցներ գրեթե չկան, ունի միայն մի մուտք և ամենագլխավորը՝ մարդու աշխատանքի հետքերն այստեղ պարզորոշ զգացվում են: Շատ հավանական է, որ այս անկյունը գաղտնարան կամ թերևս պահեստ եղած լինի: Այստեղից անցուղին թեքվում է դեպի հարավ-արևմուտք և դուրս գալիս քարայրի մյուս՝ հարավային անցքով: Այս անցքի բերանի մոտ, 7 մետր խորության վրա, հնագետ-հնէաբանները հայտնաբերեցին մուկալերյան մարդու՝ նեանդերթալցու ներքին ծնոտի մի խոշոր բեկոր, որն իր մեծությամբ ու ատամների դասավորությամբ տարբերվում է ժամանակակից մարդու ծնոտից: Մանրապնին քննությունը ցույց տվեց, որ ծնոտի վրա պահպանվել են ինչպես իմաստության կոչվող, այնպես էլ երկու ուրիշ ատամների մասեր: Վարդագույն գրանիտի բեկոր հիշեցնող այդ ոչ մեծ առարկան պահպանվում է Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում:

Ալդիսի քարանձավի առաջին տիրոջ ծնոտի հայտնաբերումը, անշուշտ, գիտական մեծ նշանակություն ունեցող երևույթ է: Մինչև այդ նախամարդու մնացորդները հայտնաբերվել են չորս վայրերում, ընդ որում, բոլորն էլ մեր հայրենիքի սահմաններից դուրս: Դրանք են՝ Սիդի Աբդեռահմանը (Մարոկկո), Շտեյնհեյմը (ԳՖՀ), Սփանոկամբը (Անգլիա) և Սեդիա-դել-Դիաբոլոն (Իտալիա): Լեռնային Ղարաբաղի պատմական Դիպակ գավառում հայտնաբերված նեանդերթալցու ծնոտը գիտական գրականության մեջ ստացել է 5-րդ համարը, իսկ ՍՍՀՄ-ում՝ առաջինը²²: Ավելի ուշ շրջանի մուկալերյան նեանդերթալցիները տարածված են եղել շատ վայրերում և հայտնի են բազմաթիվ օրինակներով նաև ՍՍՀՄ տարածքից: Ալդիսյան հայտնագործությունը հսկայական նշանակություն ունի ոչ միայն պեղածո հնագույն նեանդերթալցու ֆիզիկական կերպարի վերականգնման տեսակետից, այլև այն առումով, որ նա հաստատում է հայրենական գիտնականների համարձակ այն վարկածը, ըստ որի՝ սովետական երկիրը և առաջին հերթին Հայաստանն ու Կովկասը մտել են հնագույն մարդու գո-

²² Պրոֆ. Գ. Հաջին, Արժեքավոր հայտնագործություն, «Կոմունիստ», (Բաքու) 1968 թ. օգոստոսի 1, № 178 (13954):

յացման և վաղ բնակության ոլորտի մեջ²³: Մեր նախապատմական դիպակեցին, որն ապրել է մեզանից մոտ 50—100 հազար տարի առաջ, կարճ ժամանակում այնպիսի մասսայականություն ձեռք բերեց, որ նրանով սկսեցին հետաքրքրվել անվանի գիտնականներ (Լենինգրադից պրոֆ. Պ. Գ. Բորիսկովսկին, Վրաստանից Ն. Քալանթարիձեն), որոնք նրան տրվեցին պոխաբնակ անունը²⁴: Այս հավագյուտ հայտնագործությունն իր վրա բեռեց արտասահմանյան շատ գիտնականների ուշադրությունը: 1974 թ. անձամբ Ալոխի քարանձավը այցելեց Մարսելի (Ֆրանսիա) համալսարանի լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Անրի դը Լյուսելյեը: Անվանի գիտնականը Ալոխի քարանձավը և նրանում գտած սինանտրոպից նեանդերթալցուն անցնող մարդու ծնոտը համարել է «հողագնդի վրա մարդկային հնագույն քաղաքակրթության օջախի նշանավոր գյուղ»²⁵: Հնդկաստանի ազգային թանգարանի տնօրենի փոխանորդ, պրոֆեսոր Գուպտանը 1970 թ. նույնպես եղել է Ալոխում, և, տեղում ուսումնասիրություններ կատարելուց հետո, հայտնել է այն կարծիքը, որ քարանձավում պեղած 6-րդ հողաշերտը վերաբերում է մարդկության մինչաշեյյան ժամանակաշրջանին²⁶:

Սկարագրված ստորգետնյա 4 սրահներից բացի այստեղ հայտնաբերվել են երկու խոշորը ևս: Այդ խորհրդավոր քարանձավի ստորգետնյա ուղիների երկարությունը ոչ լրիվ տվյալներով անցնում է 300 մետրից: Քարանձավում հայտնաբերված են 43 տարբեր տեսակի կենդանիների ավելի քան 20 հազար ոսկորներ, ինչպես նաև ավելի քան 6000 քարե գործիքներ և այլ իրեր²⁷:

Քարանձավում հայտնաբերվել են միջնադարյան քարակերտ շինության մնացորդներ: Բացի դրանից, բոլորովին վերջերս, քարայրից 3 կմ հարավ-արևելք ընկած Մեծ-թաղարցի մարշալ Ա. Խանֆերյանցի (Ս. Խուդյակով) անվան խաղողագործական սովխոզի Ուրուշեն կոչվող հանդամատում, 80 մետր խորության վրա, հիդրոշինարարները հայտնաբերեցին քարայրից սկիզբ առնող ստորգետնյա բավական մեծ գետակ:

«Գանձերի քարանձավը» դեռ բոլոր գաղտնիքները չի բացել: Նախամարդու այդ խոշոր բնակավայրը, որ բավահավար տարիների պատմու-

թյուն ունի, կանոնավոր հետապնդվում է, աստիճանաբար բացվելով ու հայտնի դառնալով գիտական աշխարհին:

ԾՄԱԽԱԶ

Ալոխի քարանձավից 3 կմ դեպի հարավ-արևմուտք, անմիջապես Իշխանագետի ձախ ափին է գտնվում Ծծախաչ քարայրը²⁸: Արտաքինից քարայրը նման է կիսաշրջանաձև միացած բնական ժայռափոր պատուհանների: Ներսում դրանց թիվն ավելանում է: Քարայրը բաղկացած է կիսաշրջանաձև տասը կամարից: Սրանցից չորսը իրար կից նայում են դեպի դուրս, իսկ մնացածները տեղադրված են ներսում: Քարայրի միայն երկու կամարում են մնացել հողային նստվածքները: Մնացած կամարը գտնվում է արևելյան մասում, որտեղ կան հողի բավականին հաստ նստվածքներ: Այստեղ 1963—64 թթ. հնագետները 7 մետր երկարությամբ և 1,5 մետր լայնությամբ անցք են փորել: Ուսումնասիրությունից պարզվել է, որ Ծծախաչ քարայրի հատակը հիմնականում ծածկված է պալեոլիթի դարաշրջանի նստվածքային մնացորդներով: Հայտնաբերվեցին միմյանց վրա նստած մի քանի շերտեր:

Հնագետ Մ. Մ. Հուսեյնովի հաշվումներով նստվածքային այդ շերտերի թիվը հասնում է 16-ի²⁹:

Առաջին՝ սևահողային շերտից բացի, մյուս շերտերն իրենց մեջ պարունակում են հնագիտական հարուստ նյութեր և կենդանիների մնացորդներ՝ ընձառյուծի, մանր կրծողների, տարբեր տեսակի թռչունների, սպիտակ արջի, ձիու, ելի, կովկասյան եղջերուի, լեռնային այծերի և այլն:

Կենդանիների այս բրածո մնացորդները, ժամանակաշրջանի առումով, Ալոխ քարանձավի կենդանիներից խիստ երիտասարդ են և, կարելի է ասել, լրիվ տարբերվում են նրանցից:

Այստեղ հայտնաբերված հնագիտական նյութերը հիմնականում պատրաստված են կայծքարից և հրաբխային ապակուց: Քարե իրերը իրենց ձե-

²⁸ Այս քարայրը, բնավ չի կարելի շփոթել Տող գյուղից կես կմ դեպի հարավ-արևմուտք գտնվող Շոտիկի կամ Առաքելի պուճ (բույն) քարայրի հետ, և նրա անվան շուրջը ստեղծել առեղծվածային պատմություններ:

²⁹ Ծծախաչ անունը կապված է պաշտամունքի հետ: Դրա վերաբերյալ տե՛ս Ե. Լալայան, Վարանդա (արտատպած «Ազգագրական հանդես»-ից), Թիփլիս, 1898, էջ 189: Վերջին ժամանակներս գրականության մեջ այս քարայրը հիշատակվում է նաև Թաղար (կից գտնվող հայկական Մեծ-Թաղար գյուղի) անունով,

²⁹ Մ. Հուսեյնով, Թաղար քարայրի պալեոլիթյան բնակավայրի վերաբերյալ (աղբրեջաներեն), տե՛ս ՍՍՀՍ ԿՍՊ ԳԵՄ-ի, ՀԱՀ ԱԶԵՐԸ ԿՍՊ, ԵՐԵՎԱՆ, 1969, ժող. 14.

²³ Պրոֆ. Հ. Մարտիրոսյան, Քարե դարից Ուրարտու, Երևան, 1971 թ., էջ 17:

²⁴ «Կոմունիստ» (Բաքու), 7 հունիսի 1974 թ., № 131:

²⁵ «Սովետական Ղարաբաղ», 18 սեպտեմբերի 1976 թ., № 220:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Շ. Մկրտչյան, Նախամարդու հետքերով, «Գիտություն և տեխնիկա», 1969 թ., № 8, էջ 36—38, նույնի «Հին քարեդարի բնակավայր Լեռնային Ղարաբաղում», «Գաղտնի», 1972 թ., № 5, էջ 77—79:

վով և պատրաստման տեխնիկայով մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Ծծախաչ կամ Թաղարի քարայրի նստվածքներն իրենց կառուցվածքով և դրանցում հայտնաբերված հնագիտական նյութերով նման լինելով հանդերձ Ալոխի քարայրի Մուսոյերյան մշակույթի շրջանի նյութերին, այնուամենայնիվ խիստ տարբերվում են դրանցից: Եթե այստեղ գտնվող ներքին շերտերի նյութերը ժամանակաշրջանի և պատրաստման տեխնիկայի տեսակետից մոտ են Ալոխի Մուսոյերյան շրջանի նեանդերթալցիների պատրաստած գործիքներին, ապա վերին և հատկապես միջին շերտերի նյութերը հիմնավորապես տարբերվում են Ալոխի քարայրի նյութերից: Ծծախաչ քարայրի վերին շերտի նյութերը ավելի կատարելագործված են: Այստեղ գերակշռում են փոքր չափերի բարակ շեղբերից պատրաստած նուրբ հարդարում ունեցող գործիքները, դանակները, քերիչները, ծակիչները, ծայրապանակները և այլն:

Անդրկովկասի տերիտորիայում Ծծախաչի քարայր-բնակավայրին ավելի մոտ համարվում են Ջրուչուրի, Մորգայի, Ախշտայի հուշարձանները³⁰:

Այս քարայր-բնակավայրերը և՛ իրենց մշակութային շերտերի կառուցվածքով, և՛ հնագիտական նյութերով իրար շատ մոտ են:

Թաղարի քարայր-բնակավայրը պատկանում է միջին պալեոլիթի վերջին և վերին պալեոլիթի սկզբին: Այս տեսակետից էլ այն համարվում է Լեռնային Ղարաբաղում պեղած առաջին այն հուշարձանը, որ առատ նյութ է պարունակում նախնադարյան հասարակարգի իրողություններն ուսումնասիրելու համար:

* * *

Տողաձորում արձանագրվել են նաև հետևյալ հուշարձանները.

1. **ԻԳԱԿՈՑ ԿԱՄ ՀԱՅԿԱՉԷ:** Հին գյուղատեղի, տարածվում է Տումի գյուղի արևելյան ուղղությամբ, Իջևանագետի ափին: Մատուռը՝ կից փոքրիկ սրահով, հիմնովին ավերակ վիճակում է: Շուրջը խոշոր տապանաքարերով գերեզմանատուն է: Նկատելի են բնակատեղի հետքերը: Կործանվել է 15-րդ դարի վերջին:

2. **Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՅԻ:** Գտնվում է Տումի գյուղում, 18-րդ դարի հուշարձան է:

3. **ՂԵՆՔԱՐ (ԲԵՐԴԱՏԵՂ):** Գտնվում է Տումի գյուղից 6—7 կմ դեպի արևմուտք, հյուսիսից հարավ թեքված բարձր ժայռի վրա: Ենթադրվում է, որ հենց այս ժայռապանգվածի գագաթին է եղել Գոռու բերդը: Բերդի մուտքի մոտ, հյուսիսային կողմում, նկատելի են պարսպի մնացորդներ, սեղանի մեծությամբ բազմաթիվ հղկված քարերի կույտեր, բնակատեղեր և պաշտպանական օժանդակ այլ շինությունների հետքեր:

³⁰ Մ. Հուսեյնով, նշվ. աշխ., էջ 14:

4. **ԹԱՂԱՆ ԱՂԲՅՈՒՐ:** Գտնվում է Ղլենքարից դեպի հյուսիս, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա: Աղբյուրի շրջակայքում տեսանելի են հին, ավերված շենքերի հետքեր: Տեղացիների վկայությամբ այս աղբյուրը հնում թշնամիներից քողարկվել, թաքցվել և հատուկ թունգերով գետնի տակով տեղափոխվել համցվել է մինչև բերդի մուտքը: Դրա համար է, որ աղբյուրը կոչվում է թաղար, այսինքն՝ թաղված, քողարկված աղբյուր:

5. **ԽՏՏՐՈՆՍՈՒԹ:** Հին, կործանված եկեղեցու փլատակներ, տնատեղերի հիմնապատեր և ընդարձակ գերեզմանոցի հողմնահարված տապանաքարեր: Ամենայն հավանականությամբ, այս խոշոր հնավայրը, որը գտնվում է Տումուց 3 կմ դեպի արևմուտք, ժամանակին՝ վաղ միջնադարում, մինչև Գոչավանքի հանդես գալը համարվել է Դիպակի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոններից մեկը:

6. **ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՂԲՅՈՒՐ:** Հուշարձանը գտնվում է վերը նշված խութի (բլրի) արևմտյան լանջում:

7. **ԱՏԵՓՆՈՅԵՆՑ ԽՈՒԹ:** Գտնվում է գյուղի հյուսիսային մասում, մոտ 4 կմ հեռավորության վրա, մի գեղեցիկ բլրի գագաթին: Դեռ մնում են հին գյուղատեղի ավերակները: Գերեզմանաքարերը, խաչքարերը ցաք ու ցրիվ թափված են բլրի լանջերին: Տումեցիները փլված եկեղեցին, ինչպես նաև բլուրը Ստեփանոսի անունով են կոչում, և ամենայն համովածություն պնդում, որ Ստեփանոսը, որի անունով կոչվում է հնավայրը, եղել է Դիպակի քաջ իշխան Եսայի Աբու-Մուսեի պապը:

8. **ՄԿՐՏԻՉԻ ՏԵՓԵՐ:** Հին գյուղատեղի, ավելի ճիշտ, ամառանոցներ: Հետաքրքիր հնավայրը գտնվում է Ծավեր կոչվող անտառի և Դիպափայտ լեռան ալպյան մարգագետինների գոտու արանքում, Տումից-Խանձաձոր գնացող ճանապարհի աջ կողմում:

9. **ԿԱՐՄԻՐ ՔԱՐԻ ՇԻՆԱՏԵՂ:** Տարածվում է Տումուց դեպի արևմուտք, սղոցարանի մոտակայքում:

10. **ԽԱՉԻՆ ԱՐՏ:** Հին եկեղեցու ավերակ, խաչքարեր և բնակատեղի հետքեր: Այս գյուղատեղին գտնվում է Տումից դեպի արևելք, Գտիչ բարձրացող ճանապարհի աջ մասում:

11. **ՇՄՈՆԻԿԻ ԿԱՄ ԱՌԱՔԵԼԻ ՊՈՒՆ ՔԱՐԱՅՐ:** Փոքր կովկասի բազմաթիվ քարայրներից մեկը, գտնվում է Տող գյուղից դեպի արևմուտք, խձուղուց կես կիլոմետր հեռու, ներքևում կրի հորերն են, վերևում՝ անտառը:

12. **ԿԱՄՈՒՐՁ:** Տողաձորի հուշարձաններից նշանավոր է նաև Տողից Մեծ Թաղար գնացող ճանապարհի գրեթե կեսում, Իջևանագետի վրա ձըԳ-վող կամուրջը: Այն կառուցված է որձաքարի խոշոր և մանր անտաշ բեկորներից, ամուր կրաշաղախով, մի լայն կամարով, որի խելերը հիմնվում են գետի ափերի ժայռերին: Կամուրջի հիմնադրման ստույգ թվականը

հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ այն կառուցվել է Ավան Յուզ-բաշու օրոք՝ 18-րդ դարի սկզբներին:

13. ԾԻԼՏԱՆԱՉ: Սրբավայր, գտնվում է Թեղուն-տափ տեղամասում, Ալոխ տանող ճանապարհի ելքին:

14. ԲԵՐԴ: Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված այս բերդը գտնվում է Գտիչ վանքի հյուսիսային մասում, մոտավորապես 100 մետր հեռավորության վրա և կոչվում է Ծուղակ, որը 45 աստիճան թեքությամբ ուղիղ իջնում է դեպի վանքը:

15. ԿՅՈՒԵՐ (ԼՃԱԿՆԵՐ): Տողասարի գագաթին, Թեժ եկեղեցու հարավային մասում, կան կալաչափ մեծությամբ մի քանի լճակներ, որոնք միշտ լիքն են անձրևաջրով: Այս արհեստական լճակները պաշարված ամրոցի ջրի պահեստներն են եղել:

16. ԿՅՈՒՏԱԾ ՔԱՐԵՐ: Հին, կործանված բերդապարսպի ավերակների կույտեր են: Արաբական տիրապետության ժամանակ այս հզոր ամրոցը փակել է Տողաձորի կողմից Դիպափայտ արշավող թշնամիների ճանապարհը: Այն գտնվում է Տողից մոտ երկու կիլոմետր դեպի Մուխրենես ձգված ճանապարհի երկու կողմերին: Շուրջը տարածվում են պանապան մեծության շենքերի ավերակները:

17. ՏԱԿԵՍ: Հին գյուղատեղի, գտնվում է Տողից մեկ կիլոմետր դեպի Մեծ Թաղար, Իշխանագետի աջափնյա մասում: Գյուղատեղում մնում են փոքրիկ եկեղեցու ավերակները և շուրջը մի քանի գերեզմաններ: Գետափին երևում են ջրադացների հիմքեր, իսկ ձորալանջին կանգուն վիճակում մնացել են քարակերտ աղբյուրներ:

18. ԱՆԱՊԱՏ: Կոչված Կուսանոց, գտնվում է Տողի արևմտյան թեքադիր լանջին: 18-րդ դարի հուշարձան է: Շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանատուն:

19. ԿԱՎԱԿ: Պարսպապատված վանք, վանականների խուցերով և ուխտավորների քարուքանդ սենյակներով: Գտնվում է կոնաձև լեռան գագաթին, Տողից Ֆիսուլի քաղաքի ուղղությամբ՝ Հողեր գյուղի դիմաց:

20. ՄԵԼԻՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ: Հետաքրքիր շինություն է Դիպակի մելիքների երկհարկանի պալատը: Այն կառուցված է սրբատաշ քարերով: Բարձր պարիսպներով շրջափակված բակում են գտնվում գինու և ջրի մի քանի կարասներ, հացահատիկի ստորգետնյա պահեստներ, իսկ կամարակապ հողակապ դարպասի վրա կառուցված է հյուրատունը: Այս շինությունը 18-րդ դարի հայկական բնակարանային շինարարության լավագույն նմուշներից է:

21. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ: Թաղածածկ դահլիճի հորինվածքով, գտնվում է Ալոխ գյուղում: 17-րդ դարի հուշարձան է, 14,7×8,2 մ չափերի:

22. «ԼՈՒՎԱ» ՔԱՐԱՆՉԱՎ (Մեծ, խավար): Գտնվում է Ալոխի հըռ-

չափավոր քարանձավին կից, ձորի վրա կախված ժայռերի մեջ: Թվում է, թե դա Ալոխ կոչվող քարանձավի մի մասն է:

23. ԿԱՆՍԵ: Վանք, կիսավերակ վիճակում, գտնվում է Դրախտիկ գյուղից դեպի հյուսիս, բարձր բլրի արևմտյան լանջին: Շուրջը տարածվում են, արդեն հողի մեջ թաղված, խոշոր գերեզմանաքարեր: Եկեղեցին ունի արձանագրություն:

24. ԳՅՈՒՂԱՏԵՂԻ: Հին Դրախտիկ գյուղի ավերակները, քանդված եկեղեցիով, գտնվում են այժմյան գյուղից դեպի հարավ՝ «կալեր» կոչվող հանդամասում:

25. Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ: Եկեղեցի, «շինուած ՈՒՂԴ թվ հայտը»: Կիսավեր վիճակում գտնվում է Դրախտիկի մոտ, մի բարձր բլրի վրա, շուրջը տարածվում են անկանոն ցրված տապանաքարեր:

26. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ՝ Մեծ Թաղար գյուղում, ուշ շրջանի հուշարձան է: Այն շատ լավ է պահպանված ու օգտագործվում է որպես գյուղի ակումբ:

27. ՄԱՐ ԽԱԹՈՒՆ (Մայր Խաթուն): Հին գյուղատեղի, գերեզմանոց և ավերակ մատուռ: Գտնվում է Մեծ Թաղարից Շեխեր ձգվող խըձուղու հարավային մասում բարձրացող սարահարթի վրա:

28. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ: Գտնվում է Մուխրենես գյուղի մեջ:

29. ՕՆՏԸ (ՅՈԹ) ԴՈՆԻՆ Վանք: Հին շինություն է: Արդեն վեր է ածվել ավերակների: Շինության ներսում կան յոթ կանոնավոր, կիսաշրջան խորաններ, որոնք պատերի սյունաձև հավելվածներով բաժանված են յոթ մասերի: Դրա համար էլ վանքը կոչվում է յոթը դռնանի: Անցյալում այստեղ ուխտի եկողները պարտադիր բերում էին յոթ մոմ: Միջնադարյան այս հուշարձանը գտնվում է Դիպափայտի բազուկներից մեկի վրա, Մուխրենես գյուղից 7 կմ դեպի հյուսիս-արևելք:

30. ԾԱՂԿԱՎԱՆՔ: Ծակուռի գյուղի կենտրոնում: Լավ պահպանված վանքը կառուցվել է միջնադարում:

* * *

Անտառապատ լեռների արանքով, իր դարավոր հունով, հոսում է պատմական հապարավոր դեպքերի վկա Իշխանագետը: Նրա գեղատեսիլ հովիտը նույնպես հարուստ է ուշադրության արժանի հնագիտական հուշարձաններով: Ահա, դրանցից մեկն էլ համարվում է Ալոխի քարանձավից դեպի հյուսիս-արևմուտք ընկած «Գյունե արտ» տեղամասի հնավայրը: Այստեղ իրար կից դասավորված են մի շարք ցածրադիր դամբանաբլուրներ: Մասնակի պեղումների ժամանակ հայտնաբերվել են բրոնզե ապարանջաններ, կախիչներ, վանգակ, վվնոց, դուր, ժապավենի

շարդոն, քարե սանդակոթ, սարդիոնի ուլունքներ, երկաթե դանակ, նիպակ, մանգաղ, սև և գորշ գույնի կավանոթների բեկորներ³¹:

Իշխանագետի վերին մասում, Տոււի գյուղից 4 կմ հեռու, Հանդեր կոչվող տեղամասը հերկելիս մեխանիկատորները պատահականորեն հայտնաբերեցին հին գերեզմաններ: Գերեզմանները դասավորված են երկու շարքով՝ ծածկված հարթ կրային թևաքարերով, որոնցից մեկն ունի 250 սմ երկարություն: Գերեզմաններում հայտնաբերվել են մեծ քանակությամբ կավե սափորներ, ոսկորներից և վանական քարերից պատրաստած ուլունքներ, վարդաքանդակներով կոճակներ, մետաղյա ապարանջաններ, թանկարժեք եղջերաքարեից հմտորեն պատրաստված մատանի, որի հարթ մասում փորագրված է ինչ-որ միջատ: Դամբարաններում ամփոփված կմախքների (հատկապես կանանց) ուշադիր պնտմից պարզվում է, որ Ղարաբաղի հնագույն բնակիչների սովորույթներ այժմ էլ պահպանվում են երկրամասի բնակչության կենցաղում: Այսպես, օրինակ, գլխի շուրջը դրամով վարդաթելը, ականջներից վարդեր կախելը, հագուստի թևերի վարդարանքներն ու մետաղյա գոտիներ կրելը:

Հաղորդի հարավ-արևելյան մասում գտնվող դամբանաբլուրների խմբերը տեղացիները անվանում են «Կռապաշտի հանգստարան»³²: Համանման դամբարանների խմբեր են հայտնաբերվել Դոլանլար, Հարար-Արվագյաղուկ գյուղերի շրջակայքում:

Լեռնային Ղարաբաղի դամբարաններն ունեն տարբեր չափեր և ձևեր: Անկասկած դրանք առաջացել են տարբեր ժամանակաշրջաններում, հավարամյակների ընթացքում: Գետնի վրա հազիվ երևացող փոքր դամբարանների կողքին վեր են բարձրանում 25—60 մ բարձրությամբ հսկայական դամբանաբլուրներ: Վերջիններս իրենց հիմքում կազմում են ուղիղ շրջագիծ, գագաթը կոնաձև է կամ հարթ, երբեմն այն վերջանում է փոսիկով: Ղարաբաղում պահպանված են տարբեր տիպի դամբանաբլուրներ: Դամբարանների վրա հողաթուփերը ստեղծելուց հետո այն ամրացնելու համար երեսապատել են խոշոր անտաշ քարերով: Առաջաձորի մոտ՝ հսկա քարերով երեսապատված դամբարանները նման են բուրգերի: Ինչ վերաբերում է դամբանաբլուրների ներսի կառուցումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ Ղարաբաղում կատարված պեղումների ժամանակ քիչ ուշադրություն են դարձրել դրանց վրա: Դամբարանների վրայի լիցքերը կատարել են խճաքարով, իսկ որոշ դեպքերում՝ սևահողի և խճաքարի

31 Յու. Ասրյան, Հնագիտական նորություններ Լեռնային Ղարաբաղում, «Պատմաբանասիրական հանդես», 1973, № 2, էջ 299:

32 Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1888, стр. 155.

խառնուրդով: Ինչ վերաբերում է դամբանափոսերին, դրանք շարված են կամ քարե սալիկներից կամ գետնափոր են: Հաճախ էլ հանդիպում են կարասային թաղումներ:

Քարակղզաձև դամբանափոսերը ուշադրություն են գրավում իրենց ծավալով՝ լայնությամբ ու խորությամբ: Դրանք ավելի նման են քարե պատերով մեծ սենյակների, որոնց մեջ ամփոփել են ննջեցյալներին, նըրանց պատվին պահպանված կենդանիներին, մետաղե իրեր և բազմաթիվ կավե ամաններ: Այս դամբարանները շատ հարուստ են բրոնզե առարկաներով, բայց քիչ չեն և երկաթե իրերը: Դրանք Ռ. Վիրխովը վերագրել է բրոնզից երկաթին անցնելու շրջանին³³: Իսկ դագաղներում հանդիպում են դիակիլման հեռքեր, մոխրի մնացորդներ, աննշան քանակությամբ պենքեր, բրոնզեդարյան քարե գործիքներ և համեմատաբար քիչ վարդարանքներ:

Եթե հանգուցյալը հասարակական բարձր դիրք է ունեցել, դագաղի վրա կառուցել են կամարաձև հատուկ դամբարան, որի վրա լցրել են հող, հետո քարեր շարել, նորից ծածկել հողով և այսպես այն դարձել է անմատչելի բլուր: Այդ տեսակի թաղումները տարածված են եղել բրոնզի դարում:

ԳԻՉԱՓՈՅՏԻ ԿԱՏԱՐՈ ՎԱՆՔԸ

Գտիչ վանքի բարձունքից հազիվ է երևում Դիպափայտի կատարին թառած հին բալիլիկը՝ ծովի մակերևույթից 2800 մետր բարձրության վրա: Ի դեպ, Դիպափայտի Կատարո վանք կոչվող այս կոթողը Ղարաբաղի տարածքում հանդիպող ամենաբարձրադիր հուշարձանն է:

335 թվականին Մապրուտների թագավոր Սանեսանը պարսից արքայի հրահրումով հավաքեց իր Աղվանք երկրի կիսավայրենի ցեղերին, անցավ Կուր գետը և հարձակվեց հայոց վրա³⁴:

Սպարապետ Վաչե Մամիկոնյանը մեծ ճանապարհորդության էր գնացել Հունաց երկիրը: Այդ պատճառով էլ հայոց զորքերը ցրված էին երկրի տարբեր կողմերում, և մապրուտներն ու նրանց խաժամուժ դաշնակիցները մի ամբողջ տարի ասպատակեցին Հայաստանի արևելյան անպաշտպան գավառները, թալանեցին ու գերեվարեցին ժողովրդին: Սանեսանի առաջին գործն այն է լինում, որ հարձակվում է Կատարո վանքում ապաշխարող նորահավատ իր երեք տղաների ու 3870 ճգնավոր-

33 Ռ. Վիրխով, նշվ. աշխ., էջ 66:

34 Փավստոս Բուպանդ, էջ 24:

ների վրա, կոտորում նրանց, ապա դիակները դիպում լեռան կատարին և այրում: Այդ օրվանից էլ «կոչեցաւ անունն լերինն Դիպափայտ»³⁵:

Հայտնի է, որ այնուհետև թշնամիների ձեռքով հրի են մատնվել Դիպափայտի մատուռ-վկայարաններն ու Կատարո վանքը, «...թըշնամեաց հրդեհեցան վկայարանքն ի Դիպափայտ լերինն, ի Կատարոյ վանս»³⁶: Լեռնաշխարհի ամենաբարձրադիր վայրում է գտնվում Կատարո եկեղեցին: Հին ու բարեշեն վանքի ավերակները չեն երևում: Ներկայիս եկեղեցին, որ 17-րդ դարի շինություն է, Կատարո վանքի հիմքերի վրա է կառուցված թե ոչ, դժվար է ասել, քանի որ հնի հետքերն անգամ չեն երևում:

Եկեղեցին ուղղանկյուն է, երկթեք ծածկով, կառուցված կիսամշակ տեղական կայծքարից: Պատերի հարթությունների միապադաղ ֆոնը խախտվում է միայն փոքր ու նեղ լուսամուտների ձեղքերով: Արևմտյան մասում գտնվող միակ սուտքը կուրկ է հարդարանքից և կառուցված է մշակված քարից: Համեմատաբար խոր արտաքին որմնակամարը ստեղծում է լույս ու ստվերի խաղ ու դրանով՝ միայն ընդգծում եկեղեցու մուտքը: Միակ դեկորատիվ մասը արձանագրություն պարունակող քարն է: Հյուսիսային պատը կիսով չափ թաղված է հողի մեջ, իսկ հարավայինը շարված է բաց ժայռի վրա: Տեղ-տեղ թափվել են անկյունաքարերը:

Կատարո վանքի եկեղեցու կտուրից նայողի առաջ բացվում է մի լայնատարած անկրկնեղի համայնապատկեր, որի մեջ ընկած են մայր Արաքսի կապույտ ժապավենը, Իրանական ձյունապատ լեռները, Արցախի դաշտը, Չանգեպուրի չքնաղ լեռները, ծեր Մոռվի հողմնահարված կատարները:

ՓԼԽԱՏՈՒՆ ԿԱՍ ՂԱՐԱԴԱՍ

Քանի որ նախորդ գլխում խոսք եղավ մեկիքական առանձնատների (որոնք ուշ միջնադարում «ամարաթ»-ներ են կոչվել) մասին, ապա այստեղ տեղին ենք համարում անդրադառնալ հասարակ, փայտածածկ զբլիսատան կամ ինչպես Ղարաբաղում ընդունված է ասել՝ դարադամին: Այն գտնվում է Դիպափայտի արևմտյան գոգավորություններից մեկում փռված Արփագյարոսկ³⁷ լեռնային փոքրիկ գյուղի վերին մասում, բավականաչափ թեքադիր տեղում, երկու նեղ կածանների միջև:

³⁵ Կաղանկատվացի, էջ 134: Հայապատում, էջ 187:

³⁶ Կաղանկատվացի, նույն տեղում:

³⁷ Այս անունը գրականության մեջ հիշատակված է այսպես. «Արփակաթիլեռ Միւնեաց Աղահեճք գավառի հարաւ արեւելեան կողը»: (Տե՛ս Հ. Էփրիկեան, Պատկերապարզ բնաշխարհիկ բառարան, հատոր առաջին, Վենետիկ—Ս. Ղազար, 1903—1905, էջ 343):

Չնայած Ղարադամն իր կառուցամասերով միանգամայն նման է Ղարաբաղում և Սյունիքում հանդիպող գլխատներին, ուստի կարելի է ներկայացնել իբրև բնութագրական նմուշ այդ կարգի կառույցների համար:

Համակառույցի հիմնական շենքը՝ դարադամը, որը կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, հատակագծում ունի թեթևակի ձգված քառանկյունի ձև՝ 7,8×7,5 մ: Սենյակի ամբողջ ծածկը քառակուսի հիմքերով հորիզոնական գերաններից կազմված յուրօրինակ գմբեթի տեսք ունի: Ղարադամի, ինչպես և մյուս օժանդակ կառույցների համար հատկանշական են ամբողջական բաց ճակատը և կիսագետնափոր ծավալը, որի ետնամասերը գրեթե ամբողջությամբ խորացված են գետնի մեջ: Ճակատային պատը, որի արևմտյան անկյունի մոտ է գտնվում դուռը, շարված է կոպտատաշ քարից: Դուռն փորված հողը համակառույցի առաջ հարթակ է կազմում: Առջևի պատի վրայից (մոտ երկու մետր լայնությամբ) աստիճանաբար ցած իջնելով դուռն են գալիս կտուրի ծայրերը, որոնք գլխատան շուրջ ստեղծում են հովնոց՝ չարդախ: Պատշգամբ հիշեցնող այս նեղ սրահը տաք եղանակներին ծառայել է որպես ցերեկային կացարան և խոհանոց:

Գլխատան ներսի չորս անկյուններից մոտ երկու մետր հեռավորության վրա բարձրանում են հենման հպոր սյուները, որոնք ունեն մեկ մետրից ավելի տրամագիծ:

Վերին մասում բրգաձև և նեղացող սյուներն իրենց վրա հորիզոնական դիրքով կրում են երեք հարկով շարված կաղնի գերաններ՝ «հրիօրումներ»: Բուրգի կենտրոնում, սենյակի հատակից վեց մետր բարձրության վրա, «հուրթ» — երդիկն է, մոտավորապես մեկ քառակուսի մետրի չափ: Ուղիղ նրա տակ, սենյակի կենտրոնում տեղադրված է գլխաքարից կառուցված քառակող օջախը: Եռաշերտ գերանների վրա շարված են կաղնի կոճղեր կամ ինչպես տեղացիներն են ասում՝ «լուփաներ», որոնց վրա դարաված է չփտող մախի կամ ցախավելի մատղաշ ճյուղեր, իսկ սրանք էլ ծածկված են գարու ծղոտի հաստ շերտերով: Դրանից հետո գալիս է կավի շերտը: Որպեսզի ջուրը ներս չհոսի, հողաշերտը «կտուրթակիներով» ծեծվել, խտացվել և ամրացվել է: Ժամանակի ընթացքում առաջացած ձեղքերը աստիճանաբար ամրացվել են կավե նոր շերտով, որից հետո դարադամի տանիքի հաստությունը հասել է մինչև 1,5 մետրի:

Նշված լեռը գտնվում է գյուղից դեպի արևմուտք, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա: Տեղացիների կողմից ինչպես լեռը, այնպես էլ կից գտնվող լեռնանցքը կոչվում է «Արփագյարոսկա յուրտ» անունով: Ինչ վերաբերում է Աղահիճք գավառին, որի մասին խոսք եղավ, հնում սբաղեցնում էր Հագարու (Աղվանո) գետի ընդարձակ և գեղատեսիլ ամբողջ հովիտը: Արևմտյան մասում նա սահմանակից էր Սյունյաց աշխարհին, հյուսիսից՝ Ծարա գավառին, արևելքից՝ Արցախին, իսկ հարավից՝ Պարզկանք գավառին:

Արփագյաղուկում մինչև վերջերս պահպանվում էր **Դավիթանց, Սիմոնանց, Սաքյունց, Ավանեսանց, Պողոսանց, Մակունց, Ազունց, Սևունց, Չառունց, Բղդասարանց, Հարութանց** դարադամները: Դրանից բացի, գյուղի համարյա բոլոր բնակարաններն իրենց հորինվածքով գրեթե դարադամներ են հիշեցնում: Միայն այն տարբերությամբ, որ կռուրները հարթ են, սենյակները համեմատաբար փոքր, այդ իսկ պատճառով հորիզոնական գերանները հենվում են ուղղակի պատերի վրա, երդիկների փոխարեն ճակատային պատում բացված են երկուական լայն լուսամուտներ, շեռուցումը սենյակում կատարվում է թիթեղից պատրաստված վառարանի, իսկ սրահում՝ բուխարիկի միջոցով: Եվ ունեն լայն բացվածքով սյունաշար սըրահներ:

Այս բնակարանները կառուցապատման տեսակետից իրենց մեջ սյուրունակում են և գլխատան, և քաղաքատիպ բնակարաններին հասուկ ճարտարապետական սկզբունքներ:

Բնակարանների էատակը, ետնապատը ամբողջությամբ, կողքի պատերը մասամբ դարադամի են նման, իսկ ճակատային լուսամուտները, առաստաղը և սենյակների ներքին հարդարանքը, ընդարձակ պատըշգամբը քաղաքատիպ բնակարաններից ոչնչով չեն տարբերվում:

Մի խոսքով, այս փոքրիկ գյուղի բնակարանները պատկանում են ժողովրդական բնակարանների այն հազվագյուտ տեսակներին, որոնց համար բնորոշ է դարադամից քաղաքատիպ բնակարաններին անցնելի միջանցիկ շրջանը: Այդ տեսակետից էլ այստեղի բնակարանների մասնագիտական ուսումնասիրությունն ունի ոչ միայն տեսական, այլ գործնական նշանակություն:

ՀԱՐԱՐ

Հագարի գետի ձախ կողմի հարթության վրա՝ Սյունիքը Ղարաբաղի հետ կապող ամենակարճ և ամենահարմար ճանապարհի հատման կետում դարեր շարունակ հարատևել է Հարար անունով նշանավոր գյուղը: Շահ Աբասի կողմից կապմակերպված հայկական բռնագաղթեցումների խորշակն անցել է նաև Հարարի վրայով: Գյուղացիների մեծ մասը, Աղահեճք գավառի տասնյակ գյուղերի բնակչության հետ միասին, քշվեց Պարսկաստանի խորքերը: Հետագայում, բռնագաղթից հայրենադարձած հարարցիները հիմնականում տեղավորվեցին հին Հարարում, իսկ առանձին ընտանիքներ գերադասեցին հիմնավորվել իրենց պապենական ամառանոցներում՝ Չինգանակապ գետի վերին հոսանքներում: Սրանք, հին ավերված բնակավայրերի կողքին, շենացրին Արփագյաղուկ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Թեկխարաբ, Փրաշանց, Քյոհնաշեն անուններով գյուղերը:

Հարարը, շնորհիվ իր աշխարհագրական նպաստավոր պայմանների ու դիրքի, արագորեն վերակառուցվեց, ընդարձակվեց և նորից դարձավ Սյունիք-Ղարաբաղ լեռնային մարզերի «դարպասը»: Թերևս, հիմնականում այդ կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող դարպասը վերացնելու համար էր, որ թուրքական զավթիչները, երբ 1918 թվականին ստան Անդրկովկաս, նախքան Սյունիքի վրա հարձակվելը ավերեցին Հարարը, ցիր ու ցան արին նրա բնակիչներին:

Այժմ Հարարում անցյալից հուշ է մնացել գյուղի ս. Մկրտիչ եկեղեցին, ընդարձակ (ջբեղ տապանաքարերով, տապանագրերով հանդերձ) գերեզմանոցը, քարաշեն աղբյուրը և մի քանի երկհարկանի բնակելի շենքեր:

Հարարից ոչ այնքան հեռու, հարավ-արևելյան կողմում, արաքսյան կաղնիների և եղևնիների պուրակում պահպանվում են հին հարարցիների ձմեռանոցները՝ Աբասյար անունով: Բնական տասնյակ այրերի կողքին ժամանակին այստեղ կառուցվել են բազմաթիվ կողներ, տեփեր և այլ գետնափոր շինություններ, որոնցում պահվում էին անասունները, տարբեր տեսակի անասնակերեր և, իհարկե, բնակվում էին նաև իրենք՝ անասնապահները:

Վերը նշված հուշարձաններից բացի այս կողմերում՝ Դիպափայտի արևմտյան փեշերին հանդիպում են տասնյակ այլ հուշարձաններ: Վաղեմի կյանքի մասին անգնահատելի իրեղեն ապացույցներ հաղորդող (նաև աստիճանաբար անհետացող) այդ հուշարձանները ոչ միայն ուսումնասիրված չեն, այլև նույնիսկ նրանց մի զգալի մասը չեն էլ նշված գրականության մեջ՝ թեկուզ գրանցման կարգով:

Ստորև տալիս ենք համառոտակի տեղեկություններ այստեղի ավելի քան 30 հուշարձանների մասին:

Օձաբերդ. Հին գերեզմանատուն է և պարսպապատ տնատեղեր՝ Նծաբերդ գյուղի մոտ, Սլքեան տարի վրա:

Հազարափրկիչ, Պուր-պտոկ կամ Ս. Խուրթ. Պարսպապատ բերդ՝ կիսավեր եկեղեցով, խաչքարերով: Գտնվում է Նծաբերդ գյուղից դեպի հարավ, 4 կմ հեռավորությամբ:

Թեղուն աղբյուր, Տեմի սեռ. Գյուղատեղի և սրբավայր:

Հարթագույն. Հին գյուղատեղի, տարածվում է Նծաբերդից արևմուտք, մի չքնաղ լեռնահովտում: 18-րդ դարի վերջերին այստեղի բնակիչները տեղափոխվել են Վարանդա գավառ և Շուշիի մոտ հիմնադրել Քարին-տակ գյուղը:

Ղոշարխաչ. Հին գյուղատեղի, Խծաբերդ-Պետրոսաշեն խճուղուն մոտ: Գյուղատեղում ամբողջական տեսքով մնացել են քարաշեն աղբյուրները և ընկուզենու պուրակները: Եկեղեցու հիմքերի վրա կառուցվել է մարագ, իսկ փլատակված շինությունների քարերով՝ հսկա գոմեր:

Հարոս. Գյուղատեղի՝ Խծաբերդից հյուսիս, ալպյան մարգագետինների գոտում:

Ճղացենձոր. Արտադրական շինությունների ավերակներ:

Դայաբուց եղցե, իսկ տեղանքը **Եղցուն ձոր.** Գյուղատեղի, ավերակ մատուռով, գտնվում է Խծաբերդից դեպի հյուսիս-արևմուտք, մոտ 3—4 կմ-ի վրա:

Ըլմնա ուրթ. Հին գերեզմանատուն, կանաչյան նախշերով պարզարված, արձանագրություններ պարունակող տապանաքարերով: Գտնվում է Արփազյաղուկ գյուղից դեպի արևելք:

Ուվանաց տափ. Հին գյուղատեղի: Վերջին տարիներին այստեղ բացվել է մի հողածածկ բնակարան և գտնվել են բազմաթիվ կենցաղային իրեր:

Թյունուց Բախշուն ճեղացը կամ ճղացեն ձորը. Ջրաղացի կիսափուլ շենքի շուրջը նշմարվում են ջրատարի հետքերը, այլ շենքերի հիմնապատերի առանձին հատվածներ և թփերի մեջ կորած սառնորակ աղբյուրը: Այստեղ, որպես անցյալի կենդանի վկաներ, մնացել են ընկուզենու հսկա ծառեր և կիսավայրենացած պտղատու այգիները:

Մակիչի կալ. Գտնվում է Արփազյաղուկի հարավ-արևմտյան ձորի աջ ափին, «Ծորեն ինգյուսին» տեղամասում: Անտառապատ գոգավորությունում, մի գծի վրա դեռ մնում են այստեղի երեք կալերը և դրանց կից մարագների հիմնապատերը:

Մսնեն խուբ. Հին գերեզմանատուն, բնակարանների հետքերը հավիվ են երևում:

Խուււարաց կլումեր. Գյուղատեղի, գտնվում է գյուղի արևմտյան մասում:

Եղցուն ձոր. Ավերակ եկեղեցի, գտնվում է գյուղից դեպի արևելք, Սպիտակաշեն գնացող ճանապարհին մոտ: Եկեղեցու ավերակների մեջ անկանոն թափված են արձանագրություններ բեկորներ:

Սաքյունց սարի եղցեն. Փոքրիկ, ավերակ եկեղեցի է: Գտնվում է Սպիտակաշեն գյուղի արևմտյան մասով ձգված լեռնաբազուկի վերջավորության վրա: Հետաքրքիր է այս հուշարձանի դիրքը. այստեղից երեւում են Դիլվափայտի Կատարովանքը, Ամատեղա բարձրադիր ամրոցը և ամբողջ Ջինգյանակապի հովիտը, մինչև Արաքսը: Դատելով հուշարձանի ավերակներից, դժվար չէ կռահել, որ ժամանակին ազդանշանի ընդունման և հեռարձակման դիտակետի դեր է կատարել հիշյալ բերդերի միջև: Այն նաև հսկողության տակ է առել Արաքսի ափից Հագարի և Ջինգյանակապ

գետերի հովիտներով դեպի Սյունիքի և Արցախի խորքերը՝ Բերդաձոր, Աղահեձք, Ծարա գավառները բարձրացող ճանապարհները:

Ամատեղ. Ամրոց՝ Հաղրութի շրջանի ծայրամասային Թեյխարաբ գյուղի մոտ: Խոշոր ամրոց է, բռնում է մի քանի հեկտար տարածություն: Ամրացված է եղել, հաստ կրկնապարիսպներով, որոնք օղակում էին համանուն լեռան ամբողջ գագաթը:

Ղալավլի բերդ-քարայրը. Գտնվում է Թեյխարաբի հարավային մասում. Ջինգյանակապի ձախ ափին: Շատերի հետաքրքրությունն է շարժել այս ուշագրավ ամրոցը: Նույնանուն քերձը կես կմ խորությամբ ճեղքվածք ունի, որի միջով գետակ է հոսում: Քերձի գլխին ավերակ գյուղատեղին է: «Գյուղամիջում» մի շինություն կա, առանց դռների և լուսամուտների: Շենքի ներսից քերձի միջով քարե սանդուղքը իջնում է դեպի ստորգետնյա գետակը:

Շինատեղ. Գյուղատեղի, գտնվում է Հին Թաղլար գյուղի արևմտյան մասում:

Դիլվափայտի բերդ. Հնագույն ամրոցի ավերակները գտնվում են Դիլվափայտի հարավ-արևելյան ժայռի վրա:

Հանգած Եղցե. Գտնվում է Դոլանլար գյուղից 3 կմ հեռավորության վրա, Սոֆուլու կոչվող տեղամասում, բոլորովին ավերակ վիճակում:

Կյորվոտեն խոթ. Հին գերեզմանատուն, այստեղ դեռ մնում են ավերված բնակավայրերի հետքերը, սրբատաշ քարերի բեկորները և ամենից հետաքրքրականը՝ անընթեռնելի գրություններ, քանդակներ պարունակող տապանաքարեր:

Գաբրիելի սուրբ. Կյափու խոթեր, Յրդանին տակը կոչվող հանդամասերում դեռ մնում են հին բնակավայրերի հետքերը: Այստեղ գտնվել են կավե անոթներ, կղմինդրի կտորտանքներ, զենքերի և կենցաղային պարզարանքների բեկորներ: Գտնվել է նաև Անդրկովկասում իր շքեղությամբ բացառիկ հանդիսացող քարե կամը, որը ցուցադրված է մարգային թանգարանում:

Հին Առաքյուլ բնակավայրի ավերակները, քանդված եկեղեցիով ու գերեզմանատնով գտնվում է այժմյան գյուղի արևմտյան մասում:

ՀԱԴՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Հաղրութի հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Տեղում հանդիպող տասնյակ հուշարձանների բեկորները վերաբերում են թե՛ հեթանոսական և թե՛ վաղ քրիստոնեության ու միջնադարյան շրջաններին: Այս

Գավթի դոնակալ քարի վրայի արձանագրությունից պարզվում է, որ վանքը, կամ թերևս միայն գավիթը, վերակառուցվել է 1735թ.՝ «Ձեռամբ Սուրապի որդի Յովհաննես Եպիսկոպոսի»⁴²:

Սպիտակ խաչ վանքի Եկեղեցին դարձյալ միանալ բազիլիկ տիպի շենք է: Շարված է տարբեր տեսակի անմշակ քարերից՝ կրաշաղախով: Հուշարձանը թե հորինվածքով և թե չափերով շատ մոտ է Շախկախ վանքի Եկեղեցուն: Եկեղեցին գավթի հետ միասին ունի 15,75×7,1 մետր չափեր: Ուշադրության արժանի է վանգակատունը. «Յիշատակ է վանգակատունս Սուրապի որդույ Ասանես Եպիսկոպոսին թ. ՌՃԻԳ» (1674 թ.): Ոչ այնքան բարձր վանգակատունը տեղավորված է աղոթասրահի մեջտեղում, շրջանաձև երդիկի վրա: Քարե օղակի վրա նստած վանգակատունն ունի վեց սյուն, բրգաձև ծածկ: Նրա արևմտահայաց կողմում, որմնակամարի մեջ, պետեղված է մի գեղեցկաքանդակ խաչարձան, որի վերին մասում գրված է. «Ես Աջամի որդի Իշխանայ կանգնեցի վխաչս ի փրկութիւն հոգոյ որդույ իմոյ Ասուպարայ: Որք կարդէք, յիշեցէք ի սուրբ պղաւթս ձեր, աղաչեմ: Ի թվիս ՉՂԷ» (1348): Խաչքարն ունի ավելի քան 2,5 մետր բարձրություն, պատած է նուրբ ու շքեղ պարզաքանդակներով:

Քանդակապարզ տապանաքարեր մեծ թվով կան հատկապես վանքի շրջակայքում գտնվող ընդարձակ գերեզմանոցում: Տապանաքարերից մի քանիսի վրա կան որսի, ճակատամարտի, վար ու ցանքի տեսարաններ: Գերեզմանոցի մեջ, գավթի հյուսիսային կողմում, կա մի մեծ կիսավեր շինություն, որը մի ժամանակ ծառայել է որպես հյուրատուն ուխտավորների համար: Այստեղ ուշադրության արժանի են քիչ հեռու գտնվող վիճակագրական խուղերը: Լավ պահպանված երկու խուղերն ունեն մի ընդհանուր մուտք և հին ժամանակներում հավանաբար օգտագործվել են որպես ճգնարան ու ննջարան:

Թաղասեռի անապատ. Այս հուշարձանը գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հարավ-արևմուտք, գեղեցիկ ձորի թթենու և ընկուզենու այգիների արևակող բլրակի ստորոտում: Եկեղեցին, որը կոչվում է սուրբ Աստվածածին, չորս մույթերով եռանավ բազիլիկ է: Երբեմնի գավթից մնացել են քանդված պատերի վանգվածները: Եկեղեցին ունի երկու շինարարական արձանագրություն՝ մուտքի բարավորի վրա և ներսում: Այդ արձանագրություններից պարզվում է կառուցման ժամանակը: Այս հիմնադրվել է 1635թ., թաղասեռցիների օժանդակությամբ, նախկին ավերված Եկեղեցու դիմաց, հին և նոր Թաղասեռ գյուղերի արանքում:

Բավականին մեծ շենք է, թաղածածկ՝ առնված երկթեք տանիքի

տակ: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, որի երկու կողքերին կան խորաններ: Շարված է կիսատաշ որձաքարով, կրաշաղախով, պատերի մեջ օգտագործված են հին գերեզմանաքարեր և քանդակապարզ խաչքարեր: Եկեղեցուց քիչ ցած, մոտավորապես 500 մետր դեպի հարավ, կարկաչուն աղբյուրների ջրերից գոյացած գետակի աջ ափին, մեծ տարածություն են պաղեցնում հին գյուղի ավերակները, որը կոչվում է Շենատեղ:

Պահպանվել են երկար ձգվող պարիսպների պատերը, տների ու եկեղեցիների տեղերը, սալահատակված փողոցների հետքերը: Խաչքարեր ու արձանագրություններ պարունակող քարաբեկորները թափված են խոտերի ու թփերի մեջ:

ՅՈՐԱԲԵՐԳԸ

Յորաբերդը գտնվում է գյուղի թիկունքի լեռան գլխին: Գեղատեսիլ լեռն իր բնական անառիկ դիրքով շատ համապատասխանում էր այն ժամանակվա ռազմական պահանջներին: Տեղանքի բնորոշ գծերն են՝ բարձրը, ցցված ժայռեր՝ հարավային մասում, հաստ պարիսպներ՝ հակառակ կողմում, և դեպի բերդը տանող դժվարանցանելի ճանապարհը: Եթե դրանց գումարենք նաև նրա իշխող դիրքը՝ ձորերին ու կիրճերին հակելու հնարավորությունը, ապա պարզ կդառնա Յորաբերդի անխոցելիությունը:

Յորաբերդի հիմնական շինություններից մնացել են պարիսպների ավերակները և ջրավազանների հողածածկ փոսորակները:

Բերդն ունեցել է երկու դարպաս: Անմշակ, կրաշաղախով շարված պարիսպների հաստությունը մոտ երկու մետր է⁴³: Բերդի ներսում գտնվել են կավե ջրախողովակներ, կարասներ, բրոնզե նետալաքներ, դաշույններ:

Ամենափրկիչ Եկեղեցի— Այս բարձր ու գեղեցիկ հուշարձանը գտնվում է Յոր գյուղի կենտրոնական մասում: Հավանաբար կառուցվել է 10-րդ դարում: Այդ է ասում դռան բարավորի արձանագրությունը. «Յիշատակ է Ն թվ.»: Շենքը եռանավ բազիլիկ է, չորս մույթով, աբսիդի երկու կողմերում՝ խորաններով:

Սուրբ Լուսավորչի անապատը գտնվում է Յոր գյուղի հարավային մասում, ձորի ձախ եզրին, մի փոքրիկ հարթության վրա: Ուղղանկյուն հատակագիծ ունեցող փոքրիկ կառուցվածք է, շինված մոխրագույն անտաշ քարերից: Անապատի շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանոցը, որը հարուստ է վանազան ձևի տապանաքարերով: Վերջիններս

⁴² «Արարատ», Վաղարշապատ, 1896 թ., էջ 47:

⁴³ «Արցախ», էջ 83:

վարդարված են կենցաղային ու սրբապատկերների բարձրաքանդակներով: Տապանաքարերից շատերն ունեն 13 և 17—19-րդ դարերի արձանագրություններ:

Անապատի մոտ կա մի ստորգետնյա քարակերտ դամբարան: Ավերված դամբարանում հողի մեջ կիսով չափ խրված է մի շքեղ գերեզմանաքար:

ԻՋԵՎԱՆԱՏՈՒՆ

Հին ու միջին դարերում փոխադրական միակ միջոցը գրաստների կարավաններն էին: Կարավանային բանուկ ճանապարհների վրա շինվում էին ընդարձակ իջևանատներ՝ ճամփորդների և գրաստների հանգրստանալու և կերակրելու հարմարություններով: Իջևանները շինվում էին ոչ միայն քաղաքներում ու գյուղերում, որոնց միջով անցնում էր ճանապարհը, այլև այդ երկու բնակավայրերի արանքում եղած բաց դաշտերում, երբեմն էլ լեռնանցքների վրա, երբ ճանապարհն անցնում էր լեռնային անմարդաբնակ վայրերով: Պատմական Արցախի շատ վայրերում մնացել են միջնադարյան այդպիսի իջևանների ավերակներ թե՛ բնակավայրերի մոտ, թե՛ լեռնանցքների վրա և թե՛ բաց ու ընդարձակ դաշտերում⁴⁴:

Ահա այդպիսի մի լավ պահպանված հուշարձան է իջևանատուն կոչվող համալիրը: Այն գտնվում է Հադրութ-Ստեփանակերտ խճուղու 10-րդ կիլոմետրի հատվածում, այժմյան Ղարդաբազար գյուղի կենտրոնում բարձրացող բլրի արևմտյան լանջին: Նրա հարմար աշխարհագրական դիրքը, գետնափոր ընդարձակ դահլիճները, տնտեսական ու պաշտամունքային կառույցներն ավելի են բարձրացրել հուշարձանների դերն առևտրական կարևոր ճանապարհների հանգուցակետում: Սրբատաշ եկեղեցին, ընդարձակ գետնափոր դահլիճները, թաղակապ պահեստներն ու ախոռները հիմք են տալիս ենթադրելու, որ միջնադարյան ճարտարապետական այդ անսամբլը ձևավորվել է երկար ժամանակամիջոցում, տարբեր շինարարների ձեռքով: Այս հանգամանքը ոչ թե բացասաբար է անդրադարձել շինությունների միջև եղած փոխադարձ կապի, ներդաշնակության վրա, այլ ընդհակառակը, այստեղ հմտորեն նկատի են առնված բոլոր կառույցների միասնությունը և ճարտարապետական ընդհանուր կերպարի ամբողջությունը:

Իջևանատան համալիրը կառուցված է ապատ հատակագծման սկզբունքով՝ ելնելով միայն տեղանքից և կողմնորոշումից: Այստեղ ռելիեֆը թողնու-

⁴⁴ Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի կարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960:

ված է անփոփոխ, ու կառույցներն են հարմարեցված տեղանքին: Բլրի գագաթին գտնվող եկեղեցին կառուցված է սրբատաշ մոխրագույն քարից, միանավ բազիլիկի հորինվածքով: Եկեղեցին աչքի է ընկնում պատերի զգալի հաստությամբ:

Եկեղեցուց 40 մետր ցած (դեպի հարավ-արևմուտք) բլրի լանջով ձգվող կիսամշակ քարով շարված պատը կենտրոնական մասում ունի երեք կամարակապ դուռ: Դռների ետևում ընդարձակ սրահն է, որի հյուսիսային և հարավային կողմում գտնվում են միանավ դահլիճների դռները: Ավելի քան 100 քառ. մետր տարածություն ունեցող չորս դահլիճներն ամբողջապես գտնվում են բլրի մեջ: Արտաքուստ բոլորովին չեն երևում այդ դահլիճները: Սրահի և դահլիճների թաղակապ ծածկը բնական ապառաժ բլուրն է, վերնամասում քիչ հարթեցված՝ հավանաբար եկեղեցու համար բակ նվաճելու նպատակով:

Իջևանատան համալիրի մյուս շինությունները գտնվում են բլրի ստորին լանջում: Հիմնական մուտքը, տեղադրված է սրահի ուղղությամբ:

Այդ գլխավոր մուտքից կամ դարպասից դեպի աջ և ձախ իրար կուգահեռ երկու ընդարձակ ախոռներ են, որոնցից մեկը ձգվում է դարպասից արևելք, իսկ մյուսը՝ հակառակ կողմը: Ինչպես այդ շենքերը, այնպես էլ դրանց կպածները կիսագետնափոր են: Եթե չլինեք դարպասը, արտաքուստ բոլորովին չէր զգացվի դրանց գոյությունը: Բոլոր դահլիճները թաղակապ են, ունեն ախոռներ, բուխարիներ և սանդղաստիճաններ, որոնցով կարելի է բարձրանալ դեպի եռակամար ձակատով դահլիճները:

* * *

Ուշ միջնադարյան պաշտամունքային շինություններն աչքի են ընկնում ճարտարապետական աղքատիկ ձևերով: Ահա այդպիսի եկեղեցիներ կան շրջանի հետևյալ գյուղերում.

- ա) Ս. Ասովածածին եկեղեցի՝ Առաքյուլ գյուղում:
- բ) Գյուղամիջի եկեղեցի՝ Խանձաձոր գյուղում:
- գ) Ս. Ասովածածին եկեղեցի՝ Ջիլան գյուղում:
- դ) Ս. Ասովածածին եկեղեցի՝ Բինյաթուլ գյուղում:
- ե) Ս. Ասովածածին եկեղեցի՝ Ծածմձոր գյուղում:
- զ) Հանդին ձեռք մառուղը՝ Շաղախ և Ծածմձոր գյուղերի արանքում:
- է) Ս. Ասովածածին եկեղեցի՝ Սարաշեն գյուղում:
- ը) Ս. Ասովածածին՝ Բանապուր գյուղում:
- թ) Սպիտակ տղա (Աղոլյան) մատուղը՝ Բանապուրի հարավ-արևելյան թևում:
- ժ) Ս. Ասովածածին եկեղեցի՝ Քարագլուխ գյուղում:

- ժա) Բերդավոնի պարսպապատ վանքը՝ Ղուշչիլար գյուղում:
- ժբ) Եկեղեցի՝ Նորաշեն գյուղում:
- ժգ) Ս. Մեսրոպ եկեղեցի՝ Տաք գյուղում:
- ժդ) Ս. Հռիփսիմե եկեղեցի՝ Վըրդնաշատ գյուղում:
- ժե) Ամենափրկիչ եկեղեցի՝ Թաղասեռ գյուղում:
- ժզ) Ամենափրկիչ եկեղեցի՝ Կրմրակյուճ գյուղում:
- ժէ) Ս. Հարություն եկեղեցի՝ Քոչքեկ գյուղում:
- ժը) Եկեղեցի՝ Մելիքջանլու գյուղում:
- ժթ) Ս. Ստեփանոս եկեղեցի՝ Բլութան գյուղում:
- ի) Ծաղկավանք Եկեղեցի՝ Խրմանջուղ գյուղում:
- իա) Ս. Աստվածածին եկեղեցի՝ Աղբուլաղ գյուղում:
- իբ) Ս. Աստվածածին եկեղեցի՝ Քյուրաթաղ գյուղում:
- իգ) Ս. Աստվածածին եկեղեցի՝ Էղիլլու գյուղում:
- իդ) Եկեղեցի՝ Հողեր գյուղում:
- իե) Ս. Ստեփանոս եկեղեցի՝ Ջրակուս գյուղում:
- իզ) Պոկախութի եկեղեցի՝ Ծակուռի գյուղից հյուսիս:
- իէ) Եկեղեցի՝ Թաղոտ գյուղում:
- իը) Երեք կիսավեր եկեղեցիներ՝ Տող գյուղի շրջապատում:
- իթ) Եկեղեցի՝ Միմիղաձոր գյուղում:
- լ) Եկեղեցի՝ Հակակու գյուղում:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

Դարեր շարունակ Մարտունու շրջանը (նախկինում Մյուս Հաբանդ, ապա Վարանդա կոչվող գավառը) իր աշխարհագրական դիրքով, երկրամասի պատմության մեջ կատարած իր բացառիկ դերով Լեռնային Ղարաբաղի հոգևոր մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքում կարևոր տեղ է գրավել:

Վաղ միջնադարում Արցախի առաջին եկեղեցական շինությունը կառուցվել է այստեղ: Երկրամասում լուսավորության, գիտության, քաղաքակրթության տարածման առաջին օջախը դարձյալ եղել է այդ գավառը, որը, չնայած Լեռնային Ղարաբաղի սիրտն է համարվում, այնուամենայնիվ, Կուրկ է բնական այնպիսի ամրություններից; ինչպիսիք կան Դիլակում, Խաչենում, Ջրաբերդում, և այդ պատճառով էլ շատ է ենթարկվել ավերածությունների:

ԱՄԱՐԱՍ

Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող բոլոր հուշարձանների մեջ առանձնակի տեղ է գրավում Ամարասի վանքը, որը անմիջապես առնչվում է Արցախում և Ուտիքում քրիստոնեության տարածման նախապատմության հետ, իսկ հետագայում միշտ էլ եղել է երկրամասի հոգևոր-մշակութային եպակի օջախներից մեկը:

Մուղանի կամ Արցախյան հարթավայրի լեզվակներից մեկը բլուրների արանքով, Ամարաս կոչվող գետակի հունով երկարաձգվել և դեմ է առել Խազապի ու Լուսավորչի ցածրադիր սարերին: Հենց այդ հարթ լեզվակի կենտրոնական մասում է գտնվում Ամարասի վանքը:

Ըստ հայ հին մատենագրության տվյալների, դեռևս 4-րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի կողմից այստեղ հիմնադրվել է Ամարասի վանքը, որի ավարտումը կապված է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսի անվան հետ: Դարի 30-ական թվականների վերջին այն արդեն եպիսկոպոսանիստ էր և իր այդ դերը պահպանեց ընդհուպ մինչև 19-րդ դարը:

5-րդ դարում, հավանաբար Վարդանանց պատերազմի օրերին, ավեր-

վել էր Ամարասի վանքը: Պարսից մոլեռանդ մոզերը թույլ չէին տա, որ իրենց երկրին այդքան մոտ գոյություն ունենար քրիստոնեության նշանավոր կենտրոնը: Նույն դարի վերջում Հայաղվանքի արքա Վաչագան Բարեպաշտը հիմնովին վերանորոգում է տաճարը: Ապացուցված է, որ Մեսրոպ Մաշտոցը Հայոց արևելից կողմանց նահանգները գալով, հենց Ամարասից է սկսել հայերեն գրերի տարածումը և, հասկանալի է, առաջին դրարոցն էլ բացել է Ամարասում¹: Պատմաբան Լեոն Մաշտոցի՝ Արցախում կատարած լուսավորական գործունեության շրջագիծը այսպես էր պատկերացնում. «Այդ գծի արևելյան ծայրին մենք տեսնում ենք Աղվանից ամենամեծ սրբավայրը, Ամարասը, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի թոռան՝ նահատակված Գրիգորիսի գերեզմանը: Այդտեղից շրջագիծը գնում էր Դիլպիսի սրբավայրը... Այս հարավային ծայրակետն էր:


Դիլպիսից Պանտալեոն բժշկի ուխտատեղու վրայով գիծն անցնում էր արևմուտք, ուր Մեծառանց անտառապատի գավառի (այժմյան Խաչենի) վանքերն էին և ուր գործունեություն էին հաստատել Մաշտոցն ու իր աշակերտները»²: Արաբական արշավանքների առաջին շրջանում դարձյալ փորձությունների ենթարկվեց Ամարասը: 9-րդ դարում այն վայելում էր Դիլակի քաջ իշխան Եսայի Աբու-Մուսեի հովանավորությունը, որի շնորհիվ էլ վերականգնվեց ու բարգավաճեց:

1223 թվականին թաթար-մոնղոլները կողոպտում են Ամարասի հարըստությունները: Վանքի կողոպտված գանձերի մեջ էին նաև 4-րդ դարից մնացած Ս. Գրիգորիսի գավապանն ու 36 ակներով վարդարված մի ոսկեձույլ խաչ: Պատմագիր Ստեփան Օրբելյանի վկայությամբ՝ Հունաստանի կայսեր Դեսպինա դստեր (մոնղոլ բռնագրավչի կինն էր) առաջարկով խաչն ու գավապանն ուղղարկում են Կ. Պոլիս: Հետագայում, մոտավորապես 1387 թվականին Ամարասը Արցախի տասնյակ վանքերի նման ենթարկվում է լանկթեմության հրոսակների ասպատակություններին: Ավանդությունը պատմում է, որ Լաւկ-Թեմուրն իր փորքերը շարել է Ամարասից մինչև Արաքս գետը և հրամայել վանքի քարուքանդ պատերի քարերը միմյանց տալով թափել Արաքսի մեջ: Սակայն, դարձյալ ըստ ավանդության, ասպատակիչները դեռ նոր էին հեռացել, երբ վանքը վերըստին կանգնեց իր նախկին շուքով:

16-րդ դարի երկրորդ կեսին, Պետրոս Եպիսկոպոսի (Գիշեցի) ջանքերով բարեկարգվում, բարգավաճում է վանքը, և նրա համար ամառանոց-վանք է կառուցվում Հերիեր գյուղում:

¹ Հայկական սովետական Հանրագիտարան, հատոր 1, Երևան, 1974, էջ 277:

² Լ. Ե. Ո., Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, Երևան, 1947 թ., էջ 152:



Նկ. 6. Ամարասի եկեղեցու հատակագիծը: Չափագրություն՝ Մ. Մ. Հասրաթյանի:

Դրանից հետո Խամսայի մելիքությունների առաջին շրջանում Ամարասը վերակառուցվում և դառնում է Վարանդայի ամենամիլիարական վայրերից մեկը: Վարանդայի Մելիք Շահնապար Բ-ն 13-րդ դարում նորոգում և պարսպապատում է Ամարասը: Նա կառուցում է նաև բազմաթիվ սենյակներ, խուցեր և այլ օժանդակ շինություններ:

Վերջին անգամ, 1858 թվականին, շուշեցիների օժանդակությամբ հիմնովին վերանորոգվում է Ամարասի վանքը: Ինչպես այս, այնպես էլ նախորդ վերակառուցումների ու վերանորոգումների ընթացքում նրա հին արձանագրությունների մեծ մասը ոչնչացել է:

Բոլորովին վերջերս եկեղեցու ներսում, արևմտյան պատի ծեփը կիսով չափ թափվելուց հետո, բացվել է արձանագրություն պարունակող մի բեկոր, որը պատի մեջ օգտագործվել է որպես շինաքար:

Մեկ ուրիշ արձանագրություն խաչքարի վրա, որը գտնվել է Ամարասում, ամենայն հավանականությամբ կարելի է համարել հնագույներից մեկը, ունի ՅՀԳ (925) թվականը:

Ամարասի մոտերքում՝ Մաճկալաշեն գյուղի հին գերեզմանատնից գտնված մի խաչքար, որը միջնադարյան քարագործության հիանալի օրինակ է, քանդակված է 1091 թվականին՝ «Կապնող Ղապարի» ձեռքով: Գեղեցիկ պատվանդանի վրա բարձրացող խաղողի ու նռան քանդակ-

ներով հարդարված այս խաչքարը միջնադարյան հայկական վարդարվետի լավագույն նմուշներից է:

* * *

19-րդ դարի երկրորդ քառորդում Ամարասի վանքը որոշ ժամանակ ծառայել է որպես մաքսատուն: Այնտեղ էին իջևանում արևելքից դեպի Ռուսաստան և եվրոպական մի շարք երկրներ գնացող առևտրական քարավանները:

Ամարասն ունեցել է շատ հողեր, այգիներ, ջրաղացներ, ամառանոցներ:

Այժմ վանքը գտնվում է Սոս գյուղի Ս. Շահումյանի անվան կոլտնտեսության տրամադրության տակ:

Վանքի հնագիտական արժեքը գնահատելու տեսակետից կարևոր դեր ունի նահատակ ս. Գրիգորիսի ստորգետնյա դամբարանը, որը գտնվում է այժմյան եկեղեցու բեմի տակ: Այն շինված է խապալ լեռան քարհանքից բերված սրբատաշ քարով: Դամբարանը, որի երկարությունը ներսից 3,7 մետր է, լայնությունը՝ 1,9 մետր, իսկ բարձրությունը՝ 3,5 մետր, բացի հարավային մուտքից, ունի նաև մուտք արևելյան կողմից, որն այժմ փակված է: Հարավային մուտքից դեպի ներքև տանող աստիճանների հանդիպակաց պատին կան վաղ միջնադարի հայկական ճարտարապետությանը բնորոշ երկրաչափական ու բուսական վարդարանքներ: Դամբարանում էր գտնվում ս. Գրիգորիսի տապանաքարը³, որը և համարվել է հիմնական ուխտատեղի: Գերեզմանաքարի երեսին քանդակված են եպիսկոպոսական խույր, գավազան ու խաչ: Տապանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Դամբարան սրբոյն Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի թոռին և սրբն Գրիգորի Լուսաւորչի պարթեւի: Ծնեալ յամի ՅԻԲ—322, օծեալ ՅԻՆ—340 եւ նահատակեալ ՅԻԸ—348-ը Սանեսան թագաւորէն Մազթթացի ԴՐՐԲԷՆԴ, բերեալ յԱմարասն սուրբ նշխարս ի ձեռն ձեռնասուն սարկաւազաց նորին Արցախունի»⁴:

Ամարասի Ս. Գրիգորիսի դամբարանը հորինվածքի նմանությամբ

³ Ս. Գրիգորիսի տապանաքարը 1858 թ. վերանորոգումների ժամանակ դամբարանից բարձրացվել և դրվել է եկեղեցու դահլիճի հյուսիսային մասում, ուր և այժմ մնում է:

⁴ Արձանագրությունը տապանաքարով հանդերձ ուշ ժամանակներից է: Այդ պատճառով էլ ս. Գրիգորիսի եպիսկոպոսը «դարձել է» կաթողիկոս, որպիսի կոչում Հայոց Արևելքից կողմանց հոգևոր պետերը կրում էին 552 թվականից հետո: Տվյալ դեպքում արձանագրողը նկատի է առել ս. Գրիգորիսին վերաբերող նահատակության պատմությունը:

ավելի մոտ է Օշականում 442—43 թթ. Վահան Անատունու կողմից կառուցված Մեսրոպ Մաշտոցի դամբարանին:

Ճարտարապետ Մուրադ Հասրաթյանն Ամարասի համալիրի ճարտարապետության քննությանը նվիրված իր մի ուշագրավ հոդվածում այն միտքն է հայտնում, թե «Հայ ճարտարապետության 4—6-րդ դդ. այդ (դամբարանների—Շ. Մ.) հետաքրքրական և արժեքավոր ստեղծագործությունների ինքնատիպության, դրանց ձևերի վարգագման էվոլյուցիայի բացահայտման գործում կարևոր դեր և նշանակություն ունի Ամարասի ս. Գրիգորիսի դամբարանը որպես այս տիպի որոշակի թվագրված և ամենալավ պահպանված հուշարձանը»⁵:

Ամարասի ներկայիս կանգուն **եկեղեցին** կառուցված է (1858 թ.) կաթնագույն ֆելզիտի մաքուր տաշած քարից եռանավ բազիլիկի հորինվածքով (արտաքին չափսերն են 13,5×23,2 մ.): Աղոթասրահը երկու կույզ խաչաձև մույթերով բաժանվում է երեք նավի, որոնք թաղածածկ են: Բեմի ապսիդի կողմերում կան ուղղանկյուն հատակագծով թաղակապ ավանդատներ: Վերջիններիս խորությունը մոտ 5 մետր է: Դա պատճառաբանված է բեմի տակ գտնվող ս. Գրիգորիսի դամբարանի առկայությամբ: Եկեղեցու միակ դուռը գտնվում է արևմտյան կողմում: Աղոթասրահն առատ լուսավորվում է պատերում բացված երեքական բարձր ու լայն (դրսից՝ 1,4, ներսից՝ 2, 0 մ.) լուսամուտներով:

Երկթեք տանիքի վրա բարձրանում է փոքրիկ վանգակատան վեց սյունանի ռոտոնդը: Հետաքրքիր է նշել, որ (ինչպես երևում է նաև ավելի քան հարյուր տարի առաջ «Արարատ» անսագրում տպագրված գծանկարից և հատակագծից), մինչև վերջին վերակառուցումը Ամարասի եկեղեցին ունեցել է երեք գմբեթանման վանգակատներ: Դրանցից ամենամեծը տեղադրված էր եղել եկեղեցու տանիքի կենտրոնում, մյուս երկուսը՝ արևելյան և արևմտյան ծայրերին⁶:

Ուսումնասիրողները գտնում են, որ այժմյան եկեղեցին վերակառուցելիս շինարարները չեն կրկնել նախորդի հորինվածքը: Այդ մասին որոշակի նշում է նաև Ս. Ջալալյանը, որը անձամբ տեսել է 17-րդ դարում կառուցված եկեղեցին⁷: Հին եկեղեցին «... եղել է ոչ թե եռանավ բազիլիկա, այլ գմբեթավոր շենք»⁸:

Աղոթասրահի հարդարանքը թե՛ ներսից և թե՛ դրսից պարզ է: Այստեղ բացառություն է կապում արևմտյան շքամուտքի ձակատի պատը:

⁵ Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետության համալիրը, «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1975, № 5, էջ 51:

⁶ «Արարատ», 1872, էջ 26:

⁷ Ս. Ջալալյան, ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 196:

⁸ Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 42:

Մուտքի բարավորի քարր և դրանից վերև բացվող (համեմատաբար փոքր) լուսամուտն ունեն պատի ընդհանուր հարթությունից զգալիորեն դուրս, իրար միացած երեսակալ, որը ճակտոնի տակ վերածվում է խաչի: Մյուս պատերը գրեթե հարդարանքից զուրկ են:

Վանքն ունի ուղղանկյուն հատակագծով պարսպապատեր, չորս անկյուններում տեղադրված կլոր բուրգերով: Պարսպի երկարությունը արևելքից արևմուտք 85 մետր է, լայնությունը՝ 59 մետր, բարձրությունը՝ 5 մետր: Պարիսպների ողջ պարագծով ներսում կառուցված են տասնյակ բնակելի և օժանդակ շինություններ: Այստեղ աղոթասրահից դեպի արևելք պարըսպի ներսը բնակելի սենյակների շարքով անջատվել և վեր է ածվել երկու ներքին բակերի: Բակի արևմտյան մեծ հատվածի կենտրոնում է գտնվում համալիրի հիմնական հուշարձանը՝ ս. Գրիգորիսի եկեղեցին: Դեպի աղոթասրահն են բացվում բակի բոլոր բնակելի սրահները: Սեղանատունը, վանահոր երկհարկանի գեղեցիկ շենքը տեղադրված են եկեղեցու հարավային կողմում: Արևելյան փոքր բակը ունեցել է միայն տնտեսական նշանակություն: Այստեղ են եղել վանքի գոմը, ախոռը, պահեստները:

Պարիսպների միակ մուտքը գտնվում է հարավ-արևելյան կողմում, որը բացվում է դեպի փոքր օժանդակ բակը: «Սա ունի պաշտպանական նշանակություն, — գրել է Մ. Հասրաթյանը, — որովհետև ստացվում է ամրությունների երկաստիճան համակարգ և վանքի արևմտյան, հիմնական մասը ներթափանցելու համար պետք էր հաղթահարել նոր արգելք՝ երկու բակերի միջև եղած դարպասը (այժմ քանդված է): Նման երևույթ գոյություն ունի Սյունիքի 17-րդ դարի որոշ կրոնական համալիրներում ևս»⁹:

ԱՄԱՐԱՍԻ ՀՈՎՏԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Ամարասի բարեբեր հովիտն իր աշխարհագրական դիրքով շատ է համապատասխանում տեղաբնակ հայության խաղաղ ստեղծագործական կյանքի պահանջներին: Ինչ խոսք, որ այս հանգամանքը որոշակի դեր է խաղացել Ամարասի՝ որպես մշակութային կենտրոնի բարգավաճման համար, իսկ այն էլ իր հերթին նպաստել է շրջակայքում ստեղծված կյանքին, կենցաղին, սովորություններին: Դրանց մասին վկայում են այն բազմաթիվ ավերակ գյուղերը, գերեզմանատները, եկեղեցիները և բնակավայրերը, հին ու հարուստ մշակույթի բեկորները, որոնք գետնի երես են ելնում պատահաբար, տարերայնորեն: Անցյալի այդ հուշարձաններից թեկուզ և ավերակ վիճակում առանձնապես կարևորություն է ներկայացնում Ամարաս գյուղաքաղաքը: Այդ խոշոր բնակավայրը, որի հետքերը

⁹ Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 38:

մինչև օրս մնում են, տարածված է վանքի պարիսպների մոտով հոտող Ամարաս գետակի աջ և ձախ ափերին: Հնավայրի արևմտյան և արևելյան կողմերում կան երկու գերեզմանատներ: Դրանցից մեկը գտնվում է Կհոլ կոչվող տեղամասում, իսկ մյուսը՝ Կվնապատ բլրի վրա:

Ամարաս գյուղաքաղաքը Արցախի վաղ միջնադարի խոշոր և շեն բնակավայրերից մեկն է եղել, որտեղ կյանքը հարատևել է մինչև 16-րդ դարը, մինչև օսմանյան թուրքերի կողմից նրա ավերումը: Նկատվել է, որ այս բնակավայրի քարերով են կառուցվել վանքի ներկայիս պարիսպները, բազմաթիվ բնակարաններ, մատուռներ և այլ շենքեր¹⁰:

Ամարասի ամառանոցը գտնվում է Հերիեր գյուղում: Այն փռված է Ծովատեղի հարևանությամբ, Ռսկըհան լեռան հարավ-արևմուտքում: Այստեղի եկեղեցին 17-րդ դարից է և կրում է Լուսավորչի անունը: Բոլորովին անխաթար մնացած հուշարձանը քառամույթ գմբեթավոր բազիլիկ է, որի գմբեթի թմբուկը համարյա չի երևում շենքի արտաքին ծավալում: Պատերը շարված են սրբատաշ քարերով: Եկեղեցու երկարությունը 19, լայնությունը 14, իսկ բարձրությունը 8 մետր է: Ի դեպ, Ամարասի եկեղեցին ունի նույն լայնությունը, ինչ Հերիերի հուշարձանը, իսկ երկարությամբ մի փոքր ավելի է եռանավ բազիլիկ դարձնելու պատճառով: Այս հանգամանքը դարձյալ հուշել է Մ. Հասրաթյանին ասելու, թե 17-րդ դարի «Ամարասի եկեղեցին նույնպես եղել է ցածրադիր գմբեթով, քառամույթ գմբեթավոր բազիլիկա»¹¹:

Եկեղեցու հղկված 4 սյուններն իրենց վրա կրում են թաղակապ, երկթեք ծածկը: Շինության ներսում լավ են պահպանվել բեմը, խորանները: Պատերի մեջ տեղադրված արձանագրություններ պարունակող վիմաքարերն իրենց վրա կրում են 16—17-րդ դդ. թվականներ:

Ամարասի հովտի հուշարձաններից են՝

1. Ս. Աստվածածին մառուռը՝ Հերիեր գյուղի հին հանգստարանում:

2. Ս. Աստվածածին եկեղեցին՝ Ծովատեղ գյուղում:

3. Կարմիր եկեղեցին կամ Մելիք Փաշայանների դամբարանատունը՝ Ծովատեղի արևելյան կողմում, բլրակի վրա: Դամբարանատան շրջակայքում գտնվող հին գերեզմանատներում դեռ պահպանվում են 10—13-րդ դարերի արձանագրություններով խաչքարեր: Իսկ բուն դամբարանատունը ստորգետնյա հուշարձան է՝ բաղկացած չորս մասին, որոնք հաղորդակցվում են միջնադռներով: Շինություններն ունեն մի շարք վիմագրեր՝ ՌԻԵ (1576), ՌԼԵ (1586), ՌՀ (1621) թվականներով:

¹⁰ Ամարասի հովտի շարունակությունը կապող տարածքում գտնվող բնակավայրերի, եկեղեցիների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Գ. Մկրտչյան, Մարտունու շրջանի պատմական հուշարձանները, «Էջմիածին», 1976, 2, էջ 56—63:

¹¹ Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 43:

4. Ծովատեղ և Խերխան գյուղերի արանքում պահպանվում է երկու արհեստական լճակ: Ենթադրվում է, որ Ծովատեղ գյուղը լճակներից է իր անունը ստացել:

5. **Փլիին փոս գյուղատեղին՝** Ծովատեղի մոտակայքում: Հնավայրում գտնված բրոնզե թասը, մատանիները, ականջօղերը, ապարանջանները, սև, փայլուն գույնի գավերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում և համարվում են թանգարանային արժեքավոր ցուցանանքներ:

6. **Ս. Գևորգ եկեղեցին՝** Խերխան գյուղում:

7. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Կոլխոպաշեն գյուղում:

8. **Շինատեղ գյուղատեղին՝** Կոլխոպաշենից վերև:

9. **Տերթնի գերեզմանատունը,** անտառ տապանաքարերով՝ Կոլխոպաշենի մոտ:

10. **Պերետեսա եկեղեցին՝** Կոլխոպաշեն-Մամնա գյուղերի արանքում, շուրջը գերեզմանաքարեր:

11. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Մամնա գյուղում:

12. **Պակեսի բերքի մատուռը՝** Ղավխսան գյուղի շրջակայքում, «Սորբեն տոջ» անտառապատ բլրի գագաթին:

13. **Ս. Լուսավորչի ուխտատեղին՝** համանուն լեռան կատարին՝ Սոս գյուղի մոտ:

14. **Ս. Գևորգ եկեղեցին՝** Սոս գյուղում:

15. **Հին Հանգստարան՝** Քարահունջ գյուղի մոտերքում:

16. **Ս. Գևորգ եկեղեցին՝** Քերթ գյուղում:

17. **Դարահոջ գյուղատեղին՝** Քարահունջ գյուղից երկու կիլոմետր դեպի արևմուտք, Ռսկըհան լեռան լանջին, և կոչվում է «Քյոհնա Քարահոնջենյալ» անունով:

18—19. **Քարավեճի գյուղատեղին՝** Քերթ գյուղի մոտ, Հին Քարավեճից դեպի արևելք:

1971 թվականին հնավայրի մոտով ճանապարհ բացելու ժամանակ հայտնաբերվել են գետնաթաղ քար ու կրով կառուցված շենքերի մնացորդներ:

20. **Բրիտիս գյուղատեղին՝** Մամնա գյուղի մոտ: Այն հիշատակված է Առաքել Դավրիժեցու պատմության մեջ¹²: Տեղացիներն այն կոչում են Պերետես: Այստեղ դեռ մնում է հին գերեզմանատունը՝ փլված մատուռով, իսկ գյուղատեղին դարձել է վարելահող, բացառությամբ մի քանի արհեստական թմբերից, որոնք փլված տներ են, ծածկված հող ու մացառով:

21. **Քոչիկ գյուղատեղին՝** Ծովատեղ և Խերխան գյուղերից ներքև ըն-

կած բլրալանջի վրա: Պահպանվել են գերեզմանատունը, եկեղեցու ավերակները:

22. Ամարասի ընդարձակ հովտի աջ մասում ձգվող լեռնաշղթայի բարձրադիր կետերում են գտնվում երկու վանքեր: Դրանցից առաջինը **Մավասի վանք եկեղեցին** է (գրականության մեջ հիշվում է նաև **Մամասեի**): Այս հուշարձանը մինևույն ժամանակ հնում ամրոցի դեր է խաղացել:

Միջնադարյան վանքերին բնորոշ հորինվածքով կառուցված այս կոթողը զուգակցվում է նաև գավիթներին հատուկ առանձնահատկություններով: Եկեղեցու խորաններում կան գերեզմանաքարեր:

23. **Մամասեից ոչ այնքան հեռու ձգվող մեկ ուրիշ լեռնաշղթայի** հյուսիս-արևելյան սարահարթում (այժմ Մամնա գյուղի մոտ) է գտնվում **Շեշկա վանք-եկեղեցին**: Հատակագծում (9,0×6,0 մ) անհամաչափ է, աղթաարահի մեջ ներառված են խորանները և բեմը: Լուսամուտներն ունեն քանդակազարդ երեսկաներ: Աղթաարահում կան արձանագրություններով մահարձաններ:

24. **Սորվա խութ** (սուրբ բլուր) **մատուռը** գտնվում է Ամարասի գեղատեսիլ հովիտը շրջափակող լեռնաշղթաների հարավային մասում վեր խոյացող մի կոնաձև լեռան գլխին:

Բացի նշվածից, Ամարասի հովտում արձանագրվել են բազմաթիվ հնագիտական հուշարձաններ: Հապարամյակների ընթացքում քանիցս այդ հովիտը ենթարկվել է օտար ասպատակիչների ավերածություններին և, հավանաբար, միայն պեղումները կարող են նոր տեղեկություններ ավելացնել այդ հուշարձանների մասին եղած կցկտուր փաստերին: Հովտում ստեղծված կյանքի, բնակավայրի հարուստ մշակույթի, կենցաղի ու սովորույթների մասին շատ բան են պատմում այն գործիքների ու կենցաղային իրերի մնացորդները, որոնք գետնի երես են ելնում դաշտային կամ շինարարական աշխատանքների ընթացքում:

Ուշագրավ են հատկապես պղնձի դարին վերաբերող նյութերը, որոնք գտնվել են այստեղ: Ի դեպ, պղնձագործությունը պատմական Արցախ նահանգում վարգացած է եղել դեռևս մ. թ. ա. երրորդ հապարամյակում: **Առաջաձորի, Խոջալուի, Դոլանլարի, Ամարասի, Կրկժանի** բրոնզեդարյան դամբարանները պարունակում են պղնձե և բրոնզե բարձրորակ իրեր (գործիքներ, վենքեր, վարդեր), որոնք ցույց են տալիս Ղարաբաղի հին բնակիչների մետաղաձուլական արհեստի վարգացած մակարդակը¹³:

12 Я. Гуммель, Раскопки в НКАО в 1938 г., Известия Азербайджанского филиала Академии наук СССР, № 4, 1939.

12 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 16:

ՀԱՐՏԱՐ

Հարտարը բաղկացած է **Ղուլե** (հյուսիսափայաց) **Հարտար**, **Ղուլե կալեր**, **Գյունե** (արևելահայաց) **Հարտար** և **Գյունե կալեր** գյուղերից: Իրարից մեկ, մեկուկես կիլոմետր հեռավորության վրա գտնվող այդ գյուղերը տեղադրված են մի մեծ թեքադիր լեռնահովտում, որը երեք կողմից շրջափակված է լեռնաշղթաներով, իսկ մյուս՝ արևելյան կողմը լրիվ բաց է, որտեղից սկսվում են ընդարձակ այգիներն ու հացահատիկային կուլտուրաների դաշտերը, որոնք կապվում են Արցախյան դաշտի անմիջական շարունակությունը:

Գյուղի հյուսիսային մասով ձգվող ժայռոտ լեռնաշղթան արևմուտքում միանում է **Ալանթոթ** հսկա լեռանը: Դրանից դեպի հարավ տարածվում է **Սարեն** արտ և **Եղիշեի** լեռնազանգվածները, որոնց բազուկներից մեկի վրա է գտնվում **Եղիշեի** նշանավոր վանքը: Այդ լեռնաշղթաները ահռելի պարիսպների նման ելերել են նշված չորս գյուղերը:

Տեղին է հիշատակել Հարտարի արևմտյան մասում գտնվող լեռնանցքի մասին, որը տեղական բարբառով կոչվում է «Գյաղուկ»: Մեկ ուրիշ լեռնանցք, որով ճանապարհը ձգվում է դեպի **Սոս**, **Հերիեր**, **Կարմիր շուկա** և այլ գյուղեր, գյուղացիները անվանում են «Արյունոտ գյաղուկ»:

Հարտարի հյուսիս-արևմտյան մասում է գտնվում մի ահռելի բերդ, որի միջնաբերդի կատարին դեռ երևում են «Նահատակ» սրբավայրի ավերակները: Բերդը գրեթե անմատչելի է. շատ քջերին է հաջողվել բարձրանալ նրա միջնաբերդը:

Հարտարի մոտակայքում կան **հինգ գյուղատեղիներ**: Դրանցից ամենանշանավորը՝ **Շինատեղը**, գտնվում է գյուղի հարավային մասում՝ Եղիշեի վանքից մոտ երկու հարյուր մետր դեպի հյուսիս-արևմուտք: Տեղացիների գտած բազմաթիվ հնագիտական իրերը՝ կավե և պղնձե ամանները, շենքերի հետքերը, հին գերեզմանատները, նաև այն հանգամանքը, որ տեղական բնակչությունն այդ վայրերն անվանում է «շինատեղ», հիմք են ծառայում պնդելու, որ հիշյալ գյուղատեղիները երբեմնի հին բնակավայրերի մնացորդներ են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Մռավի թաղ», «Քյամալա աղբյուր», «Ղալին խուր» հնավայրերը եղել են ոչ թե մշտական ապրելատեղեր, այլ ավելի շուտ հարձակումներից պաշտպանվելու, թաքնվելու ժամանակավոր կացարաններ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Հարտարի մեջ միավորվող գյուղերի աղբյուր-հուշարձանները: Դարեր շարունակ «Մոսե շուր», «Ծրվա շուր», «Գովեն աղբյուր», «Ըսլա», և «Ելապին» աղբյուրները կենարար ջրով ապահովել են Հարտարցիների կարիքները:

Գիտական լայն շրջաններին դեռևս անհայտ է Հարտար¹³ գյուղի տարածքում, հնադարյան Ամարասից 15 կմ հարավ-արևելք, **Դվին-Պարտավ** պատմական ճանապարհի վրա գտնվող բրոնզեդարյան հնավայրը: 1965 թ. աշնանը պատահականորեն բացված ավելի քան 150 հեկտար տարածություն բռնող այդ խոշոր հին բնակավայրում հայտնաբերվել են շենքերի մնացորդներ, կենցաղային իրեր, ռավական և աշխատանքային գործիքներ, որոնց մեջ աչքի են ընկնում շարդված կամ ամբողջական վիժխարի կարասները: Սրանց նախնական ուսումնասիրությունից գիտնականները եկել են այն եզրակացության, որ բնակավայրը, ամենայն հավանականությամբ, ավերվել է ամենաուշը առաջին հազարամյակի կեսերին (մ. թ. ա.), որովհետև ոչ օտար (հունա-հռոմեական) և ոչ էլ հայկական աղբյուրները ոչինչ չեն հաղորդում այդ մասին¹⁴:

Շուրջ 2 մ. բարձրություն ունեցող վիժխարի կարասները, բնիկների կավագործական արհեստի բարձր մակարդակը վկայելուց բացի, անառարկելիորեն վկայում են նաև դրանց տերերի երկրագործական և առանձնանապես այգեգործական պրոդուկտների մասին: Կարասներում գտնվել են խաղողի կորիզներ և գինու քարացած մրուր:

Հարտարի հուշարձանների մեջ համեմատաբար լավ են պահպանվել գյուղերում գտնվող եկեղեցիները: **Գյունե Հարտարի եկեղեցին** ուշ միջնադարի ոճին բնորոշ բազիլիկ է: Եկեղեցու ճակատակալ քարի վրա պահպանված արձանագրությունից պարզվում է, որ այն կառուցվել է 1787 թվականին, Հարություն վարպետի կողմից: Դժբախտաբար մյուս եկեղեցիները չունեն շինարարական արձանագրություններ: Սակայն նրանց Հարտարապետական ընդհանուր հորինվածքի և կառուցելակերպի հիման վրա կարելի է ասել, որ ավելի ուշ ժամանակների են վերաբերում:

Հարտարի ներկայիս կուլտուրայի հոյակապ պալատի (հեղ. Հարտ. Կեվորգ Թամանյան) շինության ժամանակ գտնվել է 4-րդ դարից մնացած մի հիանալի խոյակ, որը փոխադրված է մարզային թանգարան: Դա էլ համոզիչ կերպով հաստատում է մասնագետների այն կարծիքը, որ Հարտարում քրիստոնեության տարածման շրջանում, Ամարասի հարևանու-

¹³ Հարտար բառը նշանակում է հմուտ, ձեռներեց, հնարագետ: Հավանաբար այդ անունը դրվել է այն պարզ պատճառով, որ Հարտարցիները հնուց ի վեր հայտնի են որպես «ոսկի ձեռքեր» ունեցող արհեստավորներ, շինարարներ, երկրագործներ, այգեգործներ, անասնապահներ:

¹⁴ Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի հնագիտական հուշարձանները, «Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի», հ. 6, Երևան, 1975, էջ 156:

թամբ, կառուցվել է մի տաճար: Սակայն ճարտարի հնօրրանների մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում **Եղիշեի վանքը**, որը գտնվում է Ղուլե ճարտար գյուղից հարավ բարձրացող լեռան գագաթին: Վանքի միակ եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Եղիշայ կույսի անապատ: Եկեղեցին ուշ միջնադարի ոճի հատուկ բազիլիկ է, ներսում ունի երկու սյուներ, ծածկը թաղակապ է: Բեմի երկու կողմից կան ուղղանկյուն հատակագծով խորաններ: Պատերում բացված են երեք մեծ խորշեր: Միակ մուտքը արևմտյան կողմից է: Կամարները, սույթերը, լուսամուտների և դռան ելքերը շարված են մաքուր տաշած քարերից, մնացած մասերը՝ անտաշ որձաքարերով: Պատերի մեջ օգտագործված են հին շենքի բավաթիվ քարեր, խաչքարեր, կենցաղային և այլ ձևի հետաքրքիր վարդաքանդակներ, նույնիսկ գերեզմանաքարեր, արձանագրության մնացորդներ, որոնք ավելի են բարձրացնում եկեղեցու արժեքը: Ներսից ծեփը մեծ մասամբ թափված է: Պահպանվել է խորանների ծեփի որոշ մասը: Հին շենքի հիմնադրման ժամանակը ստույգ հայտնի չէ: Վիճակն արձանագրության համաձայն՝ 12-րդ դարից եղել է նշանավոր ուխտատեղիներից մեկը: Հետագայում այն ավերվել է, և տեղը 17-րդ դարում վերաշինվել: «Ուստայ Կաբրընյա շինեցի այս եկեղեցին ի ձեռամբ իմով...»¹⁵ (արձանագրությունը պետք է հասկանալ վերակառուցելու իմաստով): Վերակառուցումը կատարվել է 1655 թվականին, երկու կրոնավորների՝ Հովհան արեղայի և իր որդեգիր կրտսեր տեր Հովհանի կողմից: Շինարարության արձանագրությունը գտնվում է մուտքի ճակատի քարի վրա: Կտուրի վրա իբրև պանդակատուն ունեցել է փոքրիկ կաթողիկե, այժմ այն գտնվում է կիսավեր վիճակում: Եկեղեցու ազագ խորանում, բեմի տակ է գտնվում Եղիշայ կույսի դամբարանը: Եկեղեցուն կից, բարձունքի վրա տարածվում է փոքրիկ գերեզմանոց: Տապանաքարերի մի մասը բավական մեծ է և լավ մշակված: Ի դեպ, եկեղեցու պատերի մեջ տեղադրված խոշոր տապանաքարերի վրա քանդակված են միջնադարյան երկրագործական գործիքներ, վար ու ցանքի, հացահատիկի կալսման տեսարաններ, խաղողի ողկույզներ և այլն: Այս ամենի շքնորհիվ հուշարձանը հետաքրքիր է նաև ազգագրական առումով: Քանդակները խոսում են այն մասին, որ շրջապատի բնակիչները զբաղվել են հիմնականում երկրագործությամբ և այգեգործությամբ, ինչպես հիմա:

Վանքն իր ժամանակին պարսպապատ է եղել: Ավերված պարիսպների վրա աճել են տեղի, կաղնի, հացենու և այլ ծառեր, որոնք իրենց հովանու տակ են առել վանական համալիրը:

¹⁵ Ե. Լալեան, Վարանդա, էջ 47, Բնաշխարհիկ բառարան, էջ 677: Արցախ, էջ 117:

Հացի գյուղը դարձյալ պատմական հինավուրց կոթողների, ավանդությունների գյուղ է: Այն ունի արժեքավոր բավաթիվ հուշարձաններ, որոնք լուռ վկաներն են գյուղի հետաքրքիր պատմության: Բավական է հիշել, որ այս գյուղի վաղնջական անցյալը կապված է Վաչագան Բարեպաշտ թագավորի (5-րդ դ.) գործունեության հետ և նույնիսկ մտել է Վաչագանի ու Անահիտի սիրուն նվիրված ժողովրդական ավանդությունների ու հեքիաթի հյուսվածքի մեջ (Հացիկ անունով):

Հացիի պահպանված հուշարձաններից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գետակի ձախ ափի բլրի գագաթին և լանջերին փռված հուշարձանախումբը, որը ժողովրդի կողմից կոչվում է «Բռի եղցի»:

«Բռի եղցի» (եկեղեցի) անվամբ հայտնի հուշարձանախումբը բաղկացած է երեք փոքր եկեղեցիներից, չորս որմնափակ խաչքարերի մնացորդներից և ընդարձակ գերեզմանատնից: Բոլոր հուշարձանները կառուցված են փխրուն և շուտ քայքայվող թերթաքարերից, որի պատճառով քանդակներն ու արձանագրություններն այժմ խիստ հողմնահարված ու փշրված են:

Կանգուն և կիսավեր շինությունների ճարտարապետական ոճը և դրանց վրա մնացած արձանագրությունները ապացուցում են, որ դրանք մեծ մասամբ շինված են 13-րդ դարում¹⁶:

Առաջին եկեղեցին, որը գտնվում է բլրի գագաթի արևմտյան կողմում, փոքր շինություն է, շարված անտաշ սալաքարերով: Գրեթե ամբողջական մնացած թաղածածկ եկեղեցու միակ մուտքը արևմուտքից է, որի երեսակալները գեղեցիկ հյուսվածքավարդով են, քառակուսիներ, և մեջը նույնպես հյուսապարդ խաչեր:

Բարավորի քարը կիսաշրջանաձև է, կենտրոնում՝ քանդակված խաչ և շուրջը՝ ռոմբեր: Մուտքի վերին երկու կողմերին թռչուններ են գլուխները փշրված: Արևմտյան ամբողջ պատի արտաքին երեսը պատած է խաչազարդ սալաքարերով:

Հյուսիսային կողմի թռչունի քանդակի մոտ ագուցված է մի սալաքար, որի վրա հետևյալ արձանագրություն-հիշատակությունն է փորագրված.

«Ձևաչենիկ վարդպետ սբ եկեղեցոյս յաղաթս յիշեցեք ի քս»¹⁷: Վարպետ Խաչենիկը, որի անունը հիշատակված է արձանագրության մեջ, բացի այս եկեղեցուց, նույն բլրի ստորոտում, ճանապարհի հարավա-

¹⁶ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963 թ., էջ 98:

¹⁷ Արցախ, էջ 126:

յին եպրում կառուցել է նաև մի մեծ ու գեղեցիկ որմնափակ խաչքար: Կոթողի վերևի ճակտոնը քանդված է, որի տակ, ինչպես վկայում է Ս. Բարխուդարյանը, եղել են սրբատաշ 8 քարեր, մի շարքով, որոնց վրա գրված է մեծ արձանագրություն՝ բաղկացած 6 երկար տողերից: Ի դեպ, անվանի գիտնականը 1961 թվականին եղել է այստեղ և մանրամասնորեն ուսումնասիրել ու նկարագրել է և՛ հուշարձանները, և՛ արձանագրությունները:

«Խաչենիկ վարդպետի կառուցած այս հուշարձանը,— գրել է Ս. Բարխուդարյանը,— 13-րդ դարում տարածված նման հուշարձանների լավագույն նմուշներից է և մեր տեսած ամենամեծերի շարքին է պատկանում»:¹⁸

Այս որմնափակ խաչքար-կոթողը չորս կողմից շարված է սրբատաշ սալաքարերով, ունի բարձր ու շքեղ պատվանդան, որի երեսաքարերից, ցավոք, մեկն է մնացել, և դրա վրա պահպանվել են նույն ռուբանակազան վարդերը: Որմնախորշի մեջ ագուցված են եղել չորս խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով:

Երկրորդ եկեղեցին հիմնադրվել է 13-րդ դարում, գտնվում է բլրի գագաթին, փոքրիկ հարթակում: Ներկայումս եկեղեցին, որի արտաքին չափերն են 7,5×7,8 մ, ունի քառակուսի հատակագիծ և շինված է վաղ միջնադարյան հուշարձանի հիմքերի վրա:

Շենքը շարված է սպիտակ անտաշ կրաքարով: Թաղակապ ծածկը հենվում է պատերի վրա: Եկեղեցին ունի նաև երկու խորաններ և մեկ նեղ բեմ: Խորանների մուտքը ելերված են գեղեցիկ քանդակներով: Բեմի մոտ, կոփածո քարի վրա, գրված է հետևյալ արձանագրությունը.

«Թվ. ԶԺԹ... ի (1270) Տէրութեան... տր Ստեփանոսի յե... սիսի (յեպիսկոպոսութեան Ներսեսի) ես Մխիթար որդի... կանգնեցի վխաչս»:¹⁹ Եկեղեցու ներսում կան մի շարք գերեզմանաքարեր, որոնցից մեկի վրա քանդակված է տապանագիրը. «Այս է տապան տր Յոհաննիսին որդի Կարապետին թվ ՌՄԽԵ»²⁰ (1798):

«Բռի եղջի» հուշարձանախմբի արևմտյան կողմում, բլրի ստորոտում է գտնվում հաջորդ **եկեղեցին**, այն, որ համեմատաբար փոքր է ու շարված կոպտատաշ սալաքարերով: Շինության ծածկը փլված է, պատերը, հատկապես արևմտյան, թե՛ դրսից և թե՛ ներսից պատած են տարբեր մեծությամբ տասնյակ խաչքարերով: Արևմտյան մասում բացվող միակ մուտքը վարդարված է քանդակներով: Առանձնապես հետաքրքիր լուծում ունի կիսակամար ճակատաքարը: Կենտրոնում խաչ է, շուրջը՝ շախ-

մատաձև վարդեր, իսկ երկու կողմում տեղադրված են մեկական սիրամարգի բարձրաքանդակներ: Այդ նույն արևմտյան պատի վերնամասում փորագրված է հինգ տողանի շինարարական արձանագրություն, որի տողերի սկզբի մասից երկու քար ընկել-կորել է, իսկ մնացածներն էլ կիսեղծ վիճակում վկայում են, որ եկեղեցին կառուցվել է Աղվանից Հովհաննես կաթողիկոսի և նրա կրտսեր եղբայր Ներսես կաթողիկոսի օրոք, 1235 թվականից առաջ²¹:

Նույն արձանագրության կողքին պահպանվել է ճարտարապետի հիշատակագիր արձանագրությունը.

Չջահեն վարդպետ

եկեղեցոյս յիշեցեք ի տր:

Ինչպես այս, այնպես էլ առաջին եկեղեցու արձանագրության մեջ «վարդպետ» գրության վրիժարեն «վարդպետ» գրված լինելը մասնագետները համարում են «գրչի սխալ»²²:

«Այսպիսով, «Բռի եղջի» հուշարձանախմբի ստեղծման մեջ երկու ճարտարապետների անուններ են հանդես գալիս, որոնցից Խաչենիկ Անեցին կառուցել է մի եկեղեցի և մի որմնափակ խաչքար, իսկ Շահենը՝ մի եկեղեցի: Բայց, նկատի ունենալով մնացած կիսավեր հուշարձանների ոճական և կառուցողական նմանությունները այս վարպետների կառուցածների հետ, պիտի ենթադրել, որ վերջիններիս մի մասն էլ այս ճարտարապետների ստեղծագործություններն են, մանավանդ, որ անհայտ եկեղեցիների պատերին եղած արձանագրություններում պահպանված թվականները և անձնանունները ևս, ինչպես Ներսես եպիսկոպոսի և իշխան Սըմբատի, ժամանակակից են Խաչենիկի և Շահենի կառուցածներին»²³:

Ինչ վերաբերում է մյուս հուշարձաններին, որոնց Մակար վարդապետ Բարխուտարյանը բեմ է անվանում, դրանք պարզապես **որմնափակ խաչքարեր** են՝ երեք կողմից շրջափակված սովորական պատերով, իսկ արևմտյան որմնախորշի մեջ ագուցված են խաչքարեր: 13-րդ դարում կառուցված այդպիսի որմնափակ խաչքարեր են պահպանվել Հաղրութում և Վանքում:

Սուրբ Աստվածածին եկեղեցին գտնվում է Հացի գյուղի կենտրոնում: Այն թաղակապ, բարձր ու մեծ եկեղեցի է: Երկար տարիներ օգտագործվում է դպրոցի կողմից որպես օժանդակ շինություն:

Գյուղի հնությունների մեջ հետաքրքիր հուշարձան է նաև դպրոցի շենքը: Այն կառուցվել է 1911 թվականին, համազյուղացիներ Ջվանշիր և Գյուլբահար Ղապանների միջոցներով:

21 Արցախ, էջ 126:

22 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 99:

23 Նույն տեղում:

18 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 98:

19 Ե. Լալայան, Վարանդա, Թիֆլիս, 1898, էջ 17:

20 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 99:

Ականատեսները պատմում են, թե տակավին երիտասարդ ամուսիններն ինչպիսի սիրով են ձեռնարկել այդ աշխատանքը:

Շենքի ճակատային մասում գրված է.

«Հայ մանուկներին.

Թող ձեր բերնում հնչեն դարեդար

Սահակ, Մեսրոպ մայրենի բարբառը

Սիրեցեք բարին, լույսը, գիտություն,

Որ տանում են մեզ դեպի փրկություն,

Նվիրեցին Հացի գյուղին Ջվանշիր և Գիլբահար

Ղազիաններ 1911 թ.»:

Հացի գյուղում կան մի շարք հուշաղբյուրներ, «Սվեգա ձորեն» աղբյուրը կառուցվել է 1909 թվականին: Ինչպես այդ, այնպես էլ «Անահիտ», «Քոնով» կոչվող աղբյուրները համարվում են գյուղի հիմնական աղբյուր-հուշարձանները:

Սպիտակաշենի մոտերքում, հին գյուղատեղիի հյուսիս-արևմտյան մասում, փոքր տափարակի վրա կա մի եկեղեցի, որը երկար տարիներ ծառայել է որպես ակումբ: Այդ ընդարձակ ու բարձր շինությունը կառուցվել է 19-րդ դարում, տեղական անտաշ քարով:

Պատմական մեկ ուրիշ հին հուշարձանի ավերակներ կան Սպիտակաշեն և Եմիշձան գյուղերի արանքում, **Չարգամարագ** բլրի կատարին: Այստեղից լեռնակածանը հյուսիս-արևելյան ուղղությամբ տանում է պարագծով դեպի **Եղուխույթ սրբավայրը**, մի փոքրիկ հարթ տեղ, ուր շատ են հինավուրց՝ հսկայական չափերի անտաշ սև գերեզմանաքարերը՝ կիսով չափ թաղված հողի մեջ:

Սրբավայրի անվան ստուգաբանությունից երևում է, որ այստեղ երբևէ եղել է եկեղեցական շինություն: Նրա կործանումից հետո տեղացիները հավաքում են քարերը և կառուցում **Նոր սուրբ** կոչվող եկեղեցին, որի ավերակները դարձյալ գտնվում են Սպիտակաշենից Աշան և Եմիշձան տանող ճանապարհի ձախ կողմում:

Այդ փլատակների դիմաց հատած կոնի տեսք ունեցող մի բլրասար կա, որը **Պղնձակալ** անունն ունի և պատած է կործանված շինությունների մնացորդներով: Անցյալի այդ շինատեղից միայն մի խաչքար է մընացել:

Մի այլ հնություն, որ կոչվում է **Մատաղախույթ**, գտնվում է Մարտունի-Ստեփանակերտ խճուղու վրա, Սպիտակաշենից դեպի հարավ: Մատաղախույթից քիչ վերև, ուր խոպաբուծական ֆերմայից գյուղ տանող ճանապարհն է վերջանում, գտնվում է 1,5 մ բարձրությամբ արհեստական մի թումբ, որը կոչվում է **Չարդամբուլ**: Այստեղ դաշտային աշխատանքներ կատարելիս գտել են մեծ տարողությամբ կարասներ, մետաղյա ամաններ, վարդարանքներ:

ԱՂՋԿԱԲԵՐԴ

Աղդամ-Մարտունի ճանապարհի մոտավորապես կեսում, այնտեղ, ուր սկսվում են խաղողի այգիները, «Ղզղալա» կրող ցուցանակի սլաքը թեքվում է դեպի հարավ: Ուղիղ 2,5 կիլոմետր այգիների միջով անցնելով, ճանապարհը դեմ է առնում տափաստանային լերկ ու կոնաձև մի փոքրիկ լեռան, որի անունը, ըստ ժողովրդական ավանդության Աղջկաբերդ է: Այժմ կոչվում է Ղզղալա: Համանուն գյուղն էլ գտնվում է բերդից հարավ:

Գյուղից ներքև, դեպի խճուղին, **Հինգզենատեղ** հնավայրն է, որտեղից խաղողի այգիներ գցելու ժամանակ գտնվել են բրուտագործի արհեստանոց, կավե խողովակների շարք, բրոնզից և պղնձից ձուլած շատ իրեր, նոց, կավե խողովակների շարք, բրոնզից և կնոջ վարդարանքներ, որոնք արայդ թվում ափսեներ, տղամարդու և կնոջ վարդարանքներ, որոնք արվեստի լավագույն նմուշներ են և արտաքինից շատ նման են Դվինում վեստի լավագույն նմուշներին: Վերջերս Ղզղալայի դպրոցական-հայտնաբերված համանման նյութերին: Վերջերս Ղզղալայի դպրոցականները հնավայրից գտել են բերդի հին ջրատարը: Կավե խողովակների շարքը, ինչպես ցույց են տալիս ջրատարի հետքերը, ներկայիս գյուղի վերևից, Ծովեր կոչվող տեղից ձգվել են մինչև **Բերդասարի** գագաթը: Ամրոցում հայտնաբերվել է մետաղի ձուլարան²⁴: Լավ պահպանված, կավե թրծված աղյուսից շինված պատերով ձուլարանն իրար հաղորդակից խողովակներով արտադրական մի համակարգ է ներկայացնում: Պահպանվել են նաև քարից ու կավից պատրաստված կաղապարները:

Աղջկաբերդին մոտիկ՝ Աշան գյուղի շրջակայքում հանդիպում են ավերակ բնակավայրեր, եկեղեցիներ, գերեզմանատներ և այլ հնավայրեր, որոնք չեն նշված գրականության մեջ:

Ահա դրանցից մի քանիսը.

1. **Հերշեն գյուղատեղի**— գտնվում է Աշան գյուղի դիմաց, մեկ կիլոմետր հեռավորության վրա: Այստեղ դեռ պահպանվում են տնատեղեր, տապանաքարերով փոքրիկ գերեզմանատունը:

2. **Ղուլարտեր քաղաքատեղին** տարածվում է Աշանից 3 կիլոմետր արևմուտք, հարթավայրի վրա: Ընդարձակ տարածություն բռնող հնավայրի մեջ գտնվել է մի փոքրիկ խաչքար: Շրջակայքում կան ավերակներ, որոնք տեղական բնակչության կողմից ընկալվում են իբրև սրբավայրեր:

ա) **Ստեփանոց**,

բ) **Քարահարթ**:

Պահպանվել է հին գերեզմանոցի մի մասը: Հնավայրում վերջին ժամանակներս պատահական կերպով գտնվել են հնագիտական բազմաթիվ

²⁴ «Սովետական Ղարաբաղ», 1973, 29 դեկտեմբերի, № 304:

իրեր, ջնարակած ավազների բեկորներ, կավանոթներ և այլ հետաքրքիր նմուշներ:

3. **Պիծի (փոքր)** սուրբ կամ **Նբանդանց**— գտնվում է Աշան գյուղի հետևի կողմում Պիծի (կոչվող) լեռան վրա: Այստեղ դարձյալ տեսանելի են ավերակների հետքերը:

4. **Ավետարան կամ Սվեգյանց** սուրբ— գտնվում է Աշանի արևմտյան կողմում:

5. **Մեծ Եղծի (եկեղեցի)**, անխաթար վիճակում կանգուն է Աշան գյուղի կենտրոնում: Կառուցված է տեղական տաշած քարատեսակներով:

6. **Վսկայաչ**— ավերված դրությամբ գտնվում է Նոր Աշանի մոտ, մի բլրի կատարին:

7. **Կյումերեն (Գոմերի)** կամ **Աշան (Պորթ) Բերդ**: Կյումեր տեղամասից մեկ կիլոմետր հեռու, շրջակայքի ամենաբարձր բլրի վրա:

8. **Յեց (Յից) քար**— հին կործանված գյուղատեղի, որի գոյության մասին է վկայում գերեզմանատունը:

9. **Մեծ Նահատակ**— պահպանվում է ամբողջությամբ, պատերի վրա կան արձանագրություններ:

10. **Պիծի Նհատակ**— Ղզղալա գյուղից դեպի սյունեյք: Հին բնակավայրից մնացել են գերեզմանոցը, եկեղեցիների ավերակները:

11. **Ջնհալ**— հին կործանված բնակավայր, ավերված եկեղեցիներով, հողի մեջ կիսով չափ թաղված տապանաքարերով:

12. **Օշախ**— քաղաքատեղի, գտնվում է «Խաներ» տեղամասի մեծ հարթության վրա, շրջակա բազմաթիվ սրբավայրերով, ավերակներով և մի կանգուն խաչքարով:

13. **Նհատակեն տափը** — հին գերեզմանոց, կանգուն տապանաքարերով, առանց արձանագրությունների:

ԹԱՂԱՎԱՐԴԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Թաղավարդը հարուստ է հիշարժան վայրերով և նյութական մշակութային բազմաթիվ հուշարձաններով: Թաղավարդ գյուղը բաժանված է երկու մասի՝ Վերին և Ներքին: Ներքին Թաղավարդից Շեխեր գնացող ճանապարհի վերին մասում, անտառապատ սարահարթում, կիսավեր դրությամբ դեռ մնում է **Բրդահոնջ** կոչվող **եկեղեցին**, որը շրջափակված է պարիսպներով: Կրկնապարիսպները, որոնք համեմատաբար անխաթար են մնացել, ձգվում են ժայռից ժայռ, անմատչելի դարձնում միջնաբերդում գտնվող աշտարակները, բնակարանները, ջրավազանները և ժայռափոր այրերը: Պետք է ենթադրել, որ եկեղեցին եղել է միանավ բազիլիկ, բավականին երկար ու համեմատաբար նեղ հատակագծով գեղեցիկ շենք, որից պահպանվել են առանձին բեկորներ, ատամնաշար քիվեր և այլ

սրբառաջ քարեր, որոնք հատուկ են միջնադարի շենքերին: Հետաքրքիր կառուցվածք ունի բերդի ստորգետնյա մուտքը: Քարե ժայռափոր աստիճանները նեղ անցքով իջնում են բերդավանի ստորգետնյա «տնտեսությունները», որոնք դժբախտաբար հողով լցված են: Բրդահոնջն իր ժամանակին, հատկապես պատերազմական տարիներին, կարևոր դեր է խաղացել տեղական բնակչության պաշտպանության գործում:

Գյուղամիջի եկեղեցին, համաձայն դրան ճակատակալ քարի վրա եղած արձանագրության, կոչվում է Սուրբ Աստվածածին և կառուցվել է 19-րդ դարում:

Եկեղեցին եռանավ բազիլիկի ձևով կառուցված շենք է, 4 մույթերով երկթեք ծածկը թաղակապ է, արևելյան կողմից ունի կիսակլոր արքիվ՝ բարձր բեմով ու խորաններով:

Մեկ ուրիշ եկեղեցի գտնվում է գյուղից մոտավորապես կես կիլոմետր հեռավորության վրա, «Գյուլեն բաղ» հանդամասում: Դարձյալ եռանավ բազիլիկի ձևի կառույց է: Հավանաբար վերակառուցվել է 17—18-րդ դարերում: Պատերը շարված են անմշակ լեռնաքարերով, կրաշաղախով: Եկեղեցու ավերակների մեջ գտնված արձանագրությունը, որը եղել է դրան ճակատակալ քարը, ասում է. «Ես... Գրիգորիս շինեցի Թաղավարդու եկեղեցին առաջնորդութիւն Տաւութին...»²⁵:

Մեկ ուրիշ **եկեղեցի**, որ երկար տարիներ օգտագործվում է որպես պահեստ, գտնվում է Վերին Թաղավարդ գյուղում: Երկթեք կտուրով բազիլիկ է, որի արտաքին չափսերն են 18,35×9,65 մետր. կառուցվել է 19-րդ դարում, թաղավարդիների միջոցներով:

Թաղավարդում հնուց ի վեր հայտնի է **Փաթանց խաչ** սրբավայրը: Այն գտնվում է գյուղի **Կալեր** կոչվող հանդամասում և իրենից ներկայացնում է մի տափակ քար, վրան քանդակած խաչով: Հնում տեղացիները անձրևային օրեր ցանկանալու դեպքում խաչի վրա ջուր էին լցնում, իսկ արևային օրեր պահանջելու դեպքում՝ կրակ էին անում:

Բարևածառի կամ Ջախա: պղծածառի վանք, Վերին Թաղավարդ գյուղի հարավային կողմում կանգնած լեռնաբազուկի վրա գտնվում են սրա ավերակները: Եկեղեցին, որի իսկական անունը հայտնի չէ, շրջապատված է պարսպի մնացորդներով:

Նրա գոյության մասին մինչև անցյալ դարի վերջերը ոչ ոք չգիտեր: Շինությունը թաղված էր հողի մեջ, սակայն հողի երեսին, բլրակի փոքրիկ հարթակում, իբրև ուղեցույց, կար մի խաչքար: 1844 թվականին թաղավարդիները որոշում են խաչքարի վրա մատուռ կանգնեցնել: Հիմքերը փորելու ժամանակ հանդիպում են հողի տակ ծածկված եկեղեցուն:

Պարզվում է, որ խաչքարը սեփական ընդարձակ վանքի ավերված պատերի մեջ եղած բավաթիվ խաչքարերից մեկն է եղել, հրաշքով մը-նացել է գետնի երեսին:

Բարևածաղի կառուցման ստույգ թվականը հայտնի չէ, բայց երկու արձանագրություններ պարունակող խաչքարերը ցույց են տալիս հետևյալը. «Սուրբ Պետրոս. կանգնեցի պիսաչս ի փիրկութիւն Հոգւոյ ինոյ և ծնողաց ինոյ: Արդ, որք երկրպագէք սուրբ նշանիս, պիս յաղաթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ: ՆՆՁ (997) էր»²⁶, «Սուրբ Պաղոս յան աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովհաննիսի Ամարասա եպիսկոպոսին և պետութեան տեառն Գագիկա Աղուանից իշխանաց իշխանի: Ես հայր կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբարորդի Կոկոնա»²⁷: Գագիկ իշխանաց իշխան-թագավորի արձանագրությունը կա. որը պահպանվում է Ղարաբաղի երկրագիտական թանգարանում. ապրել է 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի սկզբներին: Նշանակում է, երկու դեպքում էլ արձանագրված են 10—11-րդ դարերի իրողություններ:

Թաղավարդի մտով հոսող գետակի ափերով ձգվող դամբանաբլուրները վկայում են, որ այդ հովիտը Արաքսի հարթավայրից լեռնային Ղարաբաղ շարժվող եթնիկ խմբերի համար եղել է անցման ուղի: Այս պատկերը կրկնվում է **Խաչենագետի, Չինգյանակապ և Ինջա** գետերի հովիտներում: Այստեղ դամբանաբլուրների ավելի քան 200 մեծ ու փոքր խմբեր ձգվում են գետակի հոսանքն ի վեր:

Դեռևս 1895 թ. Ռյուսլերը պեղումներ է կատարել այս հովտում՝ Ղարաբուլաղ գյուղի մոտերքում: Հսկա դամբանաբլուրը, որ պեղել է նա, շՋր-չապատված է եղել 30 փոքր դամբանաբլուրների խմբերով, որոնք արտաքին տեսքով նման են Խոջալուի դամբանաբլուրներին: Դամբանաբլուրների մյուս մեծ խումբը տարածվում է Քյոնդալան գետի ստորին հոսանքում:

* * *

Պատմաճարտարապետական և այլ կարգի ուշադրության արժանի հուշարձաններ կան շրջանի նաև հետևյալ բնակավայրերում ու նրանց շրջապատում:

1. **Ս. Վարդան եկեղեցին՝** Շեխեր գյուղում:
2. **Չոխտակ եղցին, Ս. Գևորգ ուխտատեղին՝** Կարմիր շուկա ավանի շրջակայքում:
3. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Մոշխմիատ գյուղում:
4. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Սարգսաշեն գյուղում:

²⁶ Արցախ, էջ 91:

²⁷ Նույն տեղում:

5. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Ղարաբուլաղ գյուղում: (Այս գյուղը վարչականորեն գտնվում է Ասկերանի շրջանի կազմում):
6. **Ղարալի գյուղատեղին,** ընդարձակ հանգստարանով և ավերակ եկեղեցիով:

7. **Ալամանց գուներ՝** արտադրական և պաշտամունքային շինությունների ավերակներով:

8. **Ջաղացներ գյուղատեղին՝** Ս. Աստվածածին եկեղեցիով:

9. **Բլբլակ գյուղատեղին՝** Սխտորաշեն գյուղի մոտերքում:

10. **Սխտորաշենի եկեղեցին՝** համանուն գյուղում:

11. **Ս. Մինաս եկեղեցին՝** Գիշի գյուղում:

12. **Ղլեն-խութ բերդատեղին՝** Գիշի, Մուշկապատ և Ճարտար գյուղերի արանքում, բավական բարձր լեռան կատարին: Նրա հարավային և արևմրտյան կողմերն անմերձենեի ժայռեր են, իսկ մյուս մասերը շրջափակված են եղել ամուր պարիսպներով:

Այստեղ դեռ պահպանվում են հնագույն բերդի քարե հաստ պատերի հետքերը, տեղ-տեղ նաև աշխարհիկ շինությունների մնացորդները: Բերդը շրջանաձև է. դրա շրջապատում գտնվում են բավաթիվ ջնարակով պատած շինվածքներ, աղյուսի կտորներ և խեցեղեն անավարտ իրեր: Հավանաբար այստեղ եղել է խեցեգործական արհեստանոց:

Բերդից քիչ ներքև կան հնադարյան քարանձավներ, որոնք ամրոցի պաշտպանական համակարգի մեջ են մտել և իրենցից հնագիտական հետաքրքրություն են ներկայացնում:

Գիշիի միջնակարգ դպրոցի թանգարանում մի ուշագրավ հավաքածու են կազմում **Ղլեն-խութ, Բլբլիաշ, Կալին խութ, Խոտսահատ, Ուլումի** հնավայրերից հայտնաբերված կարասները, թրծած թուխ գույնի կճուճները, գծանախշերով սափորները, ճենապակյա ափսեները, կանապան ձևի ուլունքները, խաղողի քարացած սերմերը, կորեկի, ցորենի հատիկները: Դրանք դարձյալ պերճախոս կերպով վկայում են, որ խոր անցյալում այստեղի բնակիչների հիմնական զբաղմունքներից են եղել խաղողագործությունը, դաշտավարությունը: Դրանք այսօր նույնպես Գիշիի գյուղատընտեսության կարևոր ճյուղերից են:

13. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Խնուշինակ գյուղում: Շրջակայքում կան հին բնակավայրերի հետքեր, պաշտամունքային շինությունների ավերակներ:

14. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Հաղորտի գյուղում:

15. **Հին ավերակ բնակավայրերի,** եկեղեցիների գերեզմանատների և մենավոր մահարձանների բեկորներ՝ Կաղարծի գյուղի շրջապատում:

16. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Ննգի գյուղում:
17. **Ծառեխի ավերակ եկեղեցին,** հնագույն խաչքարերով՝ Ննգի գյուղից դեպի հյուսիս ձգված լեռնաշղթայի վրա: Բացի դրանից, այս գյուղի շրջապատում արձանագրվել են մի շարք հին գերեզմանատներ, կիսափուլ եկեղեցիներ, արտադրական շինությունների հետքեր:
18. **Ենգիջանի եկեղեցին՝** համանուն բնակավայրում:
19. **Լուսավորչի եկեղեցին՝** Ծառեխ լեռան վրա:
20. **Թարգամանչաց եկեղեցին՝** Կաղարծի գյուղում: Ավերված մատուռ՝ նույն գյուղի հյուսիսային կողմում, բլրի կատարին: Այստեղ կան արձանագրություններով խաչքարեր:
- 21 **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Պառավաթուևք գյուղում:
- 22.**Մաթեք (Մատթե)** մատուռ՝ Միրուշեն և Կաղարծի գյուղերի արանքում, նույնանուն լեռան վրա, չորս կողմում գերեզմանատներ:
23. **Լուսավորիչ եկեղեցին՝** Պառավաթուևք գյուղից դեպի արևմուտք, գյուղի շարունակությունը կազմող լեռան վրա:
24. **Զարգա մարագ (Ամենափրկիչ)** ավերակ մատուռ՝ Սայիտակաշեն և Եմիշջան գյուղերի արանքում, ոչ բարձր բլրի գագաթին:
25. **Օջախ կոչվող քանդված եկեղեցին՝** Հաղորտի գյուղի աղբյուրի կողքին, մեծ ու փոքր խաչքարերով:
26. **Ոսկե խաչ ավերակ եկեղեցին,** կանգուն խաչքարով՝ Գիշի գյուղի աղբյուրի մոտ:
27. **Կոհակ ավերակ մատուռը՝** ձարտար գյուղից Մարտունի տանող ճանապարհի աջ կողմում, Խնուշինակ գյուղից մոտ 5 կմ դեպի արևելք, բարձրության վրա:
28. **Բերդի նահատակ ավերակ եկեղեցին՝** Գյունե ձարտար գյուղից դեպի արևմուտք, **Ուխտածաղիկ** աղբյուրից վերև, բարձր քերծի վրա:
29. **Գյոկա ավերակ եկեղեցին՝** Սարգսաշեն և Թաղավարդ գյուղերի արանքում, Քյոնդալան գետի աջ կողմում:
30. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Մուշկապատ գյուղում: Այստեղ է գտնվել նաև Վարդան Կորավարի անունով մատուռը:
31. **Ս. Ստեփանոսի եկեղեցին՝** Եմիշջան գյուղում:
32. **Ս. Հովհաննես եկեղեցին՝** Նոր շեն գյուղում:
33. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Ավտուռ գյուղում:
34. **Ս. Աստվածածին եկեղեցին՝** Միրուշեն գյուղում:
35. **Ս. Գևորգ եկեղեցին՝** Միրիշալու գյուղում:
36. **Եկեղեցի՝** Գևորգավան հանդամասում:
37. **Հին հանգստարան, դամբարաններով՝** Մարտունի ավանի մոտ:
38. **Բրունվեդարյան շրջանի դամբանաբլուրներ՝** Մարտունուց մոտավորապես 2 կմ հեռավորության վրա եղած քարհանքի մոտակայքում:

39. **Սյստորաշեն** գյուղի հանդամասում վեր է խոյանում մի հսկա չինարի ծառ, որին վերջերս անձնագիր է շնորհվել որպես ՍՍՀՄ տարածքում գտնվող ամենատարեց (2000 տարեկան), ամենաբարձր ծառի: Չինարին ունի 44 քառակուսի մետր մակերեսով փչակ, որտեղ կարող են տեղավորվել հարյուրից ավելի մարդ: Ծառ-հսկայի բնի շրջագիծը հիմքից 27 մետր է, իսկ բարձրությունը 54 մետրից ավելի, մոտ տասնութ հարկանի շենքի չափ: Չինարու սաղարթների շվաքի մակերեսը կազմում է ավելի քան 1400 քառակուսի մետր: Սյստորաշենի չինարին իր արտատվոր չափերով գերազանցում է Էգեյան ծովի Կոս կղզու ծառերին, ինչ-սովոր չափերով գերազանցում է Էգեյան ծովի Փիրուսե կիրճի ծառերին: Իզուր չէ, պես նաև Աշխաբադի մոտ գտնվող Փիրուսե կիրճի ծառերին: Իզուր չէ, որ դարաբաղցիները սրբացրել են այն, դարձնելով ուխտատեղի և սըրբավայր: Ծառի տակից բխում է մի հորդառատ, սառնորակ աղբյուր՝ Տըն-ջըրու աղբյուր, որը դարեր շարունակ հագեցրել է հունձ ու կալ անող շինականի ծարավը, սնել հսկա չինարուն, ջրաղացի քարը շարժել:

40. **Ննգին** Ղարաբաղում հայտնի է որպես բրուտագործական հր-նադարյան կենտրոններից մեկը: Բրուտանոցը գտնվում է գյուղական գերեզմանոցից ոչ այնքան հեռու, պտղատու, դարավոր այգու մեջ, կավի հանքավայրի մոտ: Մասնագետների կարծիքով Ննգիի կավը իր որակով և էատկություններով լավագույն հանքավայրերից մեկն է:

Ոչ հեռու անցյալում Ննգին եղել է կավանոթների վաճառքի խոշոր շուկա, որտեղ Ղարաբաղից, Սյունիքից, Դաչստանից, աղբբեջանական շրջաններից մարդիկ էին գալիս ձեռք բերելու կուժ, կուլա, պուլիկներ, թասեր, կարասներ: Անկարելի է խոսել Ննգիում ստեղծած բրուտագործական հիանալի իրերի մասին և չհիշել անվանի վարպետներ Խաչունց Պողոսին, նրա եղբայր Պետրոսին և Մուխանին, որոնք ժողովրդական հին արվեստի հմուտ ժառանգորդներն էին:

Ննգիի բրուտների շնորհքը, ինքնատիպ արվեստը այժմ շարունակում է Ամիրբար Սահակյանը: Նրա մեծահունար ստեղծագործությունները, ազգային դասական մոտիվներով արված հորինվածքները, թրծելու, գունապարզելու, կարդանախշելու փորձը կարմանք ու հիացմունք են պատճառում բոլորին:

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

Ասկերանի¹ ներկայիս շրջանի տարածքի մի մասը՝ մոտավորապես Կարկառ գետի աջափնյա հատվածը, նախկինում մտնում էր Վարանդա, իսկ ձախափնյան՝ Խաչեն գավառների մեջ: Անցյալի պատմության շատ հիշատակություններ կան Կարկառի բարեբեր հովտում:

Դրանք հնագույն դամբանաբլուրներ են, անառիկ ու անմատչելի բերդեր, վանքեր, դղյակներ, եկեղեցիներ, մատուռներ, նախկին գյուղերի ավերակներ, խաչքարեր, որոնք գտնվում են մասամբ լեռնային բարձունքների վրա, գետահովիտներում, անտառների մեջ:

ԱՎԵՏԱՐԱՆՈՅ ԿԱՄ ՉԱՆԱՂՉԻ

Մթանչելի է Չանաղչին՝ Վարանդայի վարդը: Բնությունը ոչինչ չի խնայել նրա գեղեցկության համար: Հենց այստեղից՝ գյուղի հյուսիսարևմտյան ծայրից է սկիզբ առնում Քիրսը՝ Ղարաբաղի երկրորդ նշանավոր լեռնաշղթան: Դրանից է, որ Չանաղչին հարուստ է սառնորակ աղբյուրներով:

Առասպելներով պսակված, այգիներով ու անտառներով շղարշված գյուղ է Չանաղչին՝ հին Ավետարանոցը, որը, հնօրյա ավանդությունների համաձայն, գոյություն է ունեցել դեռևս մեկ ու կես հազարամյակ առաջ: Այդ են հուշում այստեղի մեծ ու փոքր հուշարձանները:

Ավետարանոցը Վարանդայի մելիքության բերդավանն էր, նստավայրը, մելիքանիստը: Միջնադարում, հատկապես մելիքության տիրապետության ժամանակաշրջանում, այն ամրացված է եղել ամուր պարիսպներով: Դեռ մնում են այդ պարիսպների, ինչպես նաև մելիքների՝ թաղակապ ապարանքների արդեն կիսով չափ փլված պատերի և այլ ավերակների մնացորդները:

Սարգիս Չալայանցը հին մելիքանիստ Ավետարանոց ավանում լսել է մի ավանդություն, ըստ որի Աղվանից Վաչե Բ թագավորը 5-րդ դարում ճգնել է հենց այստեղ. «ՁԱվետարանն Քրիստոսի ընկալեալ ի գիրկս իւր՝

¹ Մինչև 1978 թ.՝ Ստեփանավերտի:

եկն աստանոր առանձնացեալ ի խստակրօն վարս ճգնութեան. ուստի և անուն տեղոյս կոչեցաւ Աւետարանոց, գուցէ և աստ ընկալաւ Բարեպաշտ արքայն պթուղթ օրինութեան ի Գիւտ երանելի Կաթողիկոսէ Հայոց»¹.

Խոսքը վերաբերում է Գյուտ կաթողիկոսի երկու հայտնի նամակներին՝ ուղղված Վաչե Բ-ին, որոնք պահպանվել են Մ. Կաղանկատվացու պատմության մեջ, սակայն անկախ այդ պատմությունից, կան նաև հնագույն ձեռագրերում²:

Մեջբերումից երևում է, որ գյուղի Ավետարանոց անունը հենց Վաչե երկրորդի քարույզության հետ է կապված: Հենց այս նույն Վաչեի անվան հետ էլ կապված է մայրաքաղաք Պարտավի (Բարդայի) հիմնադրումը: Իսկ նրա եղբորորդի Վաչագան թագավորն էլ կառուցել է երկրամասի ամենանշանավոր վանքերը, եկեղեցիները և մատուռները, տարվա օրերի թվով, այսինքն երեք հարյուր հիսունից ավելի:

Մ. Բարխուտարյանցը գտնում է, որ Համամ թագավորը նույնպես թաղված է այս գյուղում,³ և որ Համամ թագավորի գերեզմանաքարն ունի հարթաքանդակ՝ հեծյալ թագավորի պատկեր՝ խաչը ձեռքին, ձիու հետևից մի ահագին վիշապ՝ երախը բաց: «Խաչազարդ է տապանաքարիս միս երեսը և քանդակած մեջքի վրայ, որ կարդացում է խիստ դժվարությամբ.» Ի ՈՂ. ննձեց Հա... թգաորի Աղվց... Ես տեր Մասուն գրեցիք, այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ»⁴:

Հավանաբար Համամի իսկական տապանաքարը մաշված է եղել, և ոմն Մասուն ՈՂ (1241) թվականին նորն է քաշել, անհայտությունից փրկելով Բարեպաշտ Համամ թագավորի գերեզմանը: Հին Արցախի տարբեր վայրերում մնացել է Համամի հիշատակը: Հիմա էլ դեռ Համամի խուփ է կոչվում Վարանդայի Մեջքապատ գյուղի դաշտում գտնվող մի բլուր: Համամի ձոր է կոչվում Ներքին Խաչենի Գառնաքար գյուղից վերև գլուխը ձորն իր իշխանական դղյակների ավերակներով: Համամի թողած արձանագրությունն իր որդու գերեզմանաքարի վրա գտնվել է Աղղամի շրջանի Սոֆուլու գյուղի կողքին Գյավուր Ղալա (անհավատի կամ հայկական բերդ) ավերակներից: Այժմ այդ տապանաքարը պահվում է Ադրբեջանի պատմության թանգարանում:

Ավետարանոց-Չանաղչի գյուղի այժմյան կանգուն եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին՝ կառուցված չորս սյուների վրա փոքրիկ կաթողիկեով: Դռան ձակատակալ քարի վրա գրված է «ԹՎ ՌՃ»⁵ (1651):

¹ Մ. Չալայանց, ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 243:

² Տե՛ս Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966 թ., էջ 116:

³ Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղվանից, Ա. Էջմիածին, 1902, էջ 1903:

⁴ Արցախ, էջ 98:

⁵ Բնաշխարհիկ բառարան, էջ 346:

Մելիք Բաղու կողմից շինած այս եկեղեցին եռանավ բազիլիկ է, որի արտաքին չափերն են 27,35×15,30: Ունի մի մեծ և երկու փոքր խորան, ու երկու խորհրդարան, որոնց վերնամասում կան մեկական գաղտնի սենյակներ, որոնցում պահվում էին եկեղեցու թանկագին իրերը:

Այստեղ գտնվող բոլոր հուշարձանների մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում **Կուսանաց անապատը**: Այն գտնվում է գյուղի հարավ-արևմտյան կողմում, մի պառիվայր հրվանդանի վրա: Այս հուշարձանի արևմտյան կողմից ձգվում է բավական հաստապատ պարիսպ: Հին գյուղը շրջապատող պարիսպներից մնացել են առանձին հատվածներ և մի քանի կիսականգուն աշտարակներ: Կուսանաց անապատի բարձունքից Բիրսը երևում է հեռու մշուշի մեջ՝ կանաչ զգեստ հագած: Մյուս կողմում վեր են ելնում Ղոնդիկ և Մավաս կոնաձև լեռները: Անապատի պարիսպների տակով հանգիստ հոսում է լեռնային Ավետարանոց գետակը՝ ելեբված պտղատու այգիներով ու անտառներով:

Անապատի եկեղեցում, դռան ճակատի կամարի վրա եղած արձանագրությունը՝ «Եկեղեցիս Թվ. ՌԿԵ (շինեցալ)», վկայում է, որ այն կառուցվել է 1616 թվականին: Իսկ Սարգիս եպիսկոպոս Ջալալանցն իր «Ճանապարհորդության» մեջ գրել է, թե տեսել է մի գեղեցկագիր հիշատակարան, ըստ որի՝ եկեղեցին շինել են Գայանե և Հռիփսիմե բույրերը, Տեր Առաքելի աջակցությամբ:

Կուսանաց անապատի եկեղեցին շինված է տեղական տաշած քարից: Հատակագիծը խաչաձև է, ունի 11 մ երկարություն, 9 մ լայնություն և 7 մ բարձրություն: Դահլիճի մեջ կանգնած են երկու բոլորովին հասարակ սյուներ, որոնց վրա բոլորվում են աղեղնաձև կամարները՝ իրենց վրա պահելով թաղակապ կտուրը: Արևմտյան կողմում բացվում են մի փոքրիկ դուռ և երկու պատուհան: Երկու փոքր պատուհաններն էլ գլտնըվում են հարավային կողմում, իսկ մեկը՝ արևելյան մասում:

Կուսանաց անապատի եկեղեցու գավիթն ուղղանկյուն թաղածածկ շենք է, ունի 6 մ երկարություն, 9 մ լայնություն: Այն ծառայել է իբրև Մելիք-Շահնապարյանների տոհմական դամբարան: Այստեղ են գտնվում Մանվել Վարդապետի, Մելիք Միրզայի, Մելիք Հուսեյնի, Մելիք Հովսեփի և նրանց կանանց գերեզմանները:

Օտարերկրյա գավթիչների դեմ մղած բազմադարյան պայքարում իրենց խիպախությամբ ու հայրենասիրությամբ աչքի ընկան Վարանդայի Մելիք Հուսեյնը և նրա աղջիկ Գայանեն:

Գայանեի և նրա մոր՝ Աննա խաթունի քաջագործությունների հիշա-

տակը պահպանվում է միայն ժողովրդական ավանդությունների մեջ, իսկ Մելիք Հուսեյնի մասին խոսում է նրա տապանաքարի արձանագրությունը, որը գտնվում է գյուղի հին հանգստարանի մոտ.

«Այս է տապան Մելիք Շահնապարին (Գ-ին)

Որ է որդի Մելիք Յիսեյնի,
Արցախ գաւառանց իշխանին
Վարանդու տիրապետողին,
Սա էր հայր Մելիք Ջիււնջիտին,
Ըստ Ռուսաց պոլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի և քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային
ՌՄԽ. թվին (1792)⁷:

Ինչպես Ռուսանն է իրեն զոհաբերել իր հայրենի երկրամասը թաթար-մոնղոլական հրոսակախմբերից փրկելու համար, այնպես էլ Գայանեն է պայքարել թուրքական գավթիչների դեմ: Ռուսանի կերպարը Մուրացանին ոգեշնչել է գրելու «Ռուսան» պատմական դրաման: Իսկ հերոսուհի Գայանեի մասին Լեոն է գրել «Մելիքի աղջիկը» վեպը:

Գյուղի հարավային կողմում է գտնվում **Մելիք Բաղու ապարանքը**, Գյուղի հարավային կողմում է գտնվում «Ղարադամներից», անբողջովին քարից որը բաղկացած է եղել մի քանի «Ղարադամներից», անբողջովին քարից շինված: Այս բնակարանները մասամբ կանգուն են և կարևոր նյութ կարող են տալ Ղարաբաղում (17—18-րդ դարերի) կառուցված բնակարանների, հատկապես զարադամների ճարտարապետության հետապոստոլներին:

19-րդ դարի առաջին քառորդում զորավար Վ. Մադաթովը (ի դեպ նա ծննդով զարաբաղցի է, Մադաթքենդից), նշված զարադամներից մեկի վրա դրյակ է կառուցել: Սակայն այս կառույցի հետքերն անգամ չեն մնացել:

Գյուղի արևմտյան կողմում ժայռին անմիջապես կպած է եղել Մելիք Հուսեյն առաջինի ապարանքը: Այժմ այն չկա, կործանվել է անցյալ դարի վերջերին: Իսկ հյուսիսային կողմում, պարսպին կից, գտնվում է **Մելիք Շահնապար երկրորդի ապարանքը** կամ ամառանոցը՝ բաղկացած մի քանի զարադամներից և թաղակապ սենյակներից: Գլխավոր դռան վրա եղել է հետևյալ արձանագրությունը. «Այս ամառաթո Մելիք Շահնապարի որդի Սեյիսբեկին, որ է այս շինութիւնս, որ շինել տուած ջէնքն է ՌՄԼԵ»⁸:

⁷ Արցախ, էջ 97:

⁸ Ե. Լալայան, Վարանդա, Թիֆլիս, 1898, էջ 32:

⁶ Արցախ, էջ 96:

ցախի շատ կողմերից, այլև Բագուից, Թիֆլիսից, այլև մահմեդականք: Աւետարանս մագաղաթեայ և մեծադիր է, որ ունի Ռստակէս, Վրդանէս և Ստեփաննոս վարդապետների պատկերները...»¹³:

Շատ հետաքրքիր է Ավետարանի փրկության հետ կապված հիշատակարանը. «Յամի Տեառն 1827 և ի թուականիս (Հայոց) ՌՄՀՁ. սուրբ Աւետարանս, որ գերի էր ընկել Պարսից տերութիւնն, ես Ղարաբաղու Շուշի Ղալի բնակիչ Միրզայ Օհանէսեան Չարկարեանցովս տեսիլս սուրբ Աւետարանս ի ձեռս անօրէն այլապէաց ի քաղաք Թաւրէզ, վասն որոյ դրանս էտու և գնեցի ի արդար վաստակոց իմոց և բերեալ ի ամուրս Շուշի և յանձնեցինք այն տեղն, ուր կայր և այժմ 1833 ամի և յամսեան մայիսի 22-ին. բերաք տեղս վասն մեր ուխտադրութեանն նորոգելութեամբ Աւետարանս, ահա նորոգեցինք և պայծառացուցինք ի յիշատակ մեր համայն կենդանաց և ննջեցելոց... Միրզայ Օհանէան»¹⁴:

Հիշարժան կառուցվածք է նաև Սարուշեն գյուղի դպրոցի նախկին շէնքը: Այն երկհարկանի շինություն է, որն անցյալ դարի վերջին դարձյալ կառուցել է Գ. Այվապանցը: Այն բաղկացած է չորս սենյակից, մեծ դահլիճից և գեղեցիկ սրահից:

ՀԱՐԱՎ

Հարավ գյուղն իր բարձր դիրքով հնում անառիկ բերդ է եղել:

Վերջերս այստեղ գտնված միջին մեծության մի հետաքրքիր խաչքար՝ Նաղբակյան իշխաններից մեկի սեփական արձանագրությամբ, հավանական է դարձնում, որ այս բնակավայրը Նաչենի իշխանության կենտրոններից մեկն է հանդիսացել: Նշված արձանագրությունը հաստատում է նաև, որ գյուղը Նաղբակյանների տիրույթն է եղել, իսկ Նաղբակյանները, ինչպես հայտնի է, Հասան Չալալյանների տոհմակիցներն էին¹⁵:

Հարավից դեպի հյուսիս, թավուտ անտառի խորքում, մի չքնաղ ձորակի մոտ է գտնվում Բովուրխան կոչվող վանքը: Վանքի միակ կանգուն հուշարձանը փոքրիկ, երկարավուն եկեղեցին է, անտաշ, կաթնագույն քարով շարված: Ճիշտ է, եկեղեցու շուրջը ժամանակին շէնքեր են եղել՝ շրջափակված պարիսպներով, սակայն դրանք լրիվ ավերակ են և դժվար է ամբողջական պատկերացում կապել Բովուրխան վանքի վերաբերյալ: Եկեղեցին ունի 9 մետր 65 սանտիմետր երկարություն, 5 մետր 50 սանտիմետր լայնություն:

¹³ Արցախ, էջ 101:

¹⁴ Արցախ, էջ 101—102:

¹⁵ Բ. Ուլուբաբյան, Նաչենի իշխանությունները 10—16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 122:

Մեծ և փոքր մեկական խորան, երեք լուսամուտ, մեկ դուռ և երկու խորհրդարան: Բոլոր տվյալներից երևում է, որ այն կառուցվել է միջնադարում: Մ. Բարխուտարյանցն անցյալ դարի վերջերին այստեղ տեսել է մի խաչքարի բեկոր, որի վրա եղել է «Խաչս տանն Արցախի» արձանագրությունը: Իսկ մի այլ փոքր խաչքարի վրա նա կարդացել է. «Խաչս Կ. ես Բ. Հ. »¹⁶:

Եվ խաչքարը, և՛ խաչքարի բեկորը, որոնց վրա եղել են նշված արձանագրությունները, անհետ կորել են:

ՄԱՏԱՂԱՆՈՒԹԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Ստեփանակերտի շրջանի Վարապաբուն (Արանկամին) գյուղը տարածվում է Մատաղախուրթի հյուսիսային լանջին: Գյուղի ս. Աստվածածին եկեղեցին հորինվածքով միանավ բազիլիկ է, կառուցված տեղական բազալտ քարով: Եկեղեցին թեև շատ հին պատմություն չունի, բայց նրա պատերի մեջ տեղադրած առանձին քարերի վրայի քանդակապարզերի ոճական առանձնահատկությունները վկայում են, որ այստեղ հնում նըշանավոր շինություն է եղել¹⁷:

Ինչպես այս, այնպես էլ հարևան Դահրապ գյուղերի շրջակայքում կան մի շարք նվիրական վայրեր, բնակատեղեր, աղբյուրներ, բերդեր, եկեղեցիներ, մատուռներ և այլ կարգի հուշարձաններ:

Այսպես: Ուշադրության արժանի են Ղոբա կոչվող ուխտատեղի գույգ մատուռները, Նախիջևանիկ գյուղի դամբարանը և Հին Քյաթուկ գյուղատեղին:

Վերջինիս հետքերը տեսանելի են Նոր Քյաթուկ գյուղից մի քանի հարյուր մետր դեպի վերև ընկած տեղամասում: «400—500 ծուխ եղած է հին Քեաթուկս, բայց... սովի և ժանտախտի անողորմ երեսից գաղթում և տեղափոխվում են զանազան տեղեր»¹⁸:

Այստեղ ընդարձակ տարածություն են զբաղեցնում գյուղի տնատեղերը, տապանագրեր ունեցող գերեզմանատունը: Բնակավայրի փլատակների մեջ նկատելի են եկեղեցու պատերը, դռան բարավորի մեծ քարը, որի վրա հազիվ նշմարվում են «Ո...» և «ան» տառերը: Եկեղեցին կոչվել է Սպիտակ հող (ուլ): Այս եկեղեցուց ոչ այնքան հեռու, մի գեղատեսիլ թլրակի վրա, «Չորավոր» անունով նշանավոր սրբավայրն է:

¹⁶ Արցախ, էջ 109:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նշվ. աշխ. էջ 129: Հին Քյաթուկը մերձակա տասնյակ հայկական գյուղերի հետ միասին ավերվել, կործանվել և հողին է հավասարվել 18-րդ դարի վերջին, պարսկական թագաժառանգ Աղա Մուհամադ խանի արշավանքի ժամանակ:

Դահրազ գյուղում անխաթար պահպանվում է **Կարմիր Ավետարան** եկեղեցին: Շինությունն ունի թաղածածկ դահլիճի հորինվածք: Արտաքին պատերի հարթությունն աշխուժացված է լուսամուտների և դռան ելքերի դեկորատիվ պարզաքանդակներով:

Կարմիր Ավետարան եկեղեցու արևելյան կողմում, մոտավորապես 75 մետր հեռավորության վրա, **Կոթաց օջախ** եկեղեցին է, իսկ փոքր ինչ հյուսիս՝ կառուցված է **Ղարիբ օջախ** անունով մեկ ուրիշ հուշարձան:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ այս եկեղեցիները բազիլիկ տիպի են, որոնք 17—19-րդ դարերում ենթարկվել են վերակառուցումների:

Դահրազ գյուղի հյուսիսային մասով, արևելքից-արևմուտք, ձգվում է մի լեռնաշղթա, որին կպած է Քերծ (ժայռ) մատուռը: Այս մատուռը հայտնի է նաև **Հոռոմսիմա** (Հոնիսիմե) անունով և տեղացիների կողմից ընկալվում է իբրև սրբավայր: Կիսաժայռափոր մատուռը կանգուն է: **Հոռոմսիմա** ժայռի գագաթի փոքրիկ հարթակը երկու կողմից շրջափակված է հին, ավերված բերդի պարիսպներով: Պարսպի տակ, ձորի մեջ կա մի աղբյուր՝ **Պերթի ջուր**, այսինքն՝ **Բերդի ջուր** անունով:

Գյուղի տարածքում գտնվող **Կոթ, Յուրդուջան** գյուղատեղերի գոյության մասին են վկայում այստեղի համանուն քարաշեն աղբյուր-հուշարձանները:

Դահրազ գյուղում, բացի հիշատակված հուշարձաններից, արժեքավոր է նաև **Ղորփի** ժայռի քարայրը: Ամենայն հավանականությամբ, այս քարայրը արհավիրքների ժամանակ տեղացիների կողմից օգտագործվել է որպես թաքստոց, պաշտպանական ապահով բնակավայր:

Դռնավազ գյուղի ներկայիս ս. **Աստվածածին եկեղեցին** կառուցվել է հայոց ՌՄՂ թվականին, տեղական կոպտատաշ չեջ քարով: Ներսում երկու մույթերը աղեղնաձև կամարներով միանում են պատերին կից կիսամույթերին, իրենց վրա պահելով թաղակապ ծածկը:

Մյուս եկեղեցին կոչվում է **Աղին նահատակ**: Հավանաբար, սա գյուղի ամենահին եկեղեցին է, բայցիցս ենթարկված վերակառուցումների: Փոքրիկ թաղածածկ դահլիճի հորինվածքով շինության ներսի պատերի մեջ տեղադրված են մի շարք գեղեցիկ խաչքարեր, վիմաքարեր: Եկեղեցու մոտերքում նկատելի են հին, կործանված բնակավայրի և նրա ընդարձակ գերեզմանատան հետքերը:

Եկեղեցու բակում կառուցված է մի հետաքրքիր հուշարձան: Այն ունի երեք մետր լայնություն, երկու մետր հաստություն և հինգ մետր բարձրություն: Դեպի արևմուտք նայող ճակատի որմնախորշում տեղադրված են երեք հիանալի խաչքարեր, որոնց արժեքն ավելի է բարձրանում, հատկապես կոնկրետ թվագրություն պարունակող արձանագրությամբ: «Թվ Շի (1071 թ.) կամաւ ամենակալին Աստոծոյ ես... Գրիգոր... Աստուծոյ

միաբան եղբարքս լա... վխաչս իշխանութեան... և հայրապետութեան...»: Օհանէսի տեր Ներսէսի ու... աղայթեցեք»¹⁹:

Կյուլատուն (Գայլատուն) գյուղատեղին գտնվում է այժմյան Քյոսալար գյուղի անտառապատ հանդամատում: Հին հուշարձաններից պահպանվել են ամրոցի ավերակները և 10—11-րդ դարերի խաչքարեր: Չեռագրերի և վիմագրությունների հաղորդած տեղեկությունների համաձայն, այստեղ էր գտնվում Ծարի իշխաններից մեկի գանձատունը: Հնում Կյուլատուն բնակավայրը հայտնի է եղել իր փորագիր վարպետներով, որոնք հատկապես աչքի էին ընկնում փայտի վրա վարդաքանդակելու արհեստով: Տեղական կարմիր փայտից նրանց պատրաստած կանաչան տուփերը, վարդանախշ կենցաղային իրերը բարձր էին գնահատվում նույնիսկ հեռավոր երկրների շուկաներում: Կյուլատունը ասպատակել և ամայացրել են օտար նվաճողները 13-րդ դարում

ՄԱԶԻ ԿԱՄՈՒՐԶ

Արցախ-Ղարաբաղ երկրամասը հայտնի է իր բնական պայմանների բազմապատկերությամբ ու կտրուկ հակադրություններով: Լեռնային մակերևույթը խիստ կտրուկված է սրընթաց գետերով, գետակներով ու հեղեղատներով, որոնք զարնան և աշնան վարարումների ժամանակ դառնում են գրեթե անանցանելի: Դա լուրջ խոչընդոտներ էր հարուցում գետերի երկու ափերի միջև բնական հաղորդակցություն հաստատելու համար:

Թերևս այդ է պատճառ հանդիսացել, որ Արցախում, Հայաստանի մյուս մարզերի նման, հնուց ի վեր պատշաճ ուշադրություն է դարձվել ինժեներական կառուցվածքների, առանձնապես կամուրջների շինելու վրա:

Ղարաբաղի հնագույն նշանավոր կամուրջներից հայտնի են **Ուլուպապա** (Խաչենագետ), **Պարտավի**, **Պառավի**, **Վարընկաթաղի** (Թարթառ), **Իշխանեքի** (Իշխանագետ), **Շոշվա** (Կարկառ) բազմաթիջք և միաթիջք կամուրջները, որոնք կառուցված են եղել միջնադարում:

Սակայն դարեր տևող այդ պատերազմներն առաջին հերթին ոչնչացրել են ռազմական նշանակություն ունեցող կառուցվածքները, այդ թվում նաև կամուրջները:

Այդ իսկ պատճառով, պատահական չէ, որ Թարթառի վրա կառուցված 6 (քարաշեն) կամուրջներից մեկ է հասել միայն երեքը: Մյուս գետերի վրա եղած կամուրջներից ամբողջական տեսքով մնացել են երկուսը, Մազի անունով կամուրջը, Ստեփանակերտի հարավային կողմում և Մեծ Թաղարի կամուրջը՝ Հադրոսի շրջանում:

¹⁹ Արցախ, էջ 131:

Չնայած Մալի կամուրջն ունի պարզ ձև, բայց տեղանքի ճիշտ ընտրության, շինանյութի ռացիոնալ օգտագործման, ճարտարապետական ձևերի պարզության մեջ եղած յուրօրինակ արտահայտությամբ նույնպես արժանի տեղ ունի Հայաստանի կամրջաշինության պատմության մեջ:

18-րդ դ. առաջին քառորդում, Ավան հարյուրապետի (Յուլբաջի) հորդորանքով կառուցված այս կամուրջն ունի 7 մետր լայնություն, 3,5 մետր բարձրություն, իսկ կամրջի թռիչքի երկարությունը հասնում է 5 մետրի:

Մալի կամուրջը կառուցված է տեղական Չառուն բաղի կրաքարից: Ընդ որում ճակատային պատերն իրականացված են կոպտատաշ, իսկ թաղը և թաղի կամարները՝ սրբատաշ քարերով: Այսպիսի գուգակցումը բավականին աշխուժացնում է կամրջի ճակատների հարթությունները: Թաղի կամարը կողքի ճակատներից ներս է դրված 10 սանտիմետր: Կամարի կենտրոնը տեղադրված է հիմքերի հետ նույն հարթության վրա, որի հետևանքով կամուրջը ունի կիսաշրջանաձև ուրվանկար:

Թաղի հաստությունը շատ չէ նկատելի, որպիսի հանգամանքը նկատի ունենալով ժողովուրդը նրան տվել է մալի (այսինքն մալի հաստություն ունեցող) կամուրջ: Այժմ էլ կամուրջը գործում է: Նրա վրայով անցնում են Ստեփանակերտից դեպի Շուշի, Գորիս և այլ բնակավայրեր մեկնող մեքենաները, նույնիսկ ծանրաքարշ հսկա «Բելլապ»-ներն ու թրթուրավոր թուղոպերները:

Կամրջի խելերի հիմքերի տակի ժայռը լրիվ մերկացված է, իսկ գետը իր հունը, ժայռը ձեղքելով, խորացրել է շուրջ 10 մետր:

Հայկական կամուրջները Պ. Վ. Շչուսևի արտահայտությամբ «...այն կառուցվածքներից են, որոնք համաշխարհային ճարտարապետության ամենաարժեքավոր ստեղծագործությունների շարքին են պատկանում»²⁰:



Ստեփանակերտի մուտքի աջ մասում, սիգապանծ լեռների ֆոնի վրա, կանաչ թփերով շրջապատված բարձր բլրի գագաթին, կանգնած է փառահեղ մի կոթող: Չնայած հին պատմություն չունի այն, բայց կարճ ժամանակամիջոցում այն դարձել է մարկկենտրոնի խորհրդանիշն այնպես, ինչպես Կույսի աշտարակը Բաքվում, Սասունցի Դավթի արձանը՝ Երեվանում: «Մենք ենք մեր լեռները.— իր տաղանդավոր ստեղծագործությունն այսպես է կոչել կոթողի հեղինակ, ՀՍՍՀ ժողովրդական քանդակագործ Սարգիս Բաղդասարյանը:

Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի կարմրագույն տուֆից կերտված քան-

դակը ներկայացնում է ավանդական տարապոլ երկու տարեց դարաբաղցիների: Մարդ ու կին են նրանք, ուսուսի հպարտ ու անհողողող կեցվածքով ու սևեռուն հայացքով: Նրանց տակ պատվանդան չկա: Ասես լեռնաբլուրը ձեղք է տվել, և նրանք այդ ձեղքից բարձրացել, կանգնել են՝ ոտքերը խրած հայրենի հողի մեջ:

Հղացման խորությամբ և ձևերի մոնումենտալությամբ վեհ տեսք ունի այս կոթողը: Նայիր, և նա քեզ կպատմի դարաբաղցու հերոսական կենսագրությունը, հարատևման մեծ գաղտնիքը:

ԲԱԴԱՐԱՅԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Ղարաբաղի լեռնաշղթայից դեպի արևելք բալուկավորվող սարերը պատած են անտառներով ու կանաչ մարգագետիններով: Համատարած այս կանաչի մեջ առանձնահատուկ տպավորիչ ուժ ունեն պատմա-ճարտարապետական հուշարձանները, որոնք այնպես շատ են **Բաղարա, Խանածախ, Խանձք, Խնձրատան, Նորագյուղ, Դահրավ, Ուլուբաք, Քարազըլուխ** և այլ գյուղերի շրջակայքում:

Ահա դրանցից մի քանիսը:

1. **Բաղարայի Խրավոնդ** կոչվող հանդամասում դեռ մնում է **Խրավոնդ**, գուցե և **Խորավոնդ** անունով մատուռ-մենաստանը: Այն թաղված է անտառի մեջ, համարյա կիսափոլ վիճակում:

Մատուռին կից կա մի փոքրիկ շինություն, իսկ շրջակայքում խաչքարերով գերեզմանոց, որը թույլ է տալիս ենթադրելու, թե այստեղ ժամանակի ընթացքում եղել է համեմատաբար ոչ մեծ բնակավայր: Ո՛չ շինության որմուն և ո՛չ էլ խաչքարերի վրա որևէ գրություն չի պահպանվել, սակայն խաչքարերի ոճից կարելի է ենթադրել, որ դրանք 12—13-րդ դարերից են:

Նման մի այլ մատուռ գտնվում է նախկին սղոցագոռձարանի դիմաց, որին տեղացիները անվանում են **Դրբասուտ եղցի**: Սրա մասին ևս չեն պահպանվել կառուցման վերաբերյալ տեղեկություններ:

Այստեղից ճանապարհն անտառի միջով, գետի աջ ափով, վեր է բարձրանում և գնում, հասնում անտառի խորքում, ծառապատ մի բլրի վրա կառուցված **օխտը եղցի** կոչվող **հուշարձանախամբին**: Այստեղ իսկապես կառուցված են **յոթ եկեղեցիներ**, որոնցից չորսը մի ամբողջական շինություն են կապում՝ իրենց դռներով ու պատուհաններով, իսկ երեքը կառուցված են նրանց շրջապատում: Շենքերը գտնվում են կիսավեր վիճակում, փլված են տանիքները և պատերը:

Եկեղեցիների շրջապատում կան բավարթիվ խաչքարեր՝ շարդված ու մաշված արձանագրություններով: Նրանց վրա պահպանված մի քանի

²⁰ П. В. Щусев. Мосты и их архитектура, М., 1952, стр. 180.

արձանագրություններում ընթերցվում է **ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ** անունը: Քառյակ եկեղեցիներից միայն մեկն է, որ պահպանվել է ամբողջովին: Նրա ձախկողմյան որմի մեջ պահպանվել է մի խաչքար, որի քերձված արձանագրության մեջ ընթերցվում է. «**ԹԻՎ ՈՒ: ԵՍ ՍՈՅԵՄ ՍՄՊԱՏ... ՈՐԴԻ...**»: Մյուս տառերը չեն ընթերցվում: Իսկ խաչքարի կենտրոնում կա այսպիսի մի տեքստ. «**ՍՄՊ... ԻՇԽԱՆ, ԱՏ... ՈՐ<Ի>...**»: Եկեղեցու նույն որմի շարունակության վրա մյուս խաչքարերը հանված և թափված են շրջակայքում, որոնց վրա նույնպես կան քայքայված արձանագրություններ, կրոնական ու աշխարհիկ բովանդակության տարբեր պատկերներով: Եկեղեցին ունի մեկ պատուհան և մեկ մուտք: Որմուն պահպանված խաչքարը կերտված է սպիտակ տուֆից, նրա բարձրությունը 1.1 մետր է, իսկ միջին լայնությունը՝ 65 սմ: Պարզվում է, որ խաչքարը վերաբերում է 1158 թվականին, իսկ Սոյեմը եղել է Սմբատ իշխանի որդին:

Օխտը եղցուց արահետը անտառի միջով տանում է դեպի **բերդը**, որին տեղացիները անվանում են **Պորթ**: Այստեղ, անտառի մեջ, վեր է խոյանում մի հսկա ժայռ, որի վրա պահպանվում են հին պարսպի մնացորդները: Նրա շրջապատում՝ հյուսիսային կողմում, այժմ էլ պահպանվում են հին շենքերի մնացորդներն ու գերեզմանաքարերը: Տեղացիները պատմում են, որ այստեղ ապրող բնակիչները ստորգետնյա անցքով հասել են գետափ և այնտեղից խմելու ջուր տարել բնակիչների համար:

Բաղարա գյուղի հյուսիսային մասում է գտնվում **Փրկիչ կամ Փրկչա եկեղեցին**: Ընքն այժմ էլ կանգուն է, ունի երկու դուռ, երեք պատուհան և ոչ մեծ բեմ: Կառուցված է անտաշ քարից: Եկեղեցու դռանը, պատի մոտ շարված են մի քանի խաչքարեր, իսկ շրջապատում՝ բավաթիվ գերեզմանաքարեր առանց գրությունների:

Եղած արձանագրությունն այնքան եղծված վիճակում է, որ հնարավոր չէ ընթերցել եկեղեցու կառուցման թվականը: Նրա առաջին տողը անընթեռնելի է, այնինչ եկեղեցու կառուցման թվականը գրված է հենց առաջին տողում: Այժմ եկեղեցին կանգուն է: Կատարվել է նաև մասնակի վերանորոգում, դրված է երկու երկաթե դուռ և վերակառուցված են հատակն ու բեմահարթակը: Նշվածներից բացի գյուղի հյուսիսային մասում գտնվում են ևս երկու հուշարձաններ՝ **Տերա նահատակըն** ու **Օծկան վանքը**:

2. Հետաքրքիր հուշարձան է Բաղարաի ձախ թևում գտնվող **Խանածախ գյուղի եկեղեցին**: Արձանագրությունների մեջ նշված է **ս. Աստվածածին** անունով: Եկեղեցին եռանավ բազիլիկ է, որի ներսի չորս սյուները աղեղնաձև միանում են պատերին կից կիսամույթերին: Աղոթասրահը երկու գույգ խաչաձև մույթերով բաժանվում է երեք նավի,

որոնք թաղածածկ են: Բեմի երկու կողմերում կան ուղղանկյուն հատակագծով թաղակապ ավանդատներ:

Խանածախից դեպի հյուսիս, երեք կողմից առանձնացված տափարակը ժողովրդական անվանակոչումով **Քղքատեղ** (քաղաքատեղ) է համարվում: Տեղանքը հերկելու ժամանակ այդտեղ հաճախակի գետնի երես են դուրս գալիս տարբեր մեծության, գույնի և տեսակի կավանդներ, քարե աղորիքներ, արծաթե ու պղնձե դրամներ: Քաղաքատեղի շուրջը տարածված է ընդարձակ գերեզմանատունը: Հիշյալ վայրից վերև, բլրակի գլխին, կանգնած է միջին մեծության մի խաչքար: Նրա վարդանախշերի ոճական առանձնահատկություններից ելնելով կարելի է ասել, որ այս խաչքարը 10-րդ դարի գործ է:

Ուրիշ բնակավայրերի, սրբավայրերի, վանական շինությունների հետքեր են արձանագրվել **Բանվոր Նան**, **Զալալ-Հասան** տեղամասերում: Իսկ խաչքարեր պարունակող հին գերեզմանատունը սրբապատկերում է Տրագետի աջափնյա բլրակի լանջը:

3. Խանձք գյուղի ս. **Ստեփանոսի եկեղեցին**, իր պատերի մեջ տեղադրված խաչքարի վրայի արձանագրության հաղորդած տվյալներով, կառուցվել է 1230 թվականին. «**Թիւն Ո՛ՏԹ Ես Հայրապետ, Պետրոս, Վարդան, Յոհան կանգնեցաք վիսաչս մուրն մեր. որ բարեպաշտ, աղքատասեր էր յաղալթս յիշեցեք**»²¹: Սակայն, այստեղի մի այլ արձանագրություն, որ գտնվում է եկեղեցու մուտքի ճակատակալ քարի վրա, թվագրված **ՌՃԻԲ** (1773 թ.), վկայում է, որ եկեղեցին կառուցվել է Խանձքի գյուղացիների ջանքերով, Աղվանից Պետրոս կաթողիկոսի օժանդակությամբ: Նշված երկու արձանագրությունների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ միջնադարում այստեղ կառուցված է եղել եկեղեցի, որը հավանաբար կործանվել է 15—16-րդ դարերում, իսկ ինչ վերաբերում է ներկայիս եկեղեցուն, որի պատի մեջ դրված է անցյալի հիշողություն հանդիսացող խաչքարը, հավանորեն հնի հիմքերի վրա վերակառուցված եռանավ բազիլիկ է: Խանձք գյուղի հարավային կողմում, հին ճանապարհի եզրին, ծառերի տակ, ընկած են երկու խաչարձաններ: Աջակողմյան խաչքարերի վրա մնացել են արձանագրության միայն առանձին մասեր և տառեր: Բարեբախտաբար այս արձանագրությունը ժամանակին ընդօրինակել է Ս. Բարխուտարյանը:

«Յանուն Սուրբ Երրորդութեան ես Սոստանէս ու Բարսեղ կանգնեցաք վիսաչս հաւր մերոյ Հայրապետայ և մաւրն մերոյ Հռոմանիմին, որք, երկրպագեք, յաղալթս ՉԲ (1253)»²²: Ս. Հոհաննեսի մատուցող գտնվում է ջուխտակ (պույգ) խաչարձաններից բավական ցած, առվակի ձախ

²¹ Արցախ, էջ 159:

²² Նույն տեղում:

ափին: Թեև մատուռի կառուցման վերաբերյալ որևէ տեղեկություն չի պահպանվել, բայց նրա ոճական, ճարտարապետական առանձնահատկություններից կարելի է ենթադրել, որ այն 17—18-րդ դարերում շինված հուշարձան է: Մատուռի շուրջը տարածված գերեզմանատունը կույ է գնացել դարաբաղյան փարթամ բունականությանը: Գրեթե նույն դրության մեջ գտնվող մեկ ուրիշ գերեզմանատուն փռված է «Վարդապետի խուլթ»-ի վրա: Բացի դրանից մի այլ հանգստատուն, երկու անանուն գյուղատեղեր և Անապատ կոչվող գեղեցիկ մատուռը գտնվում են **Շոշոան խուլթի** (բլրակի) ստորոտում:

4. Խնձրատանը Խաչենի այն գյուղերից մեկն է, որտեղ գոյծել է տնտեսական նշանակություն ունեցող **սրանոցը (Ձիթահանը)**: Եկեղեցու արևմտյան կողմում է եղել ձիթահանի ուղղանկյուն հատակագծով շենքը: Այն կառուցել է Մելիք Ալահվերդին, 1772 թվականին: Արտադրական փոքրիկ «ձեռնարկությունը» մի քանի սենյակից է բաղկացած եղել: Գյուղի ծերերը պատմում են, որ ձիթահանի կենտրոնական, ամենամեծ սենյակում տեղադրված է եղել քարե աղացը: Այստեղ ծեծվել է կտավատը, աղացը պտտեցվել է փայտի առանցքների միջոցով, ելան կամ ջորու ուժով: Հետագայում ձիթահանի քարերով կառուցվել են երկու մետաքսագործական ֆաբրիկաներ, որոնցից մեկը մինչև օրս գործում է:

Գյուղի **եկեղեցին** ուշ միջնադարի կառույց է: Նրա գավթում թաղված են Խնձրատանի մեկիքները: Այստեղ հիշարժան հնավայր են համարում նաև **Հանգած եղջի (եկեղեցի)** ավերակները: Բլրակի ստորոտում նկատելի են հին ոճի տապանաքարեր, խաչքարեր և այլ կոթողներ:

Վերը նշվածից բացի, խոշոր բնակավայրի և գերեզմանատան հետքեր են արձանագրվել տեղացիների կողմից **Պպեն շեն** (սպալուն շեն) կոչվող տեղամասում:

Խնձրատանցիները, թվարկելով իրենց հուշարձանները, երբեք չեն մոռանում գյուղից վերև՝ բլրակը վրա ցցված մարդանման **մեծ քարը**, որն իր գլխին պահում է կաթսայաձև մի այլ քար: Գեղեցիկ ու հուպիչ ավանդություն է կապված այս քարի հետ: Ավանդության իմաստը դարաբաղից հայ կնոջ անձնագոհ նվիրվածությունն է, վեհությունը և մեկ էլ անսահման հավատարմությունը:

5. Նորագյուղի **Հունի-խաչ** (հոնի) հուշարձանը գտնվում է համանուն լեռան արևելահայաց լանջի վրա (դեպի Ասկերանի կողմը): Նվիրական վայրը համարվել է սրբավայր:

Հին Նորագյուղի (նոր Նորագյուղի վերջին տարիներին լեռներից իջել և կանոնավոր շարքերով տարածվել է հարթավայրում, Ստեփանակերտի օդանավակայանի հյուսիս-արևելյան մասում) եկեղեցին գտնվում է գյուղի արևմտյան մասում: Այստեղ ձորակի կրծքից դուրս է գալիս մի աղբյուր՝ **Վերին ջուր** անունով: Գյուղից դեպի հյուսիս, լեռան վրա-

Սուրեն խաչ սրբավայրն է: Իսկ գյուղից 4—5 կիլոմետր հեռավորության վրա, **Չնգըլ** կոչվող տեղամասում, կա քարայրի տեսքով մի կացարան, որին տեղացիներն անվանում են **Քարե տուն**:

6. Դահրավի գյուղամերձ շրջանում պահպանվում են երեք եկեղեցիներ:

Թաղածածկ դահիճի հորինվածք ունեցող այդ հուշարձանները իրենց շինարարական արձանագրությունների տվյալներով կառուցվել են ուշ միջնադարում: Գյուղից 5—6 կիլոմետր հեռավորության վրա, բնության մի գեղատեսիլ անկյունում, անխաթար վիճակում մնում է «**Սուեն նահատակ**»-ի կամարակապ, զարդանախշերով հարդարված սեղանատուն հիշեցնող մի քարաշեն բնակարան:

Շենքի շրջապատում, անտառի մեջ հապիվ տեսանելի են գերեզմանատան տապանաքարերը: Գրեթե նույն դրության մեջ են գտնվում նաև **Եղծահող** տեղամասի բազմաթիվ շինությունների փլատակները: Դատելով վանական շինությունների քանակից (դրանց հետքերը համեմատաբար նկատելի են) պետք է եզրակացնել, որ այստեղ ժամանակին եղել է վանական ընդարձակ համալիր:

Տեղացիների կողմից սիրված հուշարձան է համարվում **Բաֆթու աղբյուր** հուշարձանը: Ասում են, որ հսյ մեծ վիպասանը եղել է այս գյուղում: Դահրավի տարբեր կետերում են գտնվում **Փռչուն նահատակ** սրբավայր, **Մեծ Քարագուլս**, **Ընդաքար** քարանձավները, 6—7 մետր բարձրություն ունեցող մի հետաքրքիր մարդանման ժայռապանգված և այլ հուշարձաններ:

ԱՍԿԵՐԱՆԻ ԲԵՐԴ

Ստեփանակերտից դեպի արևելք՝ մոտավորապես 14 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Ասկերանի նշանավոր բերդը: Այն ձգվում է Ասկերանի ավանի հարավային մասով: Բարձր աշտարակներով, հաստ պատերով բերդը երկու կողմից փակում է Կարկառ գետի հովիտը: Այն ամրացված է կրկնապարիսպներով, որով և անմատչելի է դարձնում լեռների արանքում գտնվող ձորակը: Աշտարակները շրջանաձև հատակագիծ ունեցող պաշտպանական կառուցվածքներ են, որոնք շարված են մանր գետաքարերից ու կրաքարերից՝ կրաշաղախով: Դիտաշտարակները իրար հետ են հաղորդակցվում պատերի ատամնաձև վերնամասերի խրամատանման անցքերով: Պատերի մեջ, ներսից, կան բազմաթիվ խորշեր և տարբեր լայնության անցքեր՝ հրակետեր: Որոշ խորշերից պատերի միջով օդանցքների նման խողովակաձև հատուկ անցքեր են ձգվում դեպի վեր:

Ասկերանը որպես Կորանոց գոյություն ունի 18-րդ դարի կեսերից: Իսկ 1788—89 թթ. պարսկական հարձակումներից պաշտպանվելու համար այն ավելի ամրացվելով վեր է ածվել ամրոցի («Ասկերան» թուրքերեն նշանակում է Կորանոց):

ՊՏԿԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՄ ՊՏԿԵՍ ԲԵՐՔԻ ՎԱՆՔ. Այն զրտնըվում է Ստեփանակերտի շրջանի Ուլուբաբ գյուղի տարածքում, գեղատեսիլ մի լեռան գագաթին: Ի դեպ, Ուլուբաբ գյուղը դարեր շարունակ եղել է Խաչենագետի ափին, պատմական Ուլուբաբ կամրջի մոտ: 18-րդ դարում գյուղում համաճարակ հիվանդություն է բռնկվում: Գյուղացիներից շատերը մահանում են, մի մասը ցրվում, հարևան գյուղերն է գնում, իսկ մի փոքր մասը տեղափոխվում է այդ բարձունքի ստորոտը, հիմնադրում ներկայիս գյուղը:

Ուլուբաբից երևում է Գևորգասարի կատարին նստած վանքի գորշագույն գմբեթի ուրվագիծը: Քարքարոտ ու դժվարանց մի կածան ձգվում է դեպի վանք: Ճարտարապետական այդ կոթողը միջնադարի շինություն է: Իր հորինվածքով և կառուցման ձևերով այն կարելի է դասել կենտրոնագմբեթ խաչաձև հատակագիծ ունեցող եկեղեցիների շարքը: Վանքի եկեղեցին չափերով, հորինվածքով շատ նման է Գտչավանքին, այն տարբերությամբ, որ Գտչավանքի գմբեթն ավելի բարձր ու սրածայր թմբուկ ունի:

Վանքը մոտավորապես 400 տարվա պատմություն ունի. արտաքին ձևերում Կուսապ է, Կարդաքանդակներն արված են միայն լուսամուտների ու դռների կամարների վրա: Վանքի հիմնադիր Հովսեփ վարդապետի արձանագրությունը փորագրված է ոչ թե քարի, այլ աջակողմյան խորանի կամարակապ առաստաղի ծեփի վրա: Այդ խորանում են թաղված մի շարք նշանավոր խաչենցիներ:

Վանքին կից կան երկու կիսավեր սենյակներ: Վանքի հիմնադրման, գուցե և վերակառուցման տարին ըստ արձանագրության 1490 թվականն է: «Ի դուռն Խաչենու Պտկի սուրբ Գևորգ Կորաւորին»: Վանքը վերջին անգամ նորոգվել է 1896 թվականին, Հովհաննես անունով մի վարդապետի կողմից:

ՔԱՐԱԳՆՈՒՆ — ՇԻԿԱՔԱՐ ԲԵՐԴԸ

Խաչենի հնագույն նշանավոր բերդերից մեկն է Քարագուխը կամ, ինչպես գրականության մեջ է վկայված՝ Շիկաքարը: Պատմական աղբյուրները ստույգ տեղեկություններ չեն հաղորդում բերդի սկզբնական շինարարության թվականի մասին:

Երկու հարյուր յոթանասուն թվականին կատարված հայոց մի

կեպքի առնչությամբ բերդի անունը հիշատակում է Մովսես Կաղանկատվացին իր «Պատմություն Աղվանից աշխարհի» հայտնի աղբյուրագիտական երկի հեջ: Պատմիչը գրում է, որ «Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի ենթարկեցին Ամարաս գավառը, և մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Շիկաքար»²³: Այնուհետև հեղինակը շարունակում է. «Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահղի Սմբատյան եռանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրները իրենց Կորքերով լուսադեմին վրատվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, ցիրուցան դարձրին և, ինչպես առյուծի ժանիքներից, գերիներին խլեցին»²⁴:

Մակար եպիս. Բարխուտարյանը տեղում հավաքած վիմագրությունների հիման վրա որոշակի նշում է բերդի հիմնադրման, պատկանելության և տեղադրման հետ կապված մի շարք մանրամասնություններ: Հետազոտելով Քարագլխի հին հանգստարանի մի արձանագրությունը, նա գրում է. «Շինաքար բերդը շատ հին է... Հասան Մեծն բերդս տուած էր Սմբատ անուն ոմն իշխանապի, իբր հայրենիք և գերեզմանատուն»²⁵: Այժմ էլ գոյություն ունեն այստեղի և գյուղատեղին, և ընդարձակ երկու գերեզմանատները, և երկու եկեղեցիները:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում Շիկաքարը պաշտպանական տեսակետից: Նախ նշենք, որ բերդը տեղադրված է Խաչենագետի աջ մասում և Խոխանաբերդի, Կաչաղակաբերդի, Նատարին բերդի, Տիգրանաբերդի հետ միասին մի օղակ է կազմում Գանձասարը՝ Արցախի սիրտը, պաշտպանելու համար: Հետո էլ այն պաշտպանում է խիստ Կառնիթափ լանջեր ունեցող սարահարթը: Այս բարձունքից իջնելով շրջապատի վրա, բերդը հսկողության տակ է պահել դեպի Խաչենի իշխանությունների կենտրոն ձգվող կիրճը և նրանով անցնող այն կարևոր ճանապարհը, որ երկրամասի լեռնային մասը կապում է դաշտավայրի հետ: Բերդից լավ դիտվում է նաև դաշտավայրից դեպի Կարկառ գետի հովիտը բարձրացող լեզվակը:

Բերդը բոլոր կողմերից օղակված է բնական ժայռերով: Այստեղ, անխորտակելի ժայռերի ետևում թաքնված՝ մեկ խաչենցի ռազմիկ մարտնչել է քան հոգու դեմ: Կիրճում, վիմահերձ քերձերի արանքում դիրքավորված երկու-երեք քաջարի զինվորներ դիմադրել են թշնամու մի քանի հարյուր զինվորների ճնշմանը:

Սակայն, բացի նշվածից, բերդն ունի նաև ուրիշ կարևոր առանձնահատկություն, որով ավելի է մեծացել նրա դիմադրողականությունը:

²³ Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 255:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Արցախ, էջ 424:

Խոսքը ամրոցի տակ գտնվող չորս խոշոր քարանձավների, նրանցում եղած փոքրիկ ջրամբարների, ստորգետնյա բազմաթիվ սրահների և անցուղիների մասին է:

Այստեղից դեպի հարավ Կարկառ գետի բարեբեր հովիտն է, որտեղ իր թևերն է տարածել մարվկենտրոն Ստեփանակերտը: Նրա շրջակայքում գտնվող առավել կարևոր հուշարձանների մասին կխոսվի ստորև:

* * *

Ասկերանի Մեծ բերդի ստորոտի Փիփերթաձոր կամ Ջրի ձոր վայրը անշուք ու ամայի մի տարածություն է, ուր հատուկենտ պլուզատու ծառեր են մնացել: Այստեղ նկատելի չեն հին գերեզմանները, որովհետև Մայրաբերդի սարի քայքայման հետևանքով դրանց վրա բավականին հաստ հողաշերտ է գոյացել: Հետագայում սարի լանջից հոսող անձրևաջրերը քջել տարել են հողաշերտը, որի հետևանքով բացվել են դամբարաններից մի երկուսը: Կիսաբաց դամբարանում, իրարից 1—1,5 մ հեռավորության վրա, հայտնաբերվել է ոչ թե մեկ, այլ մի քանի մարդու կմախք: Աճյունները ծածկված են եղել փոքր և անմշակ քարերով, իսկ դամբարանը պարունակում է բրոնզեդարի գերեզմաններին վերաբերող ոչ այնքան հարուստ նյութ: Դրանք Խոջալուի և Ստեփանակերտի դամբարանաբլուրներից ստացված նյութերի հետ գտնվում են մի ընդհանուր աղերսի մեջ: Փիփերթաձորի հյուսիս-արևմտյան մասում, մոտավորապես 8 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Դաշքուլաղի Տանձուտ տեղամասում կան նույն տիպի դամբարաններ, որոնցում առաջին անգամ պատահականորեն հայտնաբերվել է բրոնզե գոտի, որի ճարմանդի կեսը իրենից ներկայացնում է ակնոցավոր օձի (պիթոնի) ձուլածո գլուխ: Ի դեպ, բոլորովին վերջերս Տանձատափի ընդարձակ դամբարանադաշտում Բալուչա բնակավայրի հյուսիսային մասում, դըպրոցի շենքի համար տեղանքը հարթելիս բացվեցին մի քանի դամբարաններ: Հայտնաբերվեցին սև փալով կավանոթներ, բրոնզից պատրաստված կախիկ-վարդեր, ուլունքներ, երկաթե նիպակի ծայր և այլ իրեր, որոնք պահվում են դպրոցում: Այդ հավաքածուի մեջ ուշագրավ նմուշներից է պարդապատկերով, բրոնզաձուլ մարդու դեմքով արձանիկը, որը գտնվում է մարկային թանգարանում: Չարդապատկերի ստորին մասը կամ պոչը, կենդանակերպ է, ունի սողունի տեսք, իսկ մյուս մասը ներկայացնում է մարդու պատկեր՝ երկար մորուքով ու մալերով: Կուռք-արձանիկը հավանաբար ունեցել է պաշտամունքային նշանակություն: Ղարաբաղի վերաբերյալ հնագիտական գրականության մեջ հայտնի են կենդանակերպ և թռչնակերպ արձանիկներ: Մարդու պարդապատկերով արձանիկ ընդհանրապես շատ քիչ է հանդիպում:

Ստեփանակերտի շրջանի Նորագյուղի տարածքում, հատկապես Խոջալուի մոտերքում, կան 13 խոշոր և 5 փոքր ռամբարանաբլուրներ: Դրանցից 5-ը պեղել է Ռյուկերը 1894 թվականին²⁶: Խոջալուում կատարած նրա առաջին պեղումների մասին մանրամասն տեղեկություններ կան Բեռլինում Վիրխով, Բաստիա և Ֆոս գիտնականների մասնագիտողովի խմբագրությամբ հրատարակված «Ցեղագրության հանդես»-ում: Հետագայում, սովետական շրջանում, Խոջալուում պեղումներ են կատարել նաև Ի. Մեջանինովը, Կ. Քուչնարյովան և ուրիշներ:

Խոջալուն համարվում է բրոնզե դարի խոշոր կենտրոն և հնագիտությանը հայտնի է շուրջ 90 տարի:

Խոջալուի դամբարանաբլուրներից ոչ այնքան հեռու, Ստեփանակերտի մատույցներում, տարածվում են 105 մեծ ու փոքր դամբարանների խմբեր: Այստեղ 1938—1939 թթ. պեղումներ է կատարել հայտնի հնագետ Յա. Հունմեյը: Նա այդ դամբարանաբլուրներից մեկում հայտնաբերել է մի կարաս, որի մեջ կային բրոնզե 8 կացին, գավազանի բրոնզե 4 գլուխ, 4 բրոնզե ալարանջան, 6 կգ սարդիոնի (կիսաթանկարժեք քար) ուլունք, պաշտամունքի երկու արձանիկ և այլ առարկաներ: «Այդ առարկաների ճարտարվեստը, շինվածքը ապացույց է, որ Արցախում գոյություն է ունեցել նման մասնագիտացված ու վարգացած արվեստ»²⁷:

Կավագործ հնագույն վարպետները մշակել են յուրահատուկ մի կաղապար, որին գործվածքի օգնությամբ տվել են իրենց ցանկացած ձևը, ծեփել դրսից և ապա թրծել հնոցում: Բրուտության այդ ձևը հնագետ Վ. Վոևոդսկին կոչել է «Керамика с текстильными отпечатками»²⁸.

1967 թվականի աշնանը Ստեփանակերտի հյուսիսային մասում, փողոցը բարեկարգելու ժամանակ, բացվել է դամբարանադաշտ: Դամբարանները դասավորված էին մեկը մյուսից մեկ մետր հեռավորության վրա: Թաղումները կատարվել են կարասների մեջ: Դրանցից յոթը կարմիր գույնի մեծ կարասներ էին, երկուսը՝ փոքր, գորշագույն: Թաղումները վերաբերում են հելլենական դարաշրջանին: Կարասների միջից գտնվել են տարբեր չափի բրոնզե մատանիներ, երկաթե դաշույն, երկաթե դանակ, մանյակներ, մետաղյա վարդեր, ուլունքներ և գործվածքի մի փոքրիկ կտոր, որն ամենահետաքրքիրն է հայտնաբերվածների մեջ:

Ի դեպ, 1965—1971 թթ. ընթացքում կարասային թաղման ձևի բազմաթիվ դամբարաններ պատահականորեն գտնվել են ճարտարի-

²⁶ Ռյուկերն իր հայտնաբերած նյութերն ուղարկում է արտասահման, որի համար քննադատվում է և վրկվում Անդրկովկասում պեղումներ կատարելու իրավունքից:

²⁷ Известия Азербайджанского филиала Академии наук СССР (Азфан), № 49, 1939.

²⁸ Նույն տեղում:

Մեծ-Շենի, Խանձաձորի, Կանաչ Թալայի, Մեհմանայի, Խնածախի դաշտերում:

Ստեփանակերտի շրջակայքում հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ դեռևս շատ հին ժամանակներում ներկայիս քաղաքի տեղում եղել է մի խոշոր բնակավայր, որի բնակիչներն ունեցել են բարձր կուլտուրա, կավից հիանալի ամաններ են շինել, բրոնզից ձուլել պենքեր ու պերճանքի առարկաներ: Յա. Հունմելի հայտնաբերած բրոնզեդարյան հարյուրավոր նյութեր դարձել են Լեռնային Ղարաբաղի պետական պատմաերկրագիտական թանգարանի առաջին ցուցանմուշները:

Ստեփանակերտի հյուսիս-արևմտյան մասում, նախկին Կրկժան գյուղի շրջակայքում, կա 27 դամբանաբլուր: Այդտեղից Կարկառ գետի հոսանքն ի վեր ճանապարհը կտրում անցնում է Լիսագորի լեռնանցքը և իջնում դեպի Չանգեպուր:

Նշված հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերված ոսկե, բրոնզե ու երկաթե իրերը, ինչպես նաև կավե ամանները վկայում են, որ Կարկառի ավազանի, ինչպես նաև Խաչենագետի հովտի բնակիչներն ունեցել են բավականին վարգացած մետաղագործական, կավագործական ու քանդակագործական արվեստ: Խոջալուի և Առաջաձորի նյութերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո Ռ. Վիրխովը գրել է, որ վերոհիշյալ հուշարձանների դամբարանները և նրանց պարունակած իրերը հնագիտական և գեղագիտական մեծ արժեք են ներկայացնում²⁹:

Վետագայում այդպիսի կարծիք են հայտնել գրեթե բոլոր այն գիտնականները, որոնք ոչ միայն ի մի են բերել նախորդ պեղումների արդյունքները, այլև իրենք են պեղումներ կատարել լեռնային երկրամասում և համոզվել, որ դրանք բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարանադաշտեր են³⁰:

Յա. Հունմելը, Կ. Քուշնարյովան, Շ. Մկրտչյանը բազմաթիվ նյութերի ուսումնասիրությամբ ցույց են տվել Ղարաբաղի ոսկեղեն վարդաքանդակների և բրոնզե ու խեցեղեն իրերի պատրաստման տեխնիկայի, գեղարվեստական ձևերի համանմանությունը: Այդ շատ ցայտուն երևում է խեցեղեն իրերից, որոնց պատրաստման տեխնիկան հաստատում է նրանց արտադրական համանման մշակույթի մակարդակը:

Խաչենագետի ու Ստեփանակերտի դամբանաբլուրների թաղումները, ինչպես նաև հայտնաբերված սև փայլուն կավե ամաններն իրենց վրա փորագրված հարուստ երկրաչափական նախշերով հիշեցնում են

29 Ռ. Վիրխով, նշվ. աշխ., էջ 66:

30 Է. Խանգադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967, էջ 24:

Անդրկովկասի այլ հնավայրերից պեղված թաղումներն ու հայտնաբերված ամանեղենը:

«Մեծ հետաքրքրություն են ներկայացնում օբսիդիան և կայծքարե գործիքները, գնդաձև գուրպը, կացինը, պղնձե փոքր ու հարթ դանակները, դաշույնը, տեգի տերևաձև ծայրը, գնդասեղները, օղերը, ոսկե վարդերը և այլն»³¹, որոնց նման իրեր ու գործիքներ են հայտնաբերվել նաև Հաղրութի շրջանի Դոլանլար գյուղի մոտ³², Ամարասի հովտում, Ննգի գյուղից: Սրանք պղնձե ու բրոնզե իրեր են, հիմնականում կանացի վարդարանքներ:

Ինչպես հայտնի է, Անդրկովկասյան պղնձի դարը հնագետները կոչել են «Կուր-Արաքսյան նեոլիթ»: Այս շրջանին վերաբերող հետապոտություններն ընդհանրացնելով պետք է ասել, որ Արաքս ու Կուր գետերի միջև ապրող հնագույն բնակիչներն ունեցել են միանման կենցաղ ու արտադրական հարաբերություններ³³:

Դամբարանների ու բնակավայրերի պեղումներից հայտնաբերվել են ինչպես պղնձե, այնպես էլ երկաթե ու ոսկե անավարտ իրեր ու գործիքներ: Կ. Քուշնարյովան այդպիսի ցուցանմուշներից իրավացիորեն արել է այն հետևությունը, որ նման իրերն ու վարդարանքները պատրաստված են տեղում, այլպես նրանց անավարտ լինելը ոչ մի բացատրություն չէր ունենա:

Այսպիսով, նշված պեղումներից ու հնագիտական նյութերից կարելի է մոտավոր գաղափար կազմել Արցախի տերիտորիայի հնագույն բնակիչների տնտեսական կյանքի, կենցաղային սովորույթների ու հավատալիքների մասին: Թվարկված պենքերի տեսակները, հասկանալի է, վկայում են նրանց ռազմական ու որսորդական կյանքի մասին: Դամբարաններում հայտնաբերվել են ցորենի հատիկներ, դեղձի ու խաղողի կորիզներ³⁴:

Պեղումների շնորհիվ, այդ դարաշրջանի համար բնորոշ առարկաներ երևան հանելուց բացի, մոտավոր գաղափար է կազմվել Արցախի հնագույն բնակիչների հասարակական փոխհարաբերությունների մասին: Ինչպես վերն ասացինք, պեղված դամբարաններում հայտնաբերվել են մեծ մասամբ խմբային թաղումներ:

Արցախի նախնադարյան բնակիչների կենցաղի ու հավատալիքները

31 Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 200:

32 Սրանց նկարագրությունը տե՛ս Н. В. Минкевич-Мустафаева. Об археологических находках из с. Доланлар, Баку, 1949.

33 Народы Кавказа, том I, Москва, 1960, стр. 43.

34 Я. Гуммель, К проблеме археоботаники Закавказья, том I. Сообщения Груз. ФАН СССР, 1, № 10, 1940, стр. 745.

րի մասին են խոսում նաև պեղումների ժամանակ հայտնաբերված կենդանիների արձանիկներն ու քանդակները՝ առյուծի, հովապի ու ցուլերի գլուխներ, վանապան թռչունների արձանիկներ: Իսկ վերջերս գտնվեց նաև բրոնզաձուլ մարդու դեմքով արձանիկ: Ղարաբաղում թե՛ պեղումների ժամանակ և թե՛ պատահականորեն գտնված արձանիկներն ուսումնասիրելուց հետո կարելի է համարակորեն պնդել, որ այստեղի ժողովրդի մեջ պետք է շատ մեծ հարգ վայելած լինի հովապը, «իբրև արտադրող ուժի խորհրդանիշ. սրան առընթեր, իբրև մեծ պաշտամունքի առարկա ներկայացնող աստվածություն, որին այս երկրում մի առանձին պաշտամունք էր նվիրված»³⁵:

Ղարաբաղը նախնադարյան հասարակության ժամանակներում մեծ տեղաշարժերի վայր է եղել: Այստեղով են անցել ցեղային մեծ ու փոքր պանգվածներ՝ հյուսիսից հարավ ու հարավից հյուսիս: Մեղմ կլիմայի ու բարեբեր հողի գայթակղությունն այստեղ է բերել ու իրար հետ խաչաձևել տեղական ու օտար մշակույթները: Եվ արդյունքն այն է եղել, որ երկրամասը դարձել է իր ժամանակի մշակույթի առաջավոր ու վարգացած օջախներից մեկը: Արցախի տերիտորիայում գտնված հնագիտական նյութերը վկայում են որ 7—6-րդ դդ. մ. թ. ա. Լեռնային Ղարաբաղը կապի մեջ է եղել Առաջավոր Ասիայի հարավային երկրների հետ: Խոջալուի դամբարաններից մեկում 1895 թ. Էմիլ Ռոյսլերը հայտնաբերել է հսկայական մի սալաքար (կափարիչ), որի ներսի կողմին նշմարվել են անվերժանելի գրեր:

№ 11 դամբարանում հայտնաբերվել է նաև մի ուրիշ, ավելի արժեքավոր առարկա՝ մի խոշոր ուլունք, որի վրա փորագրված էին սեպագիր նշաններ: 1926 թ. պրոֆեսոր Ի. Մեշչանինովը վերձանեց արձանագրությունը, կարդալով՝ «Տիեզերքի թագավոր Ադատ Նիրարու պալատը»³⁶ բառերը: Հայտնի է, որ Ադատ Նիրարը՝ Ասորեստանի թագավորը, առասպելական Շամիրամի որդին էր: Այդ ուլունքը ինչպե՞ս է բերվել Արցախ: Այդ հարցին պրոֆեսոր Խաչիկ Սամվելյանը պատասխանում է այսպես. «Անշուշտ, այդ ուլունքը իբրև ավար, Խոջալուի հին շրջանն է բերվել որևէ տեղական թագավորի կամ իշխանի ձեռքով, որը ամենայն հավանականությամբ Ադատ Նիրարի առաջին թագավորի ժամանակ մասնակցել է Ասորեստանի դեմ մղված արշավանքներից մեկին»³⁷:

Ռոյսլերն այդպիսի ուլունքներ էր գտել նաև Առաջաձորի պեղում-

³⁵ Ն. Խաչատրյան, Հայաստանի սեպագիր շրջանի պատմությունը, 1933, Երևան, էջ 446:

³⁶ И. Мещанинов, Ходжаинский курган № 11 (Изв. общ-ва обследования и изучения Аз-на, 1926, № 2, Ходжаинская бусина) газета «Заря Востока», 1926, № 1264.

³⁷ Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, 1931, հ. Բ, Երևան, էջ 309:

ներից: Այստեղ նա հայտնաբերել էր ոսկյա մի մատանի, որի վրա փորագրված էին առեղծվածային նշանագրեր³⁸:

1968 թ. Մարտակերտի շրջանի Մեծ Շեն Ը են գյուղի հարավ-արևմտյան մասում բացվել է մի հնավայր, որտեղ գտնված բազմաթիվ հնագիտական իրերի մեջ ուշադրության արժանի են սարդիոնից պատրաստված ուլունքները, որոնք գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Ուրեմն Խոջալուի ու Առաջաձորի դամբարանները վերաբերում են ամենաքիչը մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջերին և առաջին հազարամյակի սկզբներին: Հետևապես նրանց մեջ գտնված իրերը՝ գործիքները, բարձրորակ խեցեղենն ու վենքերի տեսակները, հազարամյակներ առաջ արտադրվել են տեղում, մի հանգամանք, որ հաստատապես վկայում է տեղաբնիկների տնտեսության, կուլտուրայի բավականին բարձր մակարդակը:

³⁸ Նույն տեղում, էջ 188:

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԸ

Շուշին դիտակետի է նման, որը տիրաբար նստել է միանգամից ելնող սարահարթի բարձունքին և իշխող դիրք ունի բոլոր չորս կողմերի վրա: Ներքևում, դեպի հյուսիս և արևելք՝ դաշտերն են, այգիները, հյուսիս արևելյան կողմում Ղարաբաղի կենտրոն: Ստեփանակերտը: Շուշիի հարավից բոլորող ձորով հոսում է Կարկառ գետը, որն իր անունն ստացել է հունի բնույթից՝ քարքարոտ է:

Սարահարթը, որի վրա փռված է Շուշին, ունի կտրտված ռելիեֆ: Հարավ-արևմտյան ամենաբարձրադիր (1600 մ.) քերծից ոչ մեծ անկյունով նա իջնում է դեպի հյուսիս-արևելք, ապա ամենացածրադիր (1300 մ.) կետից միանգամից կախվում Հունոտի կիրճի վրա: Արևմտյան հատվածը հարևան է մի վիթխարի ամֆիթատրոնի, իսկ արևելյան մասը համեմատաբար հարթ է: Սարահարթի գրեթե կենտրոնով ձգվում է մեղմ մակերես ունեցող բլրաշարքը, որը դարձյալ ցածրանում է դեպի արևելք: Մի խոսքով՝ Շուշիի աշխարհագրական դիրքը պատկերացում է նրա և՛ պաշտպանական ամրությունների, և՛ ընդհանուր կառուցապատման ընթացքի վրա և ավելի գրավիչ դարձրել բերդաքաղաքի հումայնապատկերը:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոմանք կարծում են, թե Շուշին իր անունն ստացել է Շոշ անունով գյուղից, որն այժմ էլ գոյություն ունի քաղաքի հարավային կողմում: Լեոն անհավանական էր համարում այս ծագումնաբանությունը, գտնելով, որ «ընդհակառակը, գյուղը բերդից պիտի ստացած լինի իր անունը, իսկ բերդը, հավանորեն, գոյություն է ունեցել հին ժամանակներում»¹:

Լեոյից հիսուն տարի հետո, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը գրել է. «Մեր կողմից հրապարակվող փաստաթղթերը լրիվ հիմք են տալիս հաստատելու, որ Շուշվա բերդապարիսպների հիմքերը դրել է... Ավան հարյուրապետը՝ դեռևս 1724 թվականին, եթե ոչ դրանից առաջ»²:

¹ Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիբլիս, 1914 էջ 60:

² Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I. Ереван, 1964, стр. XLI («Историческое введение»).

Իրոք որ Շուշին հիշվում է 18-րդ դարից շատ առաջ, վկայում է նաև Մատենադարանի

Անվանի գիտնականի ակնարկած փաստաթղթերը տեղ են գտել Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած վավերագրերի ժողովածուի մեջ 199, 200, 212 և այլ համարների տակ: Նըշված վավերագրերից 199-րդը կապվել է 1724 թվականի հունվարի 4-ին, 200-րդը՝ հունվարի 12-ին, իսկ 212-րդը՝ փետրվարի 22-ին: Առաջին երկու վավերագրերը ստորագրել են Ավան և Միրզա հարյուրապետները, իսկ վերջինը՝ Թարխանը, Փանին, Պաղին և Սատեղը: Երկու հարյուրերորդ վավերագիրը գրվել է «Շոշոյ սղնախումն թիվն հայոց ՌՃՀԳ (1724) յունվարի ամսուն»³:

Ինչպես հայտնի է, 18-րդ դարի սկզբներին Իսրայել Օրու, մելիքների, հարյուրապետների, առաջադեմ հոգևորականների եռանդուն գործունեության շնորհիվ, Ղարաբաղի հայերի ինքնապաշտպանությունը վերածվեց ազգային պատագրական ծավալուն շարժման, որը նպատակ ուներ Ռուսաստանի օգնությամբ թոթափել պարսկա-թուրքական լուծը և քաղաքական անկախություն ձեռք բերել ազգովին:

Պետրոս Առաջինի բարյացակամ վերաբերմունքից ոգևորված, Ղարաբաղի պատագրական ուժերն իրենց վրա են վերցնում շարժման ծանրությունը: Երկրամասը դառնում է ազգային-քաղաքական պարթոնքի օրրանը, ուր ստեղծվում են ռազմական ճամբարներ՝ սղնախներ:

Այդ սղնախներից մեկն էլ, ինչպես վկայում են վերը նշված վավերագրերը, Ավան հարյուրապետը կառուցում է 1719—1724 թթ., ներկայիս Շուշի քաղաքի տեղում:

Շուշվա սղնախի հիմնադրման ու կառուցման հանգամանքները տեղ են գտել նաև ռուս գեներալ Մատյուշկինի կողմից 1725 թ. դեկտեմբերի 19-ին գրած նամակում: Ռուսական արքունիքին հղած այդ նամակի մեջ նշված է, որ «Ավան հարյուրապետը անսպով Ղարաբաղի բնակչության խնդրանքին, իր 10000 մարդկանցով չի գնում Գիլան, մնում է սղնախում և բերդ կառուցում»⁴:

Ժամանակի ականավոր մի այլ գործիչ՝ Իվան Կարապետը, Գյանջալի, Ղարաբաղի և Վրաստանի⁵ դրության առթիվ գրած իր վեկույցում

№ 4375 ձեռագրի 264 էջում տեղադրված հիշատակարանը. «Ի Փոսա նհանկ, գաւառս Վարընթոյ, ի գաւղս, որ կոչի Շուշոյ, ընդ հովանեաւ Ա. Ստեփանոս... Ի թվականիս ՌԻԳ» (1575 թ.): Դեռ ավելին, ներկայիս Շոշ գյուղի հին գերեզմանատան (13—17-րդ դարերից մնացած) տապանագրերում բավմիցս կրկնվում է «Շոշոյ» տեղանունը:

³ Армяно-русские отношения в первой трети XVII века, Сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, стр. 57.

⁴ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953 թ., էջ 121:

⁵ Շուշիի ամրոցի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում վրացական աղբյուրները: 1789 թ. վրաց Հերակլ թագավորի կազմած «Վրաստանն ու Կախեթին մերձակա երկրների նկարագրության մեջ» Ղարաբաղի հայկական իշխանու-

հենձյալները, իսկ մյուս օժանդակ դարպասները, որոնք կարճ ճանապարհով քաղաքը կապում էին Վարանդայի գյուղերի հետ, նախատեսված էին հիմնականում հետիոտնի համար:

Աղբյուրագիտական նյութերի հաղորդած տվյալների համաձայն գլխավոր դարպասներն ունեցել են հաղթական կամարների հանդիսավորություն, ամրացված հաստ կրկնապարիսպներով, 2-ական հպոր բուրգերով և հարդարված ճարտարապետական հետաքրքիր լուծումներով:

Բերդավանը (Արցախի միջնադարյան մյուս բոլոր բերդերի նման) ունեցել է իր գաղտնի՝ հարդագողի, ջրագողի ժայռափոր անցքը: Սարահարթի արևմտյան՝ Երևանյան դարպասի մոտից, ժայռի միջով գաղտուղին աստիճանաձև իջնում էր ցած, ապա քարայրի անցուղիներով դուրս գալիս խոր ձորը, որտեղով հոսում է Քարին տակի գետակը: Հարկ է նշել, որ այն բանուկ էր միայն պատերազմների ժամանակ, ու բոլորը չէ, որ իմանում էին նրա տեղը:

Ինչպես Միրզա Ջամալ Ջավանշիրը, նույնպես էլ Հակոբ Շուշեցին, ապա նաև հետագայում հանդես եկող ուսումնասիրողները համերաշխ հավաստում են, որ բերդավանի ամրացումից հետո այդտեղ են տեղափոխվել Լեռնային Ղարաբաղի, Մուղանի տափաստանի, Սյունիքի, Նախիջևանի բնակավայրերից գաղթած գյուղացիներ, արհեստավորներ¹³: Նրանք բերդում բնակություն էին հաստատել իրար կողքի՝ հայրենակցական սկզբունքով, ու նախկին բնակավայրերի անունով կոչել իրենց նորաստեղծ թաղերը: Շուշիի հնագույն թաղամասերից հիշատակվում են Ղազանչեցոց, Սահաթիի, Ագուլեցոց, Սեիդիի, Մեղրեցոց, Քեչարիի, Ղարաբաղցոց և այլն: Երբեմն էլ թաղերը կոչում էին տոհմի կամ տեղանքի անուններով:

Սակայն Շուշիում նստած խաների, հատկապես Փանահի ու նրա հաջորդ Իբրահիմի կամայականությունների ու վայրագությունների պայմաններում (1756—1806 թթ.) բերդավանում չկառուցվեց քաղաքացիական ոչ մի նշանավոր շինություն: Մարդիկ ապրում էին դարադամներում (գլխատներում), փայտե ու հողե պատերով խարխուռ հյուղակներում, որոնք անկանոն, խիտ տեղադրված էին սարահարթի արևելյան մասում: Անգամ պաշտամունքային, հասարակական նշանակության մյուս շենքերը կառուցված էին՝ եկեղեցիները փայտից, մզկիթը եղեգնից¹⁴:

Շուշիի կառուցապատման և ճարտարապետական վարզացման համար շրջադարձային էր 1805 թվականը, երբ Ղարաբաղը ինքնակամ

ընդունեց Ռուսական տիրապետություն, որը և հաստատվեց 1813 թվականի ռուս-պարսկական (Գյուլիստանի) հաշտության պայմանագրով¹⁵:

1820-ական թթ. Մեսրոբ Թաղիադյանը գալիս է Շուշի: Այնտեղ ծավալված շինարարության մասին նրա հաղորդած տվյալներից երևում է, որ այն ժամանակ նախկին փայտաշեն եկեղեցիների փոխարեն կառուցվել էին քարաշեն ճարտարապետական հոյակապ կոթողներ, երկհարկանի լուսավոր, քաղաքատիպ առանձնատներ, հյուրանոց-իջևանատներ, բազմաթիվ խանութներ, կուլտուր-լուսավորական նշանակության հասարակական այլ շենքեր¹⁶: Շինարարությունը հիմնականում գնում էր սարահարթի վերին՝ ապատ տարածության վրա, կանոնավոր փողոցներով, հասարակական շեշտված կենտրոններով:

Միաժամանակ ռուսական նոր վարչակարգը, նկատի ունենալով պատմական բարդ իրադրությունը, կապված շահական Իրանի կողմից հարձակման վտանգի հետ, մեծ ուշադրություն էր դարձնում Շուշիի պաշտպանական կարողությունը ուժեղացնելու վրա: Այս հանգամանքը՝ Շուշիի ռազմավարական նշանակությունը, իր արտացոլումն էր գտել քաղաքի վերակառուցման առաջին գլխավոր հատակագծում¹⁷, որ պահպանվել է կենտրոնական պետական պատմառազմական արխիվում: Դժբախտաբար հատակագիծը թվագրված չէ, և ինչպես նշվեց՝ ավելի շատ ռազմական, պաշտպանական նկատառումներ էր հետապնդում, քան քաղաքաշինական հարցեր: Բոլոր տվյալներից երևում է, որ այն կապվել է անցյալ դարի 20-ական թվականներին, ռուս զինվորական ինժեներների կողմից:

Շուշիում իրականացվում է ռազմական ծավալուն շինարարություն: Սկսվում է նոր վանգվածային ներգաղթ հարևան գյուղերից, գավառներից: Ճիշտ է ռազմական կառույցները նախագծում էին ռուս ինժեներները, սակայն շինարարությունը իրականացնում էին հայ քարգործ վարպետները և դրա շնորհիվ էլ մինչև իսկ պաշտպանական կառույցներում նկատելի է ռուսական և հայկական ոճերի միասնությունը: Նույնը կարելի է ասել նաև ճարտարապետ Քերբեյալ Սեֆի խանումի և ուրիշների նախագծերով կառուցված շենքերի մասին, որտեղ խիստ տեսանելի են աղբրեջանական և հայկական շինարվեստի սինթեզը:

Թերևս դրանով է բացատրվում Շուշիի ուրույն ճարտարապետությունը, որի շնորհիվ այն չի շփոթվի Անդրկովկասի այլ քաղաքների հետ:

Արդեն 1837 թվականին Շուշին ունեցավ իր երկրորդ հատակագի-

15 Հայկական սովետական հանրագիտարան, հ. IV, Երևան, 1978, էջ 577:

16 Մեսրոբ Թաղիադյան, ճանապարհորդություն ի Հայս, 1848, էջ 226:

17 ЦГВИА ВВА, № 22830.

13 Մատենադարան, ձեռ. 2734, էջ 3:

14 Э. Авалов, указ. раб. стр. 53.

ծը, իսկ 1855-ին այն վերանայվեց՝ քաղաքի աննախադեպ աճի թելադրանքով: Պաշտպանական շինությունների, փորանոցների համակարգի ստեղծումը փութորդվեց բնակելի, հասարակական շենքերի արագ կառուցմամբ: Քաղաքի վարգացմանը նոր թափ հաղորդեց Թիֆլիս—Բաքու երկաթուղին՝ հատկապես Եվլախ կայարանը, որի միջոցով Շուշին կապված էր երկրի արդյունաբերական կենտրոնների հետ: Արդեն 19-րդ դարի վերջին Շուշին Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկն էր, ուր հաշվվում էր 10 ուսումնական հաստատություն, 185 խանութ, 2 տպարան, թատրոն, 2 գրադարան, բազմաթիվ արհեստանոցներ, աղացներ, հյուրանոցներ:

Հասարակական՝ քաղաքացիական բոլոր շինություններն ու եկեղեցիները կառուցվեցին հայկական ճարտարապետական ավանդներով, շատ բան ուղղակի վերցնելով այս կամ այն բնակավայրերից, որտեղից ներգաղթել էին քարագործ վարպետները:

*
*

Շուշիի պաշտպանական համակարգի մեջ առաջնակարգ դեր են խաղացել տեղի բազմաթիվ **քարանձավները**: Բերդաքաղաքի հարավային կողմի՝ Հունոտի նեղ և խոր կիրճը, որով աղմկում է արագահոս Քարին տակի կամ ինչպես ռուսներն են անվանել Շուշինկա¹⁸ գետը, երկու կողմերում ունի վիմահերձ բարձր ժայռեր: Քարե այդ հսկա «պատերի» մեջ լուսամուտների պես բացվում են Հունոտի կարան, Ավանա կարան, Ալեքսանա դուպուն, Եղունիկի կարան և Ամարաթներ կոչվող քարայրերը: Ուշ քարեդարյան շրջանի այս բնակավայրերը պատերազմների ժամանակ տեղական բնակչության կողմից օգտագործվել են որպես ապահով ապաստարաններ, քողարկված թաքստոցներ: Այստեղ (1966 թվականին) գտնվել են հայերեն արձանագրություններով բազմաթիվ տապանաքարեր, խաչարձաններ: Տապանաքարերից մեկի վրա նշված է Ռ-Հ (1721) թվականը:

Նշված «...քարայրես նշանաւոր դեր կատարած են ժամանակին մէն մի անառիկ բերդի չափ օգնած է Արցախի հայոց: Տակաւին անհետացած չէ ժողովրդեան յիշողութիւնից և աւանդութիւնիցն քարայրերիս պատմութիւններն: Հունոտի քարայրում նախ երկար ժամանակ մնացած է Աւան-Իպրաշին, որոյ անունը գովութեամբ է յիշում Աղուանից Եսայի կաթողիկոսն: Ապա 1826 թուի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ բնակվում է քարայրումն Թարխանեան Սափարի Իպրաշին իւր քաջերով և շարունակ ալիւր հասցնելով Շուշին ապատում սովից: Ահա այս-

պէս օգտակար եղած են քարայրներն, այսպէս և Աւանայ և Ամարաթներն այրերն»¹⁹:

Ինչպես հայտնի է, Ղարաբաղյն տիրելու վերջին փորձը ձեռնարկվել է 1826 թ. պարսկական թագաժառանգ Աբաս Միրզայի կողմից: Նա իր բանակով նույն թվականի հուլիս—օգոստոս ամիսներին պաշարել է Շուշին: 48 օր է տևել Շուշիի հերոսական պաշտպանությունը: Երկրամասի հապարավոր գյուղացիներ, ռուսական փոքրաթիվ զինվորների հետ միասին, 48 օր շարունակ թշնամուն կանգնեցրել են Կարկառի ձորում, Շուշիի հզոր պարիսպների տակ: Այդ ժամանակամիջոցում Թբիլիսիում գտնվող ռուսական զորամասերը հնարավորություն են ունեցել նախապատրաստվելու և լայն ճակատով հարձակման անցնելու:

Ռուսական հրամանատարների զեկուցագրերից ու պատերազմագան գործողությունները նկարագրող պատմաբանների աշխատություններից երևում է, որ երկրամասի բնակչությունը Շուշիի պաշտպանության ամենաձանր օրերին անգամ գերադասել է փոխվել հայրենի բերդերում, վանքերում, կիրճերում, նվիրական սրբավայրերում, քան գերի ընկնել և մեռնել ստրկության մեջ²⁰:

Դժբախտաբար, մինչև օրս մեր պատմագիտության մեջ ըստ արժանվույն չի լուսաբանված Շուշիի հերոսական պաշտպանությունը, աշխարհագրայինների և ռուս զինվորների ցուցաբերած անթառամ փառքը, կատարված խիզախություններն ու անսահման տոկունությունը²¹:

Երախտապարտ ժողովուրդն իր փրկարարի՝ ռուս զինվորի հիշատակը հավերժացնելու համար հուշարձաններ է կանգնեցրել, «ռուս» և ռուսական ծագում ունեցող այլ բառերով է կոչել հարապատ երկրամասի բազմաթիվ բնակավայրեր, հանդամասեր և աղբյուրներ:

Թվենք դրանցից մի քանիսը. ռուս զինվորի սպանության վայրում, **Մարտունուց** 7 կիլոմետր դեպի Աղդամ, խճուղու աջ թմբի վրա վեր է խոյանում արձանագրություն պարունակող մի հուշատապանաքար: Ռուս անհայտ զինվորի պատվին կանգնեցված անմահության հուշարձաններ կան **Ստեփանակերտում**, **Հաղրութում**, **Լծաբերդ** գյուղի Չիման լեռան ստորոտում:

Իսկ տեղանուններից հիշատակության արժանի են «**ռուսեն բըլդաղեն** (դրոշի) **խութ»-ը** (Հաղրութի շրջանի Արփագյաղուկ լեռնային գյուղից դեպի հյուսիս), «**ռուսեն տուն»-ը** (Ստեփանակերտի շրջանի Բաղա-

¹⁹ Արցախ, էջ 423:

²⁰ ЦГБИА, Ф. В. А., д. 4290,

стр. 150; В. Потто, Первые добровольцы

Карабага, էջ 81: Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 342:

²¹ Այս բացը որոշ չափով լրացրել է օսեթ գրող Հաջի-Մուրադ Մուգուկը իր պատմավեպերում, որի մի գլուխը նվիրված է Շուշիի պաշտպանությանը: Հայ ընթերցողը լավ նվեր ստացած կլինի, եթե հիշյալ գիրքը թարգմանվի և հարստարակվի հայերեն:

¹⁸ Хаджи Мурат Мугуев, Буйный Терек, Орджоникидзе, 1967, стр. 399.

րա գյուղի մոտ), «ռուսեն դուպ»-ը կամ «ռուսեն դաշտ»-ը (Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղի հանդամասում), «Ռուսներ» կամ «Սուսջինկա»-ն (Ստեփանակերտից դեպի արևելք, Տրագետի աջ ափին), «Ռուսեն ժամ»-ը, «Ռուսեն ախպուր»-ը, «Կուրապատկինո»-ն (Մարտունու շրջանի Թաղավարդ, Ղզղալ, Գևորգավան բնակավայրերի մոտ), դարձյալ «Ռուսեն ախպուր»-ը (Մարտակերտի շրջանի Թարթառ գետի աջ ափին, բոխու թավուտ անտառի խորքում), «Սաղաթ քար» քարայրը (Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում) և այլն:

Հետաքրքիր է այն, որ այդ տեղանուններից մի քանիսի վերաբերյալ պահպանվել են գեղեցիկ ավանդություններ ու ավանդական պրոպյաներ: Այդօրինակ ավանդություններ ու պրոպյաներ շատ կան հատկապես աղբյուրների մասին, որոնց հետ ժողովուրդը կապում է իր ամենամոլորական իղձերն ու զգացմունքները խաղաղության, ապատության, երկար կյանքի, սիրո և այլ բարեմասնությունների հետ²²:

Ժամանակի պաշտոնական զեկուցագրերում ամենայն մանրամասնությամբ ներկայացված են Շուշիի բերդապարիսպների վերանորոգման, ամրացման մանրամասնությունները: Ըստ Ռեուտի՝ 1826 թ. սեպտեմբերի 25-ին գրած զեկուցագրի²³, Շուշիի պաշարման սկզբին պարիսպները գտնվում էին միանգամայն անմխիթար վիճակում: Որոշ մասերում պարիսպներ չկային, շատ տեղերում պատերը փլված ու ձեռքված էին: Վերանորոգումը կատարվել էր նախօրոք կապված նախագծով, թշնամու հրետանային ու հրաձգային կրակի տակ, բերդում ապաստան գտած հազարավոր մարդկանց (այդ թվում նաև վառամյալ այաների (տատիկների), երեխաների անձնուրաց ջանքերով:

Այսպիսով, Շուշին, որպես Շոշ գյուղի ամրոց, հանդամաս, կամ պարզապես «Շոշի դալա» (բերդ), «Քար» գոյություն է ունեցել միջնադարում: Որպես մեծ սղնախ, պորանոց հիմնադրվել է 18-րդ դարի սկզբին, որի վերակառուցումն էլ ավարտվել է նույն դարի 50-ական թվականներին: Իսկ նրա ապատագրումն ու նորոգումը տեղի են ունեցել 19-րդ դարի սկզբին, ռուս ապատարար բանակի օգնությամբ:

* * *

Դարձյալ արխիվային փաստաթղթերից երևում է, որ 19-րդ դարի վերջին Շուշի քաղաքը բաղկացած էր երկու տասնյակից ավելի թաղե-

²² Շատ օգտակար գործ է կատարել բանահավաք Մ. Առաքելյանը, հավաքելով և գրի առնելով ռուսական ծագում ունեցող տեղանունները և դրանց հետ կապված ավանդություններն ու պրոպյաները:

²³ ЦГВИА, ф. ВУД, д. 4290, р., 150: «Լրաբեր», 10—2—1979, №20:

րից, որոնց բաժանումը սակայն խիստ պայմանական էր: Դրանք բոլորն էլ մեկը մյուսի օրգանական շարունակությունն էին կապում ու դժվար էր որոշակի սահմաններ անցկացնել նրանց միջև: Նույնիսկ քաղաքի վերին և ստորին հատվածներն իրարից անջատված չէին, չնայած, ինչպես նկատել է ճարտարապետ Է. Ավալովը, վերին կամ հայկական մասի կառուցապատումը ընթացել է քաղաքաշինական որոշակի սկզբունքով, կանոնավոր փողոցներով, հասարակական, շեշտված կենտրոնով հանդերձ: Բերդաքաղաքի այդ մասը բնորոշվում էր կանոնավոր հատակագծմամբ, փողոցների փոխուղղահայաց ցանցով: Դրանց ուղղությամբ կառուցված էին բնակելի, կոմունալ, ուսումնական ու վարչական քաղաքատիպ շենքեր:

19-րդ դարի երկրորդ կեսում, ինչպես դա երևում է նաև 1855 թվականին կապված Շուշիի երրորդ գլխավոր հատակագծից²⁴, քաղաքի արևմտյան մասում արդեն ստեղծվել էր մի խոշոր հրապարակ, որի շուրջը կառուցվել էին ճարտարապետական հետաքրքիր մոնումենտալ շենքեր, որոնց մեջ առանձնանում էին գմբեթավոր վեց եկեղեցիներ:

ՂԱԶԱՆՉԵՑՈՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Նախորդ գլուխներից մեկում ակնարկվել է, որ Առնային Ղարաբաղում 16—19-րդ դդ. եկեղեցիները հիմնականում կառուցված են բալխիկատիպ, առանց գմբեթի: Այս երևույթի գլխավոր պատճառը տնտեսական ու քաղաքական ծանր դրությունն էր: Երկրամասը, ճիշտ է, դարեր տեղող ավերածություններից հետո, Խամսայի մելիքությունների ժամանակ, օգտվել է կարճատև խաղաղությունից, որի շնորհիվ էլ վերակառուցվում էին ավերված աշխարհիկ և պաշտամունքային շենքերը և նույնիսկ նորերն էին կառուցվում: Սակայն դրանք ունեին համեմատաբար պարզ հորինվածքներ և իրականացվում էին քիչ ծախսերով և կառուցումն ավարտելու համար էլ կարճ ժամանակ էր պահանջվում:

Ղարաբաղում (հիշյալ դարերում) կառուցված բոլոր հուշարձանների մեջ հանդիպում ենք գմբեթավոր վեց եկեղեցու, որից հինգը՝ Շուշի քաղաքում: Դրանցից մեկը՝ Ղազանչեցոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցին է: Իսկ մյուսները՝ Կանաչ-ժամ, Ագուլեցոց, Մեղրեցոց ու Կուսանաց վանք կոչվող եկեղեցիներն են:

Այս կառույցներում էլ ղարաբաղցի շինարարները օգտագործել են հին ավանդները և վերադարձել գմբեթավոր կառուցվածքների տիպին,

²⁴ ЦГВИА, ф. 349, оп. 44, ед. хр. 680.

որն ամենատարածվածն էր հայ ճարտարապետության նախորդ շրջանում՝ 9—14-րդ դարերում: Ընդամին, հենց այս կառույցներում հայ քարգործ վարպետները դրսևորեցին խոշոր ճարտարապետական գլուխգործոցներ ստեղծելու իրենց ընդունակությունը, որ քաղաքական ու տնտեսական դաժան ժամանակներում ժողովուրդը պահել էր իր ներսում՝ անթեղած կրակի պես:

Իսկապես, Շուշվա պարձանքն է հանդիսանում Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ տաճարը: Այդ հույակապ կոթողի հատկանշական կողմերից մեկն է շրջապատի ու տեղանքի հետ ունեցած նրա սերտ կապն ու ներդաշնակությունը:


Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցին խոշոր չափերի ճարտարապետական հուշարձան է, որի ճակատները երեսպատված են տեղական սրբատաշ կաթնագույն կրաքարով: Փառահեղ գմբեթը հիմնված է չորս հաստահեղույս մույթերի վրա: Արտաքին ձևերը շքեղ են, վարդաքանդակներ են արված ամենուրեք, հատկապես դռների, լուսամուտների կամարների վրա:

Տաճարի հարավային դռան գլխամասում կա հետևյալ շինարարական արձանագրությունը.

«Շնորհիւ և ողորմութեամբ ամենապօրին Աստուծոյ կառուցեալ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ և տրօք բարեպաշտօն ժողովըրդեանց սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն սկսեալ ի 1868 ամի... աւարտեցաւ ի 1887 ամի...»²⁵:

Ավելի քան 34,7 մետր երկարություն, շուրջ 23 մետր լայնություն, 35 մետր բարձրություն ունեցող ուղղանկյուն հատակագծով այս կոթողի չորս ճակատներում դուրս են գալիս բազմանիստ արքիթներ, որոնք հուշարձանին տալիս են խաչաձև գմբեթավոր հորինվածք: Չորս մույթերի վրա բարձրացող գմբեթը տեղադրված է ճիշտ դահլիճի կենտրոնում: Եկեղեցին ունի միատեսակ և նույն չափերի երեք մուտք՝ արևմուտքից, հարավից և հյուսիսից, որոնց առաջ կառուցված են գեղեցկաշեն, բլուրաձև գավիթներ՝ երեքական դռներով: Գավիթների միջին դռների վերելում բացվող փոքրիկ լուսամուտները խաչաձև են և կերտված են սրբատաշ քարերից: Դռների վերնամասում մեկ ամբողջական քարից կերտված շրջանակի ներսում կան պատկերաքանդակներ: Լուսամուտներից յուրաքանչյուրը հինգ մետր բարձրություն և մեկ մետր լայնություն ունի:

Թմբուկի թեթևացման, սլացիկ տեսք տալու համար 16 նիստերը մշակված են ուղղաձիգ համաչափություններով, իրար մեջ ներգծված պա-



Նկ. 7. Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցու հատակագիծը: Չափագրություն՝ Մ. Մ. Հասրաթյանի:

տուհան-որմնախորշերով: Իսկ նիստերն իրենց հերթին վերևում ավարտվում են ճակտոններով, որոնց գազաթներից սկսվում են գմբեթի վեղարի ծավալի կողերը:

Կուրորտային քաղաքի ուղիղ կենտրոնում, ան իր կառուցվածքով պզախորեն բարձր է բլուր շենքերից և շրջապատի կանաչապատ բլուրների ֆոնի վրա իշխում է ոչ միայն սարահարթի, այլև Կարկառի ընդարձակ հովտի նկատմամբ:

Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցու հատակագծային և ծավալատարածական լուծումը որոշ ընդհանրություն ունի Էջմիածնի Մայր տաճարի հետ:

²⁵ Արցախ, էջ 138:

Գմբեթը (ինչպես երևում է նկարից) ոչ թե ճնշում է հուշարձանի հիմնական ծավալին, այլ պոկվում է նրանից և իր նպելի տեսքով վեր է խոյանում: Այսպիսի տպավորությունն արդյունք է առաջին հերթին գմբեթի վրա օգտագործած շինանյութի: Թմբուկի կաթնագույնը, հակադրության մեջ մտնելով եկեղեցու տանիքի գորշականաչավուն գույնի ծավալի հետ, ստեղծում է թեթևություն, կենսուրախության տպավորություն:

Ղապանչեցոց եկեղեցուց փոքր-ինչ հեռու, նրա արևմտյան մասում վեր է խոյանում եռահարկ զանգակատունը: Առաջին հարկի վերնամասի անկյուններում դրված են չորս քարակոփ, մարդահասակ արձաններ «... որք ահարկու տեսլամբ փչում են փողերը»²⁶: Չանգակատունը կառուցել է շուշեցի Աբրահամ Խանդամիրյանցը: Քանդակագործական արվեստի մի գեղեցիկ նմուշ է զանգակատան քարաշեն շղթան:

Ագուլեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին «հոյակապ, կառուցեալ չորս վայելչակերտ սիւների վրայ... քաղաքի կենտրոնում»²⁷ ունի պարագծային աստիճանավոր պատվանդան, արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև գմբեթավոր հորինվածք: Ներսի բեմի երկու անկյուններում ավանդատները երկհարկանի են, որոնց մուտքերը բեմի կողմից են բարձրանում:

Ընդարձակ աղոթասրահը (28,9×17,5 մ.) վերջանում է պայտաձև հատակագծային կտրվածք ունեցող աբսիդով: Երկթեք տանիքը ծածկված է սրբատաշ քարով, որի վրա բարձրանում են երեք զանգակատներ: Դրանցից ամենամեծը տեղադրված էր եկեղեցու տանիքի կենտրոնում, իսկ մյուսները՝ արևելյան և արևմտյան ծայրերին. ճիշտ այնպես, ինչպես Ամարասի եկեղեցին էր 16-րդ դարում: Այժմ չեն պահպանվել ինչպես այդ, այնպես էլ եկեղեցու արևմտյան պատին կից կառուցված եռհարկ զանգակատունը:

Շուշիի անթվակիր հատակագծում ուշադրություն են գրավում խոշոր, գրեթե իրար կպած շենքերը, որոնք տեղադրված են Ագուլեցոց եկեղեցու թևերում: Պահպանված փաստաթղթերը հաստատում են, որ եկեղեցին ունեցել է «նաև սեփական կալված իւր հարաւային կողմում տասներկու խանութ և հիւսիսային կողմում տասնըրիինգ»²⁸: Ուրեմն հատակագծում նշված շենքերի շարքը Ս. Բարխուտարյանցի տեսած խանութներից են եղել:

Հուշարձանի հարավային դռան ճակատակալ քարի վրա պահպանվել է եկեղեցու շինարարական ընդարձակ արձանագրությունը.

«Կաման Աստուծոյ, Ս. Աստուածածնայ, աւագ եկեղեցիս կառուցին

²⁶ Արցախ, էջ 142:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Արցախ, էջ 145:

արդեամբք և ծախիւք իւրեանց իշխանք ապնուպգի հարապատ աղայք Չօհրապ Յովհաննջան, Մարկոս և Բաբա տեր Մաթեոսեան Թառումեանց ... ի 1822 ամի Տեառն»²⁹:

Տասնյակ տարիներ, մինչև Ղապանչեցոց եկեղեցու կառուցումը, այս եկեղեցին համարվել է քաղաքի ամենախոշոր հոգևոր մշակութային կենտրոնը, որի համար էլ կոչվել է «ավագ»: Միաժամանակ այն, որպես ճարտարապետական նշանակալից հուշարձան, պգալիորեն նպաստել է քաղաքի կենտրոնի ձևավորմանը: Հետագայում դրա շրջապատում կառուցվեցին Ղապանչեցոց եկեղեցին, Խանդամիրյանի 350 տեղանոց հանդիսասրահ ունեցող թատրոնը,³⁰ եռհարկ ակումբը, քաղաքային պուրակը, ուսումնական և առևտրական բնույթի մի շարք գեղեցիկ շենքեր: Այդպիսով, կենտրոնը դարձավ հասարակական մեծ հավաքույթների վայր: Արևմուտքից արևելք առանցքով տեղադրված հասարակական կենտրոնին էին հանգում քաղաքի վերին և ստորին մասերից եկող փողոցները:

Կենտրոնի գեղագիտական արտահայտչականությունը լրացնում էին հրապարակամերձ պրոսպեկտները, քարաշեն աղբյուրները, սալահատակ փողոցները: Կենտրոնի բոլոր շենքերը կառուցված են եղել կաթնագույն քարից, հայ ճարտարապետության բնորոշ կամարային մոտիվներով:

Ուշադրության արժանի հուշարձան էր նաև **Մեղրեցոց եկեղեցին**՝ կառուցված գրեթե նույն սկզբունքներով, ինչպիսին Ագուլեցոց եկեղեցին է: Արձանագրություններում նույնպես կոչվել է Ս. Ամենափրկիչ Մեղրեցոց եկեղեցի, որը կառուցվել է 1833 թվականին, Մահտեսի Հախումյանցի ծախսերով:

Աղոթքասրահը (24,75×12,77 մ) ուներ ուղղանկյուն, բավական ձգված համաչափություններով ծավալատարածական հորինվածք: Թաղակապ կամարները հանգում էին սրահի կենտրոնում բարձրացված չորս պյունների և երկայնական պատերի երեք պույգ որմնասյուների վրա: Չանգակատունը դարձյալ եռահարկ էր՝ սրբատաշ քարից: Մի այլ փոքրիկ զանգակատունը, որն ավելի շատ նման էր ութանկյունի, ռոտոնդի, գտնվում էր եկեղեցու տանիքի մեջտեղում: Երբեմնի ճարտարապետական համալիրից պահպանվել են միայն հիմնապատերը:

Կուսանաց վանք կոչվող եկեղեցին, որը աղբյուրներում հիշվում է նաև **Անապատ** անունով, համարվում էր քաղաքի հնագույն պաշտամունքային հուշարձանը: Անապատը գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում, պրոսպեկտ մեջ: Այն կառուցվել է 1816 թվականին բարեպաշտ օրիորդ Հռիփսիմեի օժանդակությամբ: Եկեղեցին ուղղանկյուն հատակա-

²⁹ Արցախ, էջ 143:

³⁰ Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978, էջ 11:

գծի մեջ ամփոփված գեղեցիկ շինություն է եղել՝ կառուցված կաշնագույն սրբատաշ քարերով: Աղոթարահը (20×9,45 մ) կապնված էր արքիդից, Կույգ ավանդատներից և դահլիճից: Անապատը ուներ երկու մուտք՝ հարավային և արևմտյան ճակատներում, ներսի պատերին կային որմնանկարներ: Հուշարձանի արտաքինը պարզ էր և հասարակ: Ճոխ հարդարանք ունեին դռները, որոնք կրկնում էին Արցախի միջնադարյան եկեղեցիների շքամուտքերի տարածված ձևը:

Պահպանված լուսանկարներից երևում է, որ եռհարկ, սլացիկ վեղարով պանգակատունը գտնվում էր արևմտյան ճակատում բացվող դռան վրա: Այն անհամեմատ բարձր էր շրջապատի բնակելի շենքերից և կանաչի միջից վեր խոյացող վայելչակազմ տեսքով տարավորիչ ազդեցություն էր թողնում քաղաքի տարբեր կետերից ննդող համանման գմբեթավոր պանգակատների անսամբլում:

Շուշիի հուշարձանների մեջ հայտնի է նաև **Վերին Թաղի կամ Կանաչ ժամ** եկեղեցին, որը համարյա անեղծ պահպանվել է: Եկեղեցին, համաձայն շինարարական արձանագրության, կառուցվել է 1818 թվականին (բերդավանի ստորին արևելյան մասում 18-րդ դարի երկրորդ կեսին գոյություն ունեցող) նախկին Ղարաբաղցոց փայտաշեն եկեղեցու փոխարեն: Պատերի մեջ տեղադրված է նախկին եկեղեցու արձանագրությունը: Պարսպապատ եկեղեցու և նրա պանգակատան գմբեթները դիտվում են շատ հեռվից: Վերջիններս ունեն ճայտարապետական նորամուծություններ:

Քաղաքի ստորին մասում, մոտավորապես այժմյա ծածկած շուկայի տեղում էր գտնվում ռուսական դասական ճարտարապետության մոտիվներով կառուցված մի փառահեղ եկեղեցի, որը (Մեղրեցոց և Կուսանոց եկեղեցիների նման) դժբախտաբար չի պահպանվել:

ՄՁԿԻԹԸ

Շուշվա խանության շրջանում (1756—1822 թթ.) և, մանավանդ, 19-րդ դարի երկրորդ կեսում Լեռնային Ղարաբաղում, այն էլ միայն Շուշի քաղաքում, կառուցվել են մի շարք պաշտամունքային և աշխարհիկ շենքեր, որոնք իրավամբ հանդիսանում են պատմաճարտարապետական նշանավոր հուշարձաններ և պատկանում են եղբայրական աղբբեջանական ժողովրդին: Այդ հուշարձանները վերջին տասնամյակում հանգամանալից կերպով ուսումնասիրվել են³¹:

³¹ См. Э. В. Авалов, Архитектура города Шуши, Баку, 1977. Ш. С. Фатуллаев, Памятники Шуши, Баку, 1970.

Քաղաքի մյուս հետաքրքիր հուշարձաններից մեկն էլ աղբբեջանական ճարտարապետական արվեստի նմուշ հանդիսացող մզկիթն է, որը կառուցվել է 1883 թվականին, ճարտարապետ Քերբելայ Սեֆի խանումի նախագծով: Մզկիթը վերջին տարիներին հիմնովին վերանորոգվել և դարձել է Շուշի քաղաքի պատմության թանգարանը:

Մզկիթը, կամ ինչպես շուշեցիներն են ասում՝ «Մեծ մեջեղը» բավական ընդարձակ և լուսավոր շենք է՝ 26,0×21,5×9,0 չափերով: Չնայած պատերը շարված են հասարակ ու կոպտատաշ քարերով, բայց կրաշահախի հնտորեն արված ծեփը ծածկում է նրա այդ բացը:

Չույգ մինարետները բարձրանում են հարավային և հյուսիսային կողմերից: Կարմիր, սպիտակ, կապույտ գույնի ջրարակած աղյուսով երեսապատված են նրանց գլանաձև ծավալները: Թանգարան-հուշարձանի ճակատային մասը սրբատաշ է, կամարակապ սրահով: Բակից քարե աստիճանները բարձրանում են դեպի եռակամար սրահը, որի կենտրոնական մասում է գտնվում հիմնական մուտքը: Գլխավոր կոչվող այդ դռան աջ և ձախ մասերում կան նախշաքանդակներով պարզարված երկու փոքրիկ դռներ:

Մզկիթի ներսը դարձյալ արժանի է ուշադրության: Լուսաստունները փոքր են, երկշարք: Ընդարձակ դահլիճի երկու կողմերով ձգվում են կամարներով միացած սյուները: Մարմնեղ տանիքի ծանրությունը հիմնականում ընկած է սյուների վրա, իսկ կամարների վրա գտնվում են բարձրադիր պատշգամբները:

* *
*

Քաղաքի պատմական հուշարձաններից համեմատաբար լավ են պահպանվել՝ Ռեալական միջնակարգ և Ղուկասյան դպրոցների շենքերը, Մեհմանդարովների պալատը, Ժամհարյանների, Նաթավանի ապրած տները, Գարա Մեծ խանի պալատը, հին շրամբարները, աղբյուր-հուշարձանները, Քյովհար-աղայի մզկիթը, երկհարկանի իջևանատունը, Ագուլեցոց եկեղեցին (առանց գմբեթի) և ճարտարապետական արժեք ներկայացնող այլ շենքեր: Հիմնականում 19-րդ դարից հուշ մնացած նշանավոր այս հուշարձանները ոչ թե խաների, աղաների, մելիքների, բեգերի և առանձին անհատների մտքի և ձեռքի գործեր են, այլ Ղարաբաղի հապարավոր քարգործ վարպետների տաղանդով կերտված ստեղծագործություններ:

Հավագյուտ, խունացած նկարներից³² դժվար չէ որոշակի գաղափար կապել Շուշի քաղաքի հին փողոցների, բնակելի շենքերի, հարյուրավոր արհեստանոցների, խանութների և մշակութային օջախների մասին:

Շուշիի (բավմասենյակ, սպիտակ կրաքարից կառուցված) բնակելի շենքերը հիմնականում եղել են 2—3 հարկանի: Շենքերն իրենց բակային պատշգամբների և լանջավոր ծածկերի հետ ուղղանկյուն հատակագծով պրիվատիկ ծավալներ ունեին, որոնք երկարությամբ տեղադրված էին փողոցներին ուղղահայաց: Տները նեղ ճակատներով դեպի փողոց ուղղելու սկզբունքը թելադրված էր փողոցների խաչմերուկների միջև ընկած հատվածներում հնարավորին չափ ավելի շատ շենքեր տեղադրելու, լավագույն կողմնորոշումն ապահովելու և տվյալ հողամասի մեջ ճանապարհամերձ բակերն ավելի մեծ ստեղծելու անհրաժեշտությամբ: Բակերը շենքերի միջև ընկած տարածություններն են, որոնք պարսպապատվել էին փողոցի կողմից ու վերջինիս հետ հաղորդակցվում էին կամարակապ դարպասներով:

Հարկ է նշել, որ Շուշիի շինարարական, ճարտարապետական աշխատանքների կատարման օրենքներն ու ձևերը տարածված են եղել հարեվան մյուս շրջաններում, հատկապես Մեղրիում, Գորիսում, Նուխիում և Հաղրութում:

Հիշենք նաև, որ Շուշիի շինարարների զգալի մասը մեղրեցի, ագուլեցի և Չանգեպուրի այլ բնակավայրերից եկած լավագույն վարպետներն էին: Վերջիններս դարաբաղցի վարպետների հետ միասին կառուցելու, կերտելու իրենց փորձը, հմտությունն ու եռանդը ներդրել են Շուշիի բարգավաճմանը: Գրավոր վկայություններից երևում է, որ Շուշիի շատ բնակելի շենքեր կառուցվել են առանց նախագծի, ինքնագործ, շինարար վարպետների մտահղացմամբ: Հետևապես ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ այդ շենքերը գուտ ժողովրդական ստեղծագործություններ են:

Հետագայում սովետական իշխանության տարիներին, Ստեփանակերտ քաղաքի կառուցապատման (հատկապես անհատական բնակելի շենքեր կառուցելու) ընթացքում օգտագործվել են Շուշիի քաղաքաշինարարական հարուստ ավանդույթները:

Հարկ է նկատի ունենալ, որ Շուշին 19—20-րդ դարերի սահմանագլխին Անդրկովկասի ամենածաղկուն ու ամենաշեն քաղաքներից մեկն էր: Այն հայտնի էր որպես մշակութային և թատերաերաժշտական կենտրոններից մեկը:

³² 1968 թ. մենք հնարավորություն ենք ունեցել ծանոթանալու (մինչսովետական շրջանի) Շուշիի վերաբերյալ Վ. Դադյանի լուսանկարչական բավականին հարուստ հավաքածուի հետ: Ի դեպ, Դադյանը շուրջ երկու տասնամյակ եղել է գավառական քաղաքի հայտնի լուսանկարչներից մեկը:

Շուշիի լավագույն հուշարձաններից են նաև քաղաքի տարբեր մասերում գտնվող քարակոփ աղբյուրներն ու կարգավորիչ ջրամբարները: Դրանք բոլորն էլ կերտված են սրբատաշ տեղական կաթնագույն կրաքարից, հայկական աղբյուր-հուշարձանների ճարտարապետական մոտիվներով: Շուրջ 110 տարի է, ինչ շուշեցիներն իրենց ջրի պահանջները բավարարելու համար դիմում են այդ աղբյուրներին: Առաջին երկու աղբյուր-հուշարձանները կառուցվել են 1871 թ., մեկը՝ «Եկեղեցիների հրապարակում»՝ հայկական քաղաքամասում, իսկ մյուսը՝ խանական պալատի մոտ՝ աղբբեջանական հատվածում: Այդ ժամանակ հիմնվել են նաև ութանկյունի երկու գեղեցիկ ջրամբարներ: Սակայն աճող ու կարգացող քաղաքի համար երկու աղբյուրների ջուրը շատ քիչ էր և այդ բացը լրացվեց 1896 թ., երբ անց էր կացվում ավելի քան 18 կմ երկարություն ունեցող երկրորդ ջրատարը:

Այդ առթիվ «Կովկաս» թերթը գրել է. «1896 թ. սեպտեմբերի 8-ին մեծ բավության ներկայությամբ քաղաքի իշխանությունները միանգամայն հանդիսավոր իրադրությամբ մեծարեցին Թամիրյանին, որի միջոցներով կառուցված ջրատարը պարիսպներից ներս մտավ քաղաք, իր հետ բերելով լեռնային աղբյուրների կենարար ջուրը»³³:

Հնուց ի վեր շուշեցիների հանգստի ամենանվիրական տեղերից մեկն է համարվել Պեխի հոչակավոր աղբյուր-հուշարձանը: Այն գտնվում է Բոխու թավուտ անտառի խորքում, բարձրադիր ու վեհաշուք լեռան ստորոտում, քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում, մոտ 2—3 կմ հեռավորության վրա:

Անցյալ դարի կեսերին շուշեցի Իսահակ անունով մի վարպետ բարեկարգում է այդ աղբյուրը, կառուցում հուշարձան, ընդարձակում ջրավազանը, թողնում արձանագրություն: Երախտապարտ շուշեցիները աղբյուր-հուշարձանը կոչեցին Իսահակի աղբյուր, իսկ աղբբեջանցիները՝ Իսաբուլաղ:

Արցախի լեռնաշղթայի կենտրոնական հատվածի արևմտահայաց փեշերին են գտնվում Կանաչ թալա, Եղցահող, Ղարաղշաղ, Հին շեն, Կիրով գյուղերը:

Շուշիի շրջանի այս հատվածում Կանաչ թալայի տարածքում, հուշարձանները դարձյալ բավաբանակ ու բավապիսի են:

Լեռնանցքի արևմտյան կողմում Կանաչ Թալա գյուղի Տաշտահող (Դաշտահող) տեղամասում կան երկու խոշոր և 10 փոքր դամբանաբլուրներ, որոնցից մեկի մասնակի պեղման ժամանակ հայտնաբերվել են կավե անոթներ, ուլունքներ, մարդու և կենդանիների ոսկորներ:

Լիսագոր բնակավայրի հարավ-արևելյան մասում է գտնվում Օշափի

³³ Газета «Кавказ», 1896, № 249.

քար կոչվող կամարակապ կամուրջը: Տեղացիների ավանդությունների համաձայն այն կառուցել է Թաղունց Չոնգի անունով մի հաղթանդամ ամար:

Մեծ Բերդաձոր (այժմ Կիրով) գյուղի հարավային մասում վեր է խոյանում մի հիանալի **Եկեղեցի**: Դռան ճակատակալ քարի վրա գտնվող արձանագրության համաձայն այն կառուցվել է 12-րդ դարում: Եկեղեցու շրջակայքում գտնվում է հին, բայց բավական մեծ գերեզմանոցը, որի համար էլ վայրը կոչվում է «Կյըրըզվանոտ»:

Այդ նույն գյուղի հյուսիս-արևելյան մասում է գտնվում **Պարին Պիծ** (Պարոն բժիշկ) կոչվող կոթողը: Իսկ դրանից 300 մետր հեռավորության վրա շինված է մեկ ուրիշ՝ Շահպաղա անունով հուշարձան: Դրանք 17-րդ դարի շինություններ են, որոնք ծառայել են իբրև սրբավայրեր:

* * *

Եվ այսպես, լեռնային երկրամասը բավական հարուստ է բոլոր դարաշրջաններին պատկանող բավաթիվ ու բավազան հուշարձաններով: Դա միանգամայն հասկանալի իրողություն է. որովհետև Արցախը հնագույն ժամանակներից ի վեր միշտ վառ է պահել իր ապատատենչ ոգին, դիմագրավելու, կերտելու, գոյատևելու իր պայծառ երազանքները:

Ինքնապաշտպանության և գոյատևման համար մղած պայքարի մեջ իրենց անգնահատելի դերն ունեին ոչ միայն լեռնաստանի անառիկ բերդերն ու պաշտպանական մյուս կառույցները, այլև վանքային խոշոր համալիրները՝ Ամարասը 4-րդ դարի սկզբին, Կատարովանքը՝ նույն դարի կեսին, Գտիչը՝ 9-րդ դարի առաջին քառորդում, Գանձասարն ու Դաղի վանքը՝ 13-րդ, իսկ Շուշիի բերդավանը 19-րդ դարի սկզբին:

Դարերի միջով մեկ հասած վանքային համալիրներում, նշանավոր եկեղեցիներում անգամ խավարի և մղձավանջի պայմաններում, անմար կրակի պես բոցկլտացել է ազգապահպանության անշեշ կրակը: Այդ և այլ կոթողներն են միաժամանակ հանդիսացել երկրամասում լուսավորության, կրթության տարածման առաջին օջախները, հովանի եղել գրչության և ձեռագրերի ծաղկմանը: Այդ հուշարձանները միաժամանակ քարե վկաներ են, քարակերտ գրքեր, որոնք գալիս են դարերից, հեռվում մնացած պատմության ակունքներից և արտացոլում են սերունդների նյութական ու հոգևոր կյանքը, երկրամասի բազմադարյան պատմությունը, ապատության և անկախության համար ժողովրդական մասսաների մղած պայքարը:

Այդ կոթողները միաժամանակ պատմության, ճարտարապետության այն հուշարձաններից են, որոնք իրենց աննախադեպ ու ինքնատեղծ արվեստով անջնջելի կնիք դրեցին լեռնային երկրամասի դեմքին և զգալի չափով հարստացրին ազգային մշակույթը:

Այժմ էլ հուշարձանները չեն կորցրել իրենց գեղագիտական, հայրենասիրական, ժողովուրդների բարեկամության ամրապնդման դաստիարակչական նշանակությունը: Նրանք միաժամանակ հանդիսանում են աշխատավորների կուլտուրական հանգիստը կապակերպելու լավագույն, հիշարժան վայրեր, ամուր, գեղեցիկ կառուցելու կոնկրետ օրինակներ, տեղական բավմատեսակ շինանյութերի օգտագործման, ընդօրինակման արժանի փորձ:

Հուշարձանների դերը, նշանակությունը նշվածով չի սահմանափակվում: Հարյուրավոր հուշարձաններ օգտագործվում են տարբեր նպատակներով:

Ահա թե ինչու, յուրաքանչյուր ամրոցի ու բնակավայրի ավերակները, դամբանաբլուրներն ու մենաքարերը, վանքային համալիրներն ու մենաստանները, կամուրջներն ու աղբյուր-հուշարձանները, կամ իջևանատներն ու մոնումենտալ խաչքարերը պատկանում են ժողովրդին ու նրա սեփականությունն են համարվում:

Մեր երկրում մեծ ուշադրություն է դարձվում և հոգատարություն ցուցաբերվում հուշարձանների պահպանության և ժամանակակից կյանքի մեջ ներգրավելու հարցերին: Դրա գրավաւանը «Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման մասին» օրենքն է, որն իր արտացոլումն է գտել ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ: Օրենքն անխախտ վերելքի նոր ճանապարհի հարթեց հուշարձանների պահպանության գործում:

Այժմ առավել նպաստավոր պայմաններ են ստեղծված, որպեսզի ավելի մանրամասնորեն ուսումնասիրվեն երկրամասի հուշարձանները՝ կապված ոչ միայն նրանց հաշվառման, պահպանման, պրոպագանդման և օգտագործման հետ, այլև սովետական ժողովուրդների, նրանց մշակութային պատմության ընդհանրացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
Յ Ա Ն Կ

Սկզբնաղբյուրներ

- ա) Ձեռագիր աղբյուրներ
Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № № 2734, 9929, 7821:
- բ) Արխիվային նյութեր:
Լեռնային Ղարաբաղի պետական պատմա-երկրագիտական թանգարան (ԼՂՊՊԵԹ) ֆ. 4, 5:
Центральный Гос. Военно-исторический архив (ЦГВИА) ф. 349. Архив внешней политики России (АВПР) Ф. 1000, Гос. ист. архив Ленинградской области ф. 14, Архив института истории материальной культуры АН-СССР ф. 1.

Տպագիր սկզբնաղբյուրներ

- ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, Պատմություն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917 թ.:
- ՓԱՌԻՍՏՈՍ ԲՅՈՒՋԱՆԴԱՅԻ, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913 թ.:
- ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, Պատմություն Հայոց, Երևան, 1961 թ.:
- ԱՌԱԲԵԼ ԴԱՐԻԹԵՅԻ, Պատմություն, Վաղարշապատ, 1896 թ.:
- ԵՂԻՇԵ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957 թ.:
- ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913 թ.:
- ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒՅԻ, Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912 թ.:
- ՍՏ. ՕՐԲԵԼԵԱՆ, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911 թ.:
- СТРАБОН, География, М., 1964 г.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. Գ. ԱՐԲԱՎԱՄՅԱՆ, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953 թ.:
- Մ. ԱՍՈՐԻ, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871 թ.:
- Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, Վենետիկ, 1901 թ.:
- ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒՍԱՐՅԱՆՅ, Արցախ, Բաքու, 1895 թ.:
- Ս. ԲԱՐԽՈՒԿԱՐՅԱՆ, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963 թ.:
- Ս. ԵՐԵՄՅԱՆ, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963 թ.:
- Հ. ԵՓՐԻԿՅԱՆ, Պատկերավարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903—1905 թթ.:
- ՄԵՍՐՈՊ ԹԱԳԻԱԴԵԱՆ, Ճանապարհորդություն ի Հայս, 1847 թ.:
- Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ, Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը, Երևան, 1948 թ.:
- Ե. ԼԱՆՅԱՆ, Վարանդա, Թիֆլիս, 1898 թ.:
- Լ Ե Ո, Ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1885 թ.:

- Լ Ե Ո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890 թ.:
- Լ Ե Ո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914 թ.:
- Լ Ե Ո, Հայոց պատմություն, 2-րդ հատոր, գիրք 2-րդ, Երևան, 1973 թ.:
- ԼՈՌԻՐԵՆՍ Կ. ԳՈՆ (ԳՈՆՏՈՐՃՅԱՆ), Հայկական եկեղեցական ճարտարապետությունը (անգլերեն), Նյու-Յորք, 1974 թ.:
- Է ԽԱՆՁԱԴՅԱՆ, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967 թ.:
- Լ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Միջնադարյան Հայաստանի կարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960 թ.:
- Մ. Մ. ՀԱՐԱԹՅԱՆ, Սյունիքի 17- 18-րդ դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973 թ.:
- Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, 4, Երևան, 1974, 1979 թթ.:
- Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Խաղբակյանք, Երուսաղեմ, 1969 թ.:
- Պրոֆ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936 թ.:
- Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971 թ.:
- Շ. Մ. ՄԿՐՉՅԱՆ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Բաքու, 1970 թ.:
- Շ. Մ. ՄԿՐՉՅԱՆ, Ուղեցույց Լեռնային Ղարաբաղի պետական պատմա-երկրագիտական թանգարանի, Ստեփանակերտ, 1969 թ.:
- ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դաղի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938 թ.:
- Դոկտ. Հ. ՈՍԿԵԱՆ, Արցախի վանքերը, Վենետիկ, 1953 թ.:
- Ս. ՋԱԼԱԼԵԱՆՅ, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Բ. Տփլիս, 1858 թ.:
- Ս. Հ. ՍԱՐԴԱՐՅԱՆ, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967 թ.:
- Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931 թ.:
- Բ Ա Յ Ն Ի, Խամսայի մեկնությունները, հ. 10, Երևան, 1964 թ.:
- Բ. ՈՐԼՈՒԲԱԲՅԱՆ, Արցախի պատմությունը (թեկնածուական դիսերտացիա), Երևան, 1968 թ.:
- Բ. ՈՐԼՈՒԲԱԲՅԱՆ, Խաչենի իշխանությունը 10—16-րդ դարերում, Երևան, 1975 թ.:
- Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, Ереван, 1964 г.
- АХМАДБЕК ДЖЕВАНШИР, История Карабахского ханства (с 1747-1805 г.г.) Баку, 1961 г.
- ПЛАТОН ЗУБОВ, Карабахский астролог (основание крепости Шуша), Москва, 1834 г.
- К. ГАН, Опыт объяснения Кавказских географических названий, Тбилиси, 1909 г.
- Я. ГУММЕЛЬ, К проблеме археоботаники Закавказья, том I, Тбилиси, 1940 г.
- М. М. ГУССЕЙНОВ, О результатах археологических раскопок в Азохской пещере. Баку, 1965 г.
- А. А. ИВАНОВСКИЙ, По Закавказью, МАК, вып. IV, Москва, 1911 г.
- К. Х. КУШНАРЕВА, Культура Нагорного Карабаха по археологическим источникам (автореферат кандидатской диссертации), Л. 1951 г.
- И. В. МИНКЕВИЧ-МУСТАФАЕВА, Об археологических находках из с. Доланлар, сб. материалов о культуре Азербайджана, Баку, 1949 г.
- Народы Кавказа, том I, Москва, 1960 г.
- И. А. ОРБЕЛИ, Избранные труды, Ереван, 1963 г.
- В. Г. ПЕТРОВ, Этноботаника Нагорного Карабаха, Баку, 1940 г.


- С. ТЕР-АВЕТИСЯН, Памятники древности Карабаха и Скифская проблема, Тифлис, 1934 г.
- К. В. ТРЕВЕР, Очерки по истории культуры древней Армении, Москва—Ленинград, 1959 г.
- А. А. ЦАГАРЕЛИ, Грамоты и другие исторические документы XVIII столетия, в Грузии, СПб 1891 г.
- М. ШАГИНЯН, Нагорный Карабах, М.-Л, 1927 г.
- П. И. ЩУСЕВ, Мосты и их архитектура, Москва, 1952 г.
- ЭЗОВ Г. Н., Сношения Петра Великого с армянским народом, Санктпетербург, 1898 г.
- Л. А. ЯКОБСОН, Из истории армянского зодчества (Гандзасарский монастырь XIII в.). «Исследования по истории культуры народов Востока». Сборник в честь И. А. Орбели, М.-Л, 1960 г.
- ЭЛЬТУРАН АВАЛОВ, Архитектура города Шуша, Баку, 1977.

Պարբերական մամուլ

- «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1895, 1896, 1897:
- «Արարատ», Էջմիածին, 1896 թ.:
- «Բանասեր», Փարիզ, 1901 թ., հ. 1-ին:
- «Նոր Դար», Թիֆլիս, 1891, № 123.
- «Բաներ Երևանի համալսարանի», 1971 թ., № 1:
- «Բաներ Հայաստանի արխիվների», 1972 թ. № 1, 1975 թ., №3:
- «Գարուն», 1972 թ., № 5:
- «Էջմիածին», 1972 թ. Զ—Ե: 1976 թ. Բ, Գ, Զ, Է, Ը—Թ, 1977 թ. Գ: 1979 թ. Գ:
- «ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների Լրագրեր», 1969 թ., № 6, 1963 թ. № 3, 1975 թ. № 5:
- «Կոմունիստ» (Բարս), 1968 թ. № 178, 1974 թ., № 131:
- «Սովետական Ղարաբաղ», 1957 թ., № 144, 1960 թ., № 238, 1965 թ., № 73, 1969 թ., № 64, 1973 թ., № 15, 1973 թ., № 304:
- Աշխատություններ Հայաստանի պատմական պետական թանգարանի, Երևան 1975, պրակ 6-րդ:
- Известия Азербайджанского филиала Академии наук СССР (АЗФАН), 1939 г., № 4, 9, 1944 г., № 11.
- Советская археология, XX, 1954 г.
- Известия АН Аз. ССР, 1964 № 1, 1974 № 1.

Հ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր


ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԸ



1. Գանձաար. վանքի ընդհանուր տեսքը հարավից:


2. Ս. Հակոբա վանքից մի հատված:






3. Գանձասար. եկեղեցու հարավային ճակատը:


4. Աղշիկ անապատ. բարձրաքանդակով խաչքարի բեկոր:



5. Գանձասար. եկեղեցու առաջաստը:

6. Գանձասար. եկեղեցու բեմի ճակատը:







7. Գանձասար. Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթը:



8. Կոշիկ անապատի մուտքը:

9. Գանձասար. գմբեթի թմբուկի տեսքը հյուսիսից:





10. Գանձասար. եկեղեցու թմբուկի հարավային որմնախորշերից հատված:



12. Գանձասար. գավթի արևմտյան մուտքի քանդակապարզերից հատված:





11. Կարմիրավան. զերեպանաքար (7-րդ դ.) :




13. Դաղի վանք. համալիրի ընդհանուր տեսքը:

14. Դաղի վանք. համալիրի կենտրոնական մասը:



15—15 ա. Դաղի վանք. քանդակապարզ խաչքարերից հատվածներ:




16. Գաղի վանք, Արպու խաթունի կաթողիկեն:

17. Գաղի վանք, կաթողիկենի հարավային ճակատը:




18. Գաղի վանք, համալիրի իվ. արմ. ծայրամասի հուշարձանները:

19. Գաղի վանք, պողպատաձև գազեր ներսին ետինմասերը:







20. Գաղի վանք. զանգակատան խաչքարերը:




21. Աջակոտյան խաչքարը:



22. Բարձրաբանդակ ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու արևմտյան ճակատից:
(Այս և №№ 2, 15, 21, 27, 48, 52 լուսանկարները՝ Ռ. Արզարյանի):





23. Խուրավանք. Գրիգոր եպիս. գավիթը:



24. Խաթրավանք. հնագույն եկեղեցու ներքին հորինվածքը:

25. Ամենափրկիչ վանքի եկեղեցին:




26. Երից Մանկանց վանքի եկեղեցու տեսքը:



27. Եղիշեն առաքյալի վանքի տեսքը:


28. Եղիշեն առաքյալի վանքի վանդակատունը:




29. Տող. ս. Ստեփանոսի եկեղեցին:

30. Տող. ս. Հովհաննեսի եկեղեցին:






31. Գաջականքի ե/եղեցին:





32. Գաջականք. խաչքար (13-րդ դ.):



33. Դիզախայտի Կատարովանքի եկեղեցին:

34. Մեծ-Թաղար. Ծծախաչ բարայրի մուտքը:



35. Վանք. Սպիտակ խաչվանքը՝ արևմուտքից:


36. Թաղասեռ. Անապատ եկեղեցին:





37. Իջևնատուն:

38. Անարաւ. պարիսպներից հատված:



39. Անարաւ. Էփեղեցու ճակատային մասը:



40. Ամարաս. քարգործ Ղազարի խաչքար (IX դ.):

41. Ճարտար. խոյակ (IV դ.):



42. Ճարտար. Եղիշե կույսի եկեղեցին:



43. Եղիշե կույսի եկեղեցու որմնաքարերից:





44. Հացի. «Բոյ եղցի» համալիրից հատված:


45—46. Ղարալա (Աղշկաբերդ). ա) ամանի բեկոր, բ) արձանիկ (X—XIII):



47. Սպիտակաշեն. Պղնձակալի խաչքարը (XII դ.):

48. Մարաթքենդ. զինեղալ Մարաթովի կամուրջը:






50. Չանաղչի (Ավետարանոց).
Գալստեի եկեղեցու
Խաչքարերից (XI դ.):

49. Ստեփանակերտ.
Մալի կամուրջը:



51. Խանածախ. եկեղեցու
մուտքը:






52. Պոլիսի ս. Գևորգի կամ Պոլիսի բերքի վանքը:


53. Ասկերան, պարիսպներից հատված:



54. Ասկերան, պարիսպների աշտիղման հատվածը:



55. Շուշի. բաղաբի կենտրոնական մասը: Առաջին պլանում Ն. Խատրաճիբյանի թատրոնի շենքը. աջից՝ Ազուկեցոց, Ղազանեցոց, իսկ հեռում՝ Մեղրեցոց եկեղեցիները (լուսանկարված 1904 թ.):



56. Շուշի. Ղազանեցոց ու Ամենափրկիչ եկեղեցին. (լուսանկարված 1975 թ.):



57. Ղապանեցեցոց եկեղեցու գմբեթի թմբուկից հատված:
58 Շուշի. բազալտե սկահակ (XIX դ.):



59. Շուշի. Մակիթը:
60. Շուշի. Կանաչ ժամ եկեղեցին:





61. Շուշի, դարձաւի բարաւորի բար (XIX դ.):

62. Շուշի, Հռնոստի կիրճից հատված:



Перечень планов, помещенных в тексте

1. Гандзасар. План церкви и притвора (обмер А. Якобсона)
2. Гандзасар. План купола церкви св. Оганеса-Мкртича (обмер А. Якобсона)
3. Дадиванк. План зданий, находящихся внутри ограды (обмер М. Асратяна)
4. Монастырь Егнше (аракела) (отшельника). План всех зданий (обмер А. Гуляна)
5. Гтчаванк. План монастыря (обмер М. Асратяна)
6. Амарос. План церкви (обмер М. Асратяна)
7. Шуши. План церкви Казанчеоц (обмер М. Асратяна)
8. Карта монастырского ансамбля Нагорного Карабаха (автор Ш. Мкртчян)

Перечень иллюстраций

1. Гандзасар. Общий вид монастыря с юга
2. Фасад монастыря Акопаванка
3. Гандзасар. Южный фасад церкви
4. Кошик-ананат. Барельефное изображение хачкара
5. Гандзасар. Парус церкви
6. Гандзасар. Фасад сцены
7. Купол церкви св. Оганеса-Мкртича
8. Кошик-ананат. Вход
9. Гандзасар. Орнаментированный фрагмент западного входа притвора
10. Гандзасар. Одна из ниш купола
11. Могильная плита (VII в.) с. Кармираван
12. Гандзасар. Западный вход притвора
13. Ансамбль Дадн—или Хутаванка
14. Дадиванк. Центральная часть ансамбля
15. Дадиванк. Деталь хачкара XIII в.
16. Дадиванк. Катогике Арзу-Хатун с северо-востока
17. Дадиванк. Южный фасад церкви Арзун-Хатун
18. Дадиванк. Памятники ансамбля с юго-запада
19. Дадиванк. Внутренняя часть притвора
20. Дадиванк. Хачкары XII в.
21. Правый хачкар колокольни
22. Церковь св. Ованнес Мкртич. Фрагмент
23. Дадиванк. Притвор епископа Григория с юго-запада
24. Хатраванк. Вид интерьера старой церкви
25. Церковь монастыря Аменапркич (Спасителя)
26. Вид церкви монастыря Ериц манканц
27. Ансамбль монастыря Егнше-отшельника
28. Фасад первой часовни монастыря Егнше-отшельника
29. Церковь св. Степаноса в селе Туг.

30. Церковь св. Оганеса в с. Тут
31. Вид монастыря Гтчаванк с юга
32. Гтчаванк. Хачкар XIII в.
33. Вид церкви Катарованк в Дизапайте
34. Цахач, или Таглар. Внешний вид пещеры
35. Ванк. Фасад Спитак хачванка
36. Фасад церкви Анапата в с. Тагасер
37. Иджеванатун (Караван-сарай) с юго-запада
38. Амарас. Часть крепостной стены
39. Вид церкви монастыря Амарас с юго-запада
40. Амарас. Хачкар варпета Газара IX в.
41. Чартар. Капитель из развалин храма IV в.
42. Чартар. Фасад монастыря Егнишакуйс
43. Могильная плита в стене церкви Егнишакуйс
44. С. Ацигюх. Первая часовня ансамбля церкви Бри ехин
- 45-46. Каракеид (Ахикаберд—Девичья крепость): а) обломок глиняной тарелки.

б) статуэтка (X-XII вв.)

47. Хачкар около селения Спитакашен XII в.
48. Мост генерала Мадатова в с. Мадаташен
49. Степанакерт. Мазн-камурч (волосяной мост)
50. Один из хачкаров церкви Гаянэ в с. Аветараноц, XI в.
51. Ханацах. Выход церкви
52. Монастырь св. Геворка, или Пткесберк
53. Часть крепостной стены Аскерана
54. Аскеран. Правая часть стены
55. Шуши. Центральная часть города (начало XX в.)
56. Шуши. Церковь Газанчеоц св. Аменапркич
57. Шуши. Фрагмент церкви Газанчеоц
58. Шуши. Базальтовая ваза (XIX в.)
59. Шуши. Мечеть
60. Шуши. Церковь Канач жам
61. Шуши. Орнаментированный барельеф наличника одних из ворот г. Шуши (XIX в.)
62. Шуша. Вид из ущелья Гунот

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	5
-----------------	---

Մարտակերտի շրջան

ա) Խաչենի հովտի հուշարձանները	7
Գանձասար	9
Խաչքարեր՝ կենցաղային բարձրաքանդակներով	17
Քոլատակ	25
Կաջաղակաբերդ	27
Չղրան	29
Առաջաձոր	30
Գյուլաթաղ	30
Մաբտակերտ	31
Կուստապատ	31
բ) Թարթառի հովտի հուշարձանները	32
Դաղի կամ Խուրթա վանք	33
Խաթրավանք	44
Հաթերք	46
Մայրաքաղաք եկեղեցին	47
Ամենափրկիչ վանքը	48
Քաղաքատեղի	49
Ջրաբերդ	51
Երիցմանկանց վանք	53
Եղիշե առաքյալի վանք	54
Կաղանկատույք գյուղաքաղաքը	56
Գլխո կամ Հոռեկա վանք	58
Վանքասարի հուշարձանները	59

Հաղրութի շրջան

Տողաձորի հուշարձանները	66
Գոչավանք	69
Ազոխի քարանձավը	75
Ծծախաչ	79
Իշխանագետի հովտի մյուս հուշարձանները	80
Դիպսիայտի Կատարո վանքը	85
Գլխատուն կամ Ղարադամ	86
Հարար	88
Հաղրութի ձորակի հուշարձանները	91
Ցորաբերդը	95
Իջևանատուն	96

Մարտունու շրջան

Ամարաս	99
Ամարասի հովտի հուշարձանները	104
Ճարտար	108
Հացի գյուղ	111
Աղջկաբերդ	115
Թաղավարդի հուշարձանները	116

Ասկերանի շրջան

Ավետարանոց կամ Չանաղջի	122
Սղնախ	126
Հարավ (Բովուրիանի վանքը)	128
Մատաղախութի հուշարձանները	129
Մազի կամուրջ	131
Բաղարայի շրջակայքի հուշարձանները	133
Ասկերանի բերդ	137
Քալազուխ—Շիկաքար բերդը	138
Կարկառի հովտի հնագիտական հուշարձանները	140

Շուշի քաղաքը

Պաշտպանական ամրություններ	146
Ղազանչեցոց և Ամենափրկիչ եկեղեցին	155
Մզկիթը	160
Օգտագործած աղբյուրների և գրականության ցանկ	166
Լուսանկարներ	169
Հատակագծերի և լուսանկարների ցանկ	209

Մկրտչյան Հանեն Մակիչի
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Шаген Макичович Мкртчян
ИСТОРИКО-АРХИТЕКТУРНЫЕ
ПАМЯТНИКИ НАГОРНОГО КАРАБАХА
(на армянском языке)
Издательство «Айастан»
Ереван—1980

Մաս. խմբագիրներ՝
Ճարտարապետական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
Վ. Մ. Հարությունյան
Պատմական գիտությունների դոկտոր՝ Բ. Ա. Ուլուբաբյան
Հրատ. խմբագիր՝ Վ. Ա. Վարդյան
Նկարիչ՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Գ. Հ. Բաբաջանյան, Լ. Ս. Սահակյան

Հանձնված է արտադրության 30. 05. 1980 թ.:
Ստորագրված է տպագրության 18. 12. 1980 թ.:
Ֆորմատ՝ 60×90¹/₁₆: Թուղթ տպ. № 1: Տառատեսակ «Մեացականիան»: Տպագրություն՝
բարձր: 13,5 պոլմ. տպագր. մամ., հրատ.՝ 10,68 մամ. +20 ներդիր:
Պատվեր 1674: ՎՖ 02334: Տպաքանակ 1500: Գինը 1 ո. 30 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան-91:
Издательство «Айастан». Ереван-9, ул. Теряна. 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական
կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:
Типогр. № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торгов-
ли Арм. ССР Ереван, ул. Алавердяна, 65.

